

ԱՐՄԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՖՐԱՆՍ-ԹՈՒՐԳԱԿԱՆ  
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
1920-1939 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Երևան  
2021

32

Վ-39

Խ. ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍՄՐԱՆ  
Կ<sub>2</sub> ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱ  
ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ ԱՄԲԻՈՆ

**ԱՐՄԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

6290

**ՖՐԱՆՍ-ԹՈՒՐԳԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**1920-1939 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ**

ԵՐԵՎԱՆ 2021



ՀՏԴ 93/94  
ԳՄԴ 63.3  
Մ 394

Հրատարակության է երաշխավորվել Խ. Աբովյանի անվան  
Հայկական պետական մանկավարժական համալսարանի  
պատմության և հասարակագիտության ֆակուլտետի  
խորհրդի որոշմամբ

Խմբագիր՝ պատմական գիտությունների թեկնածու

Ավագ Հարուսթյունյան

Գրախոս՝ պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ  
Քրիստինե Մելքոնյան

Մ 394 Մարտիրոսյան Արման, Ֆրանս-թուրքական

հարաբերությունները 1920-1939 թվականներին, Եր., 2021, 205 էջ:

Թեման հայ պատմագիտության մեջ բովանդակությամբ և հարցադրումներով նախկինում լիարժեք համակարգված չի ուսումնասիրվել: Համակողմանի վերլուծվել է 1920-1939թթ. ֆրանս-թուրքական հարաբերությունների ողջ համալիրը. փոխհարաբերությունների հաստատման շարժառիթները, զարգացման փուլերը և հեռանկարները:

Աշխատությունը նախատեսված է պատմաբանների, թուրքագետների, քաղաքագետների և ընթերցող շրջանակների համար:

ՀՏԴ 93/94  
ԳՄԴ 63.3

ISBN 978-9939-9261-2-4

© Արման Մարտիրոսյան

ՆԱԽԱԲԱՆ

Մերձավորարևելյան տարածաշրջանը մշտական հակասությունների դաշտ է, որտեղ խաչվել են միջազգային հարաբերություններում հիմնական դերակատարների և տարածաշրջանային առաջատար երկրների շահերը: Արդի քաղաքական իրադրության մեջ Թուրքիան՝ աշխարհաքաղաքական նպաստավոր դիրքի շնորհիվ, տարածաշրջանում շարունակում է մնալ կարևոր դերակատար: Թուրք դիվանագետները և քաղաքագետները նշում են իրենց երկրի կարևորության մի քանի գործոն՝ սևծովյան գերտերություն դառնալու նկրտումները, ինչպես նաև՝ արաբական աշխարհում գերիշխող դիրքի հասնելու իրական հնարավորությունները: Թեպետ կառավարող «Արդարություն և զարգացում» կուսակցության ղեկավարները ջանում են ապացուցել, որ Թուրքիան պատրաստ է եվրոպական ընտանիքի «արժանի» անդամ դառնալու, սակայն Թուրքիան քաղաքական հեղինակությամբ, տնտեսական հնարավորություններով, ժողովրդավարական արժեքների ընկալման աստիճանով դեռևս անկարող է հասնել իր նպատակներին:

Թեման նախկինում բովանդակությամբ և հարցադրումներով հայ իրականության մեջ լիարժեքորեն համակարգված չի ուսումնասիրվել, թեև հրապարակվել են աշխատություններ և հոդվածներ, որոնցում լուսաբանվել են առանձին խնդիրներ:

Գրքում փորձ է արվում համակողմանի ուսումնասիրել ֆրանս-թուրքական հարաբերությունները նշյալ ժամանակաշրջանում, վեր հանել երկկողմ փոխհարաբերությունների զարգացման և վատթարացման պատճառահետևանքային կապերը: Հենվելով բազմաբնույթ և բազմալեզու գրականության վրա՝ փորձել ենք բացահայտել երկկողմ փոխհարաբերությունների հաստատման գլխավոր շարժառիթները, զար-



զացման փուլերը և հեռանկարները, ինչպես նաև վերլուծել հետպատերազմյան աշխարհի միջազգային զարգացումների անդրադարձը ֆրանս-թուրքական հարաբերությունների վրա:

Թեման ներկա իրողությունների համատեքստում ունի քաղաքական և գործնական կարևոր նշանակություն, քանզի Մերձավոր Արևելքում և մասնավորապես Թուրքիայում ժամանակակից բազմաթիվ միտումների ու իրադարձությունների հիմքերը խորանում են ընդհուպ մինչև 1920-30-ական թվերը:

Աշխատանքն արժևորվում է նաև մեկ այլ տեսանկյունից, քանզի այսօր էլ Թուրքիա-Եվրոմիություն բանակցային գործընթացի ենթատեքստում ԵՄ արտաքին քաղաքական գերակայությունների ձևավորման գործում Ֆրանսիան կարևոր դերակատարում ունի: Առավել ևս, որ Ֆրանսիական դիվանագիտությունը մեծ ակտիվություն է ցուցաբերում նաև նոր պետությունների ԵՄ անդամակցության հարցում, որտեղ հատկապես կարևոր է Թուրքիայի անդամագրվելու խնդիրը:

Թեև վերջին շրջանում Հայաստանը և Թուրքիան դիվանագիտական հարաբերությունների հնարավոր օրակարգի վերաբերյալ որոշ քայլեր ձեռնարկել էին (տարբեր մակարդակների և տարբեր ձևաչափերով հանդիպումներ), բայց Թուրքիայի գործողությունների տրամաբանությունը, հատկապես նախապայմանների առաջ քաշումը, գործընթացը կրկին մտցրել են փակուղի<sup>1</sup>: Այլեի՞ն, Թուրքիան ցայսօր պետական մակարդակով ժխտում է Հայոց ցեղասպանությունը, և թուրքերը շարունակաբար կատարելագործում են ցեղասպանության ժխտման

<sup>1</sup>Տեղին է հիշել Թուրքիայի նախկին վարչապետ Ս.Դեմիրելի խոսքը. «Պարտավոր ենք Հայաստանի հետ գտնվել այնպիսի հեռավորության վրա, որ չսպառնան երկխոսության հնարավորությունները: Սա մեծ քաղաքականություն է, թշնամության հիմքի վրա պետական քաղաքականություն չեն կառուցում»: Չաքրյան Հ., Ղարաբաղյան հիմնահարցը հայ-թուրքական հարաբերությունների համատեքստում, Ե., 1998, էջ 37:

և պատմական իրողությունների նենդափոխման համակարգը: Այս համատեքստում, հաշվի առնելով ՀՀ արտաքին քաղաքականության գերակայություններից մեկի՝ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործում Ֆրանսիայի որդեգրած քաղաքականությունը<sup>1</sup>, ինչպես նաև ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ լինելու հանգամանքը, շատ կարևոր է Ֆրանսիայի հետ բազմակողմ համագործակցության խորացումը:

Ժամանակագրական տեսանկյունից աշխատանքն ընդգրկում է 1920-1939թթ.՝ հաշվի առնելով, որ Առաջին աշխարհամարտից հետո տեղի ունեցավ ռազմաքաղաքական և տնտեսական շահերի ու ազդեցության գոտիների վերաբաժանում: Այս հանգամանքը նախկին դաշնակից պետությունների միջև հետպատերազմյան աշխարհում գերիշխող դիրքի հասնելու համար հակասությունների խորացման պատճառ դարձավ: Որոշ իրադարձություններ դուրս են գալիս ժամանակագրական շրջանակից՝ պայմանավորված մի շարք հիմնախնդիրների ամբողջական ներկայացման անհրաժեշտությամբ:

Աշխատության մեջ վերլուծվել և պատմագիտորեն լուսաբանվել են ֆրանս-թուրքական հարաբերությունների ամբողջ համալիրը ժամանակագրական տարբեր փուլերում: Առավել հատկանշական են այն բաժինները, որտեղ խոսվում է Լոզանի համաժողովից հետո ֆրանս-թուրքական դիվանագիտական պայքարի մասին, հատկապես Ֆրանսիայի մանդատային տարածք Սիրիայի և Թուրքիայի սահմանների ճշգրտման ընթացքում թուրքական կողմի առաջ քաշած պահանջների և առաջարկների առնչությամբ: Արժեքավոր է նաև օսմանյան պարտ-

<sup>1</sup> 1998թ. մայիսի 29-ին Ֆրանսիայի Ազգային ժողովը ճանաչեց Հայոց ցեղասպանությունը: 2001թ. հունվարի 9-ին նախագահ Ժ. Շիրակը ստորագրեց այն ընդունող օրենք: 2006թ. հոկտեմբերի 12-ին Ֆրանսիայի Ազգային ժողովն ընդունեց Հայոց ցեղասպանության մերժումը պատժող օրենք:



քի մասին բաժինը: Ճիշտ է, խնդրի շուրջ Լոզանի համաժողովում ընթացող բանակցություններին և Թուրք-Ֆրանսիական հակամարտությանը մասամբ անդրադարձ կատարվել է, սակայն հիմնահարցը հայրենական պատմագիտության մեջ ամբողջական ուսումնասիրության նյութ չի դարձել:

Աշխատությունը գրվել է բազմալեզու գրականության հիման վրա: Կարևորել ենք Ֆրանսիայի և Թուրքիայի դիվանագիտական և պաշտոնական փաստաթղթերը, պետական գործիչների ելույթները, սկզբնաղբյուրները:

Ուշագրավ տեղեկություններ է պարունակում Հայաստանի Ազգային արխիվի 200 ֆոնդի 546 գործը, որտեղ ներկայացված են Կիլիկիայում Ֆրանսիայի վարչական և ռազմական ղեկավարության (օրինակ՝ գնդապետ է. Բրեմոն, գեներալ Գուրո, Դյուֆիո), Ֆրանսիայի քաղաքական ղեկավարության և կիլիկիահայ հոգևոր առաջնորդների ու գործիչների պաշտոնական նամակագրությունը<sup>1</sup>: Այստեղ վեր է հանվում Ֆրանսիայի քաղաքականության և կիլիկիահայության համար դրա աղետալի հետևանքների մասին մանրամասներ:

Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող արխիվային փաստաթղթերից ուշագրության արժանի է հատկապես թղթապանակ 240-ի 1-11-րդ վավերագրերը: Այս փաստաթղթերում ներառված են Ֆրանսիայի ղեկավար շրջանների և Կ. Պոլսի Հայոց պատրիարքի ու Պողոս Նուբարի նամակագրությունները, ինչպես նաև սիրիական մամուլի որոշ հրապարակումները, որոնք կարևոր տեղեկություններ են հաղորդում Կիլիկիայում Ֆրանսիայի քաղաքականության մասին<sup>2</sup>:

<sup>1</sup> ՀԱԱ, ֆոնդ 200, ցուցակ 1, գործ 546:

<sup>2</sup> Մաշտոցի անվան Մատենադարան: Այլևայլ հեղինակների արխիվ, թղթ. 240, վավ. 11, «Սուրիական մամուլ», Հալեպ, 07.11.1924, հմ., 4, 7, 9: Գևորգ Պապոյան, թղթ. 240թ, վավ. 1:

Ֆրանս-Թուրքական հարաբերությունների պատմության ուսումնասիրման համար արժեքավոր տեղեկություններ կան ժամանակի պետական-դիվանագիտական գործիչներ Դ.Լյուդ-Ջորջի, Ու.Չերչիլի, Գ.Չիչերինի<sup>1</sup>, Մ.Քեմալի<sup>2</sup>, Ի.Ինյոնյուլի<sup>3</sup>, Ա.Ֆ.Ջեբեսոյի<sup>4</sup>, Գ.Պյոուի<sup>5</sup>, է.Բրեմոնի<sup>6</sup> հուշերում:

Դ.Լյուդ-Ջորջը<sup>7</sup> և Ու.Չերչիլը<sup>8</sup> ներկայացրել են Մերձավոր Արևելքում տիրող իրադրությունը, անգլո-ֆրանսիական հակամարտության պատճառներն ու հեռանկարները, ֆրանսիական դիվանագիտության քայլերը և հանգել այն եզրակացության, որ Մերձավոր Արևելքում, հատկապես Թուրքիայում, Անգլիայի մրցակիցը Ֆրանսիան է: Նրանք մեղադրում են Ֆրանսիայի կառավարությանը ճնշված ժողովուրդների ճակատագրով այլևս չհետաքրքրվելու համար, շնչելով որ նման վարքագիծը բնորոշ է նաև Մեծ Բրիտանիային:

ԽՍՀՄ արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Գ.Չիչերինն անդրադառնալով Մերձավոր Արևելքում Ֆրանսիայի, Անգլիայի և Թուրքիայի արտաքին քաղաքականության դրսևորումներին, հետաքրքիր դիտարկումներ է կատարել ժամանակի միջազգային հարաբերությունների վերաբերյալ: Քննադատելով Ֆրանսիայի և Անգլիայի՝ Նեղուցների պայմանակարգի հարցում վարած քաղաքականությունը՝ նա նշում է, որ այդտեղ համընկնում են Թուրքիայի և ԽՍՀՄ շահերը:

<sup>1</sup> Чичерин Г. Статьи и речи по вопросам международной политики. М., 1961.

<sup>2</sup> Кемал М. Путь Новой Турции. Тт. 1-3. М., 1929.

<sup>3</sup> İnönü İ. Hattıralar. Kitap 1, 2. Ankara, 1985, 1987.

<sup>4</sup> Cebesoy A. F. Milli mücadele hatıralar. İstanbul, 1953.

<sup>5</sup> Gabriel P. Deux Anne'es au Levant. Paris, 1952.

<sup>6</sup> Bremond E. La Cilicie en 1919-1920. Paris, 1921.

<sup>7</sup> Ллойд-Джордж Д. Европейский хаос. Л-М., 1924. Правда о мирных договорах. Том 2. М., 1957.

<sup>8</sup> Черчилль У. Мировой кризис. М., 1932.



Փաստական հարուստ տվյալներով հատկապես աչքի է ընկնում Կիլիկիայում ֆրանսիական վերահսկողության ղեկավար գնդապետ Է. Բրեմոնի «Կիլիկիան 1919-1920թթ» հուշերը: Սակայն, նա իրադարձությունները լուսաբանում է ֆրանսիական իշխանությունների շահերի պաշտպանության տեսանկյունից՝ պարբերաբար Ֆրանսիային վերագրելով «ազատարարի» և «հաշտարարի» առաքելություն:

Ուշագրավ տեղեկություններ է պարունակում Թուրք գործիչ Ա.Ֆ. Ջեբեսոյի «Ազգային ազատագրական պայքարի հուշերում» գիրքը՝ հատկապես Մ.Քեմալի և Ֆրանսիայի ներկայացուցիչ Ժ. Պիկոյի միջև բանակցությունների նյութերը: Խոսելով Կիլիկիայում իրադարձությունների մասին՝ նա միտումնավոր կեղծում է փաստերը և պնդում, թե իբր «հայերը սրի են քաշում բնակչությանը, հրդեհում Թուրքական գյուղերը»<sup>1</sup>:

Ուսումնասիրության ընթացքում օգտվել ենք նաև խորհրդային և սփյուռքահայ մամուլի նյութերից<sup>2</sup>: 1920-1939թթ. Կ. Պոլսում, Փարիզում, Բեյրութում հրապարակվող հայ պարբերականներում փաստական զգալի նյութ է պարունակվում Թուրքիայի ներքաղաքական կյանքի, Կիլիկիայում Ֆրանսիայի քաղաքականության, Լոնդոնի և Լոզանի համաժողովներում Անկարայի պատվիրակության քաղաքական կեցվածքի, հետլոզանյան շրջանի Թուրքիայի արտաքին քաղաքականության, Ալեքսանդրետի սանջաքի հիմնախնդրի կարգավորման գործընթացի մանրամասների վերաբերյալ: Դրանցում ուշագրավ մեջբերումներ կան ֆրանսիական և Թուրքական մամուլից, որը հնարավորություն է տալիս առավել ամբողջական պատկերացում կազմել ֆրանս-թուրքական հարաբերություններում առկա հակասությունների մասին:

Հայ պատմաբաններից առանձնացնենք անվանի Թուրքագետ Ռ. Սահակյանի աշխատությունը, որտեղ մանրամասն վերլուծվել է ֆրանս-թուրքական դիվանագիտական կապերի զարգացումը 1919-1921թթ., քեմալական Թուրքիայի և Ֆրանսիայի քաղաքականությունը Կիլիկիայում, և դրա ողբերգական հետևանքները կիլիկիահայության համար<sup>3</sup>: Նա Ֆրանսիայի արտաքին քաղաքականության փոփոխականությունը հաճախ դիտարկում է Խորհրդային Ռուսաստանի հետ Անգլիայի և Ֆրանսիայի դրսևորած թշնամական վերաբերմունքի համապատկերում, ցույց տալիս քեմալական շարժման իրական դեմքն ու բովանդակությունը:

Ա. Բայրամյանը կարևոր սկզբնաղբյուրների հիման վրա ապացուցում է, որ Ալեքսանդրետի սանջաքը սիրիական տարածք է, որը հանիրավի խլվեց Սիրիայից և բռնակցվեց Թուրքիային: Նա հանգամանալից վերլուծում է միջազգային հարաբերությունները և թեման դիտարկում առավելապես այս համատեքստում: Նա Ալեքսանդրետի սանջաքի խնդրի «վերջնական» կարգավորման գործընթացում մեղադրելով հիմնական դերակատարներ Թուրքիային, Ֆրանսիային և Անգլիային, այն համարում է «Մյունխենյան գործարքի» նախադեպ<sup>4</sup>:

Թեմայի որոշ խնդիրների մասամբ անդրադարձել են նաև Ն. Հովհաննիսյանը<sup>5</sup>, Հ. Սարգսյանը<sup>6</sup> Ս. Բաղդասարյանը<sup>7</sup>:

<sup>1</sup> Սահակյան Ռ., ֆրանս-թուրքական հարաբերությունները և Կիլիկիան 1919-1921թթ.: Ե., 1970:

<sup>2</sup> Բայրամյան Ա., Ալեքսանդրետի սանջաքի հարցը և միջազգային դիվանագիտությունը 1936-1939թթ.: Ե., 1998:

<sup>3</sup> Արաբական երկրների պատմություն: Հտ. 4: Ե., 2007, էջ 767:

<sup>4</sup> Հովհաննիսյան Ն., Սարգսյան Հ., Սիրիան անկախության համար մղված պայքարում 1917-1946: Ե., 1975:

<sup>5</sup> Բաղդասարյան Ս., Թուրքիայի քաղաքական համակարգը 1920-1930-ական թթ.: Ե., 2001:

<sup>1</sup> Cebesoy A. F. Milli mücadele hatıraları. İstanbul, 1953.

<sup>2</sup> Տես գրականության ցանկում:



Ֆրանս-թուրքական հարաբերությունների համակողմանի լուսաբանման համար կարևոր աղբյուր են ծառայել Ֆրանսիական պատմաբանների, լրագրողների, դիվանագետների ու ռազմական գործիչների ուսումնասիրությունները:

Ֆրանսիացի հեղինակների աշխատություններից առանձնանում է Պ.Դյու Վեուի «Կիլիկիայի տառապանքները»<sup>1</sup> գիրքը: Նա վերլուծելով Ֆրանսիայի քաղաքականությունը Կիլիկիայում և կիլիկիահայություն հանդեպ բազմիցս քննադատում է Ֆրանսիայի ղեկավար շրջաններին: Նրա «Ալեքսանդրետի աղետը (1934-1938)» գիրքը պարունակում է շափազանց հարուստ փաստագրական նյութ սանջաքում ֆրանսիացիների վարած թուրքանպաստ քաղաքականության, նաև հակամարտության առաջացման ներքին գրդապատճառների, գաղտնի վավերագրերի մասին: Նրա հաջորդ աշխատությունը՝ «Քրիստոնյաները վտանգի տակ Մուսա լեռան վրա», արժեքավոր է հատկապես նրանով, որ այնտեղ բերված են ականատեսի հավաստի վկայություններ ու փաստական տվյալներ թուրքական զորքերի մուտքից հետո շրջանում բացահայտ «թուրքացման» քաղաքականության մասին: Հիմնախնդրի լուսաբանման համար արժեքավոր տվյալներ կան նաև Մ.Պայառեսի<sup>2</sup>, Ժ.Պիշոնի<sup>3</sup>, Մ.Պեռնոյի<sup>4</sup> և այլոց<sup>5</sup> աշխատություններում:

<sup>1</sup> Veou P. du. Le Passion de la Cilicie. 1919-22. Paris, 1954. Le de'sastre d' Alexandrette, 1934-38. Paris, 1938. Les che'tiens en Peril au Moussa-Dagh. Paris, 1939.

<sup>2</sup> Paillares M. Le Ke'malisme devant les Allies. Paris, 1922.

<sup>3</sup> Pichon J. Le partage du Proche-Orient, Paris, 1938.

<sup>4</sup> Pernot M. La Question Turquie. Paris, 1923.

<sup>5</sup> Mandelstam A. La Socie'te' des Nations et les Puissances devant le proble'me arme'nien. P.s, 1926. Materne M. Le massacre de Marache. P., 1921. Histoire des Arme'niens. Toulouse, 1982. Andre F. Histoire de la guerre froide. P., 1983. Claude P. La Syrie. P., 1977. Pech E. Les Allie's et la Turquie. P., 1925. Pernot M. La Question Turquie. P., 1923. Gontant B. D'Angora a Lausanne. P., 1924.

Թեմայի առանձին հարցեր իրենց դրսևորումն են գտել խորհրդային հեղինակների աշխատություններում: Սակայն, որ դրանցում առկա են միակողմանի ու թերի գնահատականներ, փաստերի և ղեպքերի կանխակալ մեկնաբանություններ:

Ա. Միլլերը մանրամասնում է ֆրանսիական կառավարության ներկայացուցիչ Ֆրանկլեն-Բուլոնի և Քեմալի բանակցությունները, 1921թ. պայմանագրի ստորագրումը<sup>1</sup>: Նա հաճախ գովեստի է արժանացնում Քեմալին և քեմալական շարժումը, ներկայացնում միայն շարժման ազատագրական ուղղվածությունը, մինչդեռ շարժմանը բնորոշ է նաև զավթողական բնույթ: Նույն կերպ է վարվում նաև Վ.Գուրկո-Կրյաժնինը՝ գովերգելով քեմալական շարժումը<sup>2</sup>:

Քննադատության շեն դիմանում նաև Ա. Շամսուտդինովի<sup>3</sup> և Ն.էֆենդիևայի<sup>4</sup> աշխատությունները: Շամսուտդինովը լուսաբանելով իրադարձությունները Կիլիկիայում, լուսն է Անկարայի ջարդարարական գործողությունները, իսկ էֆենդիևան ավելի հեռու է գնում և պնդում, թե իբր հայերն են զբաղվել ջարդարարական գործողություններով: Դ.Ֆիլիպենկոն ևս ներկայացնելով Թուրքիայում Ֆրանսիայի առևտրատնտեսական շահերը՝ կրկին շրջանցում է քեմալականների ազգայնամոլ քաղաքականությունը<sup>5</sup>: Նույն ձև Վ.Ալեքսեևը և Մ.Քերիմովը գրում են. «Ալեքսանդրետի սանջաքը բազմազգ մի շրջան էր, որի ազգաբնակչությունը կազմված էր առավելապես

<sup>1</sup> Миллер А. Очерки новейшей истории Турции. М.-Л., 1948.

<sup>2</sup> Гурко-Кряжин А. История революций в Турции. М., 1923.

<sup>3</sup> Шамсутдинов А. Национально-освободительная борьба в Турции 1918-1923. М., 1966.

<sup>4</sup> Эфендиева З. Борьба турецкого народа против французских оккупантов на Юге Анатолии 1919-1921. Баку, 1966.

<sup>5</sup> Филипенко Д. Турецко-французские отношения в период национально-освободительной войны в Турции 1918-1922. Киев, 1964.



Ֆրանս-թուրքական հարաբերությունների համակողմանի լուսաբանման համար կարևոր աղբյուր են ծառայել Ֆրանսիական պատմաբանների, լրագրողների, դիվանագետների ու ռազմական գործիչների ուսումնասիրությունները:

Ֆրանսիացի հեղինակների աշխատություններից առանձնանում է Պ.Դյու Վեուի «Կիլիկիայի տառապանքները»<sup>1</sup> գիրքը: Նա վերլուծելով Ֆրանսիայի քաղաքականությունը Կիլիկիայում և կիլիկիահայության հանդեպ բազմիցս քննադատում է Ֆրանսիայի ղեկավար շրջաններին: Նրա «Ալեքսանդրետի աղետը (1934-1938)» գիրքը պարունակում է չափազանց հարուստ փաստագրական նյութ սանջաքում ֆրանսիացիների վարած թուրքանպաստ քաղաքականության, նաև հակամարտության առաջացման ներքին դրդապատճառների, գաղտնի վավերագրերի մասին: Նրա հաջորդ աշխատությունը՝ «Քրիստոնյաները վտանգի տակ Մուսա լեռան վրա», արժեքավոր է հատկապես նրանով, որ այնտեղ բերված են ականատեսի հավաստի վկայություններ ու փաստական տվյալներ թուրքական զորքերի մուտքից հետո շրջանում բացահայտ «թուրքացման» քաղաքականության մասին: Հիմնախնդրի լուսաբանման համար արժեքավոր տվյալներ կան նաև Մ.Պայառեսի<sup>2</sup>, Ժ.Պիշոնի<sup>3</sup>, Մ.Պեռնոյի<sup>4</sup> և այլոց<sup>5</sup> աշխատություններում:

<sup>1</sup> Veou P. du. Le Passion de la Cilicie. 1919-22. Paris, 1954. Le de'sastre d'Alexandrette, 1934-38. Paris, 1938. Les che'tiens en Peril au Moussa-Dagh. Paris, 1939.

<sup>2</sup> Paillares M. Le Ke'malisme devant les Allies. Paris, 1922.

<sup>3</sup> Pichon J. Le partage du Proche-Orient, Paris, 1938.

<sup>4</sup> Pernot M. La Question Turquie. Paris, 1923.

<sup>5</sup> Mandelstam A. La Socie'te' des Nations et les Puissances devant le proble'me arme'nien. P.s, 1926. Materne M. Le massacre de Marache. P., 1921. Histoire des Arme'niens. Toulouse, 1982. Andre F. Histoire de la guerre froide. P., 1983. Claude P. La Syrie. P., 1977. Pech E. Les Allie's et la Turquie. P., 1925. Pernot M. La Question Turquie. P., 1923. Gontant B. D'Angora a Lausanne. P., 1924.

Թեմայի առանձին հարցեր իրենց դրսևորումն են գտել խորհրդային հեղինակների աշխատություններում: Սակայն, որ դրանցում առկա են միակողմանի ու թերի գնահատականներ, փաստերի և դեպքերի կանխակալ մեկնաբանություններ:

Ա. Միլլերը մանրամասնում է ֆրանսիական կառավարության ներկայացուցիչ Ֆրանկլեն-Բուլոնի և Քեմալի բանակցությունները, 1921թ. պայմանագրի ստորագրումը<sup>1</sup>: Նա հաճախ գովեստի է արժանացնում Քեմալին և քեմալական շարժումը, ներկայացնում միայն շարժման ազատագրական ուղղվածությունը, մինչդեռ շարժմանը բնորոշ է նաև զավթողական բնույթ: Նույն կերպ է վարվում նաև Վ.Գուրկո-Կրյաժինը՝ գովերգելով քեմալական շարժումը<sup>2</sup>:

Քննադատության չեն դիմանում նաև Ա. Շամսուտդինովի<sup>3</sup> և Ն.էֆենդիևայի<sup>4</sup> աշխատությունները: Շամսուտդինովը լուսաբանելով իրադարձությունները Կիլիկիայում, լուում է Անկարայի ջարդարարական գործողությունները, իսկ էֆենդիևան ավելի հեռու է գնում և պնդում, թե իբր հայերն են զբաղվել ջարդարարական գործողություններով: Դ.Ֆիլիպենկոն ևս ներկայացնելով Թուրքիայում Ֆրանսիայի առևտրատնտեսական շահերը՝ կրկին շրջանցում է քեմալականների ազգայնամոլ քաղաքականությունը<sup>5</sup>: Նույն ձև վ.Ալեքսեևը և Մ.Քերիմովը գրում են. «Ալեքսանդրետի սանջաքը բազմազգ մի շրջան էր, որի ազգաբնակչությունը կազմված էր առավելապես

<sup>1</sup> Миллер А. Очерки новейшей истории Турции. М.-Л., 1948.

<sup>2</sup> Гурко-Кряжин А. История революций в Турции. М., 1923.

<sup>3</sup> Шамсутдинов А. Национально-освободительная борьба в Турции 1918-1923. М., 1966.

<sup>4</sup> Эфендиева З. Борьба турецкого народа против французских оккупантов на Юге Анатолии 1919-1921. Баку, 1966.

<sup>5</sup> Филиппенко Д. Турецко-французские отношения в период национально-освободительной войны в Турции 1918-1922. Киев, 1964.



արաբներից և թուրքերից<sup>1</sup>: Մինչդեռ Ալեքսանդրետի սանջաքի բնակչության զգալի մասը հայեր էին: Հետաքրքիր տեղեկություններ կան Լ.Ժիվկովայի աշխատությունում, որտեղ նա անգլո-թուրքական հարաբերությունների համատեքստում անդրադառնալով Ֆրանսիայի արտաքին քաղաքական որոշ դրվագների՝ ցույց տալով նրա կախվածությունը Անգլիայից<sup>2</sup>:

Նկատի ունենալով, որ թուրք պատմաբանների գործերում դեպքերի լուսաբանումը հեռու են գիտական անաշտությունից և հաճախ միտումնավոր խեղաթյուրվում է իրականությունը, քննական մոտեցում ենք ցուցաբերել՝ ենթակայական մոտեցումից զերծ մնալու համար: Օսմանյան պարտքի հիմնախնդրի կարգավորման գործընթացի, այս խնդրում շահագրգիռ պետությունների, հատկապես Ֆրանսիայի քաղաքականության մասին կարևոր մանրամասներ կան թուրք հեղինակ Հ. Յենիայի «Օսմանյան պարտքերը» աշխատությունում<sup>3</sup>:

Շահեկան տեղեկություններ են պարունակում «Թուրքիայի արտաքին քաղաքականությունը» ժողովածուն<sup>4</sup>, Թ.Բըլբըլի-օղլուի<sup>5</sup>, Ս.Թուրանի<sup>6</sup>, Ք.Օզթյուրքի,<sup>7</sup> Ա.էսմերի<sup>8</sup>, Շ.Այդեմիրի<sup>9</sup>, Ջ.Այջայուրեքի<sup>10</sup>, Ա.Գյորելի<sup>11</sup> աշխատությունները:

Թուրք-Ֆրանսիական հարաբերությունները լուսաբանելիս օգտագործել ենք նաև անգլիական աղբյուրներ, որոնցից կարևորել ենք հատկապես «Մեծ Բրիտանիայի արտաքին քաղաքականության փաստաթղթեր (1919-1939)» ժողովածուն<sup>1</sup>: Այդտեղ ընդգրկված փաստական հարուստ տվյալները հնարավորություն են տալիս առավել համակողմանիորեն դիտարկել Ֆրանսիայի արտաքին քաղաքականության դրսևորումները Մերձավոր Արևելքում, և այս համատեքստում՝ անգլո-Ֆրանսիական մրցակցության շարժառիթները և հեռանկարները: Հետաքրքիր մեկնաբանություններ կան նաև Ա.Թոյնբիի<sup>2</sup> բիլի<sup>2</sup> և Գ.Լյուիսի<sup>3</sup> աշխատություններում: Ինչպես շատ հեղինակներ, նրանք ևս հանդես են գալիս անգլիական արտաքին քաղաքականության պաշտպանության դիրքերից՝ միաժամանակ քննադատելով դաշնակից Ֆրանսիային՝ մեղադրելով նրան քեմալականների հետ անջատ բանակցությունների և «դավաճանության» մեջ:

<sup>1</sup> Алексев В., Керимов М. Внешняя политика Турции. М., 1961.  
<sup>2</sup> Живкова Л. Англо-турецкие отношения в 1933-1939гг. М., 1975.  
<sup>3</sup> Hakkı Y. Yeni Osmanlı Borçları Tarihi. İstanbul, 1964.  
<sup>4</sup> Baskın O. Türk dış Politikası. Cilt 1. İstanbul, 2001.  
<sup>5</sup> Tevfik B. Atatürk Anadolu'da 1919-1921. Cilt 1. Ankara, 1959.  
<sup>6</sup> Şerafettin T. Türk devrim Tarihi. Kitap 2. Ankara, 1992.  
<sup>7</sup> Kazım Ö. Atatürk'ün TBMM Açık ve Gizli oturumlarındaki Konuşmaları. Cilt 2. Ankara, 1990.  
<sup>8</sup> Esmer A. Siyasi tarih. Ankara, 1953.  
<sup>9</sup> Aydemir Ş. İkinci Adam. İstanbul, 1993.  
<sup>10</sup> Arcayürek C. Şeytan Üçgeninde Türkiye. Ankara, 1987.  
<sup>11</sup> Gürel A. Yabancı kaynaklarda türk-ermen ilişkileri. İzmir, 2006.

<sup>1</sup> Documents on British Foreign Policy 1919-1939. First series, vol. 4. London, 1952.  
<sup>2</sup> Toynbee A. Survey of International Affairs. Vol 1. London, 1937.  
<sup>3</sup> Lewis G. Turkey. London, 1955.



## ԳՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՖՐԱՆՍԻԱՅԻ ԵՎ ԹՈՒՐԿԻԱՅԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1920-1923 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

### 1. Ֆրանսիայի շահերը հետպատերազմյան Թուրքիայում

Առաջին համաշխարհային պատերազմը, որը սկսվել էր աշխարհի քաղաքական քարտեզի վերաձևման համար, ավարտվեց Գերմանիայի և դաշնակիցների պարտությունով: Օսմանյան Թուրքիան 1918թ. հոկտեմբերի 30-ին Մուղրոսում զինադադարի համաձայնագիր ստորագրեց Անտանտի պետությունների հետ և դուրս եկավ պատերազմից: Դրանից անմիջապես հետո դաշնակիցները, գլխավորապես Անգլիան, որի քաղաքական նշանակությունը հետպատերազմյան աշխարհում զգալիորեն մեծացել էր, ձեռնամուխ եղան համաձայնագրով նախատեսված տարածքների գրավմանը:

Դեռ Առաջին աշխարհամարտի տարիներին Անտանտի երկրների ղեկավարներն անդրադառնալով Օսմանյան կայսրության խնդրին, բազմիցս հայտարարել էին, որ վերջինիս տարածքային ամբողջականության մասին խոսք լինել չի կարող, և Թուրքիան պետք է մասնատվի:

Հիրավի, Առաջին աշխարհամարտից հետո աշխարհաքաղաքական փոփոխությունների և վերադասավորումների արդյունքում Թուրքիայի համար ստեղծվել էր բավական անբարենպաստ միջազգային իրավիճակ: Սակայն պատերազմի ավարտից անմիջապես հետո՝ իրադարձությունների զարգացմանը զուգընթաց, փոխվեցին նաև մեծ տերությունների քաղաքական դիրքորոշումները: «Օսմանյան ժառանգության» բաժանման հետպատերազմյան ծրագրերը սուր հակասություններ

առաջ բերեցին դաշնակիցների ճամբարում: Տարածայնությունները խորն էին հատկապես Անգլիայի և Ֆրանսիայի միջև, որոնք ավելի ցայտուն դրսևորվեցին հետագա իրադարձությունների ընթացքում: Ի տարբերություն բրիտանական ղեկավար շրջանների՝ Ֆրանսիան դեմ էր Թուրքիայի տարածքային մասնատմանը, որն էլ պայմանավորված էր Օսմանյան կայսրությունում Ֆրանսիայի ունեցած տնտեսական և ֆինանսական շահերով: Օսմանյան կայսրության վերաբաժանման հարցին Անտանտի ղեկավարները անդրադարձան 1919թ. հունվարին՝ Փարիզի համաժողովում, բայց այստեղ նույնպես Թուրքական ժառանգության բաժանման հարցում շահագրգիռ եվրոպական տերությունները ընդհանուր հայտարարի չեկան:

Թուրքական խնդրում հատկապես մեծ ակտիվություն էր ցուցաբերում Ֆրանսիան, որին բաժին էր ընկնում Օսմանյան պարտքի 60,31%-ը (2.454. 417.377 ֆրանկ), այն դեպքում, երբ Անգլիայի բաժինը կազմում էր ընդամենը 14,19% (577.499. 281 ֆրանկ), Գերմանիայինը՝ 21,31% (867.583.506 ֆրանկ)<sup>1</sup>: Իսկ Ֆրանսիայի արտգործնախարար Բերտելոյի տվյալներով օսմանյան պարտքի 80%-ը էր գտնվում ֆրանսիական ավանդատուների ձեռքին, որի ընդհանուր գումարը հասնում էր 144 մլն ֆունտ-ստեռլինգի<sup>2</sup>:

«Անգլիան ոչինչ չի կորցնում Թուրքիայի փլուզումից,-գրում է Մ. Պերնոն,- այլ է Ֆրանսիայի վիճակը: Այն դեպքում, երբ Անգլիայի բաժնետոմսերը Թուրքիայի պետական պարտքի մեջ Բելգիայի և Հոլանդիայի հետ միասին կազմում է 15%, միայն Ֆրանսիայի կատարած ներդրումները հասնում են 60%-ի

<sup>1</sup> Սահակյան Ռ., նշվ. աշխ., էջ 402: Մեկ այլ տվյալով Ֆրանսիայի ձեռքին էր գտնվում ողջ պարտքի շուրջ 62,9%: Տե՛ս Новичев Д. Очерки экономики Турции до Мировой войны. М.-Л., 1937, с. 316.

<sup>2</sup> Ллойд-Джордж Д. Правда о мирных договорах, том. 2, с. 402.



(2,5 մլդ ոսկի ֆրանկ)»<sup>1</sup>: Բացի վերը նշվածից, Ֆրանսիան նշանակալի ներդրումներ էր կատարել Թուրքիայի արդյունաբերական ձեռնարկություններում (ավելի քան 900 մլն ֆրանկ), օրինակ՝ Բրուսայում (Բուրսա) մետաքսի արդյունաբերության, ծխախոտի արտադրության մեջ (Օսմանյան ծխախոտի ընկերություն), որոնք ամբողջությամբ պատկանում էին ֆրանսիացիներին, ինչպես նաև երկաթուղային ճանապարհների ոլորտում՝ Դամասկոս-Խանան, Սալոնիկ-Կ. Պոլիս, Իզմիր-Կասաբա, որոնք տնօրինում էին ֆրանսիական ընկերությունները: «Արևելյան գորգի արտադրության ընկերությունը», որին փաստացի պատկանում էր Զմյուռնիայում (Իզմիր) արտադրվող գորգի մենաշնորհը, ևս շահագործվում էր ֆրանսիացիների կողմից<sup>2</sup>:

«Մերձավոր Արևելքի երկրների և հատկապես Թուրքիայի վրա Ֆրանսիայի ազդեցությունը շատ ավելի ուժեղ է, քան Անգլիայինը, - գրում է Ի. Լեմինը, - միաժամանակ շեշտելով, որ, ֆրանսիական կապիտալը վիթխարի ակտիվություն է ցուցաբերում Օսմանյան կայսրությունում: Թուրքիայում Ֆրանսիայի ներդրումները կազմում են օտար կապիտալի 2/3 մասը՝ 3,5 մլրդ ֆրանկ: Ֆրանսիական համայնքների, միսիոներական դպրոցների, բանկերի և այլ հաստատությունների միջոցով Ֆրանսիան քարոզչական ակտիվ գործունեություն էր ծավալում Կ. Պոլսում, Սիրիայում, Անատոլիայում, Պաղեստինում: Միայն Սիրիայում կատարել է 200 մլն ֆրանկի ներդրում»<sup>3</sup>:

Ամփոփելով, փաստենք, որ Ֆրանսիայի ձեռքին էր կենտրոնացված ողջ հանքարդյունաբերությունը, իսկ երկաթուղիների

և նավահանգիստների կառուցման ոլորտում ներդրած կապիտալով նա բացահայտ գերակշռություն ուներ Անգլիայի նկատմամբ: Եվ եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ Գերմանիան Առաջին աշխարհամարտում պարտվել էր և զրկվել բոլոր արտոնություններից և ազդեցություն ոլորտներից, ավելի հստակ կերևա այն շահագրգռվածությունը, որը հանդես էր բերում Ֆրանսիան թուրքական խնդրում: Բացի նշված տնտեսական և ներդրումային արտոնություններից, որն ուներ Ֆրանսիան Անգլիայի համեմատ, մեծ էր նաև նրա քաղաքական և մշակութային ազդեցությունը:

Ֆրանսիայի քաղաքականության մեջ կարևոր նշանակություն ուներ նաև կրոնական գործոնը. «Ֆրանսիան պետք է վերականգնի իր հին ավանդական քաղաքականությունը Թուրքիայի հանդեպ», - հայտարարում էր Ֆրանսիայի վարչապետ Արիստիդ Բրիանը<sup>1</sup>:

«Ֆրանսիան մահմեդականների կողմնակից է, նա այդպիսին է ավանդաբար, իր մեծահոգի ձգտումներով և հանուն իր շահերի պաշտպանության», - գրում է հայտնի հրապարակախոս Ժակ Կայզերը և հավելում, որ «1914-1918թթ. պատերազմը չխարխլեց այդ խոր և կայուն համերաշխության հիմքերը, Ֆրանսիան պարտավոր է վերադառնալ Թուրքիայի հետ բարեկամությանը: Իսլամն անհամբերությամբ սպասում է Ֆրանսիայի քաղաքական շրջադարձին»<sup>2</sup>: Ֆրանսիացի հեղինակ Միշել Պայառեսն, արտահայտելով ֆրանսիական բարձրաստիճան հրամանատարության շրջանակներում տիրող համոզմունքները, շեշտում է. «Ի՞նչ ենք փնտրում այստեղ. մեր հեղինակության պահպանում, մեր առևտրի ազատ զարգացում, մեր դրամական շահերի ապահովում. մենք այս բոլորը կունե-

<sup>1</sup> Hakki Y. Yeni Osmanlı Borçları Tarihi, s. 72.

<sup>2</sup> Павлович М. Лозаннская конференция, «Новый Восток», 1923, N. 3, с. 13.

<sup>3</sup> Лемин И. Внешняя политика Великобритании от Версаля до Локарно 1919-1925гг. М., 1947, с. 183.

<sup>1</sup> Mandelstam A., op. cit., p. 195.

<sup>2</sup> Кайзер Ж. Европа и новая Турция. М., 1925, с. 55.





նանք ֆրանս-թուրքական համագործակցության շնորհիվ, և դրա համար պետք է պաշտպանենք թուրքերին»<sup>1</sup>: Իր հերթին Ժ.Կլեմանսոն հայտարարում էր. «Մարդկության բարիքը պահանջում է, որ Թուրքիան խորտակվի, քանի որ նա ընդունակ չէ մարդավայել պետություն կազմել»<sup>2</sup>: Միևնույն ժամանակ Ֆրանսիայի ղեկավարներն անսքող ձևով հանդես էին գալիս թուրքանպաստ ելույթներով և նախաձեռնություններով:

Այս ճանապարհին, սակայն Ֆրանսիան հանդիպեց Անտանտը ռգեշնչող իր հզոր «դաշնակցի», իսկ իրականում ախոյանի՝ Անգլիայի, լուրջ դիմադրությանը, որին լիովին ձեռնտու էր Թուրքիայի մասնատումը: Ֆրանսիայի կառավարող շրջանները ստիպված էին հաշվի առնել ստեղծված միջազգային դրությունը, որն ամենևին չէր բխում նրանց շահերից, և հաշվի նստեին Անտանտի հիմքը կազմող Անգլիայի հետ: Ինչպես իրավացիորեն Ի.Լեմինն է փաստում. «Այստեղ հարցը բոլորովին այլ է: Առաջին աշխարհամարտից հետո իրագրությունը լիովին փոխվել էր, Մերձավոր Արևելքում Անգլիան էր դրության տերը, ոչ թե Ֆրանսիան»<sup>3</sup>:

Անգլիայի ղեկավար շրջաններն ի սկզբանե հասկացնել տվեցին իրենց դաշնակցին, որ չեն պատրաստվում սրբորեն պահպանել պատերազմի տարիներին կնքված համաձայնագրերը և կատարելու նույնիսկ երեկվա դաշնակիցների և առաջին հերթին Ֆրանսիայի նկատմամբ ունեցած պայմանագրային պարտավորությունները: Առաջին դրսևորումը թերևս կարելի է համարել Սալթս-Պիկոյի համաձայնագրի վերանայումը: Վերջինս ստորագրվել էր Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի միջև, ըստ որի՝ Արևմտյան Սիրիան, Լիբանանը, Կիլիկիան և

Հայաստանի հարավային և արևմտյան տարածքների մի մասը անցնում էին Ֆրանսիայի վերահսկողության տակ (այսպես կոչված «կապույտ գոտի»): Արևելյան Սիրիան և Մոսուլի վիլայեթը ևս ընդգրկվում էին ֆրանսիական ազդեցության գոտու մեջ («Ա» գոտի)<sup>1</sup>: Այս համաձայնագրի իրագործումը Ֆրանսիական դիվանագիտությունը իր համար գերխնդիր էր համարում, սակայն չկարողացավ այն «անվնաս» պահպանել, և հարկադրված գնաց նրա մասնակի վերանայմանը՝ Մեծ Բրիտանիային զիջելով Պաղեստինը և Իրաքը, հետագայում նաև Մոսուլի նավթային շրջանները<sup>2</sup>: Դրանից հետո էլ Անգլիայի վարչապետ Դ.Լոյդ-Ջորջը տեղեկացրեց Ֆրանսիայի իր պաշտոնակից Ժ.Կլեմանսոյին, որ Սալթս-Պիկոյի պայմանագիրը չի կարող ուժի մեջ մնալ: Այս պարագայում, կիսում ենք Ն.Հովհաննիսյանի այն կարծիքը, որ «Անգլիան վստահ էր՝ հենվելով իր զինված ուժերի վրա, որ ինքը ցանկացած պահի կարող է հրաժարվել իր խոստումներից և համապատասխան փոփոխություններ մտցնել Սալթս-Պիկոյի պայմանագրում»<sup>3</sup>: Փաստորեն ստացվում էր, որ Անգլիան նախ ստանում էր Մոսուլը՝ խոստումներ տալով Ֆրանսիային, ապա հարցականի տակ դնում Ֆրանսիայի իրավունքները Սիրիայում և Կիլիկիայում: Կանգնելով փաստի առջև՝ Կլեմանսոն հարկադրված, հագուտ Անգլիայի հրաժարվեց Մոսուլի շրջանից: Հետագայում, փորձելով պաշտպանվել Մոսուլի նավթային հարստությունները կորցնելու մեղադրանքներից, Կլեմանսոն ջանում է արդարանալ. «Այո, ես զիջեցի Մոսուլը, բայց նրանք մոռանում են, որ

<sup>1</sup> Paillares M. Le Ke'malisme devant les Allie's. Paris, 1922, p. 78.

<sup>2</sup> «Մշակ», Թիֆլիս, 1921 հունվարի 6:

<sup>3</sup> Лемин И., цит. соч., с. 193.

<sup>1</sup> Անգլիային մնաց Քիրքուկի սանջաքի մի մասը: Лазарев М. Империализм и Курдский вопрос 1917-1923. М., 1989. Claude P. La Syrie. Paris, 1977, p. 137.

<sup>2</sup> Мусский И. Сто великих дипломатов. М., 2001, с. 466.

<sup>3</sup> Оганесян Н. Национально-Освободительное движение в Ираке 1917-1958гг. Е., 1976, с. 96.



ես այն օգտագործեցի որպես խայծ Կիլիկիան ստանալու համար, թեև մեր շատ լավ դաշնակիցներից սմանք չէին ուզում, որ այն մեզ տրվի: Կիլիկիան և Ալեքսանդրեստը այդքան էլ վատ բաներ չեն: Դրա համար էլ ես անգլիացիներին ասացի. «Լավ, ձեզ տալիս եմ Մոսուլը և վերցնում եմ Կիլիկիան, միթե՞ ինձ կարելի է մեղադրել»<sup>1</sup>: Իսկապես, Կիլիկիան տնտեսական առումով մեծ կարևորություն ուներ, հատկապես արդյունաբերական որոշ նյութերի համար Կիլիկիան շատ հեռանկարային էր: Հետագայում Ժ. Կլեմանսոն խոստովանում է, որ չիմանալով է համաձայնել զիջել Մոսուլը. «Եթե դուք ինձ ասեիք, որ Միջագետքի զիջումը կհանգեցնի հսկայական տարածքների կորստի, ես կմերժեի ձեզ այդ հարցում»<sup>2</sup>:

Տնտեսական զարգացման լուրջ հեռանկարներ ունեցող Կիլիկիան թեև կարևոր էր Ֆրանսիայի համար, բայց Ֆրանսիացիների ծրագրերում շատ ավելի մեծ տեղ ուներ Սիրիան, որը գտնվելով ռազմավարական չափազանց նպաստավոր դիրքում, կապող օղակ էր եվրոպական տերությունների և նրանց գաղութների միջև: Մեծ էր նաև Ֆրանսիայի քաղաքական և մշակութային ազդեցությունը Սիրիայում: Պատերազմի ավարտից հետո թվում էր, թե Ֆրանսիացիներին կհաջողվի ամրապնդել իրենց տնտեսական և քաղաքական դիրքերը, սակայն այստեղ ևս Անգլիան բոլոր հնարավոր միջոցներով պայքարեց իր դաշնակցի շահերի դեմ, և ինչպես նշում է Ի. Լեմինը. «Մերձավոր Արևելքում Անգլիայի մրցակիցը շարունակում էր մնալ Ֆրանսիան»<sup>3</sup>:

Մեր համոզմամբ, թեև այս զիջումները թուլացրին Ֆրանսիայի մերձավորարևելյան դիրքերը, սակայն, Ֆրանսիան նախ-

կինի պես աշխարհի երկրորդ գաղութային տերությունն էր, և որպես այդպիսին չեր կարող չմասնակցել և ամենակարևորը՝ չպահանջել իր «բաժինը» Օսմանյան կայսրության տարածքների բաժանման շուրջ ծավալվող գործընթացներից:

Անտանտի երկրորդ մեծ պետություն Ֆրանսիայի համար, բացի անգլիական պատնեշից լուրջ սպառնալիք ստեղծեց նաև մեկ այլ խոշոր տերություն՝ ԱՄՆ-ը: Պատերազմից հետո ԱՄՆ-ի դերը աշխարհում կտրուկ փոխվում է: Ամրապնդելով Ֆինանսա-տնտեսական համակարգը, ԱՄՆ պարտապան երկրից վերածվեց պարտատեր երկրի, և կենտրոնացրեց համաշխարհային ոսկու պաշարի շուրջ 40%<sup>1</sup>: Մերձավորարևելյան տարածաշրջանում իր համար ազդեցություն ունեցող ասպահնուկները և նրան հաջորդած տարիները ցույց տվեցին, որ Անտանտի երկրներից յուրաքանչյուրի հնարավորությունները հետպատերազմյան գործընթացներում որոշվելու էին իրենց ուժերի հարաբերակցությամբ:

Առաջին աշխարհամարտը և նրան հաջորդած տարիները ցույց տվեցին, որ Անտանտի երկրներից յուրաքանչյուրի հնարավորությունները հետպատերազմյան գործընթացներում որոշվելու էին իրենց ուժերի հարաբերակցությամբ:

Խնդիրն այն էր, որ համաշխարհային պատերազմի ընթացքում և դրա ավարտից հետո Ֆրանսիայի համար առաջնահերթ հարց էր եվրոպական գործերի կարգավորումը (Գերմանիայից ռազմատուգանքների գանձում, Սաարի ավազանի խնդիրը և այլն) և մերձավորարևելյան քաղաքականությունը վերը նշածի համեմատ ստորագաս դիրք էր գրավում: Այս

<sup>1</sup> Кемаль М., цит. соч., с. 291.

<sup>2</sup> Кайзер Ж., цит. соч., с. 125.

<sup>3</sup> Лемин И., цит. соч., с. 183.

<sup>1</sup> История Дипломатии. Том 3. М., 1965, с. 138.



բացահայտ առավելութունը Ֆրանսիայի համեմատ շատ լավ գիտակցելով, Անգլիան հմտորեն օգտագործեց այդ փաստը՝ վնասելու համար Ֆրանսիայի շահերը: Այս իմաստով, Մուդրոսի զինագագարը առաջին հարվածն էր՝ ուղղված Ֆրանսիայի հեղինակությունը Մերձավոր Արևելքում: Իրավացի է Ի. Լեմինը, երբ գրում է. «Մերձավոր Արևելքի բաժանման համար անգլո-ֆրանսիական պայքարը հետպատերազմյան պատմության ամենակեղտոտ էջերից մեկն է»<sup>1</sup>:

«Անկարայից Լոզան» աշխատության հեղինակ Ֆրանսիացիներ Գոնտո-Բիրոնը և Լը Ռեվերանը իրավամբ մեղադրում են Ֆրանսիայի կառավարությանը, որ «երբ անգլիացիները տնօրինում էին Ստամբուլը, նա պասիվություն ցուցաբերեց, թույլ տալով, որ Ստամբուլը վերածվի նոր Զիբրալթարի, ավելին, շարունակեցին զիջումների քաղաքականությունը և հրաժարվեցին Մոսուլի և Պաղեստինի նկատմամբ իրենց իրավունքներից»<sup>2</sup>: Ապա, նրանք շատ հետաքրքիր շեշտադրում են կատարում. «Ո՞ւնեք արդյոք Ֆրանսիան հնարավորություն դուրս գալու այն արկածախնդրությունից, որում հայտնվել էր Անգլիային իր հավատարմության պատճառով»<sup>3</sup>:

Հասկանալու համար թե ի՞նչպես ընդունվեց Անտանտի պետությունների վարած քաղաքականությունը Թուրքիայում և ընդհանրապես Օսմանյան կայսրության «ժառանգության» բաժանման շուրջ դաշնակիցների ձեռնարկած մրցավազքին ինչ՞ հակադրեցին Թուրքիայի կառավարող շրջանները, համառոտ շարադրենք նաև Թուրքիայում տիրող իրավիճակը 1-ին համաշխարհային պատերազմից հետո:

<sup>1</sup> Лемин И. цит. соч., с. 184.

<sup>2</sup> Gontant R. de B., Reverent. D'Angora a` Lausanne. Les etapes d'une decheance. Paris, 1924, p. 226.

<sup>3</sup> Նույն տեղում:

Հաղթող տերությունները բացահայտ վարում էին թուրքական պետության ոչնչացման և Թուրքիայի տարածքները բաժանելու քաղաքականություն, որն էլ բողոքի հուժկու ալիք առաջացրեց երկրում: Թուրքերը չհաշտվեցին «իրենց պետության ստրկացման հեռանկարի հետ և երկրում պայքար բռնկվեց օտարերկրյա զավթիչների դեմ»<sup>1</sup>:

Պատերազմը, որը սկսվեց Թուրքիայում, «անկասկած իրենից ներկայացնում է հետպատերազմյան պատմության հերոսական էջերից մեկը», - գրում է Ա. Մելնիկը<sup>2</sup>: Պայքարը գլխավորեց թուրքական բանակի գեներալ Մուստաֆա Քեմալ փաշան (Աթաթյուրք), ում անունով էլ շարժումը կոչվեց քեմալական: Անհրաժեշտ է նշել, որ քեմալական շարժմանը՝ առաջացման առաջին օրից բնորոշ էին երկակիությունը և հակասականությունը: Մի կողմից այն ուներ ազգային ուղղվածություն, մյուս կողմից՝ զավթողական նպատակներ: Վերջինիս վկայությունն է 1920թ. քեմալականների նվաճումներն Անդրկովկասում և Կիլիկիայում: Այս հանգամանքն էլ հաշվի առնելով՝ որոշակի վերապահումով ենք վերաբերվում Թուրքիայի ազգային-ազատագրական պայքար ձևակերպումներին:

Դեռ էրզրումի և Սվազի<sup>3</sup> համաժողովներում հստակորեն որոշվել էին քեմալական շարժման ծրագրային դրույթները, որոնք էլ ձևակերպվեցին 1920թ. հունվարի 28-ին թուրքական պառլամենտի հռչակած «Ազգային ուխտում»<sup>4</sup>: էրզրումի համաժողովը հրավիրվեց «Արևելյան Անատոլիայի իրավունքների պաշտպանության» կոմիտեի կողմից 1919թ. հուլիսի 23-ից օգոստոսի 7-ը: Այստեղ հռչակվեցին Թուրքիայի անկախու-

<sup>1</sup> Турецкая республика, Справочник. М., 1975, с. 230.

<sup>2</sup> Мельник А. Турция. М., 1957, с. 66.

<sup>3</sup> Մանրամասն տե՛ս Goloğlu M. Sivas Kongresi. Istanbul, 2006.

<sup>4</sup> Ազգային ուխտի մասին տե՛ս Türkiye Tarihi. Çarlaş Türkiye 1908-1980. Cilt 4. Istanbul, 2018, s. 86-87.



թյան սկզբունքները և հաստակ նշվեց, որ նպատակներից մեկը Թուրքիայի տարածքային ամբողջականության պահպանումն է: Այս մոտեցումը իր ճառում հաստատեց նաև Քեմալը՝ հայտարարելով, որ «Հայերը ոչ մի իրավունք չունեն այս երկրում: Այս երկիրը անցյալում եղել է Թուրքական, այսօր այն Թուրքական է և ընդմիշտ կմնա Թուրքական»<sup>1</sup>, չնայած նշեց, որ «ներկայումս մեր երկիրը գտնվում է երկու վտանգի միջև՝ հունական վտանգը և հայկական վտանգը»<sup>2</sup>:

Էրզրումի համաժողովի որոշումները, որոնք ըստ Մ.Քեմալի «որոշեցին շարժման քաղաքական ուղին», լրացվեցին և զարգացվեցին 1919թ. սեպտեմբերի 4-12-ը տեղի ունեցած Սվազի (Սեբաստիա) համաթուրքական համաժողովում<sup>3</sup>: Սվազի համաժողովի կողմից ընդունված հիմնական դրույթները լիովին համապատասխանում էին Էրզրումի որոշումներին, տարբերությունը միայն նրանում էր, որ Սվազի համաժողովը ընթացավ ոչ միայն արևելյան վիլայեթների, այլ ընդհանրապես Օսմանյան կայսրության տարածքային անձեռնմխելիության և միասնականության նշանաբանով: Ընտրվում է նաև Ներկայացուցչական կոմիտե՝ Մուստաֆա Քեմալի գլխավորությամբ: Ուշագրավ է, որ թեև «Իթթիհադ վե թերաքքը» (Միություն և Առաջադիմություն) 1918թ., պատերազմում պարտվելուց հետո լուծարվել էր, սակայն դեռևս այդ կազմակերպության ազդեցությունը Թուրքիայի ազգային պատերազմի տարիներին մնում էր բավական ուժեղ: «Իթթիհատ Թերազգըն դարձեալ կը կենդանանա», իրավացի գրում է «Առավոտ»-ը<sup>4</sup>: Այսպես,

1919թ. Սվազի համաժողովին մասնակցում էին «Միություն և Առաջադիմություն» կոմիտեի 90 ականավոր անդամ<sup>1</sup>: Ավելին, Քեմալը, չնայած հայտարարում էր, որ «ո՛չ մեր գործունեությունը, ո՛չ էլ մեր ազգային շարժումը չունեն որևէ ընդհանրություն իթթիհադականության հետ»<sup>2</sup>, բայց հետո խոստովանում, որ հենց իթթիհադական սպաները և պաշտոնյանները կազմեցին ազգային շարժման ողնաշարը:

Այս ամենից կարելի է եզրակացնել, որ քեմալականների ազգային պայքարը հենված էր նախապես մշակված ծրագրի վրա: Պայքարի ղեկավարները ոչ մի կերպ չէին ուզում ընդունել Անտանտի տերությունների կողմից նախկին Օսմանյան կայսրության տարածքների վերաձևման իրողությունը, և ինչպես Թուրք պատմաբան Թևֆիկ Բյըքլիօղլուն է գրում. «1920թ. հունվարի 28-ին ընդունված Թուրքիայի անկախության հռչակագիրը դարձավ ազգային պայքարի դրոշ»<sup>3</sup>: Հարկ է նշել նաև, որ քեմալականների վրա մեծ ազդեցություն ունեցավ հոկտեմբերյան հեղաշրջումը: Խորհրդային Ռուսաստանը ողջունեց քեմալական շարժումը և բարեկամական հարաբերություններ հաստատեց Մուստաֆա Քեմալի հետ:

Չնայած այն փաստին, որ Անգլիան պատերազմից հետո հայտնվել էր իր «դաշնակցի» համեմատ բավական շահեկան իրավիճակում և անում էր ամեն ինչ, որպեսզի այս տարածաշրջանում ի վնաս Ֆրանսիայի ունենա առաջնային դիրք, Ֆրանսիան նույնպես փորձում էր կարգավորել իր Մերձավորարևելյան գործերը՝ ձգտելով Անգլիայից առանձին դիվանագիտական կապերի մեջ մտնել քեմալականների հետ:

<sup>1</sup> Ataturk K. op. cit., cilt 2, s. 126.

<sup>2</sup> Pech E. Les Allie's et la Turquie. Paris, 1925, p. 80.

<sup>3</sup> Ziya Ş. Büyük Şefin, Hususi-Askeri-Siyasi Hayati. Istanbul, 1938, s. 215-218.

<sup>4</sup> Mantran R. Histoire de la Turquie. Paris, 1983, p. 127.

<sup>5</sup> «Առավոտ», 4. Պոլիս, 1920 հունիսի 7:

<sup>1</sup> Բաղդասարյան Ս., Թուրքիայի քաղաքական համակարգը 1920-1930-ական թթ.: Ե., 2001, էջ 16:

<sup>2</sup> Атаурк К. Избранные речи и выступления. М., 1966, с. 58-59.

<sup>3</sup> Tevfik B. Atatürk Anadolu'da 1919-1921. Cilt 1. Ankara, 1959, s. 23.



Այս ճանապարհին Ֆրանսիան առաջին քայլը կատարեց 1919թ. վերջին՝ փորձելով դիվանագիտական կապի մեջ մտնել Քեմալի ղեկավարած Սվազի ներկայացուցչական կոմիտեի հետ: Այդ նպատակով 1919թ. դեկտեմբերին Սիրիայում և Կիլիկիայում Ֆրանսիայի բարձրագույն կոմիսար Ժորժ Պիկոն ժամանում է Սվազ: Մինչ այդ, Պիկոն Կեսարիայում դեկտեմբերի 6-ին հանդիպել էր Ալի Ֆուադ Զեբեսույի հետ, ով այդ ժամանակ Անկարայի կառավարության առաջին դեսպանն էր Ռուսաստանում<sup>1</sup>: Պիկոյի այցի շարժառիթների և Քեմալի հետ ունեցած նրա հանդիպումների վերաբերյալ հանգամանալից տեղեկություններ է հաղորդում հենց Զեբեսույը: Վերջինիս հետ հանդիպման ժամանակ Պիկոն Ֆուադ փաշային վստահեցնում է, որ «ինչպես պարոն Բրիանի, այնպես էլ Ֆրանսիական դիվանագիտության նպատակն է ստեղծել այնպիսի հնարավորություն, որ Միջին Արևելքում թուրքական մեծամասնություն կազմող հատվածում հիմնվի ուժեղ և անկախ թուրքական պետություն»<sup>2</sup>: Պիկոն այնուհետև ժամանում է Սվազ և հանդիպում Ներկայացուցչական կոմիտեի ղեկավար Քեմալի հետ: Նա Քեմալին հայտնում է Ֆրանսիայի կառավարության կազմի առաջիկա փոփոխության և Բրիանի կազմվող նոր կառավարության մասին և ավելացնում. «Այն լիովին կպաշտպանի թուրքական ազգային քաղաքականությունը»<sup>3</sup>:

Ժ. Պիկոյի այցը, ինչպես և սպասվում էր, բողոքի ալիք առաջացրեց Անգլիայում: Անգլիական մամուլը դա որակեց որպես «դաշնակցային» պարտավորությունների խախտում՝ մեղադրելով Անտանտի դաշնակցին քեմալականների հետ առանձին համաձայնության հասնելու փորձերի և իրենց շահերին դավ-

աճանելու մեջ: Ֆրանսիայի ղեկավար շրջանները ի պատասխան այս մեղադրանքին, հայտարարեցին, որ Պիկոն այդ այցը կատարել է անձնական նախաձեռնությամբ, և դա չի հանձնարարել Ֆրանսիայի ԱԳՆ: Տարբեր գնահատականներ տալով ոմանք նշում են, որ դա Քե դ'Օրսեի<sup>1</sup> նախաձեռնությունն էր, մի մասն էլ պնդում են, որ Պիկոն իր նախաձեռնությամբ է հանդիպել Քեմալի հետ. «Ժորժ Պիկոյի Սվազ այցը չէր հանձնարարվել Քե դ'Օրսեի կողմից», - գրում է Միշել Պայառեսը<sup>2</sup>: Կիլիկիայի վարչական վերահսկողության ղեկավար գնդապետ Բրեմոնը ևս նշում է, որ «Քեմալի հետ Ժ. Պիկոյի տեսակցությունը հավանություն չգտավ ոչ՝ Բեյրութում ոչ էլ Կ. Պոլսում»<sup>3</sup>: Ֆրանսիացի մեկ այլ հեղինակ՝ Ժան Պիշոնը, ուղղակի փաստաանք է հայտնում բանակցությունների ձախողման համար. «Եթե Ժ. Պիկոյի բանակցությունները արդյունք տային, ապա մենք Կիլիկիայում անօգուտ ձևով չէինք զոհաբերի մեր զինվորներին և մեր դրամը»<sup>4</sup>:

Այդպիսով, թեև Պիկոյի այցը և Քեմալի համաձայնությունը հավանություն չգտավ Ֆրանսիայի դիվանագիտական շրջաններում, բայց բանակցային գործընթացը որոշակիորեն ուրվագծեց Ֆրանսիական կառավարության՝ քեմալականների հետ անջատ համաձայնության հասնելու միտումները:

Դաշնակիցների հաջորդ քայլը եղավ Ստամբուլի ռազմակալումը: 1920թ. մարտի 16-ին դաշնակից զորքերն ափ իջան Կ. Պոլսում, որից հետո Ներկայացուցչական կոմիտեն իր վրա վերցրեց ժամանակավոր կառավարության գործառույթները: Քեմալը Ստամբուլի մեջլիսի ցրումից հետո՝ 1920թ. ապրիլի 23-

<sup>1</sup> Cebesoy A. F. Mili mücadele hatıraları. İstanbul, 1953, s. 267.

<sup>2</sup> Cebesoy A. F. Mili mücadele hatıraları, s. 268.

<sup>3</sup> Նույն տեղում:

<sup>1</sup> Քե դ'Օրսե փողոցի վրա էր գտնվում Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարությունը:

<sup>2</sup> Paillares M. Le kemalisme devant les Allie's. Paris, 1922, p. 75.

<sup>3</sup> Bremond E. Le Cilicie en 1919-1920. Paris, 1921, p. 36.

<sup>4</sup> Pichon J. Le partage du Proche-Orient. Paris, 1938, p. 203.



ին, Անկարայում գումարեց Թուրքիայի Ազգային Մեծ Ժողով մեջլիս (ԹԱՄԺ), որն իրեն հռչակեց թուրք ժողովրդի օրենսդիր և գործադիր իշխանության գերագույն ներկայացուցիչը, իսկ Քեմալն ընտրվեց ԹԱՄԺ-ի ու կառավարության նախագահ<sup>1</sup>: Փաստորեն Ստամբուլի սուլթանական կառավարությանը<sup>2</sup> զուգահեռ ստեղծվեց իշխանության այլընտրանքային կենտրոն:

Այն ժամանակ, երբ Անկարայում ձևավորվում էր նոր կառավարություն, դաշնակից տերությունների դիվանագետները նույն օրերին որոշում էին Օսմանյան կայսրության նախկին տարածքների «վերջնական» ճակատագիրը: Թուրքական հարցը բուռն քննարկման առարկա է դառնում հատկապես Անգլիայի և Ֆրանսիայի դիվանագիտական ատյաններում: Իրավացի է Ա.Միլլերը, երբ նշում է, որ այժմ Անգլիան և Ֆրանսիան էին որոշում Կ.Պոլսի հարցը, ինչպես և բազմաթիվ այլ հարցեր<sup>3</sup>: Ապագա պայմանագրի հիմնական ուղղությունները նշվել էին 1920թ. փետրվարի 15-17-ին Լոնդոնում Անտանտի ղեկավարներ Դ.Լյոյդ Ջորջի, Ա.Միլլերանի, Ֆ.Նիտտի խորհրդածոդովում: Հանդիպման ժամանակ որոշվում է նաև, որ «սուլթանը և իր կառավարությունը» կմնան Կ.Պոլսում այն դեպքում, երբ կբավարարվեն հաշտության պայմանագրի պայմանները և դրանց կտրվեն հիմնավոր երաշխիքներ: Դաշնակիցները իրենց իրավունք էին վերապահում ռազմակալել Նեղուցների գոտին՝ ներառյալ Մարմարա ծովը: Նեղուցների ազատության պահպանման համար ստեղծվելու էր հատուկ միջազգային հանձնաժողով օժտված ֆինանսական և կառավարման մեծ լիազորություններով: Նեղուցների ղեկավարումն ամբողջովին անցավ դաշնակիցներին՝ իրականում Անգլիային:

1920թ. ապրիլի 18-ին Իտալիայի Սան Ռեմո քաղաքում բացվեց դաշնակից երկրների վարչապետների համաժողով, որը մշակելու էր Թուրքիայի հետ կնքվելիք հաշտության պայմանագրի նախագիծը<sup>4</sup>: Սկզբից նկատելի էր Անգլիայի բացահայտ առավելությունը դաշնակիցների հանդեպ: Նախագծով Ֆրանսիային էր հանձնվում Սիրիայի և Լիբանանի մանդատը, Անգլիան համաձայնում էր Կիլիկիան Սիրիային միացնելու ֆրանսիական առաջարկին, մինչդեռ Անգլիային էր անցնում Պաղեստինի և Միջագետքի մանդատները՝ Մոսուլի հետ միասին: «Արդեն Սան-Ռեմոյում Ֆրանսիան մասնակիորեն հրաժարվում է Մոսուլի վերաբերյալ իր պահանջներից՝ զիջելով տեղը Անգլիային»<sup>5</sup>: Ֆրանսիան Մոսուլի նավթի շահագործման մեջ ունենալու էր միայն որոշակի մասնակցություն՝ ապագայում ստանալով նավթի հանույթի 25%-ը<sup>6</sup>: Այս հարցում բրիտանական կողմը շեշտում էր. «Միջագետքյան (Մոսուլ և Քիրքուկ) նավթում տրված այդ տոկոսադրույքը արվել է իբրև փոխատուցում՝ Ֆրանսիայի կողմից Մոսուլը զիջելու համար»<sup>7</sup>:

Սուլթանի պատվիրակությունը, որ գլխավորում էր Թեֆիկ փաշան, չհամաձայնեց ստորագրել պայմանագրի նախագիծը և մեկնեց Կ.Պոլիս: Նախագիծը գժգոհություն առաջացրեց Թուրքիայում: Հունիսի 7-ին ընդունվեց օրենք «անվավերության» մասին, ըստ որի՝ «1920թ. մարտի 16-ին անգլիացիների կողմից Կ.Պոլսի ռազմակալումից հետո, բոլոր պայմանագրերը՝ դադարի և բացահայտ, որոնք կնքվել էին սուլթանական կառավարության կողմից, չեն կարող լինել պաշտոնական»<sup>8</sup>:

<sup>1</sup> Հայաստանը միջազգային դիվանագիտության և սուլթանական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923թթ.), Ե., 1972, էջ 654-665:

<sup>2</sup> Севрский мирный договор и акты, подписанные в Лозане. М., 1927, с. 17.

<sup>3</sup> Известия, 17.01.1926.

<sup>4</sup> Esmer A. Siyasi Tarih, s. 537.

<sup>5</sup> Миллер А. цит. соч., с. 196.

<sup>1</sup> Yılmaz Ö. Türkiye Tarihi. Cilt 12. Istanbul, 1967, s. 248.

<sup>2</sup> Keleşoğlu A. Kemalist Cumhuriyet'in sonu. Ankara, 2011. s. 47-48.

<sup>3</sup> Миллер А. Актуальные проблемы новой и новейшей истории Турции. М., 1983, с. 190-191.



Անկարան այս քայլով փորձում էր հասկացնել Անտանտի ղեկավարներին, որ չի ընդունի Սան Ռեմոյի պայմանները, բայց անուշադրություն մատնվեց: «Այդ շրջանում Ֆրանսիական ողջ արտաքին քաղաքականությունը կանգնել էր հետևյալ տանջալից երկրնտրանքի առջև՝ Արևելքում Անգլիայի գործողություններին տալ ազատություն, Հոենոսի վրա նրանից օգնություն ստանալու հույսով, թե հակազդել Անգլիային Արևելքում և կանգնել Գերմանիայի դեմ հնարավոր մեկուսացման վտանգի առջև: Սակայն Ֆրանսիայի ներկայացուցիչ Ա. Միլերանը գերադասեց զիջել անգլիական պահանջներին Արևելքում՝ Հոենոսի շրջանում՝ դաշնակից Անգլիայի հնարավոր աջակցությունը ձեռք բերելու համար»<sup>1</sup>:

Քե դ'Օրսեի ղեկավարները դաշնակից Անգլիայից առանձին, Անկարայի կառավարության հետ համաձայնության գալու և Կիլիկիայում ռազմական գործողությունները դադարեցնելու նոր փորձ կատարեցին: Զինադադար ստորագրելու նպատակով. «1920թ. մայիսին Ֆրանսիացիները բանակցություններ սկսեցին Մ. Քեմալի հետ»<sup>2</sup>: Սկզբում Անկարա է ժամանում մեկ բարձրաստիճան զինվորական և մեկ նահանգային ներկայացուցիչ, բայց բանակցությունները նշանակալի արդյունք չեն տալիս: Արդեն մայիսի վերջին Անկարա է մեկնում Բեյրութում Ֆրանսիական գերագույն կոմիսարիատի քարտուղար Ռոբեր դը Քեի առաքելությունը, որի հետ էլ մայիսի 30-ին ստորագրվում է զինադադարի 20-օրյա համաձայնագիրը: «1920թ. մայիսի 28-ին Ֆրանսիական հրամանատարության հետ կնքած համաձայնագիրը շատ կարևոր էր մեզ համար», - գրում է թուրք պատմաբան Շ. Թուրանը<sup>3</sup>:

Ըստ համաձայնագրի թշնամական բոլոր գործողությունները պետք է դադարեցվեն մայիսի 30-ի կեսգիշերից. Առաջին 10 օրվա ընթացքում Ֆրանսիական և մահմեդական բոլոր բանտարկյալները, ինչպես ռազմական, այնպես էլ քաղաքական, պետք է փոխանակվեն, Ֆրանսիական զորքերը պետք է նահանջեն մինչև Մերսին-Ադանա-Իսլահիե երկաթգիծ, Սսի, Պոզանտի, Այնթապի, ինչպես նաև երկաթգծից հյուսիս ընկած քաղաքները պետք է պարպվեն: Այս առթիվ «Թայմսը» գրում էր. «Անհավանական է թվում, որ այդ 4-5 քաղաքը, որ գտնվում էին մեր ազդեցության գոտու մեջ, 1920թ. մայիսից սկսած անցել են քեմալական շեթեների և էմիր Ֆեյսալի ձեռքը, և միայն նրա մի փոքր հատվածն է մեր ձեռքին»<sup>1</sup>:

Անկասկած, 1920թ. մայիսի 30-ի զինադադարը կարելի է համարել ԹԱՄԺ կառավարության և Քեմալի լուրջ ձեռքբերումը, որն էլ ավելի ամրապնդեց վերջինիս դիրքերը, բարձրացրեց ազգային շարժման հեղինակությունը՝ նպաստելով ուժերի համախմբմանը: «Բանն այն է, որ Ազգային Մեծ ժողովը և նրա կառավարությունը չէին ճանաչվել Անտանտի երկրների կողմից, ընդհակառակը, ապագա պետության և ժողովրդին վերաբերող հարցերով այդ պետությունները առնչվում էին Դամադ Ֆերիդ փաշայի ստամբուլյան կառավարության հետ: Դրա հետ կապված այն փաստը, որ Ֆրանսիացիները, շրջանցելով Ստամբուլի կառավարությունը, մեզ հետ բանակցություններ էին վարում և ստորագրում համաձայնագիր, մեզ համար դա քաղաքական խոշոր նվաճում է, ինչպիսի հարցերով էլ այն լինի, - գրում է Քեմալը<sup>2</sup>: Իսկ ինչ վերաբերում է Ֆրանսիային, թե արդյո՞ք ինչ-որ բան շահեց այդ զինադադարից, նշենք, որ

<sup>1</sup> Кайзер Ж. цит. соч., с. 29.

<sup>2</sup> Mantran R. Histoire de la Turquie, p.127.

<sup>3</sup> Turan Ş. Türk devrim Tarihi, kitap 2, Ankara, 1992, s. 215.

<sup>1</sup> Бюллетен НКВД, N. 30. М., 1920, с. 40.

<sup>2</sup> Кемал М., цит. соч., с. 88.



ուշինչ էլ չբաղեցին, և ինչպես զնդապետ է. Բրեմոնն է գրում. «Այն հիասթափություն առաջացրեց Ֆրանսիական զենքի հանդեպ և մեղանից վանեց մեր համախոհներից շատերին»<sup>1</sup>:

Ամեն դեպքում, 1920թ. մայիսի 30-ի Ֆրանս-բեմալական զինադադարը Անկարայի և Անտանտի երկրներից մեկի՝ Ֆրանսիայի միջև առաջին անմիջական բանակցությունների արդյունք էր: Ֆրանսիան, թեև զգուշորեն, փորձում էր Անկարայի հետ հասնել անջատ հաշտության, սակայն այդ պարագայում այլընտրանք չունեին և հարկադրված էին Անգլիայի հետ հանդես գալ միասնական ճակատով և 1920թ. օգոստոսի 10-ին ստորագրել Սևրի պայմանագիրը:

Սևրի պայմանագրով Օսմանյան կայսրությունից անջատվում էին Սիրիան, Լիբանանը, Իրաքը, Պաղեստինը, որոնք հանձնվում էին դաշնակիցների մանդատային կառավարմանը: Հունաստանին էր անցնում Իզմիրի մարզը, ողջ Գալլիպոլիական թերակղզին, Արևելյան Թրակիան՝ Ադրիանապոլսով հանդերձ: Թուրքիան ինքնուրույն պետություն էր ճանաչելու Հեջազի թագավորությունը և Հայաստանը՝ Տրապիզոնի, Բիթլիսի, Էրզրումի և Վանի վիլայեթների սահմաններում<sup>2</sup>:

<sup>1</sup> Bremond E. op. cit., p. 54.

<sup>2</sup> Ինչպես Հր. Միմոնյանն է նշում. «Սևրի պայմանագիրը արդարացի էր և մարդասիրական հատկապես նրա այն մասերում, որոնք վերաբերում էր արարներին, հայերին, քրդերին անկախ պետականության ստեղծմանը: Սևրի պայմանագիրը բարոյական նշանակություն ուներ հատկապես Հայաստանի և հայերի համար»: Տե՛ս Միմոնյան Հ., Թուրք-հայկական հարաբերությունների պատմություն, Ե., 1991, էջ 377-378: Ուշագրավ է Վ. Բալբուրդյանի տեսակետը. «Հայաստանի համար Սևրի պայմանագրի դրական կողմերից էր. նախ Հայաստանը մտնում էր միջազգային դաշնագիր ստորագրողների շարքը՝ իրեն անկախ պետություն: Այնուհետև տերությունները ճանաչեցին հայ ժողովրդի պետականություն ունենալու անկապտելի իրավունքը: Այլ կերպ ասած Սևրի պայմանագրի բարոյական ուժը մնում է ընթացքի մեջ»: Տե՛ս Բալբուրդյան Վ., նշվ. աշխ., էջ 326:

Սևրի պայմանագրի «քաղաքական գրույթների» շարքում առանձնակի կարևորություն էր տրվում Կ.Պոլսի և Նեղուցների կարգավիճակին: Չնայած դրանք թողնվեցին Թուրքիայի կազմում, բայց պայմանով. եթե վերջինս հրաժարվի պայմանագրի որոշումները կատարելուց, ապա դաշնակիցները իրենց իրավունք էին վերապահում փոփոխել նախորդ որոշումը: Արևմտյան երկրների կողմից ձեռնարկվեցին բոլոր անհրաժեշտ միջոցառումները՝ նվազագույնի հասցնելու թուրքական կառավարության ներկայությունը կարգավորող խնդիրներում: Ինչ վերաբերում է Նեղուցներին, ապա դրանց տրվեց հատուկ կարգավիճակ, ըստ որի՝ դրանք բաց են ինչպես խաղաղ այնպես էլ պատերազմի ժամանակ: Նեղուցների վրա հսկողություն սահմանելու համար ստեղծվելու էր միջազգային կազմակերպություն՝ «Նեղուցների հանձնաժողով»: Նեղուցների ազատության սպառնալիքի դեպքում հանձնաժողովը պետք է դիմեր Կ.Պոլսում Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի ներկայացուցիչներին, որոնք էլ կձեռնարկեին համապատասխան պաշտպանական միջոցառումներ: Այդպիսով, նեղուցների գոտին փաստացի ապառազմականացվեց և դրվեց Միջազգային հանձնաժողովի վերահսկողության տակ, իսկ Կ.Պոլիսը, ըստ էության, նրա երկու ափերը՝ եվրոպական և ասիական, արգելափակեցին հունական իշխանությունները: Իսկ իրականում, Կ. Պոլիսը և նեղուցների գոտին փաստացի հայտնվեցին Անգլիայի վերահսկողության տակ: Այս համատեքստում իրավացի է Ա.Միլլերը, երբ նշում է. «Կ.Պոլիսը Թուրքիային թողնելը կրում էր զուտ պայմանական բնույթ, քանզի Թուրքիայի կողմից Սևրի պայմանագրի որևիցե գրույթի ցանկացած խախտում Անտանտի երկրներին իրավունք էր տալիս վերանայելու նախկին որոշումը և Կ.Պոլիսը ետ վերցնելու Թուրքիայից»<sup>1</sup>:

<sup>1</sup> Миллер А. Актуальные проблемы новейшей истории Турции, с. 204.



«Սևրի պայմանագիրը, որ դաշնակիցները պարտադրեցին սուլթանական Թուրքիային, վերջինիս համար մահացու պայմանագիր էր: Թուրքիան դրանով կորցնում է իր տարածքների գրեթե 2/3, որը տարբեր բարեհաջող անուններով անցնում էր դաշնակիցների ձեռքը», - գրում է Գ. Կրյաժինը<sup>1</sup>:

Թուրքիայի համար աննախադեպ սպառնալիք էր ստեղծվում նաև պայմանագրի ֆինանսատնտեսական հոդվածներով: Թուրքիայի ֆինանսական համակարգի և ողջ տնտեսության վրա հաստատվում էր վերահսկողական խիստ ռեժիմ, որն իրականացնելու էր այդ նպատակով ստեղծված ֆինանսական հանձնաժողովը՝ օժտված բացարձակ լիազորություններով: Հանձնաժողովի կազմի մեջ էին մտնում Անգլիայի, Ֆրանսիայի և Իտալիայի ներկայացուցիչները, թուրքերն այստեղ ունեին միայն խորհրդատվական ձայնի իրավունք: Պայմանագրի առանձին բաժնում նշվում է նաև, որ «Թուրքիան պարտավորվում է ապահովել երկրի բոլոր բնակիչների՝ կյանքի ու ազատության լիակատար պաշտպանություն՝ անկախ ծագումից, ազգությունից, ցեղից կամ կրոնից»<sup>2</sup>:

Ամփոփելով Սևրի պայմանագրի հոդվածները՝ նշենք, որ այն Թուրքիայի համար իսկապես ծանր էր: Հսկայական տարածքների բաժանման արդյունքում Թուրքիան զրկվում էր 438.750 կմ<sup>2</sup> տարածքից՝ 12 մլն բնակչությամբ և մնում 174,900 կմ<sup>2</sup> սահմաններում՝ 8 մլն բնակչությամբ<sup>3</sup>: Կապիտուլացիաների ռեժիմը ոչ միայն վերականգնվում էր Անտանտի կողմից, այլև այդ իրավունքը տարածվում էր դաշնակից այն երկրների

վրա, որոնք մինչ համաշխարհային պատերազմը չէին օգտվում այդ իրավունքից: Ստեղծված «նեղուցների» և «ֆինանսական» հանձնաժողովների վերահսկողության խիստ ռեժիմը Թուրքիային զրկում էր ինքնուրույն պետություն լինելու իրավունքից և «եթե այս պարագայում թուրքական կառավարությունը ցանկանար հաստատվել Կ.Պոլսում, ապա այն հայտնվելու էր Անտանտի երկրների, մասնավորապես Անգլիայի՝ «պատվավոր պատանդի» դերում: Աթաթյուրքն անդրադառնալով այս պայմանագրին, նշում է. «Սևրի պայմանագիրը մեզ համար ինչպես տնտեսական, այնպես էլ քաղաքական հարաբերություններում նշանակում է մահվան դատավճիռ»<sup>1</sup>:

Տեսնենք, թե Ֆրանսիան ի՞նչ առնչություն ունի այդ պայմանագրի հետ, և առհասարակ ի՞նչ էր նշանակում նրա համար պայմանագիրը: Ինչպես երևում է պայմանագրի հոդվածներից, Ֆրանսիան առանձնապես մեծ օգուտ չստացավ, դեռ ավելին, կորցրեց շատ ավելին, քան ձեռք էր բերել նախորդ տարիների ընթացքում: Ֆրանսիան մինչ Առաջին աշխարհամարտը գերիշխող դիրք ուներ Թուրքիայի ֆինանսատնտեսական համակարգում, սակայն Սևրի պայմանագրով արդեն այդ վերահսկողությունը իրականացնելու էր Անգլիայի և Իտալիայի հետ միասին: Իսկ Թուրքիայից Իզմիրի մարզի, Արևմտյան Հայաստանի, Քուրդիստանի բաժանումով Ֆրանսիան կզրկվեր այն հսկայական շահերից, որն ուներ Օսմանյան կայսրության տարածքում: Թուրքիայի մասնատումը լուրջ հարված էր նաև մեկ այլ տեսանկյունից՝ դրանով թուրքական պարտքի մարման հնարավորությունը զրկվում էր հարցականի տակ:

Սևրի պայմանագիրն ամրագրեց Անգլիայի գերակշիռ դիրքը Մերձավոր Արևելքում և սևծովյան նեղուցներում և ոչ միայն չլուծեց նախկին Օսմանյան կայսրության տարածքների

<sup>1</sup> Гурко-Кряжин В. История революций в Турции. М., 1923, с. 109. Պայմանագրի մասին տե՛ս Baskin O. Türk dış Politikası. С. 1. Istanbul, 2001, s. 113-138.

<sup>2</sup> Մանրամասն տե՛ս Севрский мирный договор и акты подписанные в Лозане, с. 15-45.

<sup>3</sup> Павлович М. Лозаннская конференция, с. 3.

<sup>1</sup> Ататурк К. Избрание речи и выступления, с. 227.



բաժանման շուրջ միջիմպերիալիստական հակասությունները, այլ ավելի սրեց դրանք՝ առաջացնելով առաջին ճեղքվածքը՝ Վերսալյան համակարգի հաշտության պայմանագրերում: «Ձիջումները, որոնք Ֆրանսիական դիվանագիտությունը կատարեց Անգլիայի օգտին, այնքան էական էին, որ գրեթե լիովին թուլացրին Ֆրանսիայի ֆինանսատնտեսական հզորությունը թուրքիայում: Ֆրանսիայի վերահսկողությունից գուրս մնացին Օտտոմանյան բանկը, ծանր երկաթուղին, ծխախոտի մենաշնորհը, պետական պարտքի ղեկավարումը, այն ամենը, որոնք Ֆրանսիային բերում էին հսկայական եկամուտներ<sup>1</sup>:

«Արևելքը բրիտանականացվում էր», - գրում է հրապարակախոս Ժ.Կայզերը<sup>2</sup>: Այս պայմանագիրը այնքան լրջորեն էր վնասում Ֆրանսիայի շահերը, որ բոլորովին զարմանալի չէ, որ դեռ Ֆրանսիական պատվիրակների ստորագրության թանաքը չորացած, այդ նույն մարդիկ սկսեցին հանդես գալ Սևրից հրաժարվելու բազմաթիվ առաջարկներով: Սևրի պայմանագիրը խիստ բացասական վերաբերմունքի արժանացավ նաև Ֆրանսիայի պաշտոնական շրջանակներում<sup>3</sup>: «Սևրի պայմանագիրը այսպիսի տեսքով խստորեն ոտնահարում է Ֆրանսիական ավանդույթները, խիստ հակադրվում մեր շահերին ինչպես ներկա պահին, այնպես էլ ապագայի տեսանկյունից, և անհրաժեշտ է վերստին ուսումնասիրել ու փոփոխել այն», - հայտարարում էր վարչապետ Ա. Բրիանը<sup>4</sup>:

Սևրի պայմանագրի վերանայման անհրաժեշտությունն ինչոր չափով կարելի է բացատրել նաև Խորհրդային Ռուսաստանի դեմ Անտանտի թշնամական վերաբերմունքով, քանզի Արև-

մուտքում թուրքիային դիտում էին որպես տարածաշրջանում Խորհրդային Ռուսաստանի ազդեցությունը սահմանափակող գլխավոր պատենշ: Վերանայման կողմնակիցները ձգտում էին դրանով կանխել խորհրդա-թուրքական մերձեցումը: «Անհրաժեշտ է, որ Անատոլիան դադարի բոլշևիկացման ենթարկվելուց, իսկ այդ բանը, հնարավոր կդառնա Սևրի պայմանագիրը վերանայելուց հետո միայն», - մեջբերելով բրիտանական մամուլի հրապարակումները՝ գրում է Ջ. Էֆենդիևան<sup>1</sup>:

Դաշնակիցների քաղաքականության հիմնական նպատակն էր թույլ չտալ Մոսկվայի դիրքերի ամրապնդումը, մերձեցումը թուրքիայի հետ, և ինչպես խորհրդային հեղինակներ Վ.Ալեքսեևը և Մ.Քերիմովն են գրում. «Անգլիան և Ֆրանսիան օգտագործում էին բոլոր հնարավոր միջոցները, որպեսզի խանգարեն խորհրդա-թուրքական մերձեցմանը»<sup>2</sup>: Չնայած դաշնակիցների հակախորհրդային տրամադրվածությանը՝ Անկարայի կառավարությունը ի դեմս Խորհրդային Ռուսաստանի շարունակեց ամրապնդել արտաքին քաղաքական դիրքերը<sup>3</sup>:

Սակայն, Սևրի պայմանագրի իրագործումն այդպես էլ գործնական հիմքերի վրա չտեղափոխվեց: Իսկապես, այդ պայմանագիրը ծնվեց մեռած վիճակում և վերջինիս իրականացման հեռանկարները, մեր համոզմամբ, ի սկզբանե հարցականի տակ էին դրված՝ կապված մի շարք գործոնների հետ: Նախ պայմանագիրը ստորագրվել էր սուլթանական կառավարության հետ, որն այդ ժամանակ երկրում չունեի ոչ փաստացի, ոչ էլ իրավական իշխանություն: Բացի դրանից, այս

<sup>1</sup> Шамсутдинов А. цит. соч., с. 232.

<sup>2</sup> Мусский И. Сто великих дипломатов, с. 466.

<sup>3</sup> Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923թ.թ.), էջ 716-717:

<sup>4</sup> Սահակյան Թ., նշվ. աշխ., էջ 93:

<sup>1</sup> Эфендиева З., цит. соч., с. 131.

<sup>2</sup> Алексеев В., Керимов М., цит. соч., с. 13.

<sup>3</sup> Кайгусуз Дж. Турецко-советские отношения в контексте международной военно-политической конфронтации (1920-1991). Нижний Новгород, 2017, с. 28-30.



պայմանագիրը ոչ միայն հեշտութեամբ շրնդունվեց Անտանտի ճամբարում, այլև լուրջ տարածայնությունների պատճառ դարձավ: Ինչ վերաբերում է Ֆրանսիային, ապա՝ վերջինս, ինչքան էլ կախվածություն ունենար Անգլիայից ու կրեր նրա ազդեցությունը, հազիվ թե համաձայնվեր Սևրի պայմանագիրը այդպիսի տեսքով վավերացնելուն և իրագործելուն: Դա էր պատճառը, որ Քե դ'Օրսեի դիվանագետները մեծ եռանդով փորձում էին հասնել պայմանագրի վերանայմանը: Այս ենթատեքստում լիովին ընդունում ենք Ու. Չերչիլի տեսակետը, որ «Սևրի պայմանագիրը, որը նախապատրաստվում էր 13 ամիս շարունակ, հնացավ ավելի շուտ, քան պատրաստ էր»<sup>1</sup>:

Անկարայի կառավարության կողմից Սևրի պայմանագիրը ընդունվեց խիստ բացասաբար: Մ. Քեմալը Դամադ Ֆերիդին և մի շարք այլ աստիճանավորների, որոնք մասնակցել էին պայմանագրի ստորագրմանը, կամ առնչություն ունեին դրա հետ, մեղադրեց ազգի ու հայրենիքի շահերի դավաճանության մեջ: Նրա առաջարկով մեջլիսում օրենք ընդունվեց հեռակա կարգով նրանց դատապարտելու պետական դավաճանության համար: ԹԱՄԺ-ը պաշտոնապես մերժեց այդ պայմանագիրը:

Ֆրանսիայի ղեկավար շրջանները, հավատարիմ մնալով իրենց դիրքորոշմանը, 1920թ. նոյեմբեր-դեկտեմբերին դաշնակիցների Լոնդոնի երկրորդ համաժողովում վերստին փորձեցին հիմնավորել պայմանագրի վերանայման անհրաժեշտությունը: Վիճահարույց այս հարցը քննարկման առարկա դարձավ նաև Անտանտի Գերագույն խորհրդի Փարիզյան հանդիպման ժամանակ: Թեև Լյուդ-Ջորջը վերստին ընդգծեց, որ «Անգլիայի կառավարությունը պաշտոնական բանակցություններ կվարի միայն Թուրքիայի օրինական կառավարության հետ, ոչ թե ապստամբ գեներալի»<sup>2</sup>, այդուհանդերձ ֆրանսիացիները

մնացին անդրդվելի: Արդյունքում, որոշվեց պայմանագրի վերաքննության համար Լոնդոնում հրավիրել խորհրդաժողով:

Լոնդոնի խորհրդաժողովին մասնակցելու համար «օրինական» Ստամբուլյան կառավարության հետ միասին, դաշնակիցները հրավիրեցին նաև ԹԱՄԺ Անկարայի կառավարությանը: Չնայած առաջնահերթ խորհրդաժողովին մասնակցելու թույլտվություն տրվել էր միայն սուլթանական կառավարությանը, բայց Քեմալը վճռական պահանջեց. «Որպես Թուրքիայի միակ օրինական կառավարության ներկայացուցիչներ՝ Լոնդոն մեկնեն միայն Անկարայի պատվիրակները»: Սակայն, այդպես էլ Ստամբուլի ու Անկարայի միջև համաձայնություն չկայացավ: Այս կապացությամբ հետաքրքրական է Քյազըմ բեյի հայտարարությունը. «Ո՞ւմ կարող է ուղարկել Ստամբուլը: Ստամբուլի կառավարությունը իսկապես քաղաքական տիկնիկ է, որին ըստ ցանկության երբեմն կանգնեցնում են, երբեմն էլ պառկեցնում»<sup>3</sup>: Դրանից հետո ԹԱՄԺ կազմեց առանձին, անկախ պատվիրակություն՝ արտգործնախարար Բեքիր Սամի բեյի գլխավորությամբ<sup>2</sup>: Ամենևին էլ պատահական չպետք է համարել, որ համաժողովի հենց սկզբից Անկարայի պատվիրակությունը հանդես եկավ ողջ Թուրքիայի շահերի պաշտպանության դիրքերից: Լոնդոնի համաժողովը բացվեց 1921թ. փետրվարի 21-ին: Առաջին նիստի ժամանակ, երբ խոսքը տրվեց Թուրքիայի ներկայացուցիչ Թևֆիկ փաշային, վերջինս հանդես եկավ այսպիսի հայտարարությամբ. «Ես խոսքս զիջում եմ Ազգային մեծ ժողովի առաջին պատվիրակին, որը հանդիսանում է թուրք ժողովրդի իսկական ներկայացուցիչը»<sup>3</sup>: Սուլթանական պատվիրակությունը զիջեց իր

<sup>1</sup> Черчилль У. Мировой кризис. М., 2003, с. 768.

<sup>2</sup> «Մշակ», Թիֆլիս, 1921 հունվարի 13:

<sup>1</sup> «Մշակ», Թիֆլիս, 1921 փետրվարի 6:

<sup>2</sup> Մանրամասն տե՛ս Esmer A. Siyasi Tarih, s. 541.

<sup>3</sup> Мельник А., цит. соч., с. 71.



դիրքերը, իսկ նրա անդամները ձուլվեցին Անկարայի պատվիրակությունը: Ստամբուլյան պատվիրակները, ինչպես Մ. Պայառեսն է գրում. «Համաժողովի ընթացքում կատարեցին անխոս դերասանների դեր»<sup>1</sup>: Անկարայի պատվիրակությունը, որին վերապահվեց արտահայտելու թուրքական պահանջները, փետրվարի 27-ին թուրքական միացյալ պատվիրակության անունից ներկայացրեց իր պահանջները, որոնք ըստ էության կառուցված էին «Ազգային ուխտի» սկզբունքների վրա:

Թուրքական պատվիրակության ներկայացրած նախագիծը մերժվեց դաշնակից պետությունների կողմից: Համաժողովի շրջանակներից դուրս Անտանտի ղեկավարները զուգահեռաբար նաև առանձին բանակցություններ էին վարում Բեքիր Սամի բեյի հետ: Ի վերջո Ա. Բրիանին հաջողվում է համաձայնություն հասնել և 1921թ. մարտի 9-ին Բեքիր Սամի բեյի հետ ստորագրվում է պայմանագիր:

Պայմանագրի 1-3-րդ կետերը հիմնականում վերաբերում էին ռազմական գործողությունների դադարեցման և ռազմագերիների փոխանակման և բնակչության զինաթափման հետ կապված հարցերի կանոնակարգմանը: Թուրքական կողմի համար հատկապես մեծ կարևորություն ունեին 4-րդ և 5-րդ հոդվածները, որտեղ ճշգրտվում էին Ֆրանսիական զորքերի տարհանման և այնտեղ թուրքական զինուժի տեղակայման ժամկետները և սահմանները: Ուշագրավ է, որ Ֆրանսիական ուժերը լքում էին նաև Կիլիկիայի այն տարածքները, որոնք Սևրի պայմանագրով տրվել էին Սիրիային: Ըստ այդ համաձայնագրի իբրև թե նրանց՝ վերստին ներառվում էին թուրքական պետության կազմի մեջ:

Ազգային փոքրամասնությունների հարցում թուրքական պատվիրակությունը հասավ նրան, որ պայմանագրի 6-րդ հոդ-

վածի համաձայն ազգային փոքրամասնություններին պաշտպանելու պարտավորություն դրվեց թուրքական կողմի վրա, ընդ որում երաշխավորում էր նրանց բացարձակ իրավահավասարությունը ամեն տեսակետից: Սակայն պայմանագրում կային որոշ դրույթներ, որոնք ընդունելի չէին թուրքական կողմի համար, մասնավորապես Ֆրանսիացիներին տրվող տնտեսական արտոնությունների և կոնցեսիաների խնդիրը: Պայմանագրով Ֆրանսիական կողմը ոչ միայն պահպանում էր թուրքական տնտեսություն մեջ ունեցած իր արտոնյալ կարգավիճակը, այլև ստանում էր տնտեսական նոր կոնցեսիաներ մի շարք ոլորտներում, այդ թվում Արգանա-Մադենի հանքերի շահագործման մեջ (հոդ. 7-9):

«Մինչև վերջնական համաձայնություն կնքելը պայմանավորվող կողմերի միջև, ռազմական գործողությունները կդադարեցվեն Կիլիկիայի ճակատում, Թուրքիայի ու Սիրիայի վրա, հենց որ համապատասխան հրամաններ տրվեն զորքերին Ֆրանսիական ու Անկարայի իշխանությունների կողմից, սակայն ոչ ուշ, քան մեկ շաբաթ-վա ընթացքում»,- ասվում էր համաձայնագրի հավելվածում: Համաձայնագիրը կնքվում էր անժամկետ, ռազմական գործողությունները կարող են վերսկսվել թե՛ այս թե՛ այն կողմից՝ մեկ ամիս շուտ պաշտոնապես տեղեկացնելով համաձայնագրից հրաժարվելու մասին<sup>1</sup>: Դատելով համաձայնագրի հոդվածներից՝ կարող ենք ընդհանրացնել՝ Անկարայի կառավարությանը չէր կարող բավարարել պայմանագրի բովանդակությունը, քանի որ՝ «Անկարայի պատվիրակությունը Լոնդոնի համաժողովին մասնակցում էր միայն Ազգային ուխտի սկզբունքների հիման վրա»<sup>2</sup>, իսկ այդ

<sup>1</sup> Ключников Ю., Сабанин А. Международная политика новейшей времени в договорах, нотах и декларациях, Ч. 3, В. 2, М., 1929, с. 82-84.

<sup>2</sup> Атагурк К., цит. соч., с. 227.

<sup>1</sup> Paillares M. op. cit., p. 206.



համաձայնագիրը խախտում էր Թուրքիայի տնտեսական անկախության սկզբունքը՝ Ֆրանսիային հատկացնելով մի շարք տնտեսական կոնցեսիաներ: Ու թեև Սևրի պայմանագրի համեմատ Ֆրանսիան զգալի տարածքային զիջումներ էր կատարում Թուրքիային՝ նրան էր վերադարձվում որոշ տարածքներ (2250 կմ երկարություն և 225-450 կմ լայնություն), միևնույն է, հակասում էր «Ազգային ուխտում» ամրագրված Թուրքիայի տարածքային ամբողջականության հիմնարար սկզբունքին: Ճիշտ է, վերոնշյալ համաձայնագիրը մի կողմից հնարավորություն էր տալիս Հարավային ճակատի շեղաբացման հաշվին հզորացնել իրենց դիրքերը հուլյների դեմ պայքարում, մյուս կողմից էլ Մ. Քեմալի համար անընդունելի էր ֆրանսիական ընկերություններին տրված արտոնյալ վիճակը: Այս պատճառով էլ ԹԱՄԺ-ը մայիսի 3-ին չվավերացրեց պայմանագիրը<sup>1</sup>:

Համաձայնագրի մերժումից հետո արտաքին գործերի նախարար Բեքիր Սամի բեյը ստիպված հրաժարական տվեց: «Ակնհայտ է, - գրում է Քեմալը, - որ Բեքիր Սամի բեյը Լոնդոնում ավելի շատ զբաղված էր այդ անջատ համաձայնագրերի ստորագրումով, քան համաժողովում բանակցելով»<sup>2</sup>:

Այդ հրաժարականը որոշ չափով կապված է նաև Բեքիր Սամի բեյի՝ Լոնդոնում դրսևորած հակախորհրդային կեցվածքի հետ: Ուշագրավ է, որ երբ մամուլը հրապարակեց Դ. Լոյդ Ջորջի և Բեքիր Սամի բեյի բանակցությունների արդյունքները, թուրքական կառավարությունը շտապեց հայտարարել, որ Բեքիր Սամի բեյը անգլիացի դիվանագետի հետ բանակցություններ վարել է սեփական նախաձեռնությամբ: Թուրքական պատվիրակության ղեկավարի հակառուսական տրամադրվածությունը, բնականաբար, չէր կարող հավանության արժա-

նանալ Քեմալի կողմից: Վերջինս կողմ էր Խորհրդային Ռուսաստանի հետ սերտ համագործակցությանը և գտնում էր, որ «Խորհրդային Ռուսաստանի հետ եղբայրական դաշինքը Թուրքիայի համար ամենաուժեղ հենարանն է ազատագրական մեծ նպատակներին հասնելու գործում»<sup>1</sup>:

Ֆրանսիան թեև շարունակում էր զգուշորեն ուղիներ փնտրել Անկարայի հետ բանակցային գործընթացը խորացնելու ուղղությամբ, սակայն կրկին հարկադրված էր հանդես գալ Անգլիայի հետ համատեղ և մարտին թուրքական և հունական կողմերին ներկայացնել նոր պայմաններ, որոնք էապես տարբերվում էին Բրիտանի կնքած համաձայնագրի պայմաններից<sup>2</sup>:

Դաշնակիցների կողմից ներկայացրած այս պահանջները հավանություն չգտան ո՛չ թուրքական, ո՛չ էլ հունական պատվիրակությունների կողմից:

Այսպիսով Անկարայի կառավարությունը ուներ այն շքեղունելու պատճառներ, իսկ հունական պատվիրակությունն էլ՝ հաղթանակի հասնելու չափազանց ինքնավստահության և Անգլիայի աջակցության հույսով չէր կարող ընդունել այդ պայմանները, և երկու կողմն էլ մարտի 12-ին կտրականապես մերժեցին այդպիսի պայմաններով համաձայնագիր ստորագրել: Փաստորեն, Լոնդոնի համաժողովը իր աշխատանքները ավարտեց անարդյունք: Սակայն այն դրական ազդեց քեմալական շարժման վրա և «մեծապես նպաստեց Ազգային մեծ ժողովի կառավարության հեղինակության բարձրացմանը»<sup>3</sup>:

Չնայած Անտանտի դիվանագիտական ճնշումներին և Անատոլիայում Հունաստանի գործողություններին, որին աջակ-

<sup>1</sup> Baskin O. op. cit., s. 144.

<sup>2</sup> Кемал М., цит. соч., с. 14.

<sup>1</sup> Haluk G. Türk dış Politikasının. Ekonomi Politigi, Cilt 1. Istanbul, 1999, s. 33. Проблемы современной Турции. М., 1963, с. 58.

<sup>2</sup> Առաջարկվող հաշտության պայմանները տե՛ս Howard H. The Partiton of Turkey. New York, 1966, p. 266.

<sup>3</sup> Türkiye Tarihi, s. 98.



ցում էր Անգլիան, Անկարայի կառավարությունը կարողացավ տպավորիչ հաջողությունների հասնել հուլյաների դեմ (1921թ. մարտի 31-ին Ինյունյու դյուզի մոտ թուրքական զորքերը Իսմեթ փաշայի գլխավորությամբ տարան առաջին հաղթանակը):

Ֆրանսիայի քաղաքականության, կիրիկիահայության համար դրա ազետալի հետևանքների և ընդհանրապես Կիրիկիայում տիրող իրավիճակի մասին առավել ամբողջական պատկերացում կազմելու համար համառոտ շարադրենք այդ երկրամասի ֆրանս-քեմալական ռազմական ընդհարումների ու դրանց արդյունքների պատմությունը: Կիրիկիան Սալքս-Պիկոյի գաղտնի համաձայնագրով կազմելու էր ֆրանսիական ազդեցության գոտի, բայց Մուզրոսի զինադադարի ստորագրման պահին Ֆրանսիան, ինչպես է. Բրեմոնն է վկայում, չունեք բավարար քանակի զորք իրականացնելու Կիրիկիայի գրավումը<sup>1</sup> (Ադանայի նահանգի ազատագրումն իրականացրել է Հայկական լեգեոնը)<sup>2</sup>: Այս պատճառով էլ զինվորական ամբողջ իշխանությունը Կիրիկիայում անցավ անգլիացիների ձեռքը: 1919թ. սեպտեմբերի 13-ին Անգլիայի և Ֆրանսիայի միջև ձեռք բերվեց համաձայնություն, ըստ որի «1919թ. նոյեմբերին Արևմտյան Սիրիայում և Կիրիկիայում անգլիական հրամանատարության տակ գտնվող տարածքներում ֆրանսիական հրամանատարություն կհաստատվի, որից թուրքերը դժգոհ են»<sup>3</sup>: Ինչպես իրավացի գրում է Ն.Հովհաննիսյանը, համաձայնությունն իսկական իմպերիալիստական գործարք էր<sup>4</sup>: Արդյունքում, Կիրիկիայի վարչական հսկողությունը հանձ-

նվեց ֆրանսիացի սպաներին, գնդապետ է.Բրեմոնը նշանակվեց «Հյուսիսային գոտու» վերահսկողության ղեկավար:

Դրությունը հատկապես ծանր էր Մարաշում<sup>1</sup>, որտեղ էլ 1920թ. հունվարի 21-ին բռնկվեց վաղուց նախապատրաստված հակաֆրանսիական ապստամբություն: Գեներալ Քերեթը, ով ստանձնել էր ֆրանսիական զորքերի հրամանատարությունը, ոչինչ չձեռնարկեց ապստամբությունը ճնշելու համար: Ավելին, նա «անսպասելի» հրաման տվեց ֆրանսիական զորքերին նահանջել: Թեև գնդապետ Բրեմոնն այդ քայլն որակեց «հանելուկային», սակայն հետագայում հենց ինքն էլ խոստովանում է. «Մարաշի պարպումը կարգադրվել էր գնդապետ Նորմանի կողմից, որը Բեյրութից եկել էր անձամբ գեներալ Գուրոյի հրահանգով»<sup>2</sup>: Չնայած է. Բրեմոնը հավաստիացնում էր, որ «իրենք լի են վճռականությամբ՝ զբաղվելու բացառապես հայերի խնդիրներով»<sup>3</sup>, սակայն Մարաշի ծրագրված նահանջը վերստին հաստատեց Կիրիկիայի հարցում Ֆրանսիայի անվճռականությունը և ավելի սևեռուն դարձրեց այն համոզմունքը, որ Կիրիկիան՝ Սիրիայի համեմատ, ինչքան էլ որ այդ երկրամասը տնտեսական մեծ ներուժ ունենա, ֆրանսիական դիվանագիտության հաշվարկներում ստորագաս տեղ է գրավում: Բրեմոնը Մարաշի կորուստը գնահատեց որպես «արսափելի հարված ֆրանսիական հեղինակությանը»<sup>4</sup>, սակայն «մոռանում» է նշել, թե այդ կորուստը ինչ սարսափելի հարված էր տեղի հայ ազգաբնակչության համար: «Դրանք ջարդի և բնաջնջման օրեր էին», - վկայում է Մ. Մյու-

<sup>1</sup> Bremond E. op. cit., p. 10.

<sup>2</sup> Պողոսյան Ս., Հայկական լեգեոնի և դաշնակցային զորքերի ուժերով Կիրիկիայի ազատագրման հարցի շուրջ, «Պատմություն և հասարակագիտություն», 2017, թ. 3, էջ 38-46:

<sup>3</sup> Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան: Այլևայլ հեղինակների արխիվ, Գևորգ Պապույան, թղթ. 240, վավ. 1, էջ. 2:

<sup>4</sup> Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, էջ 419:

<sup>1</sup> Մարաշի դեպքերի մասին հավաստի վկայություններ է հաղորդում Մարաշի ֆրանցիսկյան վանահայր Մատերն Մյուրոն «Մարաշի ջարդը 1920թ. փետրվարին» գրքույթում: Materne Mure. op. cit., p. 5.

<sup>2</sup> Bremond E. op. cit., p. 41.

<sup>3</sup> Պեյլերյան Ա., Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում 1914-1918: Հտ. 2: Ե., 2005, էջ 125:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 163:



րոն<sup>1</sup>, ով ականատեսն էր թուրքերի կողմից հայերի նկատմամբ կատարած հրեշավոր վայրագությունների:

«Ֆրանսիայի քաղաքականությունը Կիլիկիայում կրկին փոխվեց, երբ գեներալ Գուրոն ժամանեց Մերսին,- գրում է «Թայմս»-ի Կ.Պոլսի թղթակիցը և հավելում,- Գուրոն հրամայեց հայ ղեկավարներին զինաթափել կամավորական ջոկատները, սակայն հայերը հրաժարվեցին ենթարկվել, որից հետո գեներալ ուժով շուրջ 1400 հայ վտարվեց: Դրանից հետո գեներալ Գուրոն տեղեկացրեց հայերին, որ շուտով ֆրանսիացիները թողնելու են Կիլիկիան, հայերը պետք է ընտրեն՝ կամ թուրքական տիրապետությունը կամ հեռանան երկրից»<sup>2</sup>:

Կիլիկիահայությունը բազիցս նամակներ ու հեռագրեր է ուղարկում ինչպես բարձրագույն կոմիսարին, այնպես էլ Ֆրանսիայի վարչապետին՝ նշելով որ «Կիլիկիայի հայ բնակչությունը գտնվում է սոսկալի ճգնաժամի մեջ, որ ամենուր տիրում է անապահովության ու վախի մթնոլորտ, և միայն պաշտպանական լուրջ միջոցառումները կարող են ամբողջական բնաջնջումից փրկել 150000 հայ բնակչությանը»<sup>3</sup>: Սակայն Ֆրանսիայի ղեկավար շրջանները անտեսեցին դա, և «նույնիսկ միջոցառումներ ձեռք առնվեցին հայության զինաթափման և Կիլիկիայից նրանց տեղահանման համար»<sup>4</sup>: Մարաշի դեպքերից հետո ֆրանսիական քաղաքականության հաջորդ զոհը դարձավ բոլորովին բախտի քմահաճույքին թողնված Հաճընը, որտեղ նույնպես քաղաքի ինքնապաշտպանական ուժերին չհատկացվեց խոստացված օգնությունը: Իրադարձությունները այլ զարգացում ունեցան Ուրֆայում և

<sup>1</sup> Materne M. op. cit., p. 8-11.

<sup>2</sup> Бюллетен НКВД. N. 90, 22.11.1920, с. 44.

<sup>3</sup> ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 546, թ. 13:

<sup>4</sup> Նույն տեղում:

Այնթապում, որոնք նույնպես մտնում էին ֆրանսիական զորքերի գրաված գոտու մեջ: Տեղի ֆրանսիական ուժերին և հայ ինքնապաշտպանական ջոկատներին հաջողվում է ժամանակավորապես վերահսկել իրադրությունը, որի շնորհիվ տեղի հայ ազգաբնակչությունը փրկվում է ոչնչացումից<sup>1</sup>:

«Անհնար է ֆրանսիացի զինվորներին հրամայել կռվել Արևմտյան Ասիայում: Մենք մեծ ափսոսանքով հեռացանք Կիլիկիայից, որովհետև ռազմամթերքի պատճառով այլ կերպ չէինք կարող», - փորձում է արդարանալ ֆրանսիացի զիվանագետ Մեյերը՝ Պողոս Նուբարին հասցեագրված նամակում<sup>2</sup>:

Վերը շարադրվածից կարելի է եզրակացնել, որ Ֆրանսիայի շահերը Կիլիկիայում ածանցյալ էին, երկրորդական՝ ողջ Թուրքիայում նրա ունեցած տնտեսական, ֆինանսական և քաղաքական շահերի համեմատ, իսկ ֆրանսիացիները ցանկացած պահին պատրաստ էին զոհաբերելու Կիլիկիան էլ, տեղի հայությանն էլ, եթե քեմալական կառավարությունը թեկուզ նվազագույն չափով ճանաչեր այդ շահերը: Հետևաբար, իզուր էր Կ. Պոլսի հայոց պատրիարքը Ա.Միլերանին ուղարկած նամակում զարմանում, որ «հաղթված թուրքը ֆրանսիական գոտում հեշտություն մերադառնում է մահ ու ավեր տարածելու իր սովորական գործին»<sup>3</sup>: Ֆրանսիական զիվանագիտության այս վայրիվերումների արդյունքում արդեն իսկ նշմարվում էին Կիլիկիան Թուրքիային վերադարձնելու հեռանկարը, որն ամրագրվեց 1921թ. հոկտեմբերի 20-ի Անկարայի պայմանագրում:

Ամփոփելով կարելի է եզրակացնել.

<sup>1</sup> Կիլիկիայի հայ բնակչության մի մասը ֆրանսիական զորքի հետ հեռացավ: Histoire des Armeniens, p. 520.

<sup>2</sup> Մատենադարան: Այլևայլ հեղինակների արխիվ, թղթ. 240թ, վավ. 11բ:

<sup>3</sup> Նամակն ամբողջությամբ տես նույն տեղում:



1. Ֆրանսիան, ելնելով Թուրքիայում ունեցած տնտեսական, ֆինանսական, քաղաքական հսկայական շահերից, ձգտում էր ամեն գնով ապահովել Թուրքիայի տարածքային ամբողջականությունը և հանուն այդ շահերի գնաց քեմալականների հետ առանձին դիվանագիտական կապերի հաստատմանը: Սակայն, այստեղ Ֆրանսիան հանդիպեց իր հզոր «դաշնակից-մրցակից» Անգլիայի համառ դիմադրությանը, որն ամենևին էլ շահագրգռված չէր Թուրքիայի տարածքային ամբողջականության պահպանմամբ և վերջինիս հաստատուն դիրքերն այդ տարածաշրջանում ստիպեցին Ֆրանսիացիներին էական զիջումներ կատարել բրիտանական դիվանագիտության օգտին:

2. Դաշնակից երկրների արտաքին քաղաքականությունը թերևս հետամտում էր միայն Թուրքիային հակախորհրդային խմբավորման մեջ ընդգրկելու նպատակ:

3. Ճիշտ է, Լոնդոնում Բեքիր Սամիի կնքած համաձայնագրերն ու պայմանագրերը չվավերացրեց ԹԱՄԺ, որպես Սևրի ոգով կնքված պայմանագրեր, և Սամի բեյը հեռացվեց պաշտոնից, սակայն այդ բոլորը, այնուամենայնիվ, վկայում են այն մասին, որ դաշնակիցները զգալիորեն մեղմացրել էին իրենց նախկին պահանջները: «Անտանտի մայրաքաղաքներում Թուրքերի նկատմամբ հովերը սկսել էին փչել այլ ուղղությամբ», - գրում է Վ. Բայբուրդյանը<sup>1</sup>:

ԹԱՄԺ-ի կառավարությունը կարողացավ շատ հմտորեն օգտագործել Անտանտի ճամբարում առկա անգլո-ֆրանսիական հակասությունները՝ մանրերով դաշնակիցների տարածայնությունների ոլորտում, կարողացավ հասնել թե՛ դիվանագիտական, թե՛ ռազմական շոշափելի արդյունքների: Այս ենթատեքստում, թվում է, կարևոր գործոն հանդիսացավ նաև

<sup>1</sup> Բայբուրդյան Վ., Քրդերը, հայկական հարցը և հայ բրդական հարաբերությունները պատմության լույսի ներքո: Ե., 2008, էջ 333:

այն, որ քեմալական շարժման նշանակությունը, ինչպես շափերի, այնպես էլ քաղաքական կարևորության առումով անհրաժեշտ խորությամբ չգիտակցվեց, կամ գուցե թերագնահատվեց Անտանտի տերությունների կողմից:

4. Կիլիկիայի հարցում Ֆրանսիայի տատանումները և զիջողական կեցվածքը վստահություն ներշնչեց այդ երկրամասի համար պայքարող ազգայնական ուժերին և միաժամանակ խիստ ցավալի հետևանքներ ունեցավ Կիլիկիայի բնակչության, հատկապես հայության համար: Այս ամենը հերթական հիշեցումն էր մեզ առ այն, որ խոշոր պետությունները փոքր ժողովուրդներին՝ ներառյալ իրենց իսկ դաշնակիցներին, տված խոստումներն ու անվտանգության երաշխիքները կարող են անվարան և հեշտությամբ մոռանալ<sup>1</sup>:

<sup>1</sup> Լոնդոնի խորհրդածողովում ընդունված փաստաթղթում Հայաստանի համար ձևակերպվեց առանձին հոդված (9-րդ), որտեղ Սևրի պայմանագրով Միացյալ և Անկախ Հայաստան ստեղծելու մասին 88-րդ հոդվածը փոխարինվում է հայերի համար «Ազգային օջախ» ստեղծելու կետով: Բայբուրդյան Վ., նշվ. աշխ., էջ 334:



## 2. Ֆրանս-ֆեռալական դիվանագիտական կապերը 1919-1921 թթ.: Անկարայի պայմանագիրը

Լոնդոնի համաժողովը թեև չարգարացրեց Ֆրանսիայի սպասելիքները և չապահովեց ցանկալի արդյունք, սակայն, ֆրանսիական դիվանագիտությունը շարունակեց քեմալականների հետ հարաբերությունների կարգավորման կուրսը: Նշենք, որ դիվանագիտական մեկուսացման մեջ հայտնված քեմալականներն ևս շահագրգռված էին Ֆրանսիայի հետ համաձայնության հասնելու գործում. «Ոչ ֆրանսիացիները, ոչ էլ մենք չենք ցանկանում շարունակել ռազմական գործողությունները, ընդհակառակը, երկու կողմերս էլ ընդունել էինք խաղաղության հասնելու դիվանագիտական ճանապարհը»<sup>1</sup>:

Հաջորդ փորձը Ֆրանսիան կատարեց 1921թ. հունիսի սկզբին: Այս նպատակով առաջին ոչ պաշտոնական այցով Անկարա գործուղվեց սենատի արտաքին գործերի հանձնաժողովի նախագահ Ֆ. Բուլոնը: Բուլոն քննարկումներ ընթացան հատկապես այն հարցի շուրջ, թե որտեղից պետք է սկսեն բանակցություններ՝ որն է լինելու բանակցությունների մեկնակետը: Քեմալը պահանջում էր, որպեսզի բանակցությունների ելակետ լինեն «Ազգային ուխտի» սկզբունքները<sup>2</sup>: Սակայն, Բուլոնն առաջարկում էր հիմք ընդունել Սևրի պայմանագիրը՝ որպես կատարված փաստի կամ էլ Բրիտանի և Բեքիր Սամիի ստորագրած համաձայնագիրը: Առաջարկները Բուլոնը փորձում է հիմնավորել՝ վկայակոչելով այն փաստը, որ Անկարայի պատվիրակները Լոնդոնում չեն ասել Ազգային ուխտի գոյության մասին, ու ոչ միայն Եվրոպայում, այլ նաև Ստամբուլում բավարար չափով տեղեկացված չեն հռչակագրի բովանդակության

ու նշանակության մասին: Անկարան հրաժարվեց բանակցել «Սևրի պայմանագրի» հիմքի վրա: «Բեքիր Սամի բեյը խախտել է իրեն տրված հրահանգները՝ շեղվելով իր լիազորություններից, Լոնդոնում թաքցրել է «Ազգային ուխտի» գոյության մասին, ընդգծում է Քեմալը և հավելում. «Թուրք ժողովրդի համար Սևրի պայմանագիրը մահացու պայմանագիր է: Մենք չենք կարող անկեղծ հարաբերություններ հաստատել մի երկրի հետ, որն իր մտքից չի ջնջել Սևրի պայմանագիրը: Մեր աչքերով այդպիսի պայմանագիր գոյություն չունի»<sup>1</sup>:

Բուլոնն առաջարկեց բանակցությունները ընդհատել «Ազգային ուխտին» ծանոթանալու համար: Կարճատև ընդմիջումից հետո վերսկսված բանակցություններում հաջորդ վիճելի հարցը կապիտուլիացիայի վերացման և Թուրքիայի լիակատար անկախության ճանաչման խնդիրներն էին: Ֆրանսիայի ֆինանսատնտեսական շրջանակների համար ձեռնտու չէր կապիտուլացիաների վերացումը, քանի որ հսկայական վնասներ կկրեին, մինչդեռ Քեմալը գտնում էր. «Թուրքիային լիակատար անկախություն ձեռք բերելու համար պետք է լիարժեք ինքնուրույնություն ապահովվի կյանքի բոլոր ոլորտներում»<sup>2</sup>: Թեև Բուլոնը և Քեմալը հունիսի 20-ին կնքում են ռազմական գործողությունների դադարեցման համաձայնագիր, սակայն ընդհանուր առմամբ բանակցություններն այս փուլում շոշափելի արդյունք չտվեցին: Ֆրանսիայի քայլերը դժգոհության տեղիք տվեց Անգլիայում, Ֆրանսիային մեղադրեցին դաշնակցային պարտավորությունների խախտման մեջ: Պատասխանում Բրիտանը հայտարարեց. «Բուլոնը Անկարա է մեկնել առևտրային գործերի կարգավորման համար, Ֆրանսիան, առանց

<sup>1</sup> Кемал М., цит. соч., с. 42.

<sup>2</sup> Türkiye Tarihi, s. 101.

<sup>1</sup> Кемал М., цит. соч., с. 43.

<sup>2</sup> Поцхвериа Б., цит. соч., с. 5.



բրիտանական կառավարության համաձայնություն, Թուրքիայի հետ հարաբերություններում չի ստանձնի ոչ մի պարտավորություն»<sup>1</sup>:

1921թ. ամռանը հունական զորքերը, ստանալով Անգլիայի աջակցությունը, ձեռնարկում են աննախադեպ հզոր հարձակում<sup>2</sup>: Հուլյներին հաջողվեց գրավել ռազմավարական մի քանի կարևոր դիրք, ընդհուպ մոտենալ Անկարային: Սակայն, քեմալականները կարողացան Սաքարիայի ճակատամարտում տանել տպավորիչ հաղթանակ, և այնքան ոգևորվել, որ մերժեցին Անտանտի առաջարկած հույն-թուրքական նոր համաձայնագիրը, Քեմալը կտրուկ պահանջեց անհապաղ դուրս բերել հունական զորքը: «Մեզ համար անընդունելի է նույնիսկ Սևրի պայմանագրի վերանայման Եվրոպայի առաջարկը, մենք չենք թուլացնի ճնշումը, քանի դեռ մեր պայմանները չենք թելադրել», - գրում էր «Հաքիմիյեթի միլլիեն»<sup>3</sup>:

Ինքիր Սամի բեյը շեշտում էր. «Խաղաղություն Արևելքում, որից էլ կախված է ընդհանուր խաղաղությունը, չի լինի այնքան ժամանակ, քանի դեռ լիովին չեն բավարարվել թուրքերի օրինական պահանջները: Մենք չենք ցանկանում տնտեսական ստրկություն, որը փաթաթում են մեր վզին, եթե ֆինանսական կարևոր հարցերը լուծում չստանան, մենք չենք կարող կանգնեցնել մեր ուժերին»<sup>4</sup>: Քեմալականների հաղթանակում զգալի ներդրում ուներ Խորհրդային Ռուսաստանը, որի «ցուցաբերած նյութական և ռազմական օգնությունը շատ կարևոր դեր կատարեց հույների դեմ թուրք ժողովրդի տարած հաղթանակի գործում», - ընդգծում է է. Ասկերը<sup>5</sup>:

<sup>1</sup>diphis.ru/sevrsko\_lozannskoe\_uregulirovanie\_s\_ottomansk-a968.html

<sup>2</sup>Մերժվեց Պոլսի գրավման հույների առաջարկը: Howard H., op. cit., p. 267.

<sup>3</sup>Бюллетен НКВД, N 64. 09.02,1921, с. 40.

<sup>4</sup>Бюллетен НКВД, N 90. 30. 08,1921, с. 57.

<sup>5</sup>Аскерев Э., цит. соч., с. 20.

Թուրք պատմաբան Ա. Էսմերը փաստում է, որ «Սաքարիայի կարևոր հաղթանակը ֆրանսիական դիվանագիտությանը վերջնական մղեց Անկարայի հետ առանձին պայմանագիր ստորագրելուն»<sup>1</sup>: 1921թ. սեպտեմբերին Բուլոնը կրկին Անկարայում էր, արդեն պաշտոնական առաքելությամբ: Նրա բանակցությունները Յ.Քեմալի և Մ.Քեմալի հետ, ինչպես բնութագրել է Ի.Ինյունյուն, «ընթացան շատ բարեկամական մթնոլորտում»<sup>2</sup>: Արդյունքում 1921թ. հոկտեմբերի 20-ին ստորագրվեց ֆրանս-թուրքական պայմանագիր, որը գրականության մեջ հայտնի է Անկարայի կամ Ֆրանկլեն Բուլոնի պայմանագիր անունով<sup>3</sup>: Դա այն քաղաքականության տրամաբանական ավարտն էր, որ կար Ֆրանսիայի և Թուրքիայի միջև:

Պայմանագրի ստորագրման օրը Յուսուֆ Քեմալը Բուլոնին հանձնում է մի նամակ, որն ըստ էության պայմանագրի լրացումն էր<sup>4</sup>: Նա գոհունակություն էր հայտնում երկու երկրների միջև նախկինում գոյություն ունեցող սերտ հարաբերությունների վերականգնման և ամրապնդման համար և հույս հայտնում, որ Ֆրանսիայի կառավարությունը կձգտի հասնել համաձայնության Թուրքիայի ինքնիշխանությանը առնչվող հարցերում: Յ.Քեմալը հայտնում էր, որ պատրաստ են կոնցեսիաներ տրամադրել հանքերի, երկաթուղու և նավահանգստների շահագործման ոլորտում՝ երկկողմ շահերին համապատասխան<sup>5</sup>: Նաև կարևորվում էր մշակութային, տնտեսական, ֆինանսական համագործակցության ընդլայնումը<sup>6</sup>:

<sup>1</sup> Esmer A. op. cit., s. 542.

<sup>2</sup> İnünü I. Hatıralar. Kitap 1. Ankara, 1985, s. 278.

<sup>3</sup> Yılmaz V. Siyasi Tarih. İstanbul, 1998, s. 194-195

<sup>4</sup> Baskın O. op. cit., s. 145-150.:

<sup>5</sup> Розалиев Ю. Экономическая история турецкой республики, с. 82.

<sup>6</sup> Поцхверия Б., цит. соч., с. 158-159.



Դատելով պայմանագրի հողվածներից և նամակի բովանդակությունից, արձանագրենք, որ այն ընդգրկում էր համագործակցության գրեթե բոլոր ոլորտները: Նախ և առաջ համաձայնագրում շեշտադրվում էր քաղաքական երկխոսության, փոխշահավետ տնտեսական համագործակցության շարունակման և ընդլայնման նպատակով կողմերի միջև տարբեր մակարդակների շփումների կարևորությունը: Ավելին, Ֆրանսիան ոչ միայն ճանաչում էր Քեմալի կառավարության օրինական բնույթը, այլև լուրջ զիջումներ կատարում:

Այս տեսակետը հիմնավորելու համար վերլուծենք այն կետերը, որոնք սկզբունքային նշանակություն ունեին Թուրքիայի և Ֆրանսիայի համար: Թուրքիայի համար սկզբունքային էին հատկապես 3-րդ և 4-րդ հողվածները, որով Ֆրանսիական զորքը հետ էր քաշվելու՝ Թուրքիային հանձնելով Կիլիկիան, ինչը հնարավորություն ընձեռեց քեմալականներին զորքը տեղափոխել Արևմտյան ճակատ՝ զգալիորեն ուժեղացնելով հակահունական թևը, շուրջ 80 հազար թուրք զինվոր<sup>1</sup>: Նշանակությամբ կարևոր էր նաև 7-րդ հողվածը, որով Ալեքսանդրետի սանջաքը թեև մնաց Սիրիայի կազմում, սակայն հաստատվեց թուրքերի համար շահավետ հատուկ կառավարման համակարգ: Հետագայում, այս գրույթի հիման վրա Թուրքիան պահանջեց Ալեքսանդրետի սանջաքը միացնել իրեն:

Անկարայի կառավարության համար ձեռքբերում կարելի է համարել 6-րդ հողվածը, որով փոքրամասնությունների իրավունքների ճանաչման կարևորագույն հարցը փոխարինվում էր «հանդիսավոր և ոչինչ չպարտավորեցնող մի ձևակերպման հետ»: Իսկ թե ի՞նչ էին հասկանում քեմալականները «Ազգային ուխտում» փոքրամասնությունների իրավունքների «ճանաչման» սկզբունքի տակ, լիովին հասկանալի է: Այս առթիվ Լյուդ-

Ջորջը նշում էր. «Ֆրանսիայի կառավարությանն այլևս չէր հետաքրքրում ճնշված ժողովուրդների ազատագրումը»<sup>1</sup>:

Պայմանագրի 10-րդ հողվածը ձեռնտու էր Ֆրանսիական կողմին և առնչվում էր տրվող ֆինանսա-տնտեսական արտոնություններին և կոնցեսիաներին: Եթե ընդունենք, որ Թուրքիան պայմանագիրը կնքելիս առաջնորդվել է «Ազգային ուխտի» սկզբունքներով, ապա այս հողվածով քեմալական կառավարությունը շեղվում էր և Ֆրանսիացիներին էապես զիջում: Սակայն, եթե հաշվի առնենք այն իրողությունը, որ Անկարայի կառավարությունը գտնվում էր դիվանագիտական մեկուսացման մեջ Արևմուտքի կողմից, ապա զիջումը քեմալականների ձեռք բերած հաջողությունների համեմատ այդքան էլ կարևոր չէին: Բացի այդ, Ֆրանսիային հատկացվող կոնցեսիաներին մասնակցելու էր թուրքական կապիտալը, և ամենակարևորը, Անկարան կարող էր ցանկացած ժամանակ հրաժարվել, եթե կոնցեսիաները հակասեին Թուրքիայի ազգային շահերին:

Անկարայի պայմանագիրը Ֆրանսիայի համար մի քանի կարևոր կողմ ուներ. նախ այն գոհունակությամբ ընդունվեց մահմեդական աշխարհում, այդ թվում՝ նաև Ֆրանսիայի գաղութային տիրույթներում, ինչը նպաստեց վերջինիս սասանված հեղինակության վերականգնմանը, և ամենագլխավորը, կարող էր Անգլիայի դիրքի թուլացման հաշվին՝ Մերձավոր Արևելքում հասնել ավելի շահեկան դրության: Պայմանագրի հակաանգլիական ուղղվածության մասին են վկայում այն գաղտնի դրույթները, որոնք շարտացույցեցին պայմանագրի բուն տեքստում. «Ֆրանսիան Թուրքիային է վաճառելու 200 մլն ֆրանկի արժողությամբ զենք ու զինամթերք՝ այդ թվում 10 հազար զինվորի լրիվ հանդերձանք, 8 հազար մաուզեր տիպի հրացան՝ ռազմամթերքով, 5 հազար ձի և 12 օդանավ»<sup>2</sup>:

<sup>1</sup> Ллойд-Джордж Д., цит. соч., с. 403.

<sup>2</sup> Սահակյան Ռ., նշվ. աշխ., էջ 242:

<sup>1</sup> Пощвериа Б., цит. соч., с. 159.



Թուրքերին տրամադրելով ռազմական միջոցներ, Ֆրանսիան լավ հասկանում էր, որ դա նշանակում է Քեմալի դիրքերի ամրապնդում հակահունական ճակատում, որն իր հերթին կհանգեցնեք հակաանգլիական դիրքերի ուժեղացմանը: Այս համատեքստում միանգամայն տրամաբանական է, որ լորդ Քերզոնին ուղղված նամակում անգլիացի դիվանագետը հստակ նշում էր. «Ֆրանսիայի քաղաքականությունը Մերձավոր Արևելքում ներկայումս ուղղված է բրիտանական ազդեցություն ու շահերի դեմ»<sup>1</sup>: Այս ամենից հետո, հասկանալի է, որ Ֆրանս-թուրքական պայմանագրի կնքումը Անգլիայի ղեկավար շրջաններում բողոքի աննախադեպ ալիք առաջացրեց:

Անգլիան Ֆրանսիային մեղադրեց դաշնային պարտավորությունը չհարգելու մեջ. «Անգլիական կողմը գտնում էր, որ համաձայնագիրն անջատ դաշնագիր է կնքված դաշնակիցներից մեկի համար թշնամի կառավարության հետ, դա մեծապես կազդի դաշնակիցների համագործակցության քաղաքականության վրա, որի հանդեպ անգլիական կառավարությունը միշտ վստահություն է ունեցել»<sup>2</sup>: 1921թ. նոյեմբերի 5-ին Քերզոնը բողոքեց Ֆրանսիային, որը բաղկացած էր երկու մասից:

Մաս առաջին.

1. Անկարայի պայմանագիրն իրենից ներկայացնում է ոչ այլ ինչ, քան անջատ համաձայնագիր, որը հակասում է 1915թ. նոյեմբերի 30-ին կնքված Լոնդոնի պայմանագրին:

2. Անջատ այդ համաձայնագրերն անհամատեղելի են Անտանտի գործունեության հետ:

3. Անկարայի պայմանագիրը թուլացնում է Ֆրանսիայի հեղինակությունը՝ Արևելքի հարցերը դաշնակիցների կողմից համատեղ կարգավորելու գործում:

Մաս երկրորդ. այն վերաբերում էր առանձին կանոնադրույն հարցերի:

1. Ֆրանսիան իրավունք չունի հրաժարվելու փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունից, քանի որ Ֆրանսիային է տրվել այդ մանդատը:

2. Ֆրանսիական զորքերի տարհանումը երկու ամսվա ընթացքում հակասում էր եռյակ համաձայնագրին:

3. Հոկտեմբերի 20-ի պայմանագրի համաձայն երկաթուղագիծն անցնում էր թուրքական տարածքով և կորցնում այն ապահովությունը, որ նա ներկայացնում էր, երբ ամբողջովին գտնվում էր Ֆրանսիական գոտում:

4. Տնտեսական կոնցեսիաները իրենց հերթին հակասում են եռյակ համաձայնագրին:

5. Յուսուֆ Քեմալ բեյի նամակը, որը պայմանագրի լրացում է, նույնպես պատասխանի է սպասում<sup>1</sup>:

Անգլիայի բողոքներից ու մեղադրանքներից Քեմալը փորձեց պաշտպանվել սկզբում մամուլի օգնությամբ: Ֆրանսիական մամուլը գրեթե միահամուռ արտահայտեց ընդհանուր գոհունակությունը Անկարայի պայմանագրի հարցում, մրցակցում էին Բուլոնի հասցեին գովեստի խոսքեր շոսյւելու մեջ՝ նշելով հեռատեսությունը: ԱԳՆ խոսնակ «Թանը» համարեց. «Բարբերություն աշխարհի համար»<sup>2</sup>:

«Այս պայմանագրի նշանակությունը դուրս է եկել Ֆրանս-թուրքական հարաբերությունների սահմանից և այն ձեռնտու է Անգլիայի և Անտանտի մյուս պետություններին», - հայտարարում էր Բրիանը<sup>3</sup>: Դաշնակցի դժգոհությունը մեղմացնելու համար Ֆրանսիական դիվանագիտությունը ջանում էր նվազեցնել պայմանագրի կարևորությունը՝ տալով զուտ մասնա-

<sup>1</sup> Documents on British Foreign Policy 1919-1939, p. 560.

<sup>2</sup> «Ճակատամարտ», Կ. Պոլիս, 1922 հունվարի 8:

<sup>1</sup> Севрский мирный договор и акты, подписанные в Лозане, с. 22-23.

<sup>2</sup> Paillares M. op. cit., p. 364.

<sup>3</sup> Поцхвериа Б., цит. соч., с. 160.



վոր բնույթ: Ֆրանսիական դեսպանության ներկայացուցիչ ղր Մոնտիլը 1921թ. նոյեմբերին գրում է. «Անկարայի պայմանագիրը ոչինչ չի որոշում Թուրքիայի հետ հաշտության կնքելու հարցում, այն իրենից չի ներկայացնում հաշտության պայմանագիր, այլ տեղական բնույթի համաձայնագիր է»<sup>1</sup>: Անկասկած, համաձայնագրի կնքումը լուրջ առաջխաղացում էր Թուրք-Ֆրանսիական հարաբերություններում: Սակայն անպատասխան մնաց, թե արդյոք համաձայնագիրը քայլ էր դեպի համընդհանուր խաղաղ կարգավորումը, թե ուղղակի ժամանակ շահելու միջոց: Քեմալականների հետ համաձայնության հասնելու գրգռատեսչություն էր այն, որ պայմանագիրը Ֆրանսիային հնարավորություն էր ընձեռում ողջ ուշադրությունը կենտրոնացնելու «հիմնական պատառ» Սիրիայի վրա և խաղաղ պայմաններում իրագործել իր մանդատի կառավարումը:

Պայմանագրի կարևորությունը Ֆրանսիայի համար կարելի է ավարտել ղրա հեղինակի՝ Ֆ.Բուլոնի, որին անվանում էին «Անգորայի հերոս», խոսքով. «Ֆրանսիան իր բոլոր դաշնակիցներին մատուցում է մի այնպիսի ծառայություն, որի արժեքը երևան կգա ամեն օր»<sup>2</sup>: Սակայն, Բուլոնը չի նշել, թե իր «մատուցած անգնահատելի ծառայությունն» ինչ արժեք ունեցավ Կիլիկիայի և հայության համար: Իրավացի է Ժ.Պիշոնը, երբ գրում է, որ հայերին տրված բոլոր հանդիսավոր խոստումները մոռացվեցին<sup>3</sup>: Մ.Պայարեսն ընդգծում էր. «Անկարայի պայմանագիրը տագնապի, վախի ու հուսալքության մթնոլորտ ստեղծեց Կիլիկիայի քրիստոնյա ազգաբնակչության շրջանում՝ վշտի մեջ խորասուզելով 200 հազար կիլիկիացիների»<sup>4</sup>:

Անկարայի պայմանագիրը մեծ ցնծությամբ ընդունվեց Թուրքիայում: Մամուլում այն գնահատվեց որպես նվաճված խոշոր հաջողություն՝ «Ազգային ուխտի» մասնակի կենսագործում և ապագա դիվանագիտական հաղթանակի նախալրաբեր: «Արևելքի խաղաղությունը Ֆրանս-Թուրքական համաձայնությունից շատ բան է շահելու», - վկայակոչելով Թուրքական մամուլի հրապարակումը մեջբերում է «Առավոտը»<sup>1</sup>:

«Այս պայմանագրի շնորհիվ մեր երկրի շափաղանց կարևոր շրջաններ ազատագրվեցին գրավումից, առանց զոհաբերելու մեր քաղաքական, տնտեսական, ռազմական կամ որևէ այլ անկախություն... Մեր ազգային նկրտումները առաջին անգամ ճանաչվեցին ու ամրագրվեցին արևմտյան տերություններից մեկի հետ կնքված պայմանագրով», - հայտարարեց Քեմալը<sup>2</sup>:

Ընդհանրացնելով Անկարայի պայմանագրի շուրջ առաջացած անգլո-ֆրանսիական փաստաթղթային իրարանցումը՝ ընդգծենք, որ այդ պայմանագիրն ավելի խորացրեց արտաքուստ դաշնակցային թվացող անգլո-ֆրանսիական հարաբերություններում առկա հակասությունները: Իսկապես, 1921թ. պայմանագրով Ֆրանսիան՝ արևմտյան տերություններից առաջինը ճանաչեց Անկարայի կառավարությունը<sup>3</sup>, որն էլ լուրջ ճեղքվածք առաջացրեց մինչ այդ Թուրքական ազգային իշխանությունների դեմ համատեղ հանդես եկող Անտանտի ճամբարում: Այս համատեքստում կիսում ենք Ֆրանսիացի հեղինակներ Գոնտո-Բիրոնի և Ռեվերանի տեսակետը: Նրանք իրավացիորեն Անկարայի պայմանագիրը համարում են «Ֆրանսիայի զիջողականության հաջորդ դրսևորումը»<sup>4</sup>:

<sup>1</sup> Эфендиева З., цит. соч., с. 143.

<sup>2</sup> Մահալյան Ռ., նշվ. աշխ., էջ. 254:

<sup>3</sup> Pichon J. op. cit., p. 244.

<sup>4</sup> Paillares M. op. cit., p. 366-367.

<sup>1</sup> «Առավոտ», Կ. Պոլիս, 1922 հունվարի 9:

<sup>2</sup> Кемал М., цит. соч., с. 60.

<sup>3</sup> www.mfa.gov.tr/turkiye-cumhuriyeti-dis-isleri-bakanligi-tarihcesi.tr.mfa.

<sup>4</sup> Gontant B., Reverent. op. cit., p. 226.



Այդպիսով, Ֆրանսիան ձեռք բերեց մի շարք տնտեսական արտոնություններ Թուրքիայում և ամրապնդեց իր դիրքերը, այդուհանդերձ, պայմանագիրը շատ ավելի ձեռնտու էր Թուրքիային, քանի որ Կիլիկիայի պարպումով քեմալական կառավարությունն արդեն կարող էր լիովին օգտագործել այդ երկրամասի ներուժը, միաժամանակ այս ճակատի հաշվին նշանակալի չափով բարձրացնել իր զինված ուժերի դիմադրողականությունը Արևմտյան ճակատում:

### 3. Ֆրանս-թուրքական հակասությունները Լոզանի համաժողովում

Թեպետ Ֆրանսիան Անկարայի հետ հասավ համաձայնության, ամեն դեպքում չէր կարող բացահայտ շատարել դաշնակից Անգլիայի ձեռնարկած գործողություններին: Կնքված պայմանագիրը դեռ չէր նշանակում, թե Ֆրանսիան ամրապնդել էր իր մերձավորարևելյան դիրքերը և չպետք է մասնակցեր ծավալվող գործընթացներում: Հակառակը՝ հետագա իրադարձությունների զարգացումը ցույց տվեց, որ Ֆրանս-թուրքական հարաբերությունները թևակոխեցին նոր փուլ:

Քեմալական ուժերը, այս ընթացքում շարունակելով զարգացնել ձեռք բերած հաջողությունները, կարողացան 1922թ. օգոստոսի վերջին հնգօրյա կատաղի մարտերից հետո ջախջախել հունական զորքին: Դրանից հետո քեմալականները կանգ առան Մարմարա ծովի և Դարդանեղի ափերի մոտ<sup>1</sup>: Հետագա առաջխաղացումը կնշանակեր անմիջական պատերազմ Անգլիայի հետ, որն անշուշտ ավելի լուրջ մրցակից էր քան Հունաստանը<sup>2</sup>: Անտանտի ղեկավարները Քեմալից պահանջեցին դադարեցնել թուրքական զորքի առաջխաղացումը դեպի Չանակ-կալե, որտեղ գտնվում էին նրանց բազաները, և ընդհանրապես ռազմակալված շրջանների ու Նեղուցների գոտու ուղղությամբ<sup>3</sup>: Այն հայտնի է «Չանակյան ճգնաժամ» անունով: Սակայն գրեթե բացառվում էր Թուրքիայի դեմ համատեղ գործելու որևէ հնարավորություն, քանզի դաշնակից-

<sup>1</sup> Adnan S., Seyfi Y. 1922 Yılında Barış Çabaları ve Milletlerarası Görüşmelerde «İyonya Devleti» Kurulması Meselesi. Ankara, 2014, s. 825-827.

<sup>2</sup> Անգլիան նույնիսկ ողջ մայթյան նավատորմը տեղափոխեց Նեղուցների գոտի: Штюрмер Х. Англо-французское сближение, Международная жизнь, 1925, N., с. 9.

<sup>3</sup> Захаров С. Англия в 1918-1922гг. М., 1945, с. 36.



ների քաղաքականության բնորոշ կողմը Թուրքիայի խնդրում միասնական դիրքորոշման իսպառ բացակայությունն էր:

Հասկանալու համար Ֆրանսիան դերակատարությունը և այն մտավախությունը, որն ուներ Ֆրանսիական դիվանագիտությունը՝ կապված բրիտանական ձեռնարկումներին, հակիրճ ներկայացնենք Չանակյան ճգնաժամը:

Չանակյան ճգնաժամի վերաբերյալ առաջին պաշտոնական փաստաթուղթը 1922թ. սեպտեմբերի 11-ին Անկարա ուղարկված դաշնակիցների ուղերձն է, որտեղ քեմալական զորքերից պահանջվում էր գործողություններ շձեռնարկել «չեզոք գոտում»: Նշենք որ, մինչ այդ՝ սեպտեմբերի 9-ին, Թուրքական զորքերն արդեն մտել էին Իզմիր<sup>1</sup>: Հաջորդ օրը Չանակ-կալե ժամանեցին Ֆրանսիական և իտալական զորքերը՝ համալրելով դաշնակիցների զինված ուժերը: Անգլիական կառավարությունն էլ տեղեկացրեց, որ «իրենք միասնական են իրենց որոշման մեջ և թույլ չեն տա քեմալական զորքերի մուտքը Ստամբուլ, ինչպես նաև «չեզոք գոտի»՝ Եվրոպական Թուրքիայում և Չատալչիում»<sup>2</sup>:

«Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան բազմիցս փրկել են այդ կայսրության կյանքը, երբ ռուսական արջը պատրաստ էր վերջ տալ նրա գոյությանը, և շնայած այս ամենին՝ Թուրքերը անշնորհակալ գտնվեցին Անգլիայի և Ֆրանսիայի հանդեպ», գրում է Դ.Լլոյդ-Ջորջը<sup>3</sup>:

1922թ. սեպտեմբերի 14-ին Ֆրանսիական կառավարությունը տեղեկացրեց Լոնդոնին, որ ինքը կաշակցի Անգլիայի դիրքորոշմանը Նեղուցների պաշտպանության հարցում: Իր դաշնակցի դիվանագիտական այսպիսի միջոցառումներից մեծ-

ապես անհանգստացած՝ Ռ. Պուանկարեն սեպտեմբերի 18-ին հեռագրեց Լոնդոն. «Ֆրանսիական կառավարությունը խորապես զարմացած է անգլիական կաբինետի այդ լուրջ նախաձեռնությունից՝ կապված Արևելքի հետ, տեղեկացնում է դաշնակիցների երբևէ կնքվող համաձայնագրին Ֆրանսիայի մասնակցության մասին»<sup>1</sup>: Թվում է՝ Ֆրանսիայի այդ «զարմանքը» պայմանավորված էր մահմեդական աշխարհում Անգլիայի հեղինակության և քաղաքական իշխանության մեծացման փաստով: Իրենց իսկ բառերով. «Անգլիան Ֆրանսիային վախեցրել էր ոչ այնքան պատերազմի սկսումով, այլ նրանով, որ պատերազմ կարող է չլինել, դա կկատարվի անգլիական նախաձեռնությամբ, անգլիական ճնշման տակ, ու Ֆրանսիան այդ դեպքում ինքը կաջակցի Անգլիայի հեղինակության բարձրացմանը»<sup>2</sup>:

Այս ընթացքում գեներալ Պելլեն Կ.Պոլսից ժամանում է Իզմիր և Քեմալին ներկայացնում դաշնակիցների հին պահանջները՝ Թուրքական զորքերը դուրս բերել «չեզոք գոտուց»<sup>3</sup>: Քեմալը հայտարարեց, որ Անկարայի կառավարությունը չի ընդունում «չեզոք գոտի» հասկացությունը. «Այս իրադարձությունների պատասխանատուն են ձեր դաշնակից անգլիացիները և դուք՝ Ֆրանսիացիները: Դուք զինեցիք և մեզ վրա ուղարկեցիք հունական բանակներին: Այդ դուք Անատոլիայում հրդեհ բորբոքեցիք»<sup>4</sup>, հայտարարեց Մ.Քեմալը:

Զուգահեռաբար բանակցություններ էին ընթանում նաև դաշնակիցների միջև: Սեպտեմբերի 20-ին Քեդ՝ Օրսեում հրավիրվեց Անտանտի երկրների արտաքին գործերի նախարարների խորհրդակցություն, որտեղ Պուանկարեն անհրաժեշտ

<sup>1</sup> Inönü I. op. cit., p. 43.

<sup>2</sup> Миллер А., цит. соч., с. 214.

<sup>3</sup> Ллойд-Джордж Д. Европейский хаос. Л.-М., 1924, с. 142.

<sup>1</sup> Ллойд-Джордж Д., цит. соч., с. 215.

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Inönü I. op. cit., p. 302.

<sup>4</sup> Миллер А., цит. соч., с. 216.



համարեց շուտափույթ խաղաղության կոնֆերանս հրավիրել<sup>1</sup>: Քերզոնն էլ հասկացնել տվեց, որ Անգլիան պաշտպանելու է իր պահանջները Նեղոցների հարցում, իսկ Արևելյան Թրակիայի համար չի պատրաստվում պատերազմել: «Դաշնակիցները Թուրքիային շուտ խոստումներ էին տալիս հիմնականում Հունաստանի հաշվին», - գրում է Ու.Չերչիլը<sup>2</sup>:

Հատկանշանական է, որ այդ ժամանակ քաղաքական ակտիվ գործունեություն վերադարձավ 1921թ. Անկարայի պայմանագրի ճարտարապետ Ֆրանկլեն Բուչոնը: Նա սեպտեմբերի 28-ին ժամանելով Իզմիր, Ֆրանսիական կառավարության անունից ցանկություն հայտնեց հանդիպել Քեմալի հետ: Նրանք հանդիպեցին որպես լավագույն ընկերներ<sup>3</sup>: Հանդիպման ժամանակ Ֆրանսիացի դիվանագետը Քեմալին առաջարկեց ընդունել դաշնակիցների սեպտեմբերի 23-ի նոտան՝ հավաստիացնելով, որ Ֆրանսիան առաջիկա համաժողովում կաջակցի Անկարայի կառավարությանը: Չնայած Ֆրանսիայի ղեկավարությունը հայտարարեց, թե Ֆրանկլեն Բուչոնը «հրավասու» չէ որևէ լրացուցիչ պայման առաջարկելու՝ ամեն դեպքում այդ հանդիպումը դժգոհության տեղիք տվեց անգլիական շրջաններում:

1922թ. հոկտեմբերի 3-ին Մուզանիայում սկսվեցին զինադադարի բանակցություններ: Թուրքիայի պատվիրակության ղեկավար Իսմեթ փաշան պահանջեց անհապաղ Իզմիրի շրջանը վերադարձնել Թուրքիային: Այդ առիթով հակասություն-

<sup>1</sup> Խորհրդակցության ընթացքում Ֆրանսիացի պաշտոնյաները, քեմալականների հետ համաձայնության գալու անհրաժեշտությունը հիմնավորելիս, շնորհակալ են մեկ անգամ հիշեցնել, որ «Ֆրանսիան մուսուլմանական երկիր է» և չի կարող նկատի չունենալ այն ծանր վիճակը, որն ստեղծվել է իր մուսուլմանական գաղութներում:

<sup>2</sup> Черчилль У. Мировой кризис, с. 289.

<sup>3</sup> İnönü I. op. cit., p. 22.

ներն այնքան խորացան, որ նույնիսկ բանակցություններ երկու օրով ընդմիջվեցին: Չերչիլն այս առթիվ գրեց. «Մուզանիա ժամանած Ֆրանկլեն Բուչոնը փորձում էր թուրքերին համոզել, որ նրանք կարող են ավելին ստանալ, քան խոստանում են բրիտանացիները և որ Մեծ Բրիտանիան չի կարող կամ չի ցանկանում պատերազմել: Այս վստահեցումների արդյունքում էլ բանակցությունները շուտով մտան փակուղի»<sup>1</sup>: Սակայն անգլո-թուրքական պատերազմի սանձազերծման և Լոնդոնի հետ հնարավոր առճակատումից խուսափելու համար Իսմեթ փաշան տեղի տվեց և հոկտեմբերի 10-ին վերսկսվեցին բանակցությունները, որի արդյունքում հոկտեմբերի 11-ին ստորագրվեց զինադադարի համաձայնագիր:

Զինադադարի կնքումից հետո Ֆրանսիական դիվանագիտությունն ավելի աշխուժացավ: Մինչ համաժողովի բացումը Ֆրանսիան վերստին փորձեց ցուցադրել համերաշխություն և միասնականություն դաշնակից Անգլիայի հետ. «Շատ կարևոր է, - ասում էր Ռ.Պուանկարեն, - որ անգլիական բարձրագույն ղեկավարությունը և Ֆրանսիական կառավարությունը պահանջեն միասնական ճակատ բոլոր այն հարցերում, որտեղ թուրքերի պահանջները անընդունելի կլինեն»<sup>2</sup>: Թեև, Պուանկարեն շարունակաբար շեշտում էր գործողությունների միասնականության կարևորությունը, փորձում էր ցույց տալ, թե իբր շարունակում է Անգլիայի հետ պահպանել «դաշնակցային սերտ փոխհարաբերություններ», ինչը կրում էր զուտ ձևական բնույթ: Իրականում, Փարիզը կանգնած էր դիրքերը թուլացնելու լուրջ սպառնալիքի առջև: Շարունակվում էին փոխադարձ կասկածները ու դիրքային պայքարը անգլո-ֆրանսի-

<sup>1</sup> Черчилль У., цит. соч., с. 300.

<sup>2</sup> Սահակյան Ռ., Ֆրանսիան և Թուրքիան Լոզանի կոնֆերանսում, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, 1985, էջ 5-24:



ական հարաբերություններում և Ֆրանսիայի ղեկավար շրջանները գիտակցում էին, որ Անգլիայի հետ միասնական ճակատով հանդես գալու պարագայում կվտանգեն իրենց ազգային շահերը: «Պուանկարեն իրականում ոչ միայն չէր ցանկանում Քերզոնի հաղթանակը, այլ հակառակը՝ նրան ձեռնտու էր Անգլիայի և քեմալականների երկարատև պայքարը»<sup>1</sup>:

Մինչ համաժողովի հրավիրումը, Պուանկարեն մեկ անգամ ևս փորձեց տեղեկանալ Անկարայի կառավարության մտադրության մասին և Փարիզ հրավիրեց Իսմեթ փաշային: Նոյեմբերի 13-ին թուրքական պատվիրակությունը ժամանում է Փարիզ, սակայն Պուանկարեն չի հաջողվում որևէ բան իմանալ. «Նրանք երկուսն էլ ձգտում էին որոշել մեկը մյուսի ուժերը, ինչպես երկու մարտիկ՝ գորգ դուրս գալուց առաջ»<sup>2</sup>:

Անկարայի կառավարության համար ոչ պակաս կարևոր խնդիր էր Լոզանի համաժողով մեկնող պատվիրակության կազմի ընտրության հարցը: Նման դժվարին ու պատասխանատու բանակցություններում շատ կարևոր էր, որ թուրքական պատվիրակությունը չընդուներ արևմտամետ կողմնորոշում: Քեմալը պատվիրակության ղեկավար նշանակեց Իսմեթ փաշային, ով «այդ պատվին արժանացավ ազատագրական պատերազմում հաղթանակների և հերոսական գործողությունների համար», - ընդգծում է թուրք պատմաբան է.Շյուբրունը<sup>3</sup>: Բացի այդ, Իսմեթ փաշան վայելում էր Քեմալի «անձնական համակրանքը և անսահման վստահությունը»<sup>4</sup>: Նրան պետական կարգավիճակ ունեցող գործչի պաշտոն ապահովելու համար 1922թ. հոկտեմբերի 26-ին ԹԱՄԺ Իսմեթ փաշային ընտրեց

արտաքին գործերի նախարար: Համաժողովի նախօրեին Քեմալը կատարեց Անկարայի կառավարության համար սկզբունքային նշանակություն ունեցող ևս մի քայլ: 1922թ. նոյեմբերի 1-ին մեջլիսն օրենք ընդունեց Մեհմեդ 5-ին զահրընկեց անելու<sup>1</sup>, խալիֆայության ու սուլթանության անջատման և վերջինիս վերացնելու մասին («սուլթանը ընդմիշտ պատկանում է պատմությանը»)<sup>2</sup>: Ապա Ստամբուլի կառավարությունը վայր դրեց լիազորությունները: Այս օրենքով Քեմալը լուծում էր շատ կարևոր խնդիր, այն է՝ առաջիկա համաժողովում բացառել Ստամբուլի կառավարությունը Անկարայի դեմ օգտագործելու դաշնակիցների հնարավորությունը, մյուս կողմից՝ Քեմալը, ցուցաբերելով քաղաքական հեռատեսություն, չգնաց խալիֆայության վերացմանը<sup>3</sup>, ավելին, նոյեմբերի 18-ին ԹԱՄԺ Աբդուլ Մեջիդին հռչակեց խալիֆա<sup>4</sup>: Քեմալի այս քայլը հետապնդում էր մեկ նպատակ՝ Լոզանի առաջիկա համաժողովում շահագործել իր՝ մահմեդական աշխարհի կենտրոն լինելու հանգամանքը՝ Անգլիայի ու Ֆրանսիայի վրա ազդելու համար:

Լոզանի համաժողովի աշխատանքը տևեց 1922թ. նոյեմբերի 20-ից մինչև 1923թ. հուլիսի 24-ը (փետրվարի 4-ից մինչև ապրիլի 23-ը համաժողովը ընդմիջվեց)<sup>5</sup>:

<sup>1</sup> Թաղախարան Մ., նշվ. աշխ., էջ 20: Mantran R. Histoire de la Turquie, p. 127.

<sup>2</sup> Թուրքիայի պատմության ուրվագծեր, Երևան, 1986, էջ 243:

<sup>3</sup> Հետազայում 1924թ. մարտին, վերացվեց Քեմալի բնորոշմամբ «քաղաքակիրթ աշխարհի համար ծիծաղի առարկա համարվող» խալիֆայությունը: Кемаль М. Путь Новой Турции, т. 1, с. 16.

<sup>4</sup> Fisher S. The Middle East. A History. New York, 1966, p. 386. ԹԱՄԺ օրենք ընդունեց խալիֆայության վերացման մասին: Ст'у Турецкая республика, справочник. М., 1990, с. 32.

<sup>5</sup> 1922թ. հոկտեմբերի 28-ին Թուրքիան Անտանտի պետությունների կողմից պաշտոնապես հրավիրվեց Լոզանի համաժողով:

<sup>1</sup> Системная история международных отношений. М., 2000, с. 145.

<sup>2</sup> Սահակյան Ռ., նշվ. աշխ., էջ 8:

<sup>3</sup> Türkiye Tarihi. Çarlaş Türkiye 1908-1980, s. 110.

<sup>4</sup> Aydemir Ş. İkinci Adam. İstanbul, 1993, s. 215.



Պատվիրակությունների առաջին պաշտոնական հանդիպումը տեղի ունեցավ նոյեմբերի 21-ին, որի ընթացքում էլ կազմվեց 3 հիմնական հանձնաժողով՝

1. Տարածքային և ռազմական հարցերով Քերզոնի նախագահությամբ:

2. Օտարերկրացիների իրավունքների և Թուրքիայի փոքրամասնությունների հարցերով ղեկավար մարկիզ Գարրոնի:

3. Ֆինանսա-տնտեսական հարցերով, որը գլխավորում էր ֆրանսիացի Քամիլ Բարրերը: Համաժողովի աշխատանքը գլխավորում էր լորդ Քերզոնը:

Համաժողովին մասնակցելու հրավեր ստացավ նաև խորհրդային պատվիրակությունը, սակայն միայն Նեղուցների հարցերի քննարկման ժամանակ: Համաժողովի աշխատանքը հենց սկզբից սկսվեց լարված մթնոլորտում, թե՛ պայքար ծավալվեց ինչպես դաշնակիցների, այնպես էլ դաշնակիցների ու Թուրքիայի միջև: Աշխատանքին հատկապես մեծ սրություն հաղորդեց անգլո-ֆրանսիական հակամարտությունը: «Անգլիան, - գրում է Չիչերինը, - ձգտում է ամենից առաջ Թուրքիայի հետ սակարկել այն, ինչ-որ իրեն անհրաժեշտ է: Դրանից հետո միայն Ֆրանսիային թողնում է ակտիվանալ հետագա բանակցություններում՝ մերթ ճարպկորեն սրելով իրավիճակը, մերթ Ֆրանսիայի և Թուրքիայի միջև խաղալով հաշտարարի դեր»<sup>1</sup>:

Իսկապես, Քերզոնի նպատակն էր թուլացնել Ֆրանսիայի ազդեցությունը Թուրքիայում և ստիպել թուրքերին փնտրել միայն անգլիացիների հովանավորչությունը: Տարածքային և ռազմական հանձնաժողովը առաջինը սկսեց իր աշխատանքը ու անցավ Թուրքիայի եվրոպական սահմանների ճշգրտմանը: Այս հարցի շուրջ բանավեճը սկսվեց նոյեմբերի 23-ի նիստում,

երբ թուրքական պատվիրակությունը պահանջեց վերականգնել Թուրքիայի նախապատերազմյան սահմանները՝ եվրոպական Թրակիայով, Սև ծովից մինչև Մարիցյան հովիտներ և հանրաքվե անցկացնել Արևմտյան Թրակիայում: Սակայն թուրքական պահանջները Արևմտյան Թրակիայում հանրաքվե անցկացնելու վերաբերյալ մերժվեց. «Թուրքերը ոչ մի իրավունք չունեն այդ շրջանի նկատմամբ»<sup>1</sup>: Ֆրանսիան, Իտալիայի հետ միասին, պաշտպանեց Քերզոնի դիրքորոշումը: Ապա հանձնաժողովն անցավ Մոսուլի հարցի քննարկմանը, որն անմիջականորեն հետաքրքրում էր Անգլիային և Թուրքիային: Այս հարցի վերաբերյալ դեռ նոյեմբերի 26-ին Քերզոնի հետ հանդիպման ժամանակ Իսմեթ փաշան հայտարարեց, որ Թուրքիան մտադիր է պահանջել Մոսուլի վիլայեթը: Սկզբնական շրջանում թուրքերը լսել անգամ չէին ուզում Մոսուլի հարցում որևէ այլ տարբերակի մասին, ավելին, Իսմեթ փաշան լորդ Քերզոնի հետ հանդիպմանը հստակ նշեց. «Ես չեմ կարող ոչ մի դեպքում վերադառնալ Անկարա՝ առանց Մոսուլի»<sup>2</sup>: Իրավիճակը ավելի բարդացավ ֆրանսիական կողմի դիրքորոշման պատճառով. ֆրանսիացիները պահանջում էին նավթի հանույթի 25%-ի շահագործման իրավունք (Թրքիշ Փեթրոլիում):

Քերզոնը կատարեց մարտավարական ևս մեկ հնարք՝ ամերիկյան կողմին խոստանալով 25% բաժնետոմս Թրքիշ Փեթրոլիումում: Դրանով նախ խաղից հանում էր Ֆրանսիային, հետո մեկուսացնում թուրքերին՝ զրկելով նրանց ամերիկյան աջակցությունից: Մոսուլի հարցի շուրջ, չնայած կողմերի վճռականության, համաժողովում այդպես էլ վերջնական որոշում չընդունվեց և որոշվեց հարցի լուծումը հետաձգել մեկ տարով: Թեև Քեմալը հայտարարում էր, որ «Մոսուլի խնդրի

<sup>1</sup> Սահակյան Ռ., նշվ. աշխ., էջ 8:

<sup>2</sup> Inönü I. op. cit., p. 58.

<sup>1</sup> Чичерин Г., цит. соч., с. 246.



կարգավորումը մեկ տարով հետաձգելը չի նշանակում, թե մենք հրաժարվում ենք նրանից»<sup>1</sup>, սակայն վերջինս նույնպես գիտակցում էր, որ Մոսուլի համար պայքարն անօգուտ է: Դրա ապացույցը 1923թ. փետրվարի 27-ին Քեմալի ԹԱՄԺ-ի պատգամավորներին արած հայտարարությունն է. «Ընդունեք նաև, որ մեկ տարի հետո Մոսուլի հարցը վճռվելու է մեր դեմ»<sup>2</sup>:

Ֆրանսիայի պատվիրակները համաժողովից դուրս փորձում էին կարգավորել հարաբերությունները: Դա է վկայում Պուանկարեի հունվարի 30-ին Քեմալին ուղղված հեռագիրը. «Ֆրանսիան մտադիր է թուրքերի հետ գնալ բանակցությունների անդամ այն դեպքում, եթե նույնիսկ դաշնակիցները չկարողանան ստորագրել ընդհանուր հաշտություն»<sup>3</sup>: Ֆրանսիայի նման անշատ թուրքամետ դիրքորոշմանը Ֆորին Օֆիսը պատասխանեց բողոքի նոտայով հիշեցնելով դաշնակցին, որ դեռ 1914թ. սեպտեմբերի 5-ին դաշնակիցները պարտավորվել էին անշատ պայմանագիր չկնքել: Իսկ Ֆրանսիան դեռևս ակնկալում էր որոշ աջակցություն Անգլիայից, ուստի չգնաց վերջնական ընդհարման նրա հետ: Թեպետ Ֆրանսիայի պատվիրակները կրկին պաշտպանեցին Նեղուցների պայմանակարգի վերաբերյալ Անգլիայի դիրքորոշումը, բայց լավ գիտակցում էին, որ Անգլիայի վերջնական հաստատումը Նեղուցներում կնշանակեր ոչ միայն Սև, այլև Միջերկրական ծովի վերածում անգլիական ծոցի և այդ շրջանում Անգլիայի լիակատար գերիշխանության: Նեղուցների շուրջ քննարկումը տեղափոխվեց փորձագետների ենթահանձնաժողով, որից խորհրդային պատվիրակությունը փաստացի դուրս մնաց Քերզոնի նախաձեռնություններ: Այդպիսով, անգլիացիները անցում կատարեցին

թուրքերի հետ անմիջական անդրկուլիսյան համաձայնության գալու քաղաքականությունը:

Համաժողովի ողջ ընթացքում թուրքական պատվիրակությունը մեծ ջանքեր գործադրեց՝ կանխելու համար Նեղուցների վարչակարգի և ապառազմականացման դաշնակիցների նախագծի ընդունումը: Սակայն, ակնհայտ էր դրսևորվում արևմտյան երկրների միտումը՝ նվազագույնի հասցնել թուրքական կառավարության ներկայությունը կարգավորող հարցում: Այս հարցում թուրքերին պաշտպանեցին խորհրդային պատվիրակները, նշելով որ այդ նախագիծը առաջին հերթին ուղղված է խորհրդային Ռուսաստանի դեմ<sup>1</sup>: Համաժողովում Անտանտի դիվանագիտական ներկայացուցիչները շարունակեցին խաղալ հակախորհրդային խաղաթղթի վրա, քանի որ Նեղուցների վերաբերյալ նման նախագիծը լուրջ սպառնալիք էր ստեղծում և Ռուսաստանի հարավային ափերը դնում ռազմական ավելի հզոր նավատորմ ունեցող երկրների հարձակման վտանգի տակ: Այս համատեքստում լիովին հասկանալի է դառնում, թե ի՞նչու էր Գ.Չիչերինը հայտարարում. «Հենց այս հարցում թուրքերի հաջողությունները, նաև մեր հաջողություններն են»<sup>2</sup>: Նշենք, որ խորհրդային կողմը չվավերացրեց կողանի համաձայնագիրը, գտնելով, որ այն իրական սպառնալիք է ստեղծում խորհրդային սևծովյան նավահանգիստների համար: Նեղուցների կանոնակարգի հիմնական էությունն այն էր, որ Դարդանելը, Մարմարա ծովը և Բոսֆորը ներառող նեղուցներում նավարկությունը այսուհետև խաղաղ ու պատերազմական ժամանակներում պետք է բաց լիներ բոլոր առևտրային կամ ռազմակա նավերի համար: Սակայն, ապա-

<sup>1</sup> Kazim Ö. Atatürkün TBMM Açık ve Gizli oturumlarındaki Konuşmaları. Cilt 2. Ankara, 1990, s. 724.

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 728:

<sup>3</sup> Սահակյան Ռ., նշվ. աշխ., էջ 9:

<sup>1</sup> Osman O. Milli Mücadele dönemi Türk-Sovyet ilişkilerinde Mustafa Kemal, 1920-1921. Ankara, 1998, s. 200.

<sup>2</sup> Чичерин Г., цит. соч., с. 245.



գան ցույց տվեց, որ սևծովյան նեղուցների լողանյան պայմանակարգը չի կարող երկարաժամկետ կենսունակ լինել: Հատկապես 30-ականների սկզբին՝ կապված Խտալիայի և Գերմանիայի քաղաքականության հետ, նեղուցների հարցը կրկին դարձավ օրակարգային:

Համաժողովի երկրորդ՝ օտարերկրացիների և ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության հանձնաժողովի քննարկումների ժամանակ՝ 1922թ. դեկտեմբեր-1923թ. հունվար, Ֆրանսիայի պատվիրակները վերստին ապացուցեցին իրենց հավատարմությունը թուրքերին: Ազգային փոքրամասնությունների հարցում Ֆրանսիայի զիջողական քաղաքականությունը պաշտպանեց Ֆրանսիական մամուլի մեծ մասը, և համակարծիք էին «Թան» թերթի թղթակից էլբերտի տեսակետին. «Ֆրանսիացիները չեն կարող թույլ տալ, որ ազգային փոքրամասնությունների պաշտպանության պատրվակով փորձեր արվեն այդ փոքրամասնությունները վերածել օտարերկրյա քաղաքականության լրտեսների, որոնք ձգտում էին մասնատել կամ ստրկացնել Թուրքիան»<sup>1</sup>: Չնայած ոչ վաղ անցյալում նույն Ֆրանսիացիները, իրենց դաշնակիցների հետ վստահեցնում էին, որ «իրենց նպատակները կշեղվեն եթե փոքր ազգերից ավելի շարշարված և տառապած Հայաստանը մնա թուրքի լծի տակ»<sup>2</sup>:

Դաշնակիցները մերժել էին հայկական պատվիրակությունների մասնակցությունը Լոզանի համաժողովին պատճառաբանելով, որ Հայաստանն ընդունել է խորհրդային իրավակարգ, որի իշխանությունը ճանաչված չէ դաշնակիցների կողմից: Ամեն դեպքում անգլիական կողմը թուրքական պատվիրակությանը առաջարկեց ստեղծել հայ փախստականների հանգր-

վան՝ «Հայկական օջախ»<sup>1</sup>: Ուշագրավ է, որ երբ խորհրդածողովում Քերզոնը դիմեց թուրքական պատվիրակության ղեկավար Իսմեթ փաշային<sup>2</sup> հայտարարելով, որ «ամբողջ քաղաքակիրթ աշխարհը նայում է մեզ, սպասելով, որ դուք բավարարություն կտաք հայերին», դրան հետևեց Ինյոնյուի պատասխանը. «Քաղաքակիրթ աշխարհն ավելի շատ ձեզ է նայում, որովհետև դուք եք, որ անվերջ խոստումներ եք տվել հայերին, իսկ մենք որևէ խոստում չենք տվել»<sup>3</sup>:

«Հայկական օջախ» ստեղծելու վերաբերյալ Ինյոնյուն նշեց, որ դա հավասարազոր է Թուրքիայի մասնատմանը, որ Թուրքիան չի կարող իր տարածքում գտնել հողի մի կտոր նման ծրագրի իրականացման համար: «Ձեր պահանջը երբեք չենք ընդունի... Երբեք չենք մտածի այդ մասին, եթե ցանկանում եք շարունակել բանակցությունները, այդ դեպքում մենք այլևս չենք հանդիպի»<sup>4</sup>, - հայտարարեց Ինյոնյուն: Ծիշտ է նկատել «Հայրենիք»-ի թղթակիցը. «Այս հարցը հանձնվեց Ազգերի լիգային, որին սովորաբար հանձնում են անլուծելի և անհուսալի գործերը»<sup>5</sup>: Անտանտի ղեկավարները, մոռանալով իրենց երբեմնի հայանպաստ բարձրագույն խոստումները, անցան իրենց համար առավել կարևոր ու շահեկան խնդիրների քննարկմանը: Ահա թե ինչպես դաշնակիցները, որոնք տարիներ շարունակ հավատացնում էին թե իսկապես «մտահոգված» են հայ ժողովրդի ճակատագրով և «պաշտպանում» են նրանց ար-

<sup>1</sup> Gürel A. Yabancı kaynaklarda türk-ermeni ilişkileri. 1071-2006. Izmir, 2006, s. 138

<sup>2</sup> Քերզոնի և Ինյոնյուի միջև Հայկական հարցի շուրջ ծավալված երկխոսությունը մանրամասն տե՛ս Cumhuriyet tarihi araştırmaları. Cilt II. Ankara, 2015, s. 1065-1070.

<sup>3</sup> Բայրուրդյան Վ., նշվ. աշխ., էջ 336-337:

<sup>4</sup> İnönü I. op. cit., p. 8.

<sup>5</sup> «Հայրենիք», Պոսթըն, 1923 հունվարի 1:

<sup>1</sup> Павлович Мих., Лозаннская конференция, с. 29-30:

<sup>2</sup> «Բաղմավեպ», Վենետիկ, 1920 օգոստոս, թ. 8, էջ 15:



դար պահանջները, ամենապատասխանատու պահին միտումնավոր շրջանցեցին հայկական հարցը: Թե՛ Ֆրանսիան, թե՛ Անգլիան այդպիսով ավելի ամրապնդեցին այն համոզմունքը, որ փոքր ժողովուրդների իրավունքների պաշտպանության թվացյալ այդ «մտահոգության» քողի տակ իրականում թաքնված էին իրենց շահերը:

Այսպիսով, Հայկական հարցը, որն առաջին աշխարհամարտի տարիներին և հետպատերազմյան քաղաքական սակարկումների շրջանում տևականորեն շարչրկվում էր վերսալյան դիվանագիտական ատյաններում, Լոզանի համաժողովում Բերզոնի բնորոշմամբ «լուռ մահացավ»<sup>1</sup>:

Կրքերը ծայրաստիճան բորբոքվեցին, երբ Ֆինանսատնտեսական հանձնաժողովը անցավ կապիտուլիացիաների և Օսմանյան պարտքի հարցերի քննարկմանը: Այս հարցում Անգլիայի և Ֆրանսիայի շահերը նույնպես անհամատեղելի էին, որն էլ ավելի շիկացրեց մթնոլորտը: Ֆինանսատնտեսական հարցերում շատ ավելի մեծ շահագրգռվածություն էր ցուցաբերում Ֆրանսիան, որն ամենամեծ պարտատերն էր Թուրքիայում (1914թ. դրությամբ օսմանյան կառավարության պարտքը Ֆրանսիային կազմում էր 940 մլն ոսկի ֆրանկ)<sup>2</sup>: Ուստի, պատահական չէ, որ հենց Ֆրանսիայի ներկայացուցիչ Բարբերը դարձավ ֆինանսատնտեսական հանձնաժողովի նախագահ: Ֆինանսական հողվածների մշակման ժամանակ Ֆրանսիան շատ էր ցանկանում, որպեսզի Թուրքիայի վրա ֆինանսական վերահսկողություն սահմանվի:

Ֆրանսիական պատվիրակությունը կտրականապես մերժեց Թուրքերի առաջարկությունը, համաձայն որի Օսմանյան

պարտքը պետք է բաշխվեր Օսմանյան կայսրության մեջ նախկինում մտնող երկրների միջև (այդ ժամանակ օսմանյան կայսրությունից դուրս էին եկել օրինակ Իրաքը, Սիրիան):

Թուրքիայի ֆինանսատնտեսական իրավիճակը ուսումնասիրելու համար ստեղծվեց հինգ ենթահանձնաժողով՝

1. Արտաքին պետական պարտքի և ռազմատուգանքների քննարկման:

2. Հաղորդակցության և տրանսպորտի հարցերով:

3. Մաքսային և առևտրական վարչակարգի վերաբերյալ:

4. Պատերազմի և բռնակցման տարիների տնտեսական հարցերով:

5. Սանիտարական հարցերի վերանայման:

Լուրջ վեճեր հարուցեց արտաքին պարտքի և ռազմական ծախսերի հարցերի քննարկումը: Ֆրանսիացիները պահանջեցին պարտքը վճարել ոսկի ֆրանկով, բայց Թուրքական պատվիրակությունը կտրուկ մերժեց այդ պահանջը:

Իսմեթ փաշան հայտարարեց, որ բանակցությունները կշարունակեն՝ եթե պարտքի տոկոսները վճարվեն թղթադրամով: Դաշնակիցները պնդեցին նաև, որպեսզի պատերազմի ժամանակ զոյացած պարտքերը (մոտ 289 մլն ոսկի լիրա) վճարի Թուրքիան, իսկ վերջինս համառորեն մերժեց՝ պահանջելով պարտքը բաշխել 1914թ. դրությամբ Օսմանյան կայսրության սահմաններում ընդգրկված մյուս տարածքների վրա: Թուրքական պատվիրակությունը մերժեց նաև ռազմակալման ծախսերը վճարելու դաշնակիցների պահանջը, ավելին, դեռ պահանջեց հատուցել այն վնասը, որ դաշնակից զորքերը Ստամբուլում և Կիրիկիայում հասցրել են Թուրք քաղաքացիներին, որի ընդհանուր գումարը կազմում էր շուրջ 2 մլն ոսկի ֆրանկ: Թուրքերը կտրուկ դեմ արտահայտվեցին նաև կապիտուլացիայի ցանկացած տարբերակի. «Մենք չենք համաձայնվել կա-

<sup>1</sup> Армянский вопрос на Лозанской конференции, Т., 1926, с. 19-20.

<sup>2</sup> Севрский мирный договор и акты, подписанные в Лозане, с. XLIV.



պիտուկացիայի որևէ դրսևորման հետ և պետք է պահանջներ վերջինիս լրիվ վերացումը»<sup>1</sup> Իսմեթը պարզորոշ նշեց, որ «Եթե Թուրքիան համաձայնի ընդունել տնտեսական պայմանագիրն այնպիսի վիճակում, որ այժմ առաջարկում են դաշնակիցները, ապա նա կընկնի տնտեսական ստրկական վիճակի մեջ: Մենք հրաժարվում ենք ընդունել նման ստրկացումը»<sup>2</sup>:

Համաժողովը կանգնեց ձախողման վտանգի առջև, 1923թ. փետրվարի 3-ին այն ժամանակավորապես ընդմիջվեց: Ինչպես գրում է Գ.Լյուիսը. «Իսմեթը վիճում էր ամեն հարցի շուրջ, նա այնպես համառորեն ու եռանդուն էր պայքարում, ինչպես պայքարել էր պատերազմի դաշտում, մինչև որ բոլորի համբերությունը սպառվեց, և լորդ Քերզոնը հարկադրված ընդհատեց համաժողովի աշխատանքները»<sup>3</sup>:

Լոզանի համաժողովի առաջին նստաշրջանում Ֆրանսիական դիվանագիտության եռանդուն ջանքերը Թուրքիայի նկատմամբ ֆինանսա-տնտեսական կախյալ կարգավիճակը պահպանելու գործում մի կողմից բախվեցին բրիտանական պատնեշին, մյուս կողմից էլ՝ թուրքական պատվիրակության անզիջում ու վճռական դիրքերին, որոնց պատճառով համաժողովը Ֆրանսիայի համար ցանկալի արդյունք չունեցավ:

Ֆրանսիական մամուլում կրկին սկսեցին շրջանառվել Ֆրանս-թուրքական անջատ բանակցությունների անհրաժեշտությունը շեշտող հոդվածներ, մասնավորապես «Մատեն» թերթը գրում էր. «Ֆրանսիային հարկավոր է Թուրքիայի հետ անմիջական բանակցություններ սկսել, հակառակ դեպքում համաժողովի ողջ աշխատանքները մեր հաշվին կկապվեն մութ գործարքների հետ»<sup>4</sup>:

Նկատի ունենալով ստեղծված իրավիճակը՝ Ֆրանսիացիները փորձեցին թուրքերի հետ սկսել առանձին բանակցություններ: Ֆրանսիացի պատվիրակ Բոմպարը հանդիպելով Իսմեթ փաշայի հետ, փորձեց համոզել միասնական ճակատ, որի անունից Քերզոնը թուրքերին վերջնագրի բնույթ ունեցող պահանջներ էր ներկայացրել, իրականում դոյուբյուն շունի: Բոմպարը վստահեցրեց, որ Ֆրանսիական պատվիրակությունը թուրքերի հետ բանակցությունների ընթացքում խոստելու է ոչ թե վերջնագրի, այլ լիովին բարեկամական լեզվով: Մինչ Քե դ'Օրսեն ամփոփում էր համաժողովի առաջին փուլի արդյունքները, Անկարայի կառավարությունն այդ ընթացքում մասնաբերելով շարունակում էր նոր ճնշումներ գործադրել Ֆրանսիայի ֆինանսա-տնտեսական դիրքերի նկատմամբ: 1923թ. ապրիլի 9-ին ԹԱՄԺ որոշում ընդունեց տնտեսական կոնցեսիաներ տրամադրել ամերիկացի Արթուր Չեստերին:

ԱՄՆ-ի վերաբերյալ նշենք, որ Անգլիայի հետ վերջինիս մերձեցումը նրան «դիտորդի» դերից վերածեց Մերձավորարևելյան հարցի ակտիվ մասնակցի: Իսկապես, Ֆրանսիայի դիջոզական քաղաքականության վրա ազդեցություն ունեցավ Մերձավոր Արևելքում ԱՄՆ-ի ակտիվության մեծացման գործոնը: ԱՄՆ-ի նոր դերի վկայությունը դարձավ Թուրքիայի տնտեսական կյանքում ամերիկյան կապիտալի մասնակցությունը: Չեսթերին թուրքական կառավարությունը իրավունք էր տվել իրագործելու հետևյալ ծրագրերը.

1. Արևելյան Անատոլիայում և Միջագետքում երկաթուղային ճանապարհների կառուցում 2700 կմ երկարությամբ: Նախագծվող երթուղիներից մեկը պետք է միացներ Սև (Սամսուն) և Միջերկրական ծովը (Յուսուրթալիկ), մյուսը Անկարայից գնալու էր Սվազ-էրզրում-Բայազետ, հետո ճյուղավորվում հյուսիս՝ Տրապիզոնով, և հարավ՝ Խարպուտով (Խարբերդ) Դիարբեքիրով, Բիթլիսով դեպի Մոսուլ:

<sup>1</sup> Павлович Мих. Лозаннская конференция, Новый Восток, с. 30.

<sup>2</sup> Lewis G. Turkey. London, 1955, p. 73.

<sup>3</sup> Lewis G. Turkey, p. 73.

<sup>4</sup> Гурко-Кряжин В., цит. соч., с. 187.



2. Շահագործել 20 մղոն երկաթուղային ճանապարհի շերտերը, երկու կողմերի երկաթուղային նյութերի հարաբերության հաշվին: Եթե բազմապատկենք ընդհանուր երկաթուղագիծն այդ օտարացման շերտի հետ, ապա ստացվում է հսկայական մի տարածք, որն հետագայում լիովին պետք է շահագործվեր ամերիկյան կապիտալի կողմից:

3. Այդ նույն գոտում օգտագործել ջրային պաշարները.

4. Մոսուլի նավթահանքերի շահագործում.

5. Սամսունի և Ղումուրթալիկի նավահանգիստների կառուցում

6. Անկարայի լիովին վերակառուցում, այն վերածել ժամանակակից ձևի մայրաքաղաքի<sup>1</sup>:

Կոնցեսիաների բովանդակությունից ակնհայտ է դառնում, որ այն վտանգում էր հատկապես Ֆրանսիայի շահերը: Դրա համար էլ վերջինս կտրուկ քայլեր ձեռնարկեց այն չեղյալ հայտարարելու համար: Գեներալ Պելեն ֆրանսիական կառավարության անունից պաշտոնապես բողոքեց կոնցեսիայի դեմ, որտեղ նշվում է, որ նման կոնցեսիա արդեն տրվել է Ֆրանսիային 1914թ., 5 մլն ֆրանկ փոխառության դիմաց:

Ուշագրավ է, որ Չեսթերի կոնցեսիայի կապակցությամբ անգլիացիները ևս արտահայտեցին իրենց դժգոհությունը: Նրանք գտնում էին, որ այդպիսով ԱՄՆ-ը իր մենաշնորհային իրավունքն էր ապահովում ոչ միայն ողջ Թուրքիայում, այլև Մոսուլի վիճելի վիլայեթում. «Անգլիայի ղեկավարը և նրա կառավարությունը երբեք չեն ճանաչի նման կոնցեսիան»<sup>2</sup>:

Ֆրանսիայի դիվանագիտական շրջանները թեպետ թուրքերի հետ բանակցություններում հանդես եկան կոշտ դիրքերից, սակայն համաժողովի երկրորդ շրջանում արդեն գեներալ

<sup>1</sup> Гурко-Кряжин В. цит. соч., с. 188-189.

<sup>2</sup> Гурки-Кряжин В. Мосул и Ирак, Международная жизнь. 1926, N. 1, с. 25.

Պելլեի, որը գլխավորում էր ֆրանսիական պատվիրակությունը եզրափակիչ փուլում, գործողություններում նկատվում էր լուրջ նահանջ նախկին դիրքերից:

Այսպիսով, եթե ընդհանրացնենք Լոզանի համաժողովում Անկարայի կառավարության քաղաքականությունը, առանց երկմտելու կարող ենք ընդգծել, որ այն նշանավորվեց թուրքական դիվանագիտության հաղթանակով: Այս հարցը ուսումնասիրողների գերակշիռ մասը գտնում է, որ Թուրքիան Լոզանի համաժողովում հասավ խոշոր ձեռքբերումների: «Թուրքիայի ուժեղացումը միջազգային ասպարեզում նպաստեց թուրքական դիվանագիտության ավելի ճկունացմանը, որն էլ դրսևորվեց 1922-1923թթ. Լոզանի համաժողովի ընթացքում, որտեղ թուրքական դիվանագիտությունը համառ պաշտպանեց իր ազգային շահերը, թեկուզ և կատարեց որոշ հարկադրված զիջումներ»<sup>1</sup>, գրում է Բ. Պոցխերիան: Նույն կարծիքն են հայտնում այլ հեղինակներ՝ շեշտելով, որ «Լոզանի համաժողովում Թուրքիան կարողացավ հիանալի օգտագործել մեծ տերությունների միջև առկա հակասությունները»<sup>2</sup>:

Թուրք պատմաբան է. Շյուքրուն գրում է. «Իսմեթ փաշան թեև Լոզանում հանդիպեց մեծ դժվարության, բայց համաժողովը Թուրքիայի դիվանագիտության խոշոր հաղթանակն է»<sup>3</sup>:

Անգլիացի հեղինակները ևս փաստում են, որ Լոզանի համաժողովում թուրքական պատվիրակությունը Իսմեթի ղեկավարությամբ, համառություն և անկոտրում կամք դրսևորեց<sup>4</sup>, որի արդյունքում «Լոզանի դաշնագիրը ստորագրվեց՝ փաստացի ընդունելով Թուրքիայի պահանջները»<sup>5</sup>:

<sup>1</sup> Поцхвериа Б., цит. соч., с. 6. Данцинг Б. Турция, М., 1949, с. 259.

<sup>2</sup> Гренвилл Дж. История XX века. М., 1999, с. 133.

<sup>3</sup> Esmer A. op. cit., p. 546.

<sup>4</sup> Fisher S. The Middle East, p. 386.

<sup>5</sup> Lewis G. op. cit., p. 73.



Անգլիայից Ֆրանսիայի կախվածությունը հարկադրեց համաժողովի ընթացքում գրավել ավելի մեղմ դիրք, զնալ բրիտանական քաղաքականությանը համընթաց և պաշտպանել Անգլիայի համար կեսնական նեղուցների և Մոսուլի հարցերը: Սակայն զրա փոխարեն Ֆրանսիան ոչինչ չստացավ: Դեռ ավելին, Անգլիան, համաժողովի աշխատանքները բաժանելով մի շարք հանձնաժողովների, կարողացավ իր համար քիչ թե շատ հետաքրքրող հարցերը ուսումնասիրող հանձնաժողովների գործունեությունը վերահսկել, ապա միտումնավոր՝ թուրքերի համար կարևոր ֆինանսատնտեսական հանձնաժողովի ղեկավարումը թողեց ֆրանսիացիներին՝ քաջ գիտակցելով այդ հարցում ֆրանսիական կողմի շահագրգռվածությունը: Քերզոնը կարողացավ լրջորեն սրել ֆրանս-թուրքական հարաբերությունները, միաժամանակ «ստանձնել» հաշտարարի պատասխանատու դեր, պատերազմելու և խաղաղություն հաստատելու որոշման մենաշնորհը:

Լոզանում Ֆրանսիական դիվանագիտության գերխնդիր էր համարվում առավելագույնս պահպանել իրավունքներն ու արտոնությունները Թուրքիայում: Դրա իրականացման համար լուրջ նախադրյալներ ապահովելու անհրաժեշտությունով պետք է բացատրել Քե դ'Օրսեի անջատ քաղաքականությունը Անկարայի կառավարության հետ: Հուլյն-թուրքական պատերազմում Ֆրանսիան գաղտնի և բացահայտ օժանդակեց Անկարային՝ հույս ունենալով ապահովել իր արտոնյալ իրավունքները հետպատերազմյան Թուրքիայի տնտեսության մեջ, սակայն ֆրանսիական կառավարության հաշվարկները սխալ դուրս եկան: Հակառակ այս ամենին՝ թուրքական դիվանագիտությունը կարողացավ ամրագրել չափազանց կարևոր նվաճումներ՝ կապիտուլյացիոն ռեժիմի վերացում, դաշնակիցների սահմանած ֆինանսական և այլ բնույթի վերահսկողա-

կան համակարգի շեղոքացում ու ամենակարևորը՝ իրավաբանորեն ամրագրեց թուրքական պետության անկախությունը: Անդրադառնալով Լոզանի համաժողովում թուրքական կողմի որդեգրած վստահ կեցվածքին՝ «Հայրենիք»-ը պատկերավոր և դիպուկ գրում է. «Պատմական հիվանդ մարդը կկարծեին հոգեվարքի մեջ է արդեն, սակայն նրա ընթացիկ ժառանգորդներից ոմանք գաղտնի ներարկումներ արեցին «հիվանդին» և «մահամերձ մարդը» հանկարծ կենդանություն ստացավ»<sup>1</sup>:

Լոզանում Ֆրանսիայի զիջողական քաղաքականությունն ամբողջացնելու համար հարկ է ընդգծել նաև ազգային փոքրամասնությունների հարցում վերջինիս էական զիջումները: Զուտ շահագիտական նկատառումներ ունեցող Ֆրանսիայի ղեկավար շրջանները իրենց քաղաքականության զոհը դարձրեցին Օսմանյան Թուրքիայում բնակվող ազգային փոքրամասնություններին, առաջին հերթին հայերին.<sup>2</sup> «Նրանք ամենայն հաճույքով Սևրը փոխանակեցին Լոզանով... և լիզեցին իրենց ստորագրությունները, հրաժարվեցին հայերին տված իրենց բոլոր խոստումներից: Հայ ժողովրդի միակ հանցանքը եղավ կուրորեն հավատ ընծայել իր մեծ դաշնակիցներին»<sup>3</sup>:

Այս համատեքստում կարող ենք ընդգծել, որ տերությունների խոստումներն որոշակիորեն հայ դիվանագիտությանը զրկել էին քաղաքական իրադրության իրատեսական գնահատման հնարավորությունից: Ցանկալին հաճախ ընդունվում էր իրականի փոխարեն:

<sup>1</sup> «Հայրենիք», Պոսթըն, 1923 հունվարի 1:

<sup>2</sup> Լոզանի համաժողովում Հայկական հարցի վերաբերյալ քննարկումների մասին մանրամասն տես Армянский вопрос на Лозанской конференции, Т., 1926. Mandelstam A. La Societe des Nations et les Puissances devant le probleme armenien, Paris, 1926, pp. 260-285.

<sup>3</sup> «Զարթոնք», Պէյրուս, 1964 սեպտեմբերի 2:



1. Թուրք-սիրիական սահմանային վեճերը և Ֆրանսիայի  
դիրքորոշումը

Չնայած թուրքական դիվանագիտությունը Լոզանի համաժողովում որոշ հարցերում հարկադրված էական զիջումներ կատարեց հօգուտ դաշնակիցների, սակայն կարողացավ ամրագրել կարևոր նվաճումներ և զգալիորեն ամրապնդել իր միջազգային դիրքերը: Այդուհանդերձ, համաժողովը լուծում չտվեց մի շարք կարևոր հարցերի, որոնք հետագայում դարձան լուրջ հակասությունների պատճառ: «Լոզանի ժառանգություն» չլուծված հարցերը՝ Օսմանյան պարտքի, թուրք-սիրիական սահմանագծման, օտարալեզու դպրոցների, «Բողկուրտ-Լոտուս» վեճը բացասաբար անդրադարձան Ֆրանս-թուրքական հարաբերությունների վրա<sup>1</sup>: 1921թ. Անկարայի պայմանագրով նախատեսված որոշ դրույթներ ամրագրվեցին նաև Լոզանի համաժողովի որոշումներով՝ Ֆրանսիական զորքի դուրս բերում կիլիկիայից, թուրք-սիրիական սահմանագծում, Ալեքսանդրետի սանջաքի կառավարման հատուկ կարգավիճակի որոշում: Բայց Ֆրանս-թուրքական հարաբերությունները ոչ միայն չկարգավորվեցին, այլ ժամանակ առ ժամանակ բռնկվում էին սուր վեճեր՝ մերթ կապված թուրք-սիրիական սահմանագծման, մերթ օսմանյան պարտքի մարման շուրջ: Այդուհանդերձ, պարբերաբար Ֆրանսիան և Թուրքիան առիթը բաց չէին թողնում նշելու, որ «կողմերը իրար հանդեպ բարեկամական զգացումներ են տածում և փոխադարձ շահերի բարե-

հաջող լուծումը չի ուշանա»<sup>2</sup>: Երբ 1925թ. նոյեմբերին Սիրիայի նոր բարձրագույն կոմիսար նշանակվեց Անրի դը ժուվենելը, Սիրիայում և Ալեքսանդրետի սանջաքում հույսեր արթնացան, որ Ֆրանսիան կվարի ավելի ժողովրդավարական քաղաքականություն: Նոր կոմիսարը հարկադրված էր դիմել որոշ զիջումների: 1926թ. մայիսին նա համաձայնեց ստեղծել սիրիական ազգային կառավարություն և խոստացավ հրավիրել Սահմանադիր ժողով, մշակել սահմանադրություն, ներում շնորհել և այլն: Սակայն, ինչպես ցույց տվեցին հետագա դեպքերը, դա արվել էր ժամանակ շահելու և ապստամբական շարժումը ճնշելու նպատակով<sup>3</sup>: Սիրիայում Ֆրանսիական մանդատի հաստատումից ի վեր արաբ ժողովուրդը չէր դադարել պայքարել և բազմիցս ընդվզում էր Ֆրանսիական մանդատային իշխանությունների կամայականությունների դեմ, թեև Ֆրանսիական վարչական շրջանները հավաստիացնում էին, որ «Սիրիայի և Լիբանանի մեջ կացությունը գոհացուցիչ է»<sup>3</sup>:

Ֆրանս-թուրքական հարաբերությունների հաստատման ճանապարհին տարիներ շարունակ լուրջ տարաձայնություն էր առաջացնում հատկապես թուրք-սիրիական սահմանագծման հարցը: Մուդրոսի զինադադարից հետո Բաղդադի երկաթուղու մի մասում, որը սահմանակից էր Սիրիային, անգլիական զորքը փոխարինվեցին Ֆրանսիականով: Քեմալական շարժման զարգացումը և մասնավորապես կիլիկիայում թուրքական ջոկատների գործունեությունը ստիպում էր Ֆրանսիացիներին ազատել հյուսիսային ճանապարհի մի մասը՝ մինչև Ենիչե: «Այդպիսով, որպեսզի Բաղդադի երկաթուղային ճանապարհը ամբողջությամբ մնա Թուրքիայի տիրապետության

<sup>1</sup> Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան: Այլևայլ հեղինակների արխիվ, թղթ. 240 11, «Սուրիական մամուլ», Հալեպ, 02. 10. 1924:

<sup>2</sup> Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, էջ 449:

<sup>3</sup> «Սուրիական մամուլ», Հալեպ, 1924 նոյեմբերի 7:

<sup>1</sup> www.turkimzasi.com/cumhuriyet-tarihi/turk-fransiz-iliskileri.html



տակ, Անկարայի կառավարությունը ցանկանում էր իր համար ապահովել Մեյդան էքսեզ-Մյուսլիմիե-Չոբան բեյ հատվածը՝ սեպի նման խրվելով սիրիական տարածքների մեջ»<sup>1</sup>: Հասկանալի է, որ նման պահանջները բոլորովին անընդունելի էին ֆրանսիացիների համար: Ֆրանսիացի հեղինակներ Ռ. Գոնտո-Բիրոնը և Ռեվերանը գրում են, որ Լոզանի պայմանագրով հաստատված սահմանագիծը Ֆրանսիայի համար մեծ վտանգ է պարունակում: Այդ սահմանով է անցնում Բաղդադի երկաթուղագիծը, ընդ որում, ճանապարհի սկիզբը և վերջը գտնվում են թուրքերի ձեռքին: Այն փաստը, որ Ալեքսանդրետի ծովածոցի միայն մի մասն է պատկանում Սիրիային, հնարավորություն չի տալիս ծովային հանգրվաններ կառուցելու, քանի դեռ չեն փոփոխվել սահմանները Ֆրանսիայի օգտին: Ի վերջո, հակառակ պարագայում կարող է լրջորեն վնասվել Ալեքսանդրետի առևտրական գործունեությունը, որը առևտրային դարպաս է ողջ Կիլիկիայի և Հյուսիսային Սիրիայի համար<sup>2</sup>:

Արդյունքում, Անկարայի պայմանագրի ծրագ հոդվածով թուրքերն իրավունք ունին իրականացնել զորքի տեղափոխում Նուսեյբինի և Ջեզիրե Օմար հին ճանապարհով: Սակայն ֆրանսիացիները Բոզանտի-Նուսեյբին երկաթուղու կառավարման անվան տակ, հաշվի առնելով, որ թուրքական կողմը լրջորեն շահագրգռված է երկաթուղու բնականոն գործելու հարցում<sup>3</sup>, մինչև Նուսեյբին ամբողջովին դադարեցրին թուրքական շարժակազմերի տեղաշարժը: Թուրքական բողոքին ֆրանսիական կողմը պատասխանեց, որ երկաթուղով կանոնավոր տեղաշարժեր կարող են իրականացվել միայն կապիտալ

վերանորոգումից հետո, և քանի որ անհրաժեշտ միջոցներ չունեն, ապա վերանորոգումը կհաջողվի, եթե թուրքերը վճարեն նախկին պարտքերը: Անգլիացիների ճնշման տակ ֆրանսիացիները հայտարարեցին, որ թուրքերին վերապահված տարանցիկ ռազմական փոխադրումները կատարելու իրավունքը պետք է սահմանափակվի միայն ռազմական շարժակազմերով սահմանում թուրքական ջոկատների կանոնավոր փոխարինումների և մատակարարումների ապահովման նպատակով: Ֆրանսիացիները ուզում էին մեկուսացնել թուրքական զորքին՝ Մեյդան էքսեզ-Չոբան բեյ տեղափոխելուց հետո ոչ թե քրդական խռովության շրջանում, այլ Իրաքի սահմանի մոտ (Մոսուլի հակամարտությունը սաստիկ սրել էր անգլո-թուրքական հարաբերությունները):

Սահմանային մյուս վիճելի հարցը, որը 1921թ. պայմանագրով մնացել էր չլուծված, Նուսեյբինի և Ջեզիրե Օմարի սահմանագծի որոշման խնդիրն էր: Այն հանգեցրեց ֆրանս-թուրքական հարաբերությունների լարվածության մեծացմանը: Ստացվել էր այնպես, որ «հին ճանապարհի» տակ թուրքերը և ֆրանսիացիները հասկանում էին տարբեր գծեր: Թուրքական տարբերակով «հին ճանապարհը» անցնում էր փաստացի սահմանով, իսկ ֆրանսիացիները պնդում էին, որ «հին ճանապարհը» անցնում էր այն նույն գծից հյուսիս, որը թուրքական զորքը զբաղեցրել էր մինչև 1922թ.: Այս տարածքը, բացի նրանից, որ շատ կարևոր ռազմավարական նշանակություն ուներ (ելք դեպ Տիգրիս), այլև, այդ հատվածի մոտիկությունը Մոսուլին նավթային մեծ հնարավորություններ էր բացում:

Այդ փուլում ֆրանսիական կառավարությունը՝ կապված Սիրիայում առկա ներքին ճգնաժամի հետ, չէր կարող հաշվի չառնել նաև ֆրանս-թուրքական հակամարտության խորացման սպառնալից հետևանքները: 1925թ. հուլիսի 18-ին Ջաբալ

<sup>1</sup> Мельник А. Франко-турецкий конфликт, Международная жизнь, 1929, N 1, с. 46.

<sup>2</sup> Gontant B., Reverent. op. cit., p. 226.

<sup>3</sup> Երկաթուղու այդ հատվածը թուրքերը կարող էին օգտագործել շեյխ Սաիդի գեմ ուժեր կենտրոնացնելու նպատակով:



Դրուզում Սուլթան Աթրաշի գլխավորությամբ սկսվեց հակաֆրանսիական ապստամբություն, որը կարճ ժամանակ անց տարածվեց գրեթե ողջ Սիրիայում՝ լուրջ դժվարություններ առաջացնելով ֆրանսիական իշխանությունների համար<sup>1</sup>: Ապստամբները պահանջում էին «միացնել սիրիական վարչական շրջանները, ստեղծել միասնական Սիրիա, որից հետո օգնել Սիրիային մտնել Ազգերի լիգա»<sup>2</sup>: Արդյունքում, ֆրանսիացի բարձրագույն կոմիսար Ժուլիենը բանակցեց սիրիական ազգային պատվիրակության հետ: Ի վերջո ֆրանսիական կողմին հաջողվեց 1927թ. գարնանը մեծ ջանքերի գնով ճնշել ապստամբության գլխավոր կենտրոնները: Հարաբերությունների կարգավորման հերթական փորձը Ժուլիենի այցն էր Անկարա՝ թուրքական կառավարության հետ սահմանային հարցերի շուրջ բանակցելու համար: Այդ բանակցությունների արդյունքում, փետրվարի 18-ին ձեռք է բերվում բարեկամության մասին թուրք-ֆրանսիական համաձայնագիրը ստորագրելու պայմանավորվածություն:

Ուշագրավ է, որ այս համաձայնագիրը, որ վավերացվեց 1926թ. փետրվարի 18-ին, ստորագրվեց դրանից ավելի քան երեք ամիս հետո՝ մայիսի 30-ին, երբ Մոսուլի հակամարտությունը փաստացի կարգավորվել էր<sup>3</sup>: Արդեն Անկարայի համաձայնագրի վավերացումից 5 օր անց Ֆրանսիան Ազգերի լիգայի մանդատային մշտական հանձնաժողովին տեղեկացրեց,

<sup>1</sup> 1920թ. ֆրանսիական մանդատի հաստատումից ի վեր մինչև 1946թ. ապրիլի 17-ի անկախության նվաճումը Սիրիան թևակոխել էր ազգային ազատագրական պայքարի մի շրջան, որը դուրս գալով նեղ սիրիական շրջանակներից ձեռք էր բերել համարաբարական նշանակություն: Оганесян Н. Образование независимой Сирийской Республики. М., 1968, с. 3. Claude P. La Syrie. Paris, 1977, p. 142.

<sup>2</sup> «Նրեւան», Փարիզ, 1926 հունիսի 26:

<sup>3</sup> Baskin O. op. cit., p. 278.

որ պաշտպանում է Անկարայի պայմանագրի 10-րդ հոդվածի իր հիմնավորումները և հայտարարում, որ ոչ մի դեպքում երկաթուղու սիրիական հատվածը թուրքերը չեն օգտագործի Իրաքի դեմ ռազմական գործողություն իրականացնելու համար<sup>1</sup>: Ֆրանսիացիները փորձում էին չեզոքացնել անգլիացիների դժգոհությունը՝ կապված Ժուլիենի և թուրքական կողմի «զաղտնի պայմաններում» բանակցությունների հետ: Ավելին, Մոսուլի ճգնաժամի օրերին ֆրանսիական մամուլը և քաղաքական շրջանները Անգլիայի հետ համատեղ սկսեցին մեղադրել թուրքիային՝ պատերազմ նախապատրաստելու մեջ: («Homme Libre», «Daily News», «Near East»)<sup>2</sup>:

Արդյո՞ք դա նշանակում էր, որ թուրքական հարցում Անգլիայի և Ֆրանսիայի միջև իրականում գոյություն ուներ միասնական ճակատ, հաջողվել էր արդյո՞ք լիովին չեզոքացնել այն հակասությունները, որոնք թուրքիայի հետ հարաբերություններում, սկսած Սևրից, գոյություն ունեին նրանց միջև: Ֆրանսիայի «բարեկամ» Անգլիայի հետ համաձայնեցված քաղաքականության պատճառները բացատրվում է ոչ թե Անգլիայի հետ դաշնակցային սերտ հարաբերությունների կամ թուրքական հարցում տարածայնությունների հարթման գործոններով, այլ միայն տարածաշրջանում բրիտանական դիվանագիտության ազդեցիկ և հաստատուն դիրքով, ինչպես նաև Անգլիայից ակնկալվող աջակցությամբ: 1926թ. մայիսի 30-ին Թ.Ռյուշտուի և Ֆրանսիայի դեսպան Ա.Սարրոյի միջև ստորագրվում է ֆրանս-թուրքական «բարի դրացիության համաձայնագիր»<sup>3</sup>, որը Լոզանի համաձայնագրից հետո առաջին լուրջ փաստաթուղթն էր: Չնայած, 1924թ. օգոստոսի 28-ին թուրքի-

<sup>1</sup> Мельник А., цит. соч., с. 46.

<sup>2</sup> Гурки-Кряжин В. Мосул и Ирак, Международная жизнь. 1926, N 1, с. 41.

<sup>3</sup> «Նրեւան», Փարիզ, 1926 հունիսի 4:



այի և Սիրիայում ու Լիբանանում Ֆրանսիայի վարչական ղեկավարություն միջև ստորագրվել էր մաքսային համաձայնություն<sup>1</sup>: Կարևոր էր հատկապես պայմանագրի 1-ին հոդվածը, ըստ որի Թուրքիայի և այն երկրների միջև, որոնք եղել են Օսմանյան կայսրության նախկին տարածք ու անցել Ֆրանսիայի մանդատի տակ, պետք է լինեն բարեկամական և բարիդրացիական հարաբերություններ, իսկ պայմանագրով որոշված սահմանները լինելու էին անխախտելի: Նշվում էր նաև, եթե կողմերից մեկն ենթարկվի հարձակման, ապա մյուս կողմը պետք է չեղարկություն պահպանի: Այս դեպքում, պայմանագրի կետերը վերաբերում էին հիմնականում Սիրիային և Լիբանանին: Այլ հոդվածներով կանոնակարգվում էր թուրք-սիրիական սահմանագծման, Սիրիայի և Լիբանանի քաղաքացիների բնակության իրավունքի, տեղափոխման, նրանց մաքսային պարտավորությունների մասին: Պայմանագրի 5-րդ հոդվածը լիազորում էր քաղաքական և դիվանագիտական ներկայացուցիչներին զբաղվելու Սիրիային և Լիբանանին առնչվող հարցերով: Կարևոր նշանակություն ունեւր հատկապես Սիրիայի կողմից Նփրատի ջրային պաշարների օգտագործման կարգի ճշգրտումները 13-րդ հոդվածի համաձայն:

Միաժամանակ վավերացվում է հինգ արձանագրություն. 1. թուրք-սիրիական սահմանի մասին, 2. հանցագործների փոխանակման, 3. սահմանի պահպանման հետ կապված միջոցառումների մասին, 4. քաղաքացիական փոխադրումներ՝ երկաթուղու Բողանթի-Նուսեյբին հատվածով, 5. երկաթուղային այդ հատվածով ռազմական փոխադրումների մասին<sup>2</sup>:

Այս արձանագրություններով մանրամասն կանոնակարգվում էին Թուրքիայի և Սիրիայի քաղաքացիական և ռազմական փոխադրումները՝ Թուրքիայի համար Մեյդան էքբեզ-

Չոբան բեյ գծով և Սիրիայի համար Չոբան բեյ-Նուսեյբին գծով: Նախատեսվում էր երկկողմ միջոցառում թուրք-սիրիական սահմանին ազդեցիկ գործողությունների կանխման, Նփրատի ջրերի օգտագործման, Թուրքիայի և Սիրիայի տարածքով անցնող Բաղդադի երկաթուղով ռազմական կանոնավոր փոխադրումների, Պայասի և Քիլիսի շրջաններում Թուրքիայի օգտին սահմանային փոփոխությունների մասին:

Պայմանագրի ստորագրման ձգձգումը հիմնականում կապված էր Մոսուլի հետ, որի հարցը Լոզանում վերջնական լուծում չէր ստացել: Նավթով հարուստ Մոսուլի վիլայեթի շուրջ, որը մեծ մասամբ բնակեցված էր քրդերով և արաբներով, երկկողմ բանակցությունները երկար ժամանակ արդյունք չէին տալիս: Ի վերջո, Ազգերի Լիգայի խորհուրդը 1925թ. դեկտեմբերի 16-ին որոշեց վիճելի տարածքը հանձնել Իրաքին, ինչին հետևեց Թուրքիայի կտրուկ հակազդեցությունը: Բեռլինում դեսպան Ք. Սամին կոշտ հայտարարություն արեց. «Թուրքիան պարտավոր չի կատարելու Ազգերի Լիգայի՝ այդ թատրոնի, որի գլխավոր դերակատարները անգլիացիներն են, ընդունած որոշումը»<sup>1</sup>: Անգլիական կողմը հայտարարեց. «Եթե թուրքերը չվերանայեն իրենց դիրքորոշումը, ապա Մեծ Բրիտանիան իր գործողություններին լիակատար ազատություն կտա, իսկ դրա հետևանքները կարող են շատ ծանր լինել»<sup>2</sup>:

Մի կողմից Անգլիայի ուժեղ ճնշման, մյուս կողմից Ֆրանսիայի Անգլիայի օգտին գրաված դիրքը հարկադրեցին թուրքական կողմին զիջել այդ հարցում և 1926թ. հունիսի 5-ին Մոսուլը անցավ Իրաքին, որը գտնվում էր Անգլիայի ենթակայության տակ<sup>3</sup>: Հակառակ դեպքում «Թուրքիայի համար «արտաքին քաղաքական լուրջ խնդիրներ կառաջանային», - գրում է

<sup>1</sup> «Սուրիական մամուլ», Հայեպ, 1924 հոկտեմբերի 10:

<sup>2</sup> Baskin O. op. cit., p. 281-282.

<sup>1</sup> «Известия», 21. 06.1926, Москва.

<sup>2</sup> Гурки-Кряжис В. Мосул и Ирак, с. 41.

<sup>3</sup> Lewis G. Turkey. p. 114. Mantran R. Histoire de la Turquie, p. 116.



Հալիդե էդիպը<sup>1</sup>: Թվում է՝ նման պարագայում թուրքական կողմը հաշվի չէր առել այս հարցի շուրջ Ֆրանսիայի և Անգլիայի շահերի ընդհանրությունը:

Երկու պետությունների փոխադարձ կապը նշյալ հարցում արտացոլվեց նաև Անկարայում ֆրանս-թուրքական բանակցությունների ժամանակ: Բանն այն էր, որ պայմանագրի կնքումից հետո Ֆրանսիան պետք է չեզոք դիրք գրավեր Մոսուլի հարցում անգլո-թուրքական հակամարտության դեպքում: Պայմանագրի ստորագրումը կարող էր խանգարել Ֆրանսիայի մասնակցությանը՝ Թուրքիայի նկատմամբ պատժամիջոցների կիրառման հարցում, որոնք Մոսուլի խնդրի առնչությամբ կարող էր ընդունել Ազգերի լիգան: Անգլիայի և Ֆրանսիայի համերաշխությունը հակասում էր թուրք-ֆրանսիական պայմանավորվածությանը: Բավական է նշել Բաղդադի երկաթուղու մասին պայմանագրի կետերը, որ նախատեսում էին թուրքական զորքի տեղափոխում երկաթուղու այն հատվածով, որը անցնում էր սիրիական տարածքով: Բնականաբար, նման պայմանավորվածությունը Անգլիան ընդունեց խիստ դժգոհությամբ:

Թուրք-ֆրանսիական հարաբերությունները կրկին սրվեցին կապված «Բողկուրտ-Լոտուսի» գործի հետ<sup>2</sup>: Թուրքական մամուլում կրկին երևացին հակաֆրանսիական կոշտ հրապարակումները՝ «թուրքերի աչքերում Ֆրանսիան դադարել է ինչ որ բանով տարբերվել Անգլիայից: Ֆրանսիայի քաղաքականությունը,- գրում էր «Ջումհուրիեթը», - ամբողջովին ենթարկվում է անգլիական ազդեցությանը: Այդ նույն Բրիտանը, որին առաջ տեսնում էինք Լոյդ-Ջորջի դեմ գողգողալուց, հիմա նորից

<sup>1</sup> Киреев Н. История этатизма в Турции. М., 1991, с. 76.

<sup>2</sup> «Բողկուրտ-Լոտուս» վեճի կետ կապված մանրամասն տե՛ս Yilmaz V. Siyasi Tarih. Istanbul, 1998, s. 219-222.

Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարն է: Ոչինչ չի փոխվել ո՛չ փաստերի, ո՛չ էլ գաղափարների մեջ»<sup>1</sup>:

Լոզանի պայմանագրի 15-րդ հոդվածով Թուրքիան իրավունք չունեք օտարերկրացիներին դատել իր դատարանում: Գործը հանձնվեց Հաագայի պալատին, որը բավարարեց թուրքական պահանջները: Այսինքն, Թուրքիան չի խախտել միջազգային իրավունքը՝ ֆրանսիացի լեյտենանտ Դեմոնին հանձնելով դատարան<sup>2</sup>: Այս որոշումը Ֆրանսիայի հեղինակությանը զգալի վնաս էր և պատահական չէր, որ Բրիտանը Ազգերի լիգայի խորհրդի 8-րդ նիստում շեշտեց, որ երկրի հեղինակությունը կախված չէ դատարանի որոշումից<sup>3</sup>:

Այդուհանդերձ, երկկողմ համաձայնագրի ստորագրումից հետո էլ թուրք-ֆրանսիական վեճը՝ կապված սիրիական սահմանի հետ, չվերացավ: Ջեզիրեի և Նուսեյբի սահմանագիծը որոշվեց միայն 1930թ., երկարատև բանակցություններից հետո: Ինչ վերաբերում է «հին ճանապարհի» հարցին, այն կրկին մնաց չլուծված, քանի որ ֆրանսիացիները կտրականապես մերժեցին թուրքերի որոշումները: Դրա համար էլ պայմանա-

<sup>1</sup> Мельник А., цит. соч., с. 47. «Լոտուսը» ոչ մեծ շոգենավ էր, ջրասույզ էր արել թուրքական «Բողկուրտ» նավը էգեյան ծովում: Անձնակազմին Կ.Պոլսում թուրքական ոստիկանությունը ձերբակալեց: Թուրքիայում Ֆրանսիայի դեսպանը բողոքեց: Թուրքերը հայտարարեցին. «Օսմանյան կայսրության կապիտուլյացիաների ժամանակները անցել են և նոր օրերով անվտանգության պահպանումը իշխանությունների իրավասությունն է, այդ թվում նաև նման պատահարների մեղավորներին ձերբակալելը: Հարկ չկա դրան տալ քաղաքական երանգ»: St. v Baskan O. p. 278. Թուրքական դատարանը ազատ արձակեց նավապետ Դեմոնին և թուլլատրեց վերադառնալ Ֆրանսիա: 1926թ. Ժնևում երկու կառավարությունները կնքեցին փոխզիջումային համաձայնագիր: Сабанин А. Лозанский мир на практике международной действительности. Международная жизнь, 1927, N.10, с. 51-52

<sup>2</sup> Джемал Э. 40 лет на дипломатической службе. М., 1971, с. 99.

<sup>3</sup> Сабанин А., цит. соч., с. 54.



գրում այդ հատվածի հարցը վերջնական լուծում չստացավ և պահպանվեց նախկին հրահանգն այն մասին, որ սահմանագիծն անցնելու է հին ճանապարհով և երկու կողմերն էլ ունենալու էին հավասար իրավունքներ ճանապարհի օգտագործման ժամանակ: Թ.Ռյուշտու բեյը լրացուցիչ նոտայով առաջարկեց ստեղծել հատուկ հանձնաժողով սահմանների բնույթը որոշելու համար: Հանձնաժողովը կազմվելու էր երկու կողմերի ներկայացուցիչներից և չեզոք դիտորդներից:

Այդ հանձնաժողովը ստեղծվեց 1927թ. վերջին դանիացի գեներալ էռնստի գլխավորությամբ: Սակայն շատ շանցած, 1928թ. հունվարի 10-ին, հանձնաժողովը դադարեցրեց աշխատանքը՝ միասնական որոշում ընդունել չհաջողվեց: Բայց, քանի որ հանձնաժողովի նախագահ գեներալ էռնստը արտահայտվեց ֆրանսիացիների օգտին, ուստի անգլիական և ֆրանսիական մամուլը գրեց, որ «հին ճանապարհի» հարցում հանձնաժողովն ընդունել է ֆրանսիական տեսակետը: Ի պատասխան դրան, թուրք պատվիրակները բողոքեցին էռնստի որոշման դեմ՝ հայտարարելով, որ չեն ընդունի նրա միջնորդության իրավունքը: Անկարայի կառավարությունը հրաժարվեց ճանաչել հանձնաժողովի անդամների (հատկապես ֆրանսիական կողմի) որոշումները: Իսկ Ֆրանսիան պաշտպանեց էռնստի դիրքորոշումը: Ֆրանսիական մամուլը հրապարակեց ստեղծկուսություններ այն մասին, որ ֆրանսիական և թուրքական պատվիրակությունները, մինչ հանձնաժողովի աշխատանքի մեկնարկը նախապես պարտավորվել էին ընդունել վերջինիս ընդունած որոշումները, ուստի թուրքական կողմի հրաժարվելը դրանց ընդունումից սիրիական քաղաքական շրջանակներում զայրույթ կառաջացնի:

Ֆրանսիական մամուլը դեմ արտահայտվելով թուրքական կողմի գործողություններին գրում էր. «Համաձայն 1926թ.

մայիսի 30-ի ժուլեների ստորագրած պայմանագրի, սահմանային հանձնաժողովի բոլոր հակամարտությունները պետք է լուծվեն չեզոք իրավարարի կողմից, Նուսեյբինի և Ջեզիրե Օմարի «հին հոռմեական» ճանապարհի վերաբերյալ վեճ ծագելու դեպքում դանիական իրավարար էռնստը, որը ճանաչվել էր երկու կողմից, միացավ ֆրանսիական տեսակետին: Այդպիսով, առաջարկվում է Թուրքիային զիջել վիճելի հատվածը, ավելին Թ.Ռյուշտու բեյը գործում է ընդդեմ այդ պայմանագրի»: Հակադարձելով այս հրապարակումներին թուրքական կառավարության կիսապաշտոնական օրգան «Հաքիմիյեթի միլլիե» թերթը գրում է. «Թեկուզ և ճիշտ է, որ ճանապարհների հարցը տրվել է հանձնաժողովին, բայց այդ փաստը, որ հանձնաժողովի չեզոք նախագահը սեփական նախաձեռնությամբ հանդես եկավ դատավորի դերով, հակասում է համաձայնագրի դրույթներին: Դրա համար հռչակագրի վերաբերյալ տեքստը, որ մեզ հայտնի է՝ ոչինչ չի նշանակում: Այստեղից էլ բխում է, որ իրավարարի որոշումով այդ հարցը չի լուծվել: Թուրքերի դիրքորոշումը հիմնավորված է և ոչ 1926թ. մայիսի 30-ի պայմանագրի 2-րդ հոդվածը, ոչ էլ Ռյուշտու բեյի պայմանագրին կցված նոտան չեն պարտավորեցնում կողմերին ենթարկվելու հանձնաժողովի նախագահի որոշմանը»<sup>1</sup>:

1928թ. ամռանը Թուրքիայի և Ֆրանսիայի միջև վեճն ավելի սրվեց՝ կապված միջազգային հարաբերություններում ծավալվող իրադարձությունների հետ: Մի կողմից անգլո-ֆրանսիական «սրտագին համաձայնության» ուրվագծվող վերածնունդը, մյուս կողմից «հին ճանապարհի» կարևորության փաստը, Ֆրանսիային դարձնում էին ավելի անդրդվելի: Իսկապես, Նուսեյբինի և Ջեզիրե Օմարի միջև ընկած վիճելի տարածքը մեծ արժեք էր ներկայացնում ոչ միայն ֆրանսիացիների, այլև

<sup>1</sup> Сабанин А., цит. соч., с. 48.



անգլիացիների համար, քանի որ այն գտնվում էր Իրաքի սահմանի մոտ: Սահմանի անցկացումը (Ֆրանսիական տեսակետի համաձայն՝ հյուսիսային տարբերակով) այդ կետով և վիճելի հատվածից թուրք զորքի դուրսբերումը պետք է ուժեղացներ ինչպես Ֆրանսիացիների, այնպես էլ անգլիացիների ռազմավարական դիրքերը: Ֆրանսիան սահմանային այս հարցում հանդես էր բերում մեծ համառություն և դժգոհում ցանկացած զիջումից: Թուրքիայի միջազգային դիրքերի ամրապնդումը հնարավորություն տվեց իր շահերի պաշտպանության գործում Ֆրանսիացիների դեմ հանդես բերել վճռականություն:

Թուրքիայի միջազգային դրությունն առավելությունը կոզանից հետո այն էր, որ քեմալական շարժման նախկին թշնամիներն աստիճանաբար ձեռք բերեցին հարևանի կարգավիճակ: Թուրքիայի արտաքին քաղաքականությունն ընդունեց բազմակողմանի բնույթ: Սակայն, այս համատեքստում համակարծիք չենք թուրքական կողմի այն տեսակետի հետ, թե իբր «երկրի ողջ արտաքին քաղաքականությունը բխում է խաղաղություն երկրում, խաղաղություն ողջ աշխարհում»<sup>1</sup> թեզից, քանի որ ո՛չ այն ժամանակ, ո՛չ էլ առավել ևս հիմա, Թուրքիայի արտաքին քաղաքականությունը չի համապատասխանում նշյալ սկզբունքին<sup>2</sup>:

Թուրքիան փորձում էր բարեկամական հարաբերություններ հաստատել բոլոր երկրների հետ: Թուրք հեղինակները ընդգծում էին. «Աթաթուրքի արտաքին քաղաքականության յուրահատկությունը նրանում էր, որ չէր հավատում ոչ մշտական բարեկամությանը, ոչ էլ մշտական թշնամությանը»: Վառ

օրինակը Հունաստանի, Անգլիայի, Ֆրանսիայի և Իտալիայի հետ բարեկամական հարաբերությունների հաստատման ձգտումն էր, որոնք Թուրքիայի նախկին հակառակորդներն էին: «Անկարայի ղեկավարները չկրկնեցին Օսմանյան Թուրքիայի սխալները և առավելություն չտվեցին մեկ պետության», - գրում է Բ.Պոցխերիան<sup>1</sup>: Թուրքիան այդպիսով նպատակ ուներ պահպանել այն հավասարակշռությունը, որը ստեղծվել էր կոզանից հետո:

Թուրքիան տարիներ շարունակ պահպանում էր ԽՍՀՄ հետ բարեկամական հարաբերությունները: Աթաթուրքը քաջ գիտակցում էր, որ ԽՍՀՄ հետ բարեկամությունը իրենց համար դժվարին այս շրջանում շափազանց կարևոր է և կարող է լինել Թուրքիայի երիտասարդ հանրապետության միակ երաշխավորը: «Բազմիցս հայտարարել ենք, որ մեր արտաքին քաղաքականության հիմնական գործոնը պետք է Խորհրդային Միության հետ բարեկամությունը լինի: Նա, ով այս բարեկամությանը չի տալիս կարևորագույն նշանակություն, չի կարող լինել Թուրքիայի քաղաքացի», - գրում է «Միլլիեթը»<sup>2</sup>:

Չնայած, ինչպես նշում են թուրք հեղինակները, 1925թ. և 1930թ. պայմանագրերի ստորագրումը Անգլիայի և Ֆրանսիայի հետ «բարեկամական օղակ» ստեղծեց երկրի շուրջ, սակայն Ֆրանս-թուրքական հարաբերությունները դեռևս հեռու էին բարեկամական լինելուց: Ավելին, սիրիական սահմանի շուրջ իրադրությունը շարունակվում էր մնալ լարված:

Մայիսի 14-ին «Հաքիմիեթ միլլիեն» գրում է. «Ֆրանսիան վերջին շրջանում, որ նախկինում թուրքական օրինական պահանջներին՝ կապված հարավային սահմանի հետ, վերաբերվում էր բարի ցանկությամբ, սկսել է հանդես բերել ինչ որ հա-

<sup>1</sup> www.mfa.gov.tr/turkiye-cumhuriyeti-disisleri-bakanligi-tarihcesi.tr.mfa.

Новейшая история Турции. М., 1968, с. 395.

<sup>2</sup> Ազրեսիա Սիրիայի դեմ 1939թ., Կիպրոսի նկատմամբ (1974թ. թուրքական զորքը ներխուժեց՝ գրավելով կղզու մոտ 40%, ստեղծվեց «Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետություն»):

<sup>1</sup> Поцхвериа Б., цит. соч., с. 7.

<sup>2</sup> Миллер А., цит. соч., с. 173.



մառուիթյուն: Տարօրինակ է, որ այն ժամանակ բոլոր մնացած երկրները կարող էին կարգավորել իրենց սահմանային հարցերը Թուրքիայի հետ, բայց Ֆրանսիան մինչ այժմ չի արել»<sup>1</sup>:

Իրադարձությունների նման զարգացումը Ֆրանս-թուրքական հակամարտությունը կարծես դուրս էր բերում սահմանային վեճի շրջանակներից: Արդեն 1928թ. փետրվարին թուրքական մամուլը հանդես եկավ սիրիաբնակ թուրքերի գույքային պահանջների մասին հայտարարությամբ: Թուրքական պատվիրակությունն Անկարայի կառավարությանը դիմեց, որ Ֆրանսիական իշխանությունները զավթում են իրենց գույքը, որի ընդհանուր արժեքը թուրքական մամուլի տվյալներով հասնում էր 70 մլն լիրայի: Գույքի սեփականատերերը դիմեցին Սիրիայում Ֆրանսիայի գլխավոր կոմիսարին, սակայն վերջինս պատասխանեց, որ նման կարգի խնդիրներն իր իրավասություն չեն: Ֆրանսիացիները գործողությունները պատճառաբանեցին Մերսինի և Ադանայի շրջանում թուրքական կառավարության և տեղի քրիստոնյա բնակչության լարված հարաբերություններով: Ֆրանսիան անհանգիստ էր, որ Թուրքիան արգելանք է դրել այդ բնակիչների գույքի վրա՝ խաբեության մեջ բռնադրավելով նրանց գույքը, այդ պատճառով էլ նրանք Սիրիայում բնակվող թուրքերի պաշտպանության համար իրականացնում են համարժեք քաղաքականություն:

Թուրքերը հատկապես լուրջ անհանգստացան, երբ Ֆրանսիացիները պահանջեցին թույլատրել կրոնի առարկայի դասավանդումը Թուրքիայի Ֆրանսիական դպրոցներում<sup>2</sup>: Ակնհայտ է, որ Ֆրանսիացիները կամ հաշվի չէին առել կամ չէին ցանկացել հաշվի առնել այն հանգամանքը, որ եթե քեմալա-

կանները թուրքական դպրոցներում տանում էին բացառապես կրոնական կրթություն, ապա նրանք առավել ևս թույլ չեն տա կաթոլիկական քարոզչություն օտարերկրյա ուսումնական հաստատություններում: Այս համատեքստում տեղին է, որ Աթաթուրքը դեռ գործունեության սկզբում առաջնորդվում էր բացառապես իսլամի խորհրդանիշներով ու կարգախոսներով: Անկախության համար մղված պայքարի ուսումնասիրումը, Աթաթուրքի ելույթների և հայտարարությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ հասարակության համախմբման ու պայքարի ծավալման համար նա մշտապես սերտորեն համագործակցում էր կրոնական հաստատությունների և հոգևոր դասի ազդեցիկ ներկայացուցիչների ու առաջնորդների հետ: Քեմալը չափազանց մեծ կարևորություն էր տալիս կրոնական գործոնին. «Իսլամը դարերի ընթացքում օգտագործվել է որպես քաղաքական զենք, ուստի անհրաժեշտ է անհապաղ և կտրուկ միջոցներով փրկել կրոնական սուրբ արժեքները զանազան մութ նպատակներից և նկրտումներից»<sup>3</sup>:

Արդյունքում Իզմիրի Ֆրանսիական դպրոցները փակվեցին: Այս առթիվ «Ջումհուրիեթը» գրում է. «Ֆրանսիական հանրապետության բարձրաշխարհիկ կառավարությունը ցանկանում է կրոնական քարոզչությունն օգտագործել որպես զենք Արևելքում քաղաքական նպատակները իրականացնելու համար: Սարրոն (Թուրքիայում Ֆրանսիայի նախկին դեսպան), ով առաքելությունը կատարում էր ավելի շատ Կ.Պոլսում, քան Անգորայում, կարող է հաստատել որ կրոնական քարոզչությունը նպաստում է Ֆրանսիայի քաղաքականության որոշ հաջողությունների: Բայց մենք ուզում ենք հուսալ, որ նրա հաջորդը կճանաչի նոր Թուրքիայի իսկական դեմքը և գալով Անատոլիայի սրտում գտնվող Անգորական բարձրավանդակ

<sup>1</sup> Мельник А., цит. соч., с. 49.

<sup>2</sup> Baskin O. op. cit., p. 280.

<sup>3</sup> Атаурк К. Избр. речи и выступления, с. 325.



կկարողանա որոշ պատկերացում կազմել նրա մասին» (17.11.1928)<sup>1</sup>:

Իրադրությունն ավելի սրվեց, երբ Ֆրանսիացիները հրաժարվեցին ընդունել թուրքերի տեսակետը սահմանային հարցերի վերաբերյալ և որոշեցին ավելի լուրջ միջոցներով ճնշել Անկարային: Հենվելով նոր «սրտագին համաձայնության» վրա, Ֆրանսիան արևելյան քաղաքականության մեջ սկսում էր օգտագործել Անգլիայի մեթոդները՝ հրահրելով սահմանային ցեղերի խռովություններ թուրքերի դեմ:

1928թ. ամռանը և աշնանը թուրք-սիրիական սահմանի վրա նկատվում էր քրդերի գործողությունների անսպասելի աշխուժացում: Թուրքական մամուլը որպես Սիրիայի կողմից թուրքական սահմանի վրա հարձակման կազմակերպիչներ մատնանշեց Ֆրանսիացիներին: «Ֆրանսիան և Անգլիան ձգտում էին քրդերի դժգոհությունները օգտագործել իրենց շահերի համար: Համաձայնության մեջ մտնելով քրդական ցեղերի մի քանի առաջնորդների հետ, աջակցելով զենքով և ֆինանսով՝ նրանք քրդերին հրահրում էին թուրքական կառավարության դեմ: Արդյունքում, 1925թ. փետրվարին բռնկվեց քրդական մեծ ապստամբություն», - գրում է Ա.Միլլերը<sup>2</sup>: Շեյխ Սայիդի գլխավորությամբ 1925թ. Դերսիմում (Թունջելի) բռնկվեց հակաքեմալական հզոր շարժում, որը շարունակվեց մինչև 1929թ: Թուրքերի համար իրավիճակն այնքան անընդունելի էր դարձել, որ Թուրքիայի վարչապետ Իսմեթ փաշան սեպտեմբերի 29-ին Մալաթիայում ընտրողների առջև հարկադրված էր հատուկ կանգ առնել հարցի վրա. «Մենք իսկապես անհանգստացած ենք այդ սահմանին տեղի ունեցող միջադեպերով»: Հետաքրքիր է, որ թուրքական «Միլլիթ»-ն անդրադառնալով

Ֆրանսիացիներին կազմակերպած հարձակումների պատճառներին, նշում է. «Ֆրանսիացիները, առանց երկմտելու խրախուսում են հատկապես քրդական բնակչության մեջ տեղի ունեցող անկարգությունները և խռովությունները, ապա հավելում,- այդ քուրդ գորահրամանատարը (Օսման աղա Ջադե խատշո) ինչպես հարձակվում է հենց թուրք-սիրիական սահմանի վիճելի հատված Նուսեյբինի և Ջեզիրե Օմարի միջև: Ինչպես երևում է, խատշոն Սիրիայում գործում էր ոչ միայն անպատժելիության մթնոլորտում, այլև Ֆրանսիական իշխանությունների թողտույլությամբ»: Սիրիական «էլ Ահրարի» հետ զրույցում նա հայտարարեց. «Մենք երախտապարտ ենք սիրիական կառավարությանը և նրան ցույց ենք տալիս այն անհրաժեշտ օգնությունը, երբ Սիրիան հայտնվում է Թուրքիայի դեմ դժվարին իրավիճակում: Ավելին, թուրքական մամուլը ընդգծում էր, որ Ֆրանսիացիները խատշոյին հրավիրել են Բեյրութ՝ հատուկ բանակցությունների և կտրուկ դատապարտեց Ֆրանսիային, շեշտելով, որ «դիվանագիտական հարաբերությունների պատմության մեջ առաջին անգամ իրավարարի գործունեությունը ակնհայտ ավազակային է»<sup>1</sup>:

Թուրք հրապարակախոս և պատգամավոր Յունուս Հաջին «Ջումհուրիեթ»-ում (20.11.1928) հրատարակում է «Ֆրանսիական կայսրությունը» ուշագրավ հոդված. «Ֆրանսիան դիտավորյալ Թուրքիային զրկեց մի շարք տարածքներից, որոնք մեր սեփականությունն են, մենք ուզում ենք, որ գոնե այս հարցը այդ պարոնները լուծեին բանականությամբ և տրամաբանությամբ: Հեղինակը Ֆրանսիային համարում է իմպերիալիստական պետություն, «որտեղ ուժը վեր է ամեն ինչից: Այդ կայսրությունում ուժը փոխարինում է տրամաբանությանը,

<sup>1</sup> Мельник А., цит. соч., с. 49-50.

<sup>2</sup> Миллер А., цит. соч., с. 75.

<sup>1</sup> Мельник А., цит. соч., с. 51.



որի արդյունքում նա ամենավտանգավոր պետությունն է ողջ աշխարհի համար, ինչպես այժմ, այնպես էլ ապագայում: Նրանք իրենց մագիլները խրում են մեր սիրտը, և մենք իրավունք չունենք բողոքելու համար բացելու մեր բերանը: Միայն այդպիսի պայմանով է նա առաջարկում մեզ իր բարեկամությունը»: Հաջին վճռական մերժում է այդ բարեկամությունը և հողվածն ավարտում այսպիսի խոսքերով. «Թուրքիան Ֆրանսիային պետք է դիտի ոչ միայն ամբողջ աշխարհի համար վտանգավոր, այլ հենց Թուրքիայի բացահայտ թշնամի»<sup>1</sup>:

Ֆրանսիան համառորեն ժխտում էր իր մասնակցությունը թուրքական տարածքների վրա կատարվող քրդական հարձակումներին և հայտարարում, որ ինքը պաշտոնապես չի ընդունել խատչոյին: Սակայն, Ֆրանսիայի ղեկավար շրջանները խուսափում էին միջոցներ ձեռնարկել ուղղված խատչոյի դեմ: Քանի որ, ըստ ֆրանսիացիների, հարձակման ենթարկվող այդ տարածքը Ֆրանսիան պաշտոնապես համարում է սիրիական, հետևաբար հարձակումները կատարվում են ոչ-թուրքական տարածքում: Այդ սահմանը, ֆրանսիացիների կարծիքով, չէր անցնում այն տեղով, որը պատկանում է թուրքերին: Այդուհանդերձ, կասկած չի հարուցում այն փաստը, որ այդ սահմանանային ընդհարումները առաջին հերթին ապակայունացնող ազդեցություն էին ունենում Սիրիայում:

Ինչ վերաբերում է Նուսեյբինի և Ջեզիրե Օմարի միջև «հին ճանապարհի» վեճին, ապա ֆրանսիացիները շարունակում էին համառորեն պնդել նախկին տեսակետը: Փաստարկները մնացել էին անփոփոխ: Ֆրանսիացիները ընդգծում էին, որ սահմանային հանձնաժողովի նախագահ գեներալ էռնստի որոշումը պետք է լինի Ֆրանսիայի և Թուրքիայի միջև համաձայնության հասնելու զլխավոր նախապայմանը:

<sup>1</sup> Мельник А., цит. соч., с. 51.

«Թանը» 1928թ. դեկտեմբերի 1-ին անդրադառնալով Թուրքիայի հետ հարաբերություններին մեջբերեց Թուրքիայի արտգործնախարար Թ.Ռյուշտուի հարցազրույցը. «Նախ և առաջ ես պետք է նշեմ, որ մենք չենք սպառնում ոչ ինչ որ մեկին, ոչ էլ մի թիզ հողի: Փոխարենը մենք ցանկանում ենք հետամուտ լինել մեր տարածքների նկատմամբ պահանջների հրաժարումից: Այդպիսին է թուրքական թեզը»<sup>1</sup>: Այնուհետև, ֆրանսիական ԱԳՆ կիսապաշտոնական օրգանը շատ մանրամասն շարադրում է «հին ճանապարհի» վեճի պատմությունը և էռնստի իրավունքները և դրանից ելնելով եզրահանգում. «Վիճելի տարածքը պատկանում է ոչ թե Թուրքիային, այլ Սիրիային: Դրա համար խոսքը գնում է ոչ թե Թուրքիային տարածքի զիջման, այլ այդ շրջանից անօրինական կերպով մուտք գործած թուրքերին տարհանելու մասին: Այդպիսի տարհանում պետք է տեղի ունենա և Անգորան չպետք է դա դիտի որպես տարածքային պահանջ: Անվտանգության հաստատման առաջին պայմանը սահմանի հստակ որոշումն է: Ներկա սահմանագիծը, որը իրավամբ պատկանում է Սիրիային, իսկ փաստացի Թուրքիային, լուրջ խոչընդոտներ է հարուցում երկու կողմերի համար»<sup>2</sup>:

Հաշվի առնելով 1926թ. պայմանագիրը, հակամարտությունը դիվանագիտական ճանապարհով լուծելու անհնարինությունը դեպքում այն պետք է հանձնվեր հատուկ հանձնաժողովի իրավասության, որի կազմում պետք է ընդգրկվեին չեզոք ներկայացուցիչներ, կամ պետք է ուսումնասիրվեր հատուկ իրավաբարի կողմից (նկատի էր առնվել Շվեյցարիայի նախագահը): Սակայն, ներկա քաղաքական իրավիճակում թուրքերը

<sup>1</sup> Мельник А., цит. соч., с. 52.

<sup>2</sup> Նույն տեղում:



դժվար թե հաշվի չառնեին այն հանգամանքը, որ այդ հանձնաժողովի աշխատանքը կարող է հանգել ավելի վատ արդյունքի, քան էռնստինը: Հետևաբար, լիովին հասկանալի էր, որ Անկարան չէր ցանկանում իրեն կապել իրավարար որոշումների պատասխանատվության հետ, և փորձում գտնել այլ ելք՝ ֆրանսիացիների հետ բանակցություններում ստեղծված փակուղուց դուրս գալու համար:

Արդեն կարող ենք արձանագրել, որ թուրքական պահանջների վերաբերյալ ֆրանսիական կողմի նախկին կոշտ դիրքորոշումներում զգալի նահանջ էր նկատվում, իսկ Սիրիայում զգալիորեն նվազել էր առանց այդ էլ թուլացած վարկանիշը: Ուշագրավ է, որ անգլո-ֆրանսիական ճնշումն Անկարայի վրա թուրք հասարակության կողմից ընկալվում էր որպես ուղղակի հարված ազգային ազատագրական շարժման նվաճումների դեմ: Դժվար չէ գուշակել, թե ում նկատի ուներ Ազգային կուսակցության պաշտոնաթերթ «Միլլիեթը», երբ գրում է. «Արևմտյան որոշ պետություններ մինչև այժմ դեռ չեն հասկացել, որ աշխարհում ծնվել է անկախ Թուրքիա: Ստրկացած Թուրքիայի ուրվականը, ինչպես սև ծածկոց պաշտպանում է նրանցից իրականությունը: Այս թյուրիմացություննայն գլխավոր պատճառն է, որը տեղիք է տալիս լուրջ հակամարտության Թուրքիայի և այլ պետությունների միջև» (18.11.1928)<sup>1</sup>:

Ֆրանս-թուրքական բանակցություններում արդեն 1929թ. ամռանը նշմարվում են համաձայնության որոշ հույսեր: «Թուրքիայի և Ֆրանսիայի միջև վերջնական համաձայնություն է կայացել առկախ հարցերի շուրջ, որը նպաստավոր ազդեցություն պիտի ունենա երկու տերությունների ապագա հարաբերությունների վրա: Ֆրանսիայի հետ պետք է կնքենք բարեկամության դաշինք և այս նպատակով հրահանգներ է

տրվել Փարիզում Թուրքիայի դեսպանին»,<sup>1</sup> մեջլիսում հայտարարում է արտգործնախարար Թ.Ույուշտուն: Երկարատև բանակցություններից հետո, 1929թ. հունիսի 22-ին Ույուշտուն և Անկարայում Ֆրանսիայի դեսպան դը Շամպրիոնը ստորագրում են համաձայնագիր, ըստ որի.

1.Մերսին-Ադանա երկաթուղին հանձնվում է Թուրքիային: Այդ գիծը պատերազմից հետո կառավարում էր ֆրանսիական մի ընկերություն: Երկու երկրների իրավունքները երկաթուղիների մասով հաստատվում էր՝ Սիրիան իրավունք ուներ իր տարածքում երկարացնել երկաթուղին, որը միչև Նուսեյբին անցնում էր թուրքական տարածքով.

2.Մինչև Տիգրիսի հովիտ սահմանները ճշտվում են, այս աշխատանքը հիմնվում են հիմնարար հանձնաժողովի գործունեության վրա, որի նախագահը դանիացի էռնստն էր:

3.Սահմանային շրջանների ապահովության վերաբերյալ մոտ օրերս կնքվելու էր պայմանագիր՝ ճշտելով գլխավոր սկզբունքները:

4.Բացի դրանից երկու կողմերը պարտավորվում էին բանակցել սիրիաբնակ թուրքերի և թուրքաբնակ սիրիացիների կալվածքների խնդիրը կարգավորելու համար<sup>2</sup>:

Այս համաձայնագրի ստորագրումը որոշ շափով թուլացրեց թուրք-ֆրանսիական հարաբերություններում առկա լարվածությունը: Արդեն 1929թ. հունիսի 29-ին կողմերի միջև ստորագրվում է մեկ այլ համաձայնագիր.

1.Թուրքերը իրենց գրաված վայրերը պարպում են ըստ համաձայնության և հանձնում ֆրանսիական ուժերին.

2.Սիրիական սահմանի վրա հաստատվում են 10 զինվորական և մաքսային պահակակետեր, որոնք գործելու են օգոստոսի 1-ից.

<sup>1</sup> «Ապագա», Փարիզ, 1929 հունիսի 5:

<sup>2</sup> «Յառաջ», Փարիզ, 1929 հունիսի 25:

<sup>1</sup> Мельник А., цит. соч., с. 53.



3. Սահմանային խաղաղությունը խանգարողների և ձերբակալվող ոճրագործների ցուցակը, երկուստեք փոխանակվելու են:

4. Սիրիայում կալվածք ունեցող թուրքերին արտոնություններ է տրվում առանց մաքսի կատարել բերքի փոխադրում<sup>1</sup>:

Այս համաձայնագրերը թեև սահմանային որոշ հարցերում որոշակի հստակություն մտցրին, սակայն երկկողմ հարաբերություններում առկա տարաձայնությունները չհարթվեցին: Շարունակում էր դեռևս օրակարգում մնալ Օսմանյան պարտքի կարգավորման կարևորագույն խնդիրը, որը չափազանց կարևոր էր Ֆրանսիայի համար: Հետևաբար, այդ շրջանում Ֆրանս-թուրքական հարաբերությունները ոչ միայն հեռու էին բարեկամական լինելուց, այլև գտնվում էին ցածր մակարդակի վրա:

## 2. Օսմանյան պարտքի կարգավորման հիմնախնդիրը և Ֆրանսիան

Օսմանյան պարտքի խնդիրը մշտապես դտնվել է եվրոպական տերությունների ուշադրության կենտրոնում: Այն, ի թիվս Մոսուլի պատկանելիության և Նեղուցների կարգավիճակի խնդիրների, Լոզանում վերջնական լուծում չստացավ և տարիներ շարունակ բարդացնում էր սկզբում Օսմանյան կայսրության, ապա Թուրքիայի հարաբերությունները եվրոպական երկրների՝ հատկապես Ֆրանսիայի հետ: Պարտատերերը վերահսկողական համակարգերի ստեղծման միջոցով («Օսմանյան հանրային պարտքի վարչության», «Բաժնետերերի խորհուրդ») տասնամյակներ վարում էին գրավադրման քաղաքականություն՝ հսկողություն սահմանելով տնտեսության մի շարք ոլորտների շահույթների վրա:

Առաջին աշխարհամարտից հետո, երբ այլս գոյություն չունեի Օսմանյան կայսրությունը, պարտքի վերադարձման հարցը դարձավ օրակարգային: Հարցը շոշափվեց հետպատերազմյան բանակցային գործընթացում՝ Վերսալից Սևր: Արդյունքում՝ օսմանյան պարտքը Լոզանի համաժողովի նախօրեին բաժանվեց 3 մասի՝ 1. մինչպատերազմյան պարտք, 2. պատերազմական շրջանի պարտք. 3. հաշտության պայմանագրով նախատեսած պարտք<sup>1</sup>:

Համառոտ ներկայացնենք Օսմանյան պարտքի հիմնախնդրի կարգավորման շուրջ բանակցային գործընթացը Լոզանի համաժողովում և հատկապես հետլոզանյան շրջանում, լուսաբանել թե ի՞նչու Ֆինանսա-տնտեսական հարցերում ավելի մեծ շահագրգռվածություն ցուցաբերեց Ֆրանսիան:

<sup>1</sup> «Ապագա», Փարիզ, 1929 օգոստոսի 10:

<sup>1</sup> Итоги империалистической войны. М., 1927, с. 32.



Խնդիրն այն է, որ Թուրքիայում կապիտալ ներդրումների առյուծի բաժինը պատկանում էր Ֆրանսիային, նա էր պարտքի ամենամեծ մասի բաժնետերը: Օսմանյան պարտքի վարչությունում, որ ներկայացնում էր 6 տերության՝ Ֆրանսիայի, Անգլիայի, Իտալիայի, Գերմանիայի, Բելգիայի և Հոլանդիայի շահերը, ֆրանսիական ներկայացուցիչները գրավում էին գերիշխող դիրք: Ընդհանուր պարտքում, որը կազմում էր 4 մլրդ ոսկի ֆրանկ, նրանց էր պատկանում բաժնետոմսերի 53%-ը, գերմանացիներին՝ 21%-ը, անգլիացիներին՝ 14%-ը: Թուրք հեղինակ Օ.Բասկնը նշում է, որ ֆրանսիացիներին էր պատկանում Օսմանյան պարտքի կեսից ավելին (շուրջ 60%-ը, 2.5 մլրդ ոսկի ֆրանկ)<sup>1</sup>: Ուստի պատահական չէ, որ հենց Ֆրանսիայի ներկայացուցիչ բանկիր Ք.Բարրերը դարձավ Յորդ՝ ֆինանսա-տնտեսական, հանձնաժողովի նախագահ և ամենից շատ Ֆրանսիան էր ցանկանում, որպեսզի Թուրքիայի վրա ֆինանսական վերահսկողություն սահմանվի: «Ֆրանսիացիները պահանջում էին ոչ ավել ոչ պակաս, քան այնպիսի մի հանձնաժողովի ստեղծում, որը լիովին կվերահսկի Թուրքիայի ֆինանսները»<sup>2</sup>: Նման մոտեցումը բնականաբար չէր կարող հավանության արժանանալ Ֆրանսիայի դաշնակից Անգլիայի կողմից, որն էլ մեծ լարվածություն էր հաղորդել ֆինանսական հանձնաժողովի աշխատանքներին:

Ֆրանսիացիները պահանջում էին ամենամյա պարտքը վճարել ոսկի ֆրանկով, բայց թուրքական պատվիրակությունը կտրուկ մերժեց այդ պահանջը: Ավելին, Իսմեթ փաշան հարցրեց ֆրանսիացիներին. «Իսկ դուք ձեր պարտքի տոկոսները ոսկով եք վճարում», որին ֆրանսիացի պատվիրակները հակ-

ադարձեցին. «Ֆրանսիան այդ իրավունքը ձեռք է բերել իր հաղթանակների շնորհիվ և իրենք չեն կարող համեմատվել պարտված Թուրքիայի հետ»<sup>1</sup>:

Նույնիսկ այսպիսի պատասխանը չկոտրեց թուրքական պատվիրակության համառությունը: Իսմեթ փաշան հայտարարեց, որ բանակցությունները կշարունակեն, եթե պարտքի տոկոսները վճարվեն թղթադրամ ֆրանկով: Ավելին, թուրքերը պահանջեցին նաև 1922թ. ֆրանկի կուրսը ամրագրել 10 տարով: «Այս պարագայում արգեն թուրքական կողմը շահում էր շուրջ 100 մլն ֆրանկ», - գրում է Ա. Միլլերը<sup>2</sup>:

Երբ ֆինանսա-տնտեսական հանձնաժողովը պահանջեց պատերազմի ժամանակ գոյացած պարտքերի վճարման հետ կապված (մոտ 290 մլն ոսկի լիրա), թուրքական պատվիրակությունը սկզբունքորեն համաձայնեց վճարել՝ բացի կայսրությունից անջատված երկրների՝ Սիրիա<sup>3</sup>, Իրաք, Պաղեստին, բաժնեմասերից: Սակայն, դաշնակիցները գտնում էին, որ Օսմանյան կայսրության սահմաններում ընդգրկված տարածքների վրա պարտքի բաշխումը պետք է կատարվի 1914թ. դրությամբ: Այս պարագայում պարտքն ամբողջությամբ ընկնում էր Թուրքիայի վրա: Մինչդեռ, թուրքական պատվիրակությունը համառորեն պնդում էր, որ այն հաշվարկվի 1918թ. Մուդրոսի զինադադարից, գտնելով որ այդպիսով նախկին Օսմանյան կայսրության տարածքները նույնպես պատասխանատվություն կկրեին պարտքերի համար:

Թուրքական պատվիրակությունը մերժեց նաև ռազմակալման ծախսերը վճարելու պահանջը: Ավելին, պահանջեց հա-

<sup>1</sup> Баскин О. op. cit., p. 279.

<sup>2</sup> Ллойд-Джордж Д. Правда о мирных договорах, т. 2, с. 403.

<sup>1</sup> Սահակյան Թ., նշվ. աշխ., էջ 17:

<sup>2</sup> Миллер А., цит. соч., с. 142.

<sup>3</sup> Օսմանյան պարտքի ընդհանուր գումարի շուրջ 10 տոկոսը բաժին էր ընկնում Սիրիային և Լիբանանին: Луцкий В., цит. соч., с. 81.



տուցել այն վնասը, որ դաշնակից զորքերը Ստամբուլում և Կիլիկիայում հասցրել են թուրքերին, որի ընդհանուր գումարը շուրջ 2 մլն ոսկի ֆրանկ էր: Թուրքական կողմը պնդում էր, որ հուլյները պետք է փոխհատուցեն հուլյն-թուրքական պատերազմի ընթացքում թուրքերին հասցված վնասը, որը կազմում էր շուրջ 4 մլն թուրքական ոսկի լիր: Իր հերթին ֆրանսիական պատվիրակությունը կտրականապես մերժեց թուրքերի առաջարկությունները:

Թեպետ դաշնակիցների տարաձայնություններին՝ Լոզանի պայմանագրի 46-57 հոդվածները մասամբ լուծեցին Օսմանյան պարտքի վճարման կանոնակարգի, միջոցների, վերահսկման մեխանիզմի ձևավորման խնդիրները<sup>1</sup>: Սակայն, բաց էր մնում այն հարցը, թե ինչպիսի՞ արժույթով Թուրքիան պետք է մարեր պարտքը՝ ոսկե ֆրանկով (ինչին ձգտում էին ֆրանսիացիները), թե՞ թղթադրամ ֆրանկով, (ձգտում էին թուրքերը), տարեկան ի՞նչ կտրվածքով և որքան ժամանակում<sup>2</sup>:

Օսմանյան կայսրության երկրների միջև պարտքի բաժանումը, վճարման եղանակները և միջոցները ուսումնասիրեց 1925թ. ապրիլի 18-ին Ազգերի լիգայի իրավարար պրոֆեսոր Բորելը: Ըստ նրա Թուրքիան էր վճարելու պարտքի 62%, մինչև 1912թ. հոկտեմբերի 17-ը կնքված համաձայնագիրը, և ապա կայսրությանը տրված փոխառությունների 76%: Թուրքիայի ուսերին էր ընկնում պարտքի հիմնական ծանրությունը<sup>3</sup>: Ավելի վիճահարույց էր պարտքի վճարման երաշխիքների հարցը: 1926թ. նոյեմբերի 29-ին պարտատերերը հրապարակեցին հրովարտակ՝ նախկին գրավադրման իրավունքը վերականգնելու մասին: 1927թ. վերսկսված բանակցությունների ժամա-

<sup>1</sup> Մանրամասն տե՛ս Поцхвериа Б., цит. соч., с. 83-88.

<sup>2</sup> Uçarol R. Siyasi Tarih. Istanbul, 2008, s. 454.

<sup>3</sup> Türkiye Tarihi, p. 313.

նակ բաժնետերերը պահանջեցին առաջին վճարումը սկսել 2.5 մլն թուրքական ոսկե լիրայից, մինչդեռ Թուրքիան համաձայն էր վճարումը սկսել 2 մլն-ից:

1928թ. հունիսի 13-ին Փարիզում Թուրքիայի դեսպան Ալի Ֆեահին և «Օսմանյան պարտքի խորհրուրդը» կնքեցին 8 կետից բաղկացած համաձայնագիր<sup>1</sup>, որն զգալիորեն բավարարեց պարտատերերի պահանջները: Ըստ այդմ՝ թուրքերը պարտքի մարումը պետք է ավարտեին մինչև 1962թ.<sup>2</sup>:

Թուրքիան պարտավորվում էր վճարել ժամանակի կուրսով հսկայական գումար՝ 86 մլն ոսկի լիր: Մարումը կատարվելու էր փուլային եղանակով և վճարվող գումարի չափի աստիճանական ավելացմամբ: Այսպես, 1929թ. հունիս-1936թ. մայիս՝ 2մլն, 1942-1947՝ 2 մլն 780 հազար, 1947-1952՝ 3մլն 180 հազար: 1952թ. հունիսի 1-ից հետո 3 մլն 400 հազար մինչև պարտքի ամբողջական մարումը:<sup>3</sup>

Պարտքի վճարումն ապահովվելու էին Ստամբուլի, Գալատի և Հայդարիաշայի մաքսատների մուտքերից, սպառման հարկերի հաշվից: Սկսած 1942թ. հունիսի 1-ից վճարումը լրացուցիչ ապահովելու էր նաև Սամսունի մաքսատունը<sup>4</sup>: Մաքսատների անբավարար գործունեության դեպքում, պակասորդ մասը վճարելու էր թուրքական դանձարանը: Մաքսատների շահույթը փոխանցվելու էր Օտտոմանյան բանկ՝ «Օսմանյան պարտքի խորհրդի հաշվին»: Խորհուրդն իրավունք ուներ հսկողություն սահմանել շահույթների վրա, սակայն նախորդի հետ համեմատած ավելի մեղմ: Պայմանավորվեցին, որ եթե տարեկան փոխանցումը տանեն թուրքական արժույթի այն-

<sup>1</sup> Hakki Y. op. cit., p. 153.

<sup>2</sup> Baskın O. op. cit., p. 279.

<sup>3</sup> Hakki Y. op. cit., p. 146.

<sup>4</sup> Մաքսային եկամուտը 1926/1927 4.379 մլն թուրքական ոսկի լիրա:



պիսի անկման, որը կսպառնա երկրի տնտեսական շահերին, ապա թուրքական կառավարության և պարտատերերի միջև, համաձայնեցվելուց հետո պարտքի մարումը կարող է ժամանակավոր դադարեցվել: Չհամաձայնվելու դեպքում վեճը՝ մեկամսյա ժամկետում, քննելու էր Բեռնի միջազգային դատարանի իրավարարը: Պարտատերերին, բացի «Պարտքի խորհրդից», որի նստավայրն էր Փարիզը, ներկայացնելու էր «Արժեթղթերի ներկայացուցիչների խորհուրդը»՝ կազմված 3 ֆրանսիացուց (մեկը նախագահ), 2 գերմանացուց և 1 բելգիացուց: Պայմանագիրը մտնում էր ուժի մեջ վավերացնելուց հետո:

Փաստորեն, 1928թ. պարտքի մասին պայմանագիրը հնարավորություն տվեց բաժնետերերին՝ ի դեմս Ֆրանսիայի, վերահսկելի շրջանակում պահել Թուրքիայի ֆինանսա-հարկային համակարգը, ընդլայնել թուրքական ֆինանսա-տնտեսական շուկայի վրա ներգործելու լծակները: Ինչ վերաբերում է Թուրքիայի զիջումներին, ապա առանցքային դեր խաղաց նաև արևմտյան երկրների հետ հարաբերությունների բարելավման և վստահության ձեռքբերման գործոնը: Թուրքիան եվրոպական դրամական շուկայում միջազգային վարկերի և փոխառությունների վերականգնման ճանապարհին հարկադրված էր կատարել էական զիջումները՝ ոսկով վճարում, փոխանցման համար մաքսային շահույթի և սպառողական հարկերի գրավադրում, «Բաժնետերերի խորհրդի» վերահսկողություն, վճարումն ուշացնելու դեպքում իրավարար որոշում և այլն: Թուրքական կողմը 1928թ. պայմանագրով իրավունք չունեք դադարեցնել պարտքերի վճարումը<sup>1</sup>:

Հիրավի, պարտքի հարցը չափազանց ծանր բեռ էր Թուրքիայի բյուջեի վրա: Եթե (տարեկան կտրվածքով) Պետական պարտքի վարչության նախահաշիվը 1927/1928 կազմում էր 9.

<sup>1</sup>www.scribd.com/doc/49657453/94/Turk-Frans%C4%B1z-%C4%B0i%C5%9Fkileri

874 մլն թուրք ոսկի լիրա, ապա 1928/1929 հասավ 14. 875 մլն, իսկ 1929/1930 նախատեսվում էր 28.016 մլն լիրա<sup>1</sup>: Թուրքիան դիմեց հերթական վճարումը մասամբ կատարելու և օտար արժույթի վճարման կարգը ճշգրտելու առաջարկով: Բաժնետերերը համաձայնեցին, փոխարենը թուրքերը թուլատրեցին իրենց մասնագետ Ռիստին ուսումնասիրել Թուրքիայի ֆինանսական վիճակը: Նրա զեկուլցի հիման վրա պարտքի խորհուրդն հետագա մարման վերաբերյալ պետք է վերջնական որոշում կայացնեք:<sup>2</sup> Սակայն, զեկուլցն ամենևին չէր բխում Թուրքիայի շահերից, որտեղ պարզորոշ նշվում էր, որ Թուրքիայի ֆինանսական դրուժյունը կայուն է, ուստի չեն գտնում, որ Թուրքիան չի կարող վճարել պարտքի տարեկան մասը: Խորհուրդը 1930թ. հոկտեմբերին պաշտոնապես պահանջեց անհապաղ կարգավորել պարտքային պարտավորությունները և կատարել հերթական մարումը: Թուրքական կողմն այս անգամ ևս փորձեց ցույց տալ, որ պարտքի մարման դադարեցումը ծայրահեղ անհրաժեշտություն է. «Մենք ամեն ինչ կանենք որպեսզի հասնենք արժանի և իրական որոշման ձեռքբերման օսմանյան պարտքի հարցում, որը մեզ համար ծանր բեռ է», - հայտարարում է Իսմետ փաշան<sup>3</sup>:

Մինչ այդ թուրքական կառավարությունը 1929թ. ընդունել էր ազգային արժույթի պահպանման չափանանիշներ, որով դադարեցվում է պարտքի մարումը և արգելվում արժույթի արտահանումը երկրից: Համաշխարհային տնտեսական ճգնաժամն ուղղակի կաթվածահար արեց թուրքական տնտեսու-

<sup>1</sup> Генин И. Экономика и торгово-договорная политика Турции, «Международная жизнь». 1929, N 6, с. 57.

<sup>2</sup> Мельник А. Новая партия в Турции, «Международная жизнь», 1930, N.9-10, с. 5.

<sup>3</sup> Мельник А. Новая партия в Турции, с. 13.



թյանը՝ հսկայական կախվածության մեջ դնելով արտասահմանյան կապիտալից<sup>1</sup>: Արդեն իսկ օսմանյան պարտքի վճարման առաջին տարին համոզեց Անկարայի ղեկավար շրջաններին, որ նման ծանր բեռ վերցնելը, վեր է թուրքիայի բյուջեի հնարավորություններից, երկրի ֆինանսա-տնտեսական համակարգը ընկղմվել էր խորը ճգնաժամի մեջ<sup>2</sup>: Թուրքական կառավարությունը կանգնել էր երկրնտրանքի առջև՝ կամ կատարել պայմանագրով ստանձնած պարտավորությունները և օրինապահ կերպով շարունակել պարտքերի տարեկան վճարումը՝ հարվածի տակ դնելով երկրի ֆինանսական շուկան, կամ գտնել ինչ-որ, թեկուզ և ժամանակավորապես, ելք կասեցնելու պարտքի մարումը:

Երկրի տնտեսական համակարգը վերջնական փլուզումից փրկելու համար թուրքերը հարկադրված գնացին ֆինանսական նոր աղբյուրների որոնմանը, օտարերկրյա ընկերությունների հետ պայմանագրեր ստորագրեցին՝ վարկեր ստանալու նպատակով: 1930թ. հունիսին 25 տարով պայմանագիր կնքվեց ամերիկյան լուցկու սինդիկատի հետ, որով Թուրքիան ստացավ 10 մլն դոլլար կանխավճար, 1930թ. օգոստոսին՝ գերմանական խոշոր ընկերության հետ, որը տվեց 50 մլն վարկ ստանալու հնարավորություն՝ երկաթուղային շինարարության համար: Այս պայմանագրի դեմ հատկապես հանդես եկավ Ֆրանսիական մամուլը, ընդգծելով, որ դա մեծ վնաս կհասցնի օսմանյան պարտքի վճարման գործընթացին: Թուրքական կառավարությունը նույնիսկ որոշ փորձեր կատարեց տնտեսական համակարգում ներգրավել օտարերկրյա կապիտալը՝ պայմանով, որ լիովին վերահսկվի թուրքական օրենքներով,

սակայն եվրոպական տերությունները ոչ միայն հրաժարվեցին այդ առաջարկությունից, այլև հասկացրին, որ իրենց համար ընդունելի է գործունեության այն ձևը, որը հնարավորություն կտար պահել Թուրքիային ֆինանսա-տնտեսական կախվածությունից<sup>3</sup>:

Դրությունից դուրս գալու համար թուրքական կողմի և օսմանյան պարտքի բաժնետերերի միջև Անկարայում և Փարիզում սկսվեցին բանակցություններ, որն ավարտվեցին 1933թ. ապրիլի 22-ին նոր պայմանագրի ստորագրմամբ: Այն ավելի ընդունելի էր թուրքերի համար<sup>4</sup>: Նրանք հասան պարտքի զգալի նվազեցման, սահմանվեց վերադարձման կարգ, մարման արժույթ՝ թղթադրամ ֆրանկով, որը շատ կարևոր եղավ Թուրքիայի համար: Պարտքի չափը սահմանվեց մոտ 1մլրդ ֆրանկ (6մլն ոսկի լիրա): Թուրքիան տարեկան պետք է վճարեր 700 հազար ոսկի լիրա: Պարտքի մարման վերջնաժամկետ նշվեց 1954թ. մայիսի 25-ը<sup>5</sup>: Սակայն, պայմանագիրը այնպիսի լարվածություն առաջացրեց Թուրքիայի տնտեսական հաշվեկշռում, որ 1936թ. թուրքական կառավարությունը պարտատերերին առաջարկեց միայն մի մասը մարել փողով, իսկ մնացածը՝ ապրանքով: Արդյունքում, 1936թ. ապրիլին Թուրքիայի հետ ստորագրվեց համաձայնագիր, որով նա իրավունք էր ստանում ամենամյա վճարումների կեսը կատարել արտարժույթով, կեսը՝ ապրանքներով: Հետագայում, ապրանքների տեսքով վճարման եղանակը տարածվեց ողջ գումարի վրա<sup>6</sup>: Երկրորդ աշխարհամարտի տարիներին ֆրանկը կտրուկ արժ-

<sup>1</sup> Розалиев Ю. Н., цит. соч., с. 49.

<sup>2</sup> Baskin O. op. cit., p. 278.

<sup>3</sup> [www.gberis.e-monsite.com/categorie,osmanli-borclanma-tarihi-ottoman-debt-history,3219214.html](http://gberis.e-monsite.com/categorie,osmanli-borclanma-tarihi-ottoman-debt-history,3219214.html) Որոշ աղբյուրներում նշվում է 7 մլն: Мельник А., Турция, с. 171.

<sup>4</sup> Hakki Y. op. cit., s. 203.

<sup>1</sup> Baskin O. op. cit., s. 278.

<sup>2</sup> Türkiye Tarihi, p. 312.



եզրկվեց՝ (նախապատերազմյանի համեմատ շուրջ 6 անգամ),  
և Թուրքիան, օգտվելով նպաստավոր իրավիճակից, մինչև  
1945թ. մարեց պարտքը:

Ամփոփելով օսմանյան պարտքի վիճահարույց խնդրի շուրջ  
վերլուծումը և նկատի ունենալով, որ այն բազմաշերտ  
հակասությունների դաշտ է, հիմնախնդիրը խորքային հետա-  
զոտման և համակարգված ուսումնասիրման կարիք ունի:

Այդուհանդերձ, տարիներ շարունակ Ֆրանսիայի և Թուր-  
քիայի միջև առկա խոչընդոտները կարծես թե հարթվում էին:  
Ավելին, նույնիսկ 1930-ականների սկզբից, երբ Եվրոպայում  
սրվեց միջազգային իրադրությունը, դրանք ընդունեցին բարե-  
կամական բնույթ: Մեր կարծիքով, այս հանգամանքը  
բացատրվում է մի կողմից Թուրքիայի միջազգային դիրքի  
ամրապնդմամբ և հեղինակություն նշանակալի մեծացմամբ,  
մյուս կողմից էլ՝ Եվրոպայում օրըստօրե բարդացող իրադրու-  
թյան պայմաններում Եվրոպական պետությունների ձեռնար-  
կած դաշնակիցների «փնտրտուքով»:

### 3. Միջազգային լարվածության խորացումը և ֆրանս-թուրքական հարաբերությունները 1924-1935թթ.

Միջազգային ասպարեզում 1930-ականների սկզբից՝ կապ-  
ված Գերմանիայի և Իտալիայի հարձակողական գործողու-  
թյունների հետ, պատկերը կտրուկ փոխվեց: Արդեն նկատվում  
էր, որ հակամարտող խմբավորումներից յուրաքանչյուրը փոր-  
ձում էր Թուրքիային իր կողմը գրավել՝ հաշվի առնելով նրա  
չափազանց կարևոր ռազմավարական դիրքը: «Անհրաժեշտ է  
Թուրքիային ընդգրկել հաշտության պայմանագրերի մեր հա-  
մակարգում», - գրում է է. էրրիոն<sup>1</sup>: Իսկապես, այս հարցում մեծ  
շահագրգռվածություն հանդես բերեցին հատկապես Անգլիան  
և Ֆրանսիան: Այս ճանապարհին շատ կարևոր քայլ էր Թուր-  
քիայի անդամակցումն Ազգերի Լիգային 1932թ. հուլիսի 18-ին:  
Բայց դա ամենևին էլ չէր նշանակում, թե Թուրքական դիվանա-  
գիտությունը զբաղված էր միայն Անգլիայի և Ֆրանսիայի հետ  
սերտ հարաբերությունների հաստատումով և քայլեր էր ձեռ-  
նարկում հիտլերյան Գերմանիայի և ֆաշիստական Իտալիայի  
հետ հարաբերությունները կարգավորելու ուղղությամբ:

Թուրքիան մեծ նշանակություն էր տալիս հատկապես Իտա-  
լիայի հետ ջերմ հարաբերությունների հաստատմանը, սակայն  
վերջինիս որդեգրած ագրեսիվ քաղաքականությունը լուրջ  
խոչընդոտներ էր առաջացնում: Դեռ 1926թ., երբ Անգլիայի  
հետ վիճարկվում էր Մոսուլի շրջանի հարցը, Թուրքիայում  
շշուկներ տարածվեցին, որ եթե բռնկվի զինված հակամարտ-  
ություն, ապա Իտալիան դա կօգտագործի Անատոլիա մտնելու  
համար: Իտալիայի կողմից այդ շշուկների հերքումը չհանգս-  
տացրեց Թուրքական կողմին, ուստի հասկանալի է, որ Թուր-

<sup>1</sup> Эррио Э. Из прошлого. М., 1958, с. 591.



քիան կասկածանքով էր վերաբերում Իտալիայի այդ ծրագրերին: Երկու երկրների հարաբերությունները որոշ չափով բարելավվեցին 1928թ. մայիսի 30-ի շեզոքության մասին պայմանագրով, որը ժամանակավորապես Փոքր Ասիայում շեզոքացրեց իտալական զավթումների վտանգը: Սակայն, 1934թ. մարտի 19-ին ֆաշիստական կուսակցության 2-րդ համագումարում Մուսոլինին հայտարարեց, որ Իտալիայի նպատակն է հաստատվել Ասիայում և Աֆրիկայում, և որ դա պայմանավորված է Իտալիայի աշխարհագրական և պատմական գործոններով, վերստին լարվածություն մտցրեց երկկողմ հարաբերություններում: Իրադրությունն ավելի սրվեց, երբ 1935թ. Իտալիան հարձակվեց Եթովպիայի վրա: «1930-ական թթ. թուրք քաղաքական գործիչների ամենամեծ անհանգստությունը Իտալիայի զավթողական քաղաքականությունն էր: Պատերազմական ժամանակների Իտալիայի ծրագրերը Հարավային Անատոլիայի վերաբերյալ չէին մոռացվել», - գրում է Գ. Լյուիսը<sup>1</sup>:

Միաժամանակ թուրքական դիվանագիտությունը շարունակում էր ամրապնդել իր դիրքերը՝ բազմաբնույթ պայմանագրեր ստորագրելով ինչպես հարևան, այնպես էլ եվրոպական պետությունների հետ:

«Թուրքիան միայնակ չէր կարող վերահսկել տարածաշրջանում միջազգային իրադրությունը, բայց հույս ուներ, որ անհրաժեշտության դեպքում, եթե համախմբվեն բալկանյան և մերձավորարևելյան երկրների ուժերը, կարող է ապահովել իր անվտանգությունը, այնուհետև կարևոր դեր կատարել եվրոպական խմբավորումների միջև հավասարակշռության պահպանման գործում», - ընդգծում է Բ. Պոցիսկերիան<sup>2</sup>:

Աթաթուրքը մտածում էր ստեղծել բալկանյան միություն: Այդ գաղափարի իրագործման համար անհրաժեշտ էր բարեկամական հարաբերություններ հաստատել Հունաստանի հետ: Առանց հույն-թուրքական ակտիվ համագործակցության չէր ստեղծվի բալկանյան միություն: 1930թ. հոկտեմբերի 30-ին և 1933թ. հունիսի 14-ին Հունաստանի և Թուրքիայի միջև ստորագրված բարեկամության և համագործակցության պայմանագրերը զգալիորեն բարելավեցին երկու երկրների հարաբերությունները և նախադրյալներ ստեղծեցին հետագա համագործակցության համար<sup>1</sup>: Բալկանյան դաշինքը ստեղծելու պատճառներից մեկն այդ երկրների վախն էր ֆաշիստական Իտալիայի և հիտլերյան Գերմանիայի նկատմամբ, ինչպես նաև ստատուս-քվոյի պահպանումը Բալկաններում:

Նշյալից բացի, թվում է, Թուրքիան, միանալով Բալկանյան դաշինքին, հետապնդում էր հետևյալ խնդիրները: Թուրքական դիվանագիտությունը ձգտում էր բարձրացնել միջազգային հեղինակությունը և հնարավորություն գործուն մասնակցել Բալկանների ճակատագրի որոշման հարցում: Այս ենթատեքստում ուշագրավ է, որ Թուրքիայի ղեկավար շրջանները առաջ էին քաշում թուրք և բալկանյան ժողովուրդների եղբայրություն գաղափարը. «Բալկանյան ազգերը իրենցից ներկայացնում են եղբայրական ժողովուրդներ, նրանց երակներում հոսում է նույն արյունը»,<sup>2</sup> հայտարարում էր Աթաթուրքը: Թուրքական դիվանագիտությունը ցանկանում էր Բալկանյան Անտանտի միջոցով մերձենալ արևմտյան պետությունների հետ: 1934թ. փետրվարի 9-ին Թուրքիան, Հունաստանը, Ռումինիան և Հարավսլավիան ստորագրեցին Բալկանյան դաշինքը<sup>3</sup>:

<sup>1</sup> Türkiye Tarihi, s. 192.

<sup>2</sup> Atatürk K. Atatürkün söylev ve demeçleri. Cilt 1. Ankara, 1952, s. 269.

<sup>3</sup> Mantran R. Histoire de la Turquie, p.120.

<sup>1</sup> Lewis G. Turkey, p. 115.

<sup>2</sup> Поцхверия Б., Цит. соч., с. 9.



Այդ շրջանում թուրքական կառավարությունը սերտացրեց հարաբերությունները նաև ԱՄՆ-ի հետ, որը նշանակալի մեծացրել էր առևտրական կապերը Թուրքիայի հետ: Հինգ տարվա ընթացքում Թուրքիայում ամերիկյան ներմուծումը ավելացել է 8,5 անգամ՝ Չմյն-ից մինչև 17 մլն դոլլար<sup>1</sup>:

Միջերկրածովյան ավազանում իրավիճակը դարձավ սպառնալից հատկապես, երբ Իտալիան զավթեց Դոդեկանեսյան ծովածոցը, ռազմական հզոր հենակետեր տեղադրեց Հոդոսի ծոցում: «Քանի դեռ այդ ամրությունները գոյություն ունեն, Թուրքիան չի կարող հանգիստ լինել Իտալիայի հետ հարաբերություններում», - հայտարարում է Թուրքիայի ԱԳՆ գլխավոր քարտուղարը<sup>2</sup>: Նման իրավիճակում բրիտանական կառավարությունն օգտագործեց թուրքերի վախը իտալական հնարավոր ներխուժման նկատմամբ և ձգտում էր Թուրքիային մասնակից դարձնել միջերկրածովյան «ջենտլմենական» համաձայնագրին: Անգլիան ոչ միայն ստանում էր Թուրքիայի ռազմական օգնությունը Իտալիայի դեմ, այլև ներքաշում իր արտաքին քաղաքական նպատակների իրականացման միջնորդների մեջ: Այդ ժամանակից արդեն նկատելի էին անգլո-թուրքական աստիճանական մերձեցման միտումներ: Բրիտանական դիվանագիտությունը սկսել էր հավատացնել, որ ինքն ամենաուժեղ ծովային տերությունն է, և միայն ինքը կարող է փրկել Թուրքիային իտալական վտանգից, և թույլ տալ նեղուցների լողանյան համաձայնագրի կետերի փոփոխումը: Հետևաբար, սխալ է թուրք պատմաբան Ա.էսմերի տեսակետին, որ «Թուրքիայի վարած արտաքին քաղաքականության գլխավոր ուղղությունը Ֆրանսիայի հետ մերձենալն էր»<sup>3</sup>:

<sup>1</sup> Чжу Кэ-Жоу. Внешняя политика Турции накануне второй мировой войны. Ленинград, 1963. с. 8.

<sup>2</sup> История дипломатии. Том 3. М., 1965. с. 697.

<sup>3</sup> Esmer A. Siyasi tarih, s. 209.

Դեպքերի հետագա զարգացումը ցույց տվեց, որ Թուրքիան անում էր ամեն ինչ, որպեսզի հարաբերությունները բարելավի գլխավորապես Անգլիայի հետ, որին համարում էր ամենահզոր ծովային պետությունը: Թուրքական դիվանագիտության հաջորդ կարևորագույն ձեռքբերումը սեծովյան նեղուցների լողանյան պայմանակարգի վերանայման համար միջազգային նոր համաժողովի հրավիրումն էր:

Միջազգային իրադրության լարվածության մեծացմանը զուգընթաց, Թուրքիան 1933թ. սկսած տարբեր համաժողովների և հանդիպումների ժամանակ բազմիցս բարձրացրեց նեղուցների պայմանակարգի վերանայման հարցը, գտնելով, որ Լողանում հաստատված կարգը հակասում է Թուրքիայի ինքնիշխանությանը: Նեղուցների կարգավիճակի հարցը մշտապես (նաև այսօր) Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ կարևոր էր<sup>1</sup>: Սակայն, այս շրջանում թուրքական կողմի նախաձեռնությունը հավանության չի արժանանում անգլո-ֆրանսիական դիվանագիտության կողմից: Անգլիան և Ֆրանսիան այն մերժելու տարբեր պատճառներ ունեին<sup>2</sup>: Փարիզում վախենում էին, որ Լողանի պայմանագրի վերանայումը (մասնավորապես նեղուցների գոտու ապառազմականացումը) կհանգեցնի Վերսալյան ողջ համակարգի և առաջին հերթին Հոենոսի գոտու կարգավիճակի վերանայմանը<sup>3</sup>: Ինչ վերաբերում է Անգլիային, ապա «Լոնդոնում ավելի շատ երկյուղում էին, որ նեղուցների գոտում Թուրքիայի վերահսկողությունը կտանի թուրք-խորհրդային հարաբերությունների առավել մերձեցմանը», - նշում է Լ. Ժիվկովան<sup>4</sup>:

<sup>1</sup> <http://www.mfa.gov.tr/turk-bogazlari.tr.mfa>

<sup>2</sup> Вершинин А. Эдуард Даладьё и политика «умиротворения агрессора» накануне Второй мировой войны, с. 49.

<sup>3</sup> Политика великих держав на Балканах и Ближнем Востоке, с. 21.

<sup>4</sup> Живкова Л. Англо-турецкие отношения в 1933-1939гг., с. 46-47.



Անգլո-ֆրանսիական դիվանագիտության կողմից Գերմանիայի և Իտալիայի զավթողականության դեմ անվճռականությանը իր մեջ թաքցնում էր ֆաշիստական երկրների ռազմական ուժերը ԽՍՀՄ դեմ ծառայեցնելու քաղաքական հաշվարկներ: Դաշնակիցներին բնավ ձեռնտու չէր խորհրդաթուրքական խորացող բարեկամությունը, Անգլիան և Ֆրանսիան պատեհ առիթի դեպքում չէին հապաղում կազմալուծել երկկողմ հարաբերությունների խորացման բոլոր նախադրյալները: Բոլզովինի կառավարությունը ձգտում էր ԽՍՀՄ դեմ անգլո-գերմանական միություն ստեղծել՝ Ֆրանսիային ընդգրկելու հեռանկարով<sup>1</sup>: Ա.Թոյնբին նշում էր, որ 1936թ. ընթացքում տեղի էր ունենում անցում «միասնությունը ուժ է» քաղաքականությունից «փրկվիր ով կարող է» սկզբունքին<sup>2</sup>:

Անժուլյան նեղուցների պայմանակարգի վերանայման հարցը 1930-ականների կեսին դարձավ առաջնային: Գերմանիան և Իտալիան զավթողական գործողություններով ավելի ակնհայտ դարձրին նոր պատերազմի վտանգը, որն էլ հարկադրեց Անգլիային և Ֆրանսիային վերանայել իրենց դիրքորոշումը: «Անգլիայի արտաքին քաղաքականության հիմնական թերությունը նրա ծայրահեղ փոփոխականությունն ու անորոշությունն է», - գրում է Ա. Թոյնբին<sup>3</sup>:

Նման պայմաններում կորցնում էին իրենց նշանակությունն այն երաշխիքները, որ Լոզանի հռչակագրի 18-րդ հոդվածի համաձայն պետք է ապահովեին նեղուցների անվտանգությունը հնարավոր հարձակումներից: Չորս երաշխավորներից (Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Իտալիա և Ճապոնիա) երկուսը՝

Իտալիան և Ճապոնիան, արդեն բացահայտ ագրեսիայի ուղու վրա էին մյուս երկուսի թողտվությամբ: 1936թ. ապրիլի 10-ին Թուրքիան Ազգերի լիգային և Լոզանի համաձայնագրի մասնակից երկրներին համապատասխան հայտագիր ուղարկեց, առաջարկելով «բանակցություններ սկսել կարճ ժամկետում պայմանագիր կնքելու համար, որը կհստակեցնեք նեղուցների կանոնակարգը և կապահովեք Թուրքիայի տարածքային անձեռնմխելիությունը»<sup>1</sup>:

Նեղուցների կարգավիճակի վերաբերյալ նոր համաձայնագիր ստորագրելու նպատակով 1936թ. հունիսի 22-ին Մոնտրեում (Շվեյցարիա) բացվեց համաժողով, որին բացի Իտալիայից մասնակցում էին լոզանյան հռչակագրի նախկին մասնակիցները: 1936թ. հուլիսի 20-ին 10 երկրների պատվիրակներ ստորագրեցին նեղուցների վերաբերյալ նոր պայմանակարգ<sup>2</sup>, որը Լոզանի համեմատ ուներ մի շարք առավելություն: Այն, ըստ էության, Թուրքիայի դիվանագիտական հաղթանակն էր, այն չեղյալ հաշտարարեց Լոզանում հաստատված Թուրքիային վերաբերող մի շարք սահմանափակումներ: Լոզանի համաձայնագրով ստեղծված նեղուցների հանձնաժողովը լուծարվում էր, իսկ նրա գործառույթները անցնում էին Թուրքական կառավարությանը: Հռչակվում էր անցման և նեղուցներով նավարկության լիակատար ազատություն առևտրանավերի համար՝ խաղաղ ժամանակներում: Պատերազմի ժամանակ՝ Թուրքիայի մասնակցության դեպքում նավարկության ազատությունը պահպանվում էր պայմանով, եթե նրանք չեն աջակցում Թուրքիայի հակառակորդներին:

<sup>1</sup> Позеева Л. Англия и ремилитаризация Германии 1933-36. М., 1956, с. 218.

<sup>2</sup> Тоунбее А. Survey of international Affairs, p. 260.

<sup>3</sup> Тоунбее А. Survey of international Affairs, p. 263.

<sup>1</sup> Внешняя политика СССР. Т. 4. М., 1946, с. 130.

<sup>2</sup> Մոնտրեի կոնվենցիան Թուրք հեղինակները համարում են իրենց հաղթանակ: Arcayürek C. Şeytan Üçgeninde Türkiye, s. 34.



Նեղուցներով անցնող ռազմանավերը տարբերակվեցին սև-ծովյանի և ոչ սևծովյանի: Ոչ սևծովյան պետությունների ռազմածովային նավատորմի լրացուցիչ միավորների տեղա-շարժը թույլատրվում էր միայն թուրքական կառավարության համաձայնությամբ և մյուս սևծովյան պետությունների կողմից չառարկելու դեպքում: Թուրքիայի պատերազմի մեջ լինելու դեպքում Նեղուցներով ռազմանավերի անցման կանոնակարգումը լիովին թողնվում էր թուրքական կառավարության հայեցողությանը: Այս իրավունքը շնորհվում էր թուրքական կառավարությանը նաև այն դեպքում, եթե վերջինս համարեր, որ երկիրը գտնվում է «անմիջական ռազմական վտանգի սպառնալիքի տակ»: Համաձայնագիրը կնքվում էր 20 տարի ժամկետով, եթե հետո չդրվի այն դադարեցնելու հարցը, կգործի ևս 20 տարի: Այս սկզբունքով Նեղուցների վերաբերյալ համաձայնագիրը գործում է մինչև օրս:

Այսպիսով, համաձայնագրի բովանդակությունից պարզ է դառնում, որ Նեղուցների տնօրինումը, հետևաբար հիմնական հողավածների կիրառումը կախված էր Թուրքիայի արտաքին քաղաքական ուղղություններից: Փաստորեն, Թուրքիան վերածվում է կարևորագույն գործոնի, հետևաբար պատերազմի նախօրեին անդիջում պայքար էր ընթանալու՝ Թուրքիայի դրական կողմնորոշումն ապահովելու համար:

Ամփոփելով Ֆրանս-թուրքական հարաբերությունները կարող ենք եզրակացնել՝

1. Լոզանի համաժողովում լուծում չստացած մի շարք կարևոր հարցեր, ինչպիսիք էին Օսմանյան պարտքի, թուրք-սիրիական սահմանագծման, Մոսուլի վիլայեթի, աստիճանաբար հարթվում էին, սակայն, եթե 1926թ. Մոսուլի հարցի լուծումը նպաստեց թուրք-անգլիական հարաբերությունների որոշակի աշխուժացմանը, ապա նույնը չի կարելի ասել Թուրքիայի և

Ֆրանսիայի վերաբերյալ: Այսուհանդերձ, մեկ բան ակնհայտ էր՝ Անտանտի աչքերում աստիճանաբար բարձրանում էր Թուրքիայի կարգավիճակը:

2. Թուրքական դիվանագիտությունը շարունակեց ամրապնդել միջազգային դիրքերը՝ բազմաբնույթ պայմանագրեր ստորագրելով թե հարևան, թե եվրոպական տերությունների հետ: Տարիներ շարունակ Թուրքիայի արտաքին քաղաքականության կարևոր ուղղությունը համարվում էր սերտ համագործակցությունը ԽՍՀՄ հետ: Սակայն 1930-ականների սկզբին, երբ Թուրքիան անդամակցեց Ազգերի լիգային, զգալի ակտիվություն նկատվեց նաև եվրոպական պետությունների հետ հարաբերություններում:

3. Ֆրանս-թուրքական հարաբերություններում 1930-ականների կեսին նկատվում էր լուրջ առաջընթաց՝ հատկապես 1933թ. օսմանյան պարտքի վերաբերյալ պայմանագրի կնքումից հետո: Ֆրանսիայի և Թուրքիայի միջև քաղաքական, տնտեսական և մշակութային կապերը զարգացնելու համար 1934թ. սկզբին Ֆրանսիական խորհրդարանում և թուրքական մեջլիսում նույնիսկ ձևավորվեցին պատգամավորական խմբեր: Սակայն, 1936թ. երկրորդ կեսին, Թուրքիայի կողմից միջազգային դիվանագիտության թատերաբեմ «նետված» Ալեքսանդրետի սանջաքի հարցը ոչ միայն ստվեր գցեց փոխադարձ համագործակցության և հարաբերությունների բարելավման գործընթացի վրա, այլև սկիզբ դրեց Ֆրանս-թուրքական նոր հակամարտության:



ԳՎՈՒՆ ԵՐՐՈՐԴ

ԱԼԵՔՍԱՆԴՐԵՏԻ ՍԱՆՋԱՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԵՎ ՖՐԱՆՍ-ԹՈՒՐԿԱԿԱՆ ՀԱՐԱՐԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՆԱԽՕՐՑԱԿԻՆ

1. Ալեքսանդրեանի սանջաքի հարցի վերաբացումը

Ալեքսանդրեանի սանջաքը գտնվում է Հյուսիսային Սիրիայում, զբաղեցնում էր 4805 կմ<sup>2</sup> տարածքն և ուներ բազմազգ բնակչություն: Ալեքսանդրեանի և Անտիոքի շրջանը, ինչպես ողջ Սիրիան, սկսած 16-րդ դարից գտնվել էր օսմանյան լծի տակ: 1918թ. հոկտեմբերի 30-ի Մուզրոսի պայմանագրով Անտանտի զորքը գրավեց ողջ Սիրիան՝ մինչև Ալեքսանդրեան և Կիլիկիա: Ֆրանսիացիներն իրենց ազդեցություն գոտի համարվող տարածքներում. Կիլիկիան՝ Ադանայի վիլայեթով, Աքքայից մինչև Ալեքսանդրեան ձեռնամուխ եղան վարչական տարածքի կազմավորմանը: 1918թ. նոյեմբերի 27-ին ստեղծվեց «Ալեքսանդրեանի ինքնավար սանջաքը»: Հետագայում սանջաքի «հատուկ կարգավիճակը» ճշգրտվեց Սիրիայում և Լիբանանում Ֆրանսիայի գլխավոր կոմիսար Գուրոյի 1920թ. սեպտեմբերի 1-ի և 1921թ. օգոստոսի 8-ի հրամանագրերով, Ալեքսանդրեանի ինքնավար սանջաքը մտավ Սիրիայի կազմի մեջ՝ պահպանելով վարչա-ֆինանսական «հատուկ կարգավիճակը»<sup>1</sup>: 1921թ. հոկտեմբերի 20-ի ֆրանս-թուրքական համաձայնագիրը հաստատում են Ալեքսանդրեանի սանջաքում արդեն կենսագործվող «հատուկ կարգավիճակը»: Ֆրանկլեն-Բուլոնի պայմանագրով սանջաքը մտնում է Սիրիայի կազմի

<sup>1</sup> Луцкиѣ В., цит. соч., с. 107. Անկարայի համար այն անընդունելի էր՝ ըստ «Ազգային ուխտի»: Baskin O. op. cit., s. 280.

մեջ, որը գտնվում էր ֆրանսիական մանդատի տակ<sup>1</sup>: Պայմանագրի 7-րդ հոդվածով նախատեսվում էր սանջաքին տալ «կառավարման հատուկ կարգավիճակ», և տարածքի թուրք բնակչությանը մշակութային որոշ արտոնություններ<sup>2</sup>: Անկարայի պայմանագիրը՝ սանջաքի մասով հաստատվեց 1923թ. Լոզանի և 1926թ. թուրք-սիրիական պայմանագրերով:

1930թ. մայիսի 14-ի գլխավոր կոմիսարի հրամանագրով, սանջաքին՝ Սիրիայի և Լիբանանի սահմանադրությունների հետ միասին, տրվեց «հիմնական կանոնադրություն», որը հաստատեց Ալեքսանդրեանի վարչա-ֆինանսական հատուկ կարգավիճակը՝ Սիրիայի պետության կազմում: Այս «Սահմանադրական կանոնադրությունը» կարգավորում էր սանջաքի յուրահատուկ կարգավիճակը, գործեց մինչև 1937թ. նոյեմբերի 29, երբ ուժի մեջ մտավ «Նոր կանոնադրությունը»: Ալեքսանդրեանի հատուկ կարգավիճակը բնութագրվում էր հետևյալ առանձնահատկություններով.

Առաջին. Սանջաքում կիրառվում էր ուղղակի կառավարում՝ ի տարբերություն Դամասկոսի և Հալեպի, գլխավոր կոմիսարի ներկայացուցչի՝ պատվիրակի, անմիջական տնօրինմամբ և նրան ենթակա ֆրանսիացի խորհրդականների ու տեսուչների միջոցով: Մասամբ նշանակովի, մասամբ էլ ընտրովի և գերազանցապես թուրք կամ թրքացած արաբներից կազմվում էր սանջաքի վարչական խորհուրդը, քննարկում և հաստատում էր ինքնուրույն բյուջեն և նշանակում տարբեր ոլորտի պաշտոնյաներին: Ալեքսանդրեանի սանջաքը դե-յուրե և դե-ֆակտո գտնվում էր Սիրիայի կազմում: Սանջաքի մու-

<sup>1</sup> Ազգերի լիգայի մանդատը Սիրիայի և Լիբանանի վրա պաշտոնապես հաստատվեց 1922թ. հուլիսի 24-ին, իսկ 1923թ. սեպտեմբերի 29-ին Ֆրանսիային հանձնվեց Սիրիայի և Լիբանանի կառավարումը: Луцкиѣ В. цит. соч., с. 100.

<sup>2</sup> Paillares M. op. cit., p. 359-362, Baskin O. op. cit., s. 280.



Թասարիֆը՝ կառավարիչը, պաշտոնապես նշանակվում էր Սիրիայի Հանրապետության նախագահի կողմից: Ինչպես Սիրիայի մյուս մարզերը, այնպես էլ սանջաքը սիրիական խորհրդարան էր ուղարկում արաբ, թուրք և հայ համայնքները ներկայացնող պատգամավորներին:

Այսինքն, «Հատուկ կարգավիճակը» սանջաքին չի տվել ինքնուրույն պետական-քաղաքական միավորի բնույթ՝ Սիրիայի սահմաններից դուրս, վերջինիս կազմում ունենալով արաբական ինքնավարության արտոնություններ:

Երկրորդ, հատուկ կարգավիճակը ակնհայտ նպաստավոր պայմաններ էր ստեղծել սանջաքի բնակչության միայն 25-30% կազմող թուրք համայնքի համար՝ ի վնաս արաբների ու հայերի. սանջաքի պետական պաշտոնյաների 65% թուրք էր: Թուրքանպաստ այս խտրականությունը բացահայտ արտահայտվում էր ուսումնա-դպրոցական գործերում ու մշակութային կյանքի ոլորտներում, որտեղ թուրքական փոքրամասնությունը միշտ արժանանում էր հատուկ ուշադրության<sup>1</sup>:

Փաստորեն, ստացվում էր այնպես, որ Ալեքսանդրետի սանջաքում ֆրանսիական մանդատային իշխանությունների կառավարման ու թուրքերին տրված «հատուկ կարգավիճակի» արտոնյալ պայմանները, բնականորեն հանգեցնում էր սանջաքի ներքաղաքական իրադրության ապակայունացմանը: Դրությունը ավելի էր բարդանում փոխ-պատվիրակ Պիեռ Դյուրոյի (1924-1937) ընդգծված թուրքամետ կողմնորոշման, և Անկարայի կոպիտ միջամտության հետևանքով՝ սահմանի պարբերաբար խախտումներ, զինված ընդհարումներ, քաղաքական դավեր ու բացահայտ տարածքային պահանջներ:

<sup>1</sup> Որպես վառ օրինակ, նշենք մանդատային իշխանությունների տվյալներով, Ալեքսանդրետի սանջաքի դպրոցների պատկերը. թուրքական 33 դպրոց՝ 3406 աշակերտով, արաբական 27 դպրոց՝ 2534 աշակերտով, հայկական 10 դպրոց՝ 518 աշակերտով: **Քաղաքային Ա.**, նշվ. աշխ., էջ 32:

Այս հարցի սաղմերը գտնվում են 1921թ. Անկարայի պայմանագրի ու հետագա դիվանագիտական ակտերի հիմքում: «Պարզ երևում է, գրում է «Ազի Ֆրանսեզ» հանդեսը, որ Անգորայի համաձայնագրի միակ նպատակն է թուրքական նոր պահանջների նախապատրաստումը և Ալեքսանդրետի շրջանի լքումը Ֆրանսիայի կողմից: Այդ օրը Ֆրանսիան համաձայնության եկավ մի տեքստով, որի աղետալի հետևանքները ի հայտ էին գալու հետագայում»<sup>1</sup>: Նույն կարծիքին է նաև Բ. Պոցխերիան. «Արդեն այն ժամանակ կասկած չկար, որ ֆրանսիացիները Ալեքսանդրետի սանջաքը զիջելու էին թուրքիային»<sup>2</sup>: Փաստորեն, 1921թ. ֆրանս-թուրքական համաձայնագիրը դիվանագիտական միակ զենքն էր, որի շնորհիվ թուրքիան կարողացավ «հետևողականորեն» հասունացնել Ալեքսանդրետի հարցը, հանել այն միջազգային դիվանագիտության թատերաբեմ և ապօրինի ձևով միացնել իրեն:

Թուրքիան, 15 տարվա ընթացքում պաշտոնապես չի անդրադարձել այդ հարցին. չնայած որ, Անկարան այդ ընթացքում, օգտվելով ստեղծված նպաստավոր իրավիճակից նախապատրաստում էր սանջաքի թուրքացումը: Ինչևէ, սանջաքը համարվում էր «Սիրիայի մասը և իր պատգամավորներն էր ուղարկում սիրիական խորհրդարան, իսկ թուրքական կառավարությունը չէր պահանջում Ալեքսանդրետի տարածքը»<sup>3</sup>: Սակայն, 1936թ. սանջաքի խնդիրը դառնում է հրատապ և հհետագայում վերաճում քաղաքական հակամարտության:

1936թ. սեպտեմբերի 9-ին Ֆրանսիայի և Սիրիայի միջև կնքվեց «Բարեկամության և օգնության պայմանագիր», որով

<sup>1</sup> Veou P. du. La desastre d'Alexsandrette, p. 46.

<sup>2</sup> Поцхвериа Б. Турция между двумя мировыми войнами, с. 158.

<sup>3</sup> Тарасов Б. Франко-турецкое соглашение об Александретском санджаке и присоединение Турции к Англо-французскому блоку. Автореферат диссертации. Свердловск, 1966, с. 14.



Ֆրանսիան ճանաչեց Սիրիայի անկախությունը, և պարտավորվեց 3 տարում՝ մինչև 1939թ., հրաժարվել մանդատից և օժանդակել Սիրիային՝ որպես անկախ պետություն անդամակցելու Ազգերի լիգային<sup>1</sup>: Սակայն, «Ֆրանսիան իրավունք ուներ 5 տարի զորք պահել Սիրիայում, ռազմական ուժերը կարող էին ազատ շարժվել Սիրիայի տարածքով, արտաքին քաղաքական հարցերում Սիրիան պարտավորվում էր խորհրդակցել Ֆրանսիայի հետ»<sup>2</sup>: Ֆրանսիան իրավունք ստացավ պատերազմի անմիջական սպառնալիքի դեպքում օգտագործել Սիրիայի հաղորդակցության միջոցները և հենակետերը: Պայմանագրով Ալեքսանդրետի սանջաքը մտնելու էր Սիրիայի կազմի մեջ: Նախատեսվում էր, որ մանդատային վարչակարգի դադարումից հետո ձեռնարկեն անհրաժեշտ միջոցառումներ, որպեսզի սիրիական կառավարությանը անցնեին բոլոր իրավունքներն ու պարտականությունները»: Պայմանագրի կնքումը դժգոհություն առաջացրեց Թուրքիայում, որից հետո մամուլը կտրուկ հակաֆրանսիական արշավ ձեռնարկեց: Թուրքիան ֆրանսիական կառավարությանը մեղադրեց սանջաքը «անօրինական» Սիրիային հանձնելու մեջ: Շարունակ խոսվում էր «սանջաքում հաստատված ֆրանս-սիրիական բռնապետության և սանջաքի 280 հազար թուրքերին վիճակված դառը ճակատագրի մասին»<sup>3</sup>: «Ալեքսանդրետի շրջանը, որտեղ թուրքերը մեծամասնություն են կազմում, չի կարելի թողնել արաբական ազգայնական կառավարության բնահաճույքին, մենք պահանջում ենք կնքել առանձին պայ-

<sup>1</sup> Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, հտ. 4, էջ 457. Смирнов В. Франция в XX век. М., 2001, с. 135.

<sup>2</sup> Կարապետյան Ռ., Արաբական երկրների նոր և նորագույն պատմություն, Ե., 2003, էջ 138: Сирья. Справочник. М., 1992, с. 114.

<sup>3</sup> Բայրամյան Ա., նշվ. աշխ., էջ 49-50:

մանագիր»<sup>1</sup>, հայտարարում էր թուրքական կողմը: Տարբեր հեղինակների տվյալներով սանջաքում թուրքական մեծամասնություն գոյություն չունեն և թուրքերի թիվն այնտեղ կազմել է 23-30%: Այսպես, 1937թ. Ալեքսանդրետի սանջաքի 240.000 բնակչից արաբները կազմում էին 48% (115.000), թուրքերը՝ 23% (55.000), հայերը՝ 18% (43.000), մնացած 11% (27.000)՝ թուրքմեններ, քրդեր, շերքեզներ և այլք<sup>2</sup>:

Անշուշտ, թուրքական մամուլը նման կերպ փորձում է հիմնավորել տարածքային պահանջների իրավացիությունը և ճանապարհ հարթել Անկարայի դիվանագիտական գործողությունների համար: Թուրքիայի արտգործնախարար Թ. Ռյուշտու Արասը 1936թ. սեպտեմբերի 26-ին Ազգերի լիգայի խորհրդի 93-րդ նստաշրջանում առաջին անգամ բարձրացրեց Ալեքսանդրետի սանջաքի հարցը: Հոկտեմբերի 10-ին Փարիզում սկսվեցին Ֆրանսիայի և Թուրքիայի միջև բանակցություններ: Թուրքիայի դեսպան Սուադ Դավազը ներկայացրեց հուշագիր, պահանջեց «սանջաքին տալ այնպիսի ինքնուրույնություն, ինչպիսին Սիրիան և Լիբանանն են, որ Ֆրանսիան սանջաքի հետ ստորագրի նմանօրինակ պայմանագիր»<sup>3</sup>: Թուրքական կողմը առաջ քաշեց հետևյալ կետերը.

1. 1921թ. պայմանագիրը ստորագրվել է թուրքերի հետ, ոչ թե Սիրիայի, որն այդ ժամանակ գոյություն չունեն, ընդ որում Ֆրանսիային սանջաքը զիջվել է ոչ թե առանց պայմանի, այլ պայմանականորեն:

2. Քանի որ Ֆրանսիան այժմ հրաժարվում է այդ շրջանում իր գերիշխանությունից, ապա ինքնուրույնությունը պետք է անցնի միայն սանջաքի բնակչությանը:

<sup>1</sup> Hourani A. Syria and Lebanon, p. 207. Arcayürek C. op. cit., s. 37:

<sup>2</sup> Հովհաննիսյան Ն., Սարգսյան Հ., Սիրիան անկախության համար մղված պայքարում: Ե., 1975, էջ 183:

<sup>3</sup> Arcayürek C. op. cit., s. 37. Давциг Б. Турция, с. 274.



3. Ֆրանսիան իրավունք չունի առանց Թուրքիայի համաձայնության այն հանձնելու մասին պայմանագիր կնքել երրորդ կողմի հետ:

4. Ֆրանսիան խախտում է 1921 և 1926թթ. պայմանագրերը՝ անարդարացիորեն շրջանցելով այն կետերն ու հոդվածները, որոնցով հաստատվել էր Թուրք-սիրիական սահմանագիծը:

Մինչ ֆրանսիական կառավարությունը կուսումնասիրեր Թուրքական հուշագիրը, 1936թ. նոյեմբերի 1-ին Աթաթուրքը ԹԱՄԺ նիստում հայտարարում է. «Այս օրերին մեր ազգին գիշեր-ցերեկ անհանգստացնող հիմնական խնդիրը Իսթենդերուն-Անթաքիայի շրջանների ճակատագրի հարցն է, որոնց իսկական տերերը Թուրքերն են: Այս հարցում մենք հարկադրված ենք հանդես բերել ամենայն լրջություն և վճռականություն»<sup>1</sup>: Ֆրանսիայի արտգործնախարար Դելբոսը, պատասխանելով նոյեմբերի 10-ի Թուրքական հուշագրին, ընդգծում է.

1. 1921թ. պայմանագրով Ֆրանսիան առաջնորդվում է բացառապես մանդատային սկզբունքներով, այդ թվում՝ Սիրիայի շահերով:

2. Ըստ պայմանագրի 1-ին և 4-րդ հոդվածների՝ Ֆրանսիան սիրիական մանդատը կարող է բաժանել երկու մասի՝ Սիրիայի և Լիբանանի, և եթե սանջաքի ղեկավարության հետ ստորագրվի այնպիսի պայմանագիր, ինչպիսիք կան Սիրիայի և Լիբանանի հետ, դա կնշանակի Սիրիայի մասնատում, որի իրավունքը Ֆրանսիան չունի:

3. Պայմանագիրը սանջաքին տալիս էր ինքնուրույն կառավարման, ոչ թե քաղաքական հատուկ կարգավիճակ, և հատուկ կառավարման համակարգը պահպանվում է նաև Սիրիայի նկատմամբ ֆրանսիական մանդատը վերացնելուց հետո<sup>2</sup>:

<sup>1</sup> Atatürk K. Atatürk'un söylev ve demeçleri. Cilt 1. Ankara, 1952, s. 377.

<sup>2</sup> Миллер А. Очерки новейшей истории Турции, с. 187.

Հուշագրի բովանդակությունը համոզմունք է ստեղծում, որ Ֆրանսիան իսկապես «մտահոգված» է Սիրիայի տարածքային ամբողջականության պահպանմամբ և արաբ ժողովրդի ճակատագրով ու առաջնորդվում է զուտ մանդատային սկզբունքներով: Սակայն, «մանդատային համակարգ» կոչվածը գաղութացման քաղաքական նոր ձև էր: Այն տպավորություն էր ստեղծում, որ Անգլիան և Ֆրանսիան ոչ թե իրենց գերիշխանությունն էին հաստատում տվյալ երկրում, այլ «կատարում» էին միջազգային կազմակերպության՝ Ազգերի լիգայի կամքն ու հանձնարարությունը:

Հետևաբար, թվացյալ այդ «մտահոգության» քողի տակ իրականում թաքնված էին Ֆրանսիայի շահերը՝ նախ սանջաքի անկախացումով ֆրանսիացիները զրկվում էին ռազմավարական շատ կարևոր նշանակություն ունեցող ռազմածովային հենակետերից և նավահանգստներից, բացի այդ, դա կտրուկ սրում էր ֆրանս-արաբական հարաբերությունները՝ հարվածի տակ դնելով Ֆրանսիայի շահերը ոչ միայն Սիրիայում, այլև հյուսիս-աֆրիկյան շրջանում: Իսկապես «Ալեքսանդրետը, հանդիսանում էր Սիրիայի երրորդ խոշոր նավահանգիստը՝ Տրիպոլից և Բեյրութից հետո, նույնիսկ ամենակարևոր նավահանգիստն է Ստամբուլից Ալեքսանդրիա ընկած ծովափնյա ողջ շրջանում»<sup>1</sup>: Նշյալի վառ ապացույց է բարձրագույն կոմիսար Ժուվենելի հետևյալ տեսակետը. «Սիրիան տնտեսական հիանալի հեռանկարներ ունի և ապահովում է հսկայական շահույթ Ֆրանսիայի համար: Բացառելով Սիրիայից զուրս գալու ցանկացած տարբերակ՝ նա հավելեց. «Հեռանալ Սիրիայից, նշանակում է Արևելյան Միջերկրածովը վերածել անգլո-իտալական ծոցի: Սա, անշուշտ, մեծապես կվնասի Ֆրանսիա-

<sup>1</sup> Известия, 11.01.1937. Москва.



յի ողջ քաղաքական և տնտեսական գիրքերին Մերձավոր արևելքում: Ավելին՝ զիջել Ֆրանսիան շէր ցանկանում, ավելի ճիշտ՝ շէր էլ կարող: Անգլիական մամուլը պարբերաբար «հիշեցնում» էր, որ Սիրիայի մանդատը Ֆրանսիան ստացել է Ազգերի լիգայից և այդ մանդատի թեկուզ և ամենաչնչին շեղումը պետք է կատարվի Ազգերի լիգայի թույլտվությամբ<sup>1</sup>: Այսպիսի պատասխանը, բնականաբար, շէր կարող գոհացնել թուրքական կողմին, որը ձգտում էր հասնել Ալեքսանդրետի սանջաքի անկախացմանը՝ նպատակ ունենալով վաղ թե ուշ հասնել սանջաքի գրավմանը<sup>2</sup>:

Մրանով պետք է պայմանավորել սկզբնական շրջանում սանջաքի խնդրի հետ կապված ֆրանսիական կողմի որդեգրած կոշտ գիրքորոշումը: Սակայն, միջազգային ասպարեզում իրադարձությունների զարգացմանը զուգահեռ փոխվեց նաև Ֆրանսիայի քաղաքական գիրքորոշումը:

### 3.2 «Ալեքսանդրետ-Անտիոքի» խնդիրը Ազգերի լիգայում և Ֆրանսիայի դերը

Ալեքսանդրետի սանջաքի հարցի քննարկումը 1936թ. դեկտեմբերին թուրքական կողմի նախաձեռնությամբ և ֆրանսիական կառավարության համաձայնությամբ տեղափոխվեց Ազգերի լիգայի խորհուրդ: Դեկտեմբերի 8-ին Թուրքիայի արտգործնախարար Ռ.Արասը հեռագրում է Ազգերի լիգայի խորհրդի քարտուղար Ժոզեֆ Ավրնոլին՝ առաջարկելով լիգայի խորհրդի արտակարգ նստաշրջանի օրակարգ մտցնել «Ալեքսանդրետ-Անտիոքի ու շրջակա տարածքների ապագայի վերաբերյալ Թուրքիայի և Ֆրանսիայի միջև գոյություն ունեցող վեճի» քննարկումը: Այսպես, որոշվում է Ալեքսանդրետի սանջաքի հարցի քննարկման համար անմիջապես հրավիրել Ազգերի լիգայի խորհրդի արտակարգ նստաշրջան: Մինչ լիգայի խորհրդում սանջաքի հարցի քննարկմանն անդրադառնալը՝ համառոտակի շարադրենք Ալեքսանդրետի սանջաքում տիրող իրավիճակը:

Օգտվելով Ֆրանսիայի «բարեհաճությունից»՝ սանջաքի թուրք ծայրահեղականները շարունակ պահանջում էին շրջանի անջատումը Սիրիայից կամ սանջաքի ուղղակի կցումը Թուրքիային՝ նշելով, որ «Իսթենդերունի սանջաքը Ազգային ուխտի սահմանների մեջ է եղել»: Այս նպատակով դեռ վաղուց Սիրիայում ստեղծվել էին Ալեքսանդրետի «ազատագրման» կոմիտեներ և կիսառազմականացված թուրքական կազմակերպություններ, որոնք գործելով անպատժելիության մթնոլորտում, բացահայտ ահաբեկման քաղաքականություն էին վարում տեղի արաբ, հայ բնակչության նկատմամբ: Հենց այսպիսի գաղափարների հիման վրա էլ հիմնված էր ծայրահեղականների «Հալք-էվի» (Ժողովրդի տներ) խմբավորման ողջ

<sup>1</sup> Штюрмер Х. Англо-французское сближение, с. 9.

<sup>2</sup> Karakoç E. Atatürk'ün Hatay Davası. İstanbul, 2009, s. 97-98.



գործունեությունը: Վերջիններիս դեռ 1936թ. գարնանից հրահրած անջատողական շարժումը վերաճում է բացահայտ հուզումների ու զինված ընհարումների թուրք խռովարարների և տեղի ոստիկանական ուժերի միջև: Այս ամենը նոր թափ ստացավ նոյեմբերին, երբ սիրիական կառավարությունը որոշեց երկրում, այդ թվում՝ նաև սանջաքում անցկացնել պառլամենտական ընտրություններ: Ըստ կանոնադրության՝ ընտրությունները պետք է անցկացվեին ուղղակի քվեարկությամբ՝ երկաստիճան համակարգով: Անկարայի զիվանագիտական շրջանների կողմից, որոնք խրախուսում էին սանջաքում ծայրահեղական գաղտնի խմբավորումների քայքայիչ գործունեությունը, Ալեքսանդրետ-Անտիոքի շրջանի թուրքերին հրահանգվեց բոյկոտի ենթարկել սիրիական հանրապետության խորհրդարանական ընտրությունները: Այս ամենը, կարծում ենք, հետապնդում էր մեկ նպատակ՝ ձախողել ընտրությունները, որպեսզի անհրաժեշտ քվորումը չապահովվի, և դրանով ապացուցել, որ թուրքերը քաղաքական մեծ կշիռ ու դերակատարություն ունեն սանջաքում: Սակայն, Անկարայի և սանջաքի ծայրահեղականների բոլոր ջանքերը անցան ապարդյուն, և թուրքերին մնում էր ապավինել շանտաժի ու սպառնալիքների քաղաքականությանը: Նրանք ամենուր լուրեր էին տարածում, որ շուտով սանջաքը գրավվելու է թուրքական զորքերի կողմից: Իսկ մանդատային իշխանությունների որդեգրած քաղաքականությունը ավելի էր բարդացնում դրությունը: Նրանք ոչ միայն չէին հերքում թուրքերի կողմից շրջանավոր լուրերը, այլ նաև չէին ձեռնարկում ոչ մի միջոցառում՝ սանձելու համար ծայրահեղականների անօրինական գործունեությունը: Չնայած այս ամենին՝ նոյեմբերի 30-ին նոր խորհրդարանի ընտրություններում հաղթեց «Ազգայնական Դաշինք» (Քուվլա վաթանիա) կուսակցությունը, իսկ նրա ղեկավար Հաշիմ ալ-

Աթասին ընտրվեց հանրապետության նախագահ: Սիրիական պետության կազմում ընդգրկվեցին նաև Լաթակիան, Ջեբել-Դրուզը և Էլ-Ջեզիրեն, որոնք մինչ այդ գոյություն ունեին որպես մանր ինքնուրույն միավորներ<sup>1</sup>: Ֆրանսիացի նախկին պատգամավոր և արևելյան հարցերի մասնագետ Ա. Լպենը «Կիլիկայից հետո Սիրիան» հոդվածում, քննադատելով Ֆրանսիայի քաղաքականությունը, կատարում է դիպուկ հարցադրումներ. «Ի՞նչ է տեղի ունենում Սիրիայում. Արդյո՞ք դիպվածաբար կհավանին կրկնել Կիլիկիայի խաղը, որը մի իսկական ոճիր էր»: Նա անդրադառնալով նաև կիլիկիահայություն ճակատագրին, գրում է. «Սիրիայի մեջ հարյուր հազարավոր հայեր կան, թերևս ավելի շատ ընտանիքներ արդեն կոտորվել են, մինչդեռ մենք նրանց պաշտպանելու հանձնառություն էինք ստանձնել: Մեր երկրի այս հավատարիմ բարեկամներին սառնասրտորեն և վայրագորեն պետք է հանձնենք»<sup>2</sup>:

Սանջաքի հայ բնակչությունը և քաղաքական-հասարակական շրջանակներն որդեգրել էին Սիրիայի անկախության պայքարին համահունչ քաղաքական դիժ: Հայերի շրջանում կային հնչակյան, ռամկավար-ազատական և դաշնակցական կուսակցությունների տեղական կազմակերպություններ<sup>3</sup>:

«1936-1937 թթ. ճգնաժամի ժամանակ հայերը արաբների հետ կազմեցին ընդհանուր քաղաքական մեկ ճակատ», - վկայում է Ա. Թոյնբին<sup>4</sup>: Արաբ գործիչներն ևս բազմիցս դրվատել են հայերին. «Ալեքսանդրետի սանջաքի 35000 հայ իրենց

<sup>1</sup> Новейшая история стран Азии и Африки XXвек, Часть 1, с. 255.

<sup>2</sup> «Հայրենիք», Պոսթըն, 1936 մայիսի 16:

<sup>3</sup> Բայրամյան Ա., Ալեքսանդրետի սանջաքի իրավական ստատուսը և քաղաքական խմբավորումները (1920-1930-ական թթ.), ՀՍՍՀ ԳԱ Տեղեկագիր հաս. գիտ., № 12, 1964, էջ 33:

<sup>4</sup> Toynbee A. Survey of international Affairs, p. 480.



դրսևորեցին որպես գերազանց լավ սիրիացիներ: Արաբների հետ նրանց հարաբերությունները միշտ էլ եղել են հիանալի, իսկ նրանց սքանչելի դիրքավորումը Ալեքսանդրետի հակամարտության այս օրերին ավելի ամրապնդեց այդ հարաբերությունները», նշում էր Սիրիայի ականավոր քաղաքական գործիչ Ա. Շահբանդարը Կահիրեի հայ լրագրողներին<sup>1</sup>: Հայերի և արաբների սերտ համագործակցության մասին է խոսում նաև այն փաստը, որ ընտրությունների ժամանակ հայերից քվեարկության մասնակցում են իրավունք ունեցող 5504 հայ և ըստ օրենքի ընտրում 5 երեսփոխաններ<sup>2</sup>:

Այսպիսի պայմաններում 1936թ. դեկտեմբերի 14-ին բացվում է Ազգերի լիգայի խորհրդի 95-րդ նստաշրջանը, որի օրակարգում էր նաև «Ալեքսանդրետի և Անտիոքի հարցը»: Նշենք, որ սիրիական պատվիրակությունը նույնպես ժամանել էր ժնև «պաշտպանելու համար Սիրիայի անբաժան մասի՝ Անտիոք-Իսքենդերուլի միացումը Սիրիային, որը պատմականորեն կապված է Սիրիայի հետ»<sup>3</sup>: Թուրքիայի արտգործնախարար Ռյուշտու Արասը մասնավորապես ասած. «Ֆրանսիական մանդատը չի տարածվում սանջաքի վրա, որը պայմանականորեն թողնվել էր Ֆրանսիային: Թուրքիան երբեք չի ընդունի ինչ-որ սիրիական պետական-քաղաքական միավորի գոյությունը, որի անունից Ֆրանսիան իր իշխանության տակ վերցնի թուրքական մի համայնք»<sup>4</sup>:

Ֆրանսիայի ներկայացուցիչ Վիենոն նախ հիմնովին մերժեց, այնուհետև շեշտեց. «Թուրքիան պաշտոնապես ընդունել է, որ 1921թ. հաստատված սահմանագծից հարավ ընկած եր-

կիրը իրոք Սիրիան է, և Ալեքսանդրետի սանջաքը իր վարչաֆինանսական ինքնավարությունը միշտ մաս է կազմել Սիրիայի պետությանը՝ նրա ստեղծումից ի վեր»<sup>1</sup>: Անցած 15 տարիների ընթացքում Թուրքիան որևէ բողոք չի ներկայացրել այդ փաստական իրողությանը, ոչ էլ Ալեքսանդրետի սանջաքում Անկարայի համաձայնագրի դրույթների կենսագործման դեմ: Երբ թուրքական կառավարությունը բարձրացրեց «Սանջաքի հարցը», Ֆրանսիան համաձայնեց բանակցել՝ սանջաքի հատուկ վարչակարգի պահպանման ու ամրապնդման պայմանների և ոչ թե սանջաքը «անկախ պետություն» դարձնելու թուրքական տեսակետի շուրջ:

Իրավիճակը տեղում ուսումնասիրելու և կիզայի խորհրդին ներկայացնելու համար ուղարկվեցին կիզայի նշանակած չեզոք դիտորդներ: Հանձնաժողովում ընդգրկվեցին նորվեգացի, հոլանդացի և շվեյցարացի 1-ական ներկայացուցիչ, «Ալեքսանդրետի ու Անտիոքի» հարցի մասին զեկուցող նշանակվեց Շվեդիայի արտգործնախարար Սանդլերը<sup>2</sup>:

1936թ. դեկտեմբերի 31-ին հանձնաժողովը ժամանեց սանջաք՝ հանդիպելով արաբ, հայ, թուրք, թուրքմեն ներկայացուցիչների: Դիտորդները հաստատեցին, որ «անհամաձայնության որևէ տարր գոյություն չունի, թուրքերը, արաբները, հայերը աշխատում և ապրում էին կատարյալ համերաշխության մեջ»<sup>3</sup>: Միայն, երբ դիտորդները ժամանեցին Անտիոք, (բնակչության մեծամասնությունը թուրք էր) թուրք ծայրահեղականները «ազդեցիկ» ցույցերով փորձեցին հավատացնել, թե «Անտիոքի բնակչության ստվար մասը չի ուզում միանալ Սիրիային և սիրիական ու ֆրանսիական իշխանությունները խոչըն-

<sup>1</sup> Բայրամյան Ա., նշվ. աշխ., էջ 40:

<sup>2</sup> «Արմադան», Ստամբուլ, 1938 հոկտեմբերի 29:

<sup>3</sup> «Արազ», Բուխարեստ, 1937 հունվարի 1:

<sup>4</sup> Բայրամյան Ա., նշվ. աշխ., էջ 59:

<sup>1</sup> Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, էջ 429:

<sup>2</sup> Baskin O. op. cit., s. 283-284.

<sup>3</sup> Veou P. du. La desastre d'Alexandrette, 1934-1938, p. 64.



գոտներ են հարուցում, որպեսզի Անտիոքի թուրք բնակչու-  
թյունը չկարողանա արտահայտել իր կամքը»<sup>1</sup>: Հունվարի 11-  
ին արաբները և հայերը կազմակերպեցին բազմահազարանոց  
ցույց. «Տասնյակ հազարավոր արաբներ, հայեր շրջում էին  
քաղաքի փողոցներում վանկարկելով կեցցե՛ Սիրիան»: Դիտ-  
որդները հաստատեցին նաև քաղաքի քրիստոնեական գե-  
րեզմանատանը հայկական շիրիմների սրբապղծման փաստը  
թուրքերի կողմից. «Թուրքական ամբոխը ասպատակել է հա-  
յոց գերեզմանատունը ու վայրագ ձևով տապալել խաչերը»<sup>2</sup>-  
գրում է «Արագ» թերթը:

Մինչ դիտորդական առաքելությունը զբաղված էր սանջա-  
քի ներքաղաքական դրուժյունը ուսումնասիրելով՝ Լիզայի  
խորհրդի նախաձեռնությամբ դեկտեմբերի 31-ին Փարիզում  
վերսկսվեց Ֆրանս-թուրքական բանակցություններ: Մասնակ-  
ցում էր արտգործնախարար Ի.Դելբոսը և նրա տեղակալ Պ.  
Վիենոն, և Ռյուշտու Արասը և Փարիզում Թուրքիայի դեսպան  
Սուադ Դավազը: Ֆրանսիան մերժեց թուրքական առաջարկ-  
ները և մի քանի օր տևած բանակցությունները ավարտվեցին  
անարդյունք: Դրանից հետո թուրքական կողմը սկսեց տար-  
բեր միջոցներով հասկացնել, որ «արվածը մեր բարեկամու-  
թյան հետ անհամատեղելի է»<sup>3</sup>: Այս պարագայում Ֆրանսիայի  
վարչապետ Լեոն Բլյումը որոշեց անձամբ վերահսկել հարցի  
կարգավորման գործընթացը. «Իրավական բնույթի այս տար-  
ակարծությունը պետք է դարձնել Ֆրանսիայի և Թուրքիայի  
միջև քաղաքական մերձեցման ու բարեկամության հաստատ-  
ման միջոց», - հայտարարում է վարչապետ Բլյումը Արասի հետ

<sup>1</sup> «Արագ», Բուխարեստ, 1937 հունվարի 14:

<sup>2</sup> «Արագ», Բուխարեստ, 1937 հունվարի 20:

<sup>3</sup> Sandıklı A. Atatürk dönemi türk dış politikası ışığında avrupa birliği'ne giriş.  
İstanbul, 2007, s. 66.

տեսակցության ժամանակ<sup>1</sup>: Ֆրանսիայի վարչապետը այնու-  
հետև հավաստիացնում է, որ «սանջաքի կարգավիճակի  
մասին շուտով կկազմվի նոր նախագիծ, և արտաքին գործերի  
նախարարութայան միջոցով կհանձնվի թուրքական կառավար-  
ությանը, սկզբունքորեն ուսումնասիրեք նախագիծը, - Ռյուշ-  
տու Արասին հորդորում է Բլյումը, - համոզված եմ, որ այն  
կգոհացնի Թուրքիային»<sup>2</sup>:

Սակայն Ֆրանսիական կողմի այս քայլերը ոչնչով չնվա-  
զեցրին թուրքական մամուլի մեղադրանքների տարափը, որով  
սպառնում էին, որ եթե չբավարարվեն իրենց պահանջները,  
ապա Թուրքիան կլքի Ազգերի լիգան, իսկ Անկարայի մեջլի-  
սում արդեն բացահայտ սպառնալիքներ էին հնչում Սիրիայի  
հասցեին. «Եթե մեր կառավարությունը չի կարող հարցը  
լուծել սպիտակ գրքի<sup>3</sup> օգնությամբ, ապա թուրք ազգը պատ-  
րաստ է անհրաժեշտ շափով կարմիր թանաք տալու՝ այդ  
մասին մի կարմիր գիրք գրելու համար»<sup>4</sup>:

«Ջումհուրիեթը» սպառնալից շեշտով գրում էր. «Սա ամբող-  
ջովին ոճրապատ արարք է, հնարավոր չէ զզվանք շարտահայ-  
տել այդ կատակերգության դեմ, Ֆրանսիացի պաշտոնյաները  
պետք է իմանան, որ թուրքական սանջաքի հարցը միաժամա-  
նակ հանրապետական Թուրքիայի խնդիրն է»<sup>5</sup>:

Լուրեր տարածվեցին, թե թուրքական կառավարությունը  
սանջաքի սահմանի մոտ զորք է կենտրոնացնում: Չնայած  
պաշտոնական Անկարան թուրքական զորքի կուտակումների  
վերաբերյալ տեղեկատվությունը հերքեց, սակայն մամուլը

<sup>1</sup> Veou P. du. La desastre d'Alexsandrette, p. 171.

<sup>2</sup> Известия, 08.01.1937. Москва.

<sup>3</sup> Սանջաքի մասին Ազգերի Լիգայի թուրքական հուշագիրը:

<sup>4</sup> Миллер А., цит. цоч., с. 188-189.

<sup>5</sup> «Արագ», Բուխարեստ, 1937 հունվարի 24:



շարունակում էր անուղղակի կերպով ակնարկել թուրքական շրջանակներում տիրող տրամադրությունները՝ հարցը զինված ճանապարհով լուծելու մասին: «Քանի դեռ այս հարցը չի լուծվել, Միջերկրական ծովում չի կարող խաղաղություն լինել: Այժմ Ֆրանսիան հակում չի ցուցաբերում թուրքիայի պահանջներին իրավացի լուծում գտնելու գործում: Դժվար է ենթադրել, որ Ազգերի լիգան որոշում կկայացնի Ֆրանսիայի դեմ: Այսպիսով հարցի լուծման մեկ ճանապարհ է մնում՝ իրավունքը ձեռք բերել ուժով»,<sup>1</sup> - գրում է «Թանր»<sup>1</sup>:

Միջազգային ասպարեզում իրադրությունը կտրուկ փոխվել էր դեռևս 1933թ., երբ Գերմանիայում իշխանության գլուխ անցան նացիստները՝ Ա. Հիտլերի գլխավորությամբ: Այս իրադարձությունը կարող ենք համարել Եվրոպայում պատերազմի գլխավոր օջախի առաջացման սկիզբ: Ֆրանսիան, որի համար «Վերսալյան համակարգի պահպանումը համարվում էր արտաքին քաղաքականության հիմքը»<sup>2</sup>, Անգլիայի հետ միասին լրջորեն չհակադեցին Գերմանիայի հարձակողական պահվածքին: Անգլիայի և Ֆրանսիայի «չմիջամտելու» քաղաքականության արդյունքը եղավ Ֆաշիստական Իտալիայի հերթական ներխուժումը Եթովպիա:

Այդ շրջանում իրադրությունը կտրուկ սրվել էր նաև Հեռավոր Արևելքում: Ճապոնիան, որը ավարտել էր Մանչուրիայի զավթումը, Չինաստանի դեմ նախապատրաստում էր հերթական պատերազմը, որն էլ սկսվեց 1937թ: Զավթողականության այս նոր դրսևորման դեմ Անգլիան և Ֆրանսիան վերստին փորձեցին պայքարել «չեզոքության զենքով»:

Ելնելով այս ամենից՝ հասկանալի է դառնում, որ ինչու թե Ազգերի լիգան և թե Ֆրանսիան ու Անգլիան, չձեռնարկեցին

անհրաժեշտ քայլեր, այլ տեղի տալով Գերմանիայի ու Իտալիայի սպառնալիքներին՝ պարարտ հող նախապատրաստեցին վերջիններիս կողմից հետագա զավթիչ գործողությունների համար: Կապված տերությունների վարած քաղաքականության հետ՝ հետաքրքիր են Ի.Ինյոնյուի դատողությունները. «Արևմտյան պետությունները ոչ միայն չեն հակադրում Արևելյան Եվրոպայում Գերմանիայի զավթումներին, այլ նույնիսկ նրան դիտում են որպես միջոցներից մեկը ռազմական հակամարտությունից այն կողմ մնալու համար, հյուժելով Գերմանիային Արևելքում բախումների մեջ և այդպիսով ապահովելով տիրոջ ու դատավորի իրենց դերը՝ վճռելու համար Եվրոպայի ճակատագիրը: Սակայն Անգլիան և Ֆրանսիան սխալվեցին իրենց հաշվարկներում»<sup>1</sup>:

Միջազգային իրադրության նման զարգացումները, անշուշտ, իրենց ազդեցությունը թողեցին Ֆրանս-թուրքական հարաբերությունների և առավել ևս Ալեքսանդրետի սանջաքի հակամարտության լուծման վրա: «Ֆրանս-բրիտանական դիվանագիտությունը, զավթիչների դեմ դիմադրություն կազմակերպելու պատասխանատվությունից խուսափելով, կարծես հաստատում է թուրքերի այն համոզմունքը, թե Հիտլերի ու Մուսոլինիի մեթոդների գործադրումը առավել վճռական են»<sup>2</sup>: Արդյունքում, Անկարան որոշեց դիմել ավելի կտրուկ գործողությունների: 1936թ. հունվարի 6-ին Աթաթուրքը ցուցադրական այց կատարեց թուրքական բանակի հարավային ռազմական շրջան, որտեղ չորս ժամ տևողությամբ գաղտնի խորհրդակցություն ունեցավ վարչապետ Ի.Ինյոնյուի, ներքին և արտաքին գործերի նախարարներ Շ.Կայայի ու Ռ.Արասի և

<sup>1</sup> Живкова Л. Англо-турецкие отношения в 1933-1939, с. 124.

<sup>2</sup> Բարրամյան Ա., Ալեքսանդրետի սանջաքի հարցը և միջազգային դիվանագիտությունը 1936-1939թթ., էջ 67:

<sup>1</sup> «Նորհրդային Հայաստան», 1937 հունվարի 11:

<sup>2</sup> Малафеев К. Луи Барту политик и дипломат. М., 1988, с.101.



բանակի զլխավոր շտաբի պետ Ֆեզի Չաքմաքի հետ<sup>1</sup>: Դրանից հետո լուրեր տարածվեցին, թե սանջաքի սահմանի երկայնքով թուրքերը զորք են կենտրոնացնում: Այս ամենին զուգահեռ Անկարայի կառավարությունը շարունակում էր հետևել իրեն բնորոշ վարքագծին՝ տարաբնույթ միջոցներով քաղաքական լարված մթնոլորտ պահպանել սանջաքում:

Միջազգային դրությունն այդ ժամանակ խիստ աննպաստ էր Ֆրանսիայի համար. եվրոպայում արդեն զգացվում էր պատերազմի անմիջական վտանգը, իսկ Ֆրանսիային միջերկրածովյան ավազանում անհրաժեշտ էր Թուրքիայի աջակցությունը՝ հակակշիռ ստեղծելու ֆաշիստական Իտալիայի դեմ: Հետևաբար, Ֆրանսիան պատրաստակամություն հայտնեց ընդառաջելու թուրքերի պահանջներին: Ֆրանսիայի վարչապետ Լ.Բլյումի ակտիվ նախաձեռնություններ մշակվեց սանջաքի հակամարտության «լուծման» փոխզիջումային մի ծրագիր, որտեղ ընդգրկվել էին և ֆրանսիական և թուրքական նախագծերը: Բլյումի այս նախագիծը կարելի է համարել բեկումնային սանջաքի հարցում մղված դիվանագիտական պայքարի մեջ, քանի որ դրա հիման վրա Ազգերի լիգայի խորհուրդը 1937թ. մայիսին Ալեքսանդրետի համար ընդունեց նոր կարգավիճակ և հիմնական Օրենք<sup>2</sup>:

1937թ. հունվարի 21-ին բացվեց Ազգերի լիգայի խորհրդի հերթական 96-րդ նստաշրջանը: Ֆրանսիայի և Թուրքիայի արտգործնախարարներ Ի.Դեյբուսը ու Ռ.Արասը, հիմնվելով Լ.Բլյումի մշակած սկզբունքների վրա, Լիգայի խորհրդին ներկայացրին սանջաքի հակամարտության լուծման տեսակետները: Չեռք բերվեց առաջին սկզբունքային համաձայնությունը, որին մեծապես նպաստեց Անգլիայի արտգործնախարար Ա. Իդենի դիրքորոշումը:

Հունվարի 27-ին Սանդլերը Լիգայի խորհրդի քննարկմանը ներկայացրեց «Ալեքսանդրետի սանջաքի ապագա կարգավիճակի հիմնական սկզբունքների» մասին իր պատրաստած նախագիծը, որն էլ ընդունվեց Լիգայի կողմից<sup>3</sup>: Նախագծի համաձայն սանջաքը դառնում էր «առանձին քաղաքական միավոր», ներքին գործերում նրան տրվում է որոշ ինքնավարություն, Սիրիայի հետ սանջաքը ունենալու է ընդհանուր մաքսային, տարադրամային և կապի համակարգեր: Սանջաքը պաշտոնապես մնում է Սիրիայի կազմում, և վերջինս էլ պատասխանատու է սանջաքի արտաքին քաղաքականության համար՝ թուրքերենը ճանաչվում է պաշտոնական լեզու, որևէ այլ լեզվի կիրառումը կորոշեր Ազգերի լիգայի խորհուրդը: Ֆրանսիան և Թուրքիան համատեղ պետք է երաշխավորեին սանջաքի տարածքային ամբողջականությունը: Սանջաքի համար մշակվելու էր նոր կարգավիճակ և հիմնական Օրենք (Սահմանադրություն), որի իրականացումն էլ երաշխավորելու էր Ազգերի լիգան<sup>2</sup>: Ֆրանսիական և թուրքական կառավարությունները պատասխանատու էին Լիգայի խորհրդի ընդունած որոշումների կատարման համար, սանջաքի օրենսդրությունը ներառելու էր Ալեքսանդրետի նավահանգստում թուրքական կողմի համար հատուկ օրենքներ<sup>3</sup>:

Սանջաքի նոր կարգավիճակը և հիմնական Օրենքը մշակելու համար Ազգերի լիգան ստեղծում է փորձագետների հատուկ խումբ: Ֆրանսիայի և Թուրքիայի կողմից կազմված նախագծերի, ինչպես նաև Լիգայի խորհրդի ուսումնասիրությունների հիման վրա, 1937թ. մայիսի 15-ին խումբը Լիգային ներկայացրեց իր մշակած նախագիծերը: Ըստ այդմ, Սանդլերը

<sup>1</sup> Ամբողջությամբ տե՛ս Hourani A. Syria and Lebanon, p. 356-357.

<sup>2</sup> Поцхверия В., цит. соч., с. 167.

<sup>3</sup> Hourani A. Syria and Lebanon, p. 208.

<sup>1</sup> «Известия», 08.01.1937, Москва.

<sup>2</sup> Veou P. du. La desastre d' Alexandrette, p. 175.



պատրաստեց և խորհրդի քննարկմանը ներկայացրեց սան-  
ջաքի նոր կարգավիճակի և հիմնական Օրենքի նախագծերը:  
1937թ. մայիսի 29-ին Լիգայի խորհուրդը, առանց որևէ քննար-  
կման, ընդունեց Սանդլերի մշակած այդ նախագծերը: Նույն  
օրը ստորագրվեցին ֆրանս-թուրքական մի շարք համաձայն-  
ագրեր՝

1.«Սանջաքի տարածքային ամբողջականության երաշխիքի  
մասին համաձայնագիր»:

2.«Ֆրանս-թուրքական համատեղ հռչակագիր» Սիրիայի և  
Լիբանանի տարածքային ամբողջականությունը հարգելու  
մասին:

3.Թուրք-սիրիական սահմանագծի երաշխավորման պայ-  
մանագիր»:

Համաձայն նոր կարգավիճակի՝ սանջաքը ձեռք է բերում լի-  
ակատար անկախություն ներքին գործերում և դառնում քաղ-  
աքական ինքնուրույն միավոր, ունենալու է Սիրիայից անկախ  
օրենսդիր՝ ասամբլեա-պառլամենտ, և գործադիր՝ ի դեմս սան-  
ջաքի ղեկավարի, իշխանություններ: Մաքսային, տարադրամ-  
ային և արտաքին հարաբերությունների բնագավառներում  
մնում էր Սիրիայի կազմում: Սիրիային իրավունք է տրվում  
միայն ընդհանուր գործերի շահերի համար սանջաքի կառա-  
վարությունում ներկայանալ՝ կոմիսարի միջոցով նույն ձևով  
սանջաքն էր ներկայանում կառավարությանը:

Սիրիայի իրավունքները սանջաքի ներքին և թե արտաքին  
գործերի կառավարման բնագավառում հասցվում էր նվազա-  
գույնի և իր մեջ չէր պարունակում որևէ ռեալ հիմք: Իրակա-  
նում նոր կարգավիճակի ընդունումը լիովին խզեց Սիրիա-  
Սանջաք առանց այն էլ թույլ կապը և ավելի շատ հնարավոր-  
ություն տվեց Թուրքիային թե քաղաքական առումով, թե  
բարոյապես իշխելու այնտեղ:

Թեև ժնեկյան փոխհամաձայնությունն որոշակի մեղմացրեց  
սանջաքի շուրջ ստեղծված լարվածությունը, և շահագրգիռ  
պետություններն էլ այն համարեցին հարցի «լուծում», սակայն  
կարելի է արդյոք հաջողված համարել մի համաձայնագիր,  
որը փակուղի տարավ հարցի քաղաքական կարգավորումը:  
Ժնեկյան փոխհամաձայնությունը խնդրի իրավացի և վերջնա-  
կան լուծում չէր, քանի որ այդ համաձայնության առաջին  
լուրջ թերությունը այն էր, որ նախ ոչ բանակցային գործըն-  
թացում և ոչ էլ սանջաքի նոր կարգավիճակի և Սահմանադր-  
ական օրենքի մշակման ու ընդունման գործընթացում չընդ-  
գրկվեց սանջաքի փաստական իրավական կողմերից մեկի՝  
Սիրիայի ոչ մի ներկայացուցիչ: Բացահայտ ոտնահարվեց  
Սիրիայի օրինական իրավունքները երկրի տարածքային  
ամբողջականության հարցում:

Սիրիայի կենսական շահերը կոպտորեն անտեսող ժնեկյան  
այս որոշումը բնականաբար խորը զայրույթով և ցասումով  
ընդունվեց թե սիրիական կառավարության, թե առավել ևս  
արաբ ժողովրդի կողմից: Նրանց մոտ ավելի ուժեղացավ ան-  
ապահովության և սեփական անվտանգության խոցելիության  
համոզմունքը: Ժնեկյան որոշումը կրկին ցույց տվեց Փարիզի  
անկարողությունը, կամ էլ ցանկության բացակայությունը՝  
ազատվելու մասնակի լուծումների քաղաքականությունից,  
որը խաղաղության փոխարեն ապակայունացում բերեց տար-  
ածաշրջանին:

Դեռ 1937թ. հունվարի վերջին, երբ հայտնի դարձան «սկզ-  
բունքային համաձայնության» հիմնական արդյունքները,  
Սիրիայում ծայր առավ բողոքի ցույցերի ու գործադուլների  
աննախագեպ ալիք, ամենուր ստեղծվեցին սանջաքի պաշտ-  
պանություն կոմիտեներ<sup>1</sup>: Մեծ ցույցեր տեղի ունեցան Հալե-

<sup>1</sup> Hourani A. Syria and Lebanon, p. 209, Современная Сирия, с.177.



պում, Դամասկոսում, Ալեքսանդրետում, Անտիոքում: Համաժողովրդական ցույցերին զուգընթաց բողոքի բազմաթիվ հեռագրեր ուղարկվեցին Փարիզ՝ պահանջելով սանջաքը չզիջել թուրքերին: Այս ամենը Ֆրանսիայի նկատմամբ ստեղծել էր թշնամանքի այնպիսի մթնոլորտ, որ անգամ երկրի բարձրաստիճան պաշտոնյաներն իրենց ելույթներում հրապարակայնորեն ժողովրդին կոչ էին անում զենքի դիմել. «Դամասկոսում հունվարի 26-ին տեղի ունեցող ցույցի ժամանակ մի շարք հրապարակախոսներ ժողովրդին կոչ էին անում դուրս գալ զինված պայքարի և թույլ չտալ Սիրիայի անդամահատումը»,<sup>1</sup> վկայում է Պ.Վեոն:

Կառավարող «Ազգային Դաշինք» կուսակցությունից ժողովուրդը պահանջում էր անհապաղ անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկել և վճռականորեն պայքարել սանջաքի պաշտպանության համար: Նման խտրական որոշումը չէր կարող անարձագանք մնալ Սիրիայի կառավարական շրջանակներում: Նոր կանոնադրությունը հիասթափություն առաջ բերեց ժողովրդի մեջ, իսկ սիրիական կառավարությունը կարծում էր, որ Ֆրանսիան դավաճանել է իրեն: Արդյունքում կազմվեց սիրիական կառավարական պատվիրակություն Ջ.Մարդամբեկի գլխավորությամբ, որն էլ փետրվարի 3-ին ուղևորվեց Փարիզ և Ժնև՝ Ժնևյան համաձայնության պայմանները վերանայելու առաքելությամբ: Պատվիրակությունը նախ Փարիզում տեսակցեց արտգործնախարար Ի.Դելբոսի և նրա տեղակալ Պ.Վիենոյի հետ, ապա մեկնեց Ժնև, որտեղ հանդիպեց փորձագիտական խմբի ֆրանսիացի ներկայացուցիչ Ռոբեր դը Քեի հետ: Վերջինս վստահեցրեց, որ «սանջաքը նախկինի պես կմնա Սիրիայի կազմում»: Ամեն դեպքում, այս հանդիպումներն որոշ չափով մեղմացրին սիրիական հասարակության

զայրույթը և ժամանակավորապես հանդարտեցրին երկրի ներքաղաքական լարված մթնոլորտը:

Սակայն, երբ մայիսի 27-ին սանջաքի նոր կարգավիճակի բովանդակությունն ըստ էության պարզ դարձավ, Սիրիայում ժողովրդական դժգոհության ու բողոքի ալիքը նոր թափ ստացավ: Դործադուլների ալիքը կաթվածահար արեց առևտուրը, տրանսպորտը, հասարակական կյանքը: 1937թ. հունիսի 3-ին բողոքի ալիքը տարածվեց ոչ միայն սանջաքում այլև ողջ Սիրիայում: Տասնյակ հազարավոր ցուցարարներ Հալեպում, Համայում և Դամասկոսում շրջում էին փողոցներով վանկարկելով «Ալեքսանդրետը արաբական է»<sup>1</sup>: «Ժնևյան համաձայնությունը մեզ համար հայրենազավություն է, մի՛ հավատացեք թուրքերին, անկեղծ և իրական բարեկամությունը մեզ մոտ է»,<sup>2</sup> գրում է Դամասկոսի «էլիվա» թերթը: Հունիսի 2-ին սիրիական պառլամենտը բողոքի հուշագիր ուղարկեց Ազգերի լիգային, որտեղ խստորեն դատապարտում էր Ժնևյան համաձայնագրերը. «Սիրիական պառլամենտը, ներառյալ սանջաքի բոլոր պատգամավորները, որոնք իսկապես ներկայացնում են ժողովրդին, պաշտոնապես հայտարարում է, որ Սիրիայի գերիշխանությունից սիրիական հայրենիքի որևէ մաս պոկելու փորձը կհանդիսանա աներկբայորեն կոպիտ խախտում մի սահմանադրության, որը հաստատվել է հենց Ազգերի լիգայի կողմից, ինչպես նաև մի դաշնագրի, որի թանաքը դեռևս թաց է: Սիրիական ազգը չի կարող ճանաչել որևէ լուծում, որը խախտում է սիրիական միասնությունը և վճռել է պաշտպանվել իր հավատի ու իրավունքի բոլոր ուժերով»<sup>3</sup>:

<sup>1</sup> Բայրամյան Ա., Ալեքսանդրետի սանջաքի հարցը և միջազգային դիվանագիտությունը 1936-1939թթ., էջ 85:

<sup>2</sup> «Արազ», Բուխարեստ, 1937 փետրվարի 11:

<sup>3</sup> Բայրամյան Ա., նշվ. աշխ., էջ 84-85:

<sup>1</sup> Veou P. du. Le Desastre, p. 66.



Սանջաքի համար ճակատագրական այս օրերին ինչպես Սիրիայի, այնպես էլ Ալեքսանդրետի ողջ հայությունը, արաբ ժողովրդի կողքին հանդես եկավ ի պաշտպանություն սանջաքի: Դրա վառ վկայությունն է հայության հեռագիրը Սիրիայի բարձրագույն կոմիսարին և Ազգերի լիգային. «Մենք՝ հայ համայնքի ներկայացուցիչներս, որ Սիրիան ընտրեցինք իբր երկրորդ հայրենիք, հույս ունենք, որ միշտ կատարյալ համերաշխությամբ կապրենք Սիրիայի արաբների հետ: Բարձր ժողովին կհայտնենք մեր վախճ Սիրիայի մեկ մասի՝ Ալեքսանդրետի սանջաքի վերաբերյալ, որ թուրքերը առանց որևէ իրավունքի ուզում են անջատել Սիրիայից: Համոզված լինելով հանդերձ Սանջաքի նկատմամբ սիրիացիների տեսակետի իրավացի լինելու մեջ՝ քաղաքակիրթ աշխարհի ուշադրությունը կհրավիրենք այն աղետալի հետևանքների վրա, որ պիտի վիճակվի Ազգերի լիգայի կողմից, սանջաքի մեջ տեղավորված հազարավոր հայերին<sup>1</sup>, եթե Թուրքիայի միջնորդության իրավունքը ճանաչվի: Հետևաբար, Բարձր ժողովին կհայտնենք մեր անխոսք նվիրումը մեր սիրիական հայրենիքին և մասնավորապես մեր հայրենիքի այն անբաժան գավառին՝ Ալեքսանդրետի սանջաքին, և կխնդրենք Ազգերի ազնիվ լիգային, որ սանջաքի խնդրով զբաղվելու ժամանակ նկատի առնեն մեր զգացմունքները»<sup>2</sup>: Հայերի վերաբերմունքի մասին նշել են թե Սիրիայի պետական գործիչները, թե արաբ հեղինակները: «Մենք շատ գոհ ենք հայերից, որովհետև նրանք Սանջաքի խնդրի առթիվ վեհանձն կեցվածք ունեցան և լայնորեն գործ-

<sup>1</sup> Անտիոքի (Սանջաքի) թեմի Հայոց առաջնորդ Խաղ Արք. Աջապահյանը գրում է, որ Սանջաքի մեջ այդ տարիներուն կային 35-000 էն ավելի Հայ Առաքելական Եկեղեցի զավակներ, կային նաև 5-6 հազար կաթողիկե և բողոքական Հայեր»: **Բայրամյան Ա.**, նշվ. աշխ., էջ 29:

<sup>2</sup> «Արազ», Բուխարեստ, 1937 փետրվարի 18:

ակցեցին մեզ հետ՝ կատարյալ անկեղծությամբ նվիրվելով սիրիական տեսակետին: Սանջաքի մեջ հայերի և արաբների գործակցությունը ու եղբայրությունը մեծապես գոհացրել է մեզ: Թուրքական թերթերը ուզածի չափ կարող են գրել հայերի մասին, վստահ եղե՞ք հավատացող չկա, արաբները շատ լավ ճանաչում են հայերի անկեղծությունն ու հայրենասիրությունը և այլևս չեն կարող հավատալ նման հերյուրանքների»<sup>1</sup>, հայտարարում էր Սիրիայի դատական և կրթական նախարար դոկտոր Ա. Ռահմանը:

Բեյրութի «Լա Սիրի» պարբերականը, անդրադառնալով սանջաքի հայության դիրքորոշմանը, գրում է. «Հայտնի է, որ սանջաքի հայ տարրը միացած է սիրիական թեզին և պայքարում է թուրքական տեսակետների դեմ»: Պարբերականը նաև մտավախություն է հայտնում հայության ճակատագրի հարցում. «Եթե սանջաքի նոր վարչակարգը որևէ ձևով հաստատի Թուրքիայի գերակայությունը, ապա հայերը այլևս ապահովության մեջ չեն լինի և կգտնվեն նոր արտագաղթի վտանգի տակ: Սիրիայում, որտեղ ջարդված ու կոտորված ազգի մի քանի ցրված անդամներ կարողացել են վերապրել, պետք է ամեն սպառնալիքից ազատ լինեն»<sup>2</sup>:

Թուրքիայում, ժնկյան փոխզիջումը ընդունվեց մեծ ցնծությամբ, այն համարվեց թուրքական դիվանագիտության հաղթանակ: Քեմալը շնորհավորական հեռագիր ուղարկեց վարչապետ Ինյունյունին՝ դիվանագիտական հաջողության համար: Իսկ Ինյունյուն էլ գոհունակությամբ հայտարարեց, որ «այս խնդիրը գտել է իր բարեհաջող լուծումը»<sup>3</sup>: Հունիսի 14-ին Թուրքիայի մեջլիսը հաստատեց սանջաքի նոր կարգավիճակը,

<sup>1</sup> «Արազ», Բուխարեստ, 1937 մայիսի 23:

<sup>2</sup> «Արազ», Բուխարեստ, 1937 մարտի 28:

<sup>3</sup> История дипломатии, Т. 3, с. 701.



հիմնական օրենքը և հարակից ֆրանս-թուրքական պայմանագրերը: Նոյեմբերի 1-ին թուրքական մեջլիսի բացման առթիվ ելույթում Աթաթուրքը ասում է. «Հաթայի ժողովուրդը անպայման կհասնի այն երջանիկ ու անկախ կառավարմանը, որին արժանի է: Հաթայի նոր կարգավիճակը ուժի մեջ մտնելուն կարճ ժամանակ է մնում»<sup>1</sup>:

Այս համատեքստում հարկ ենք համարում շեշտել, որ համաձայն կարգավիճակի 55-րդ հոդվածի, սանջաքի հիմնական օրենքը և նոր կարգավիճակը ուժի մեջ պետք է մտնեն 1937թ. նոյեմբերի 29-ին, պայմանով որ ֆրանսիական դաշնագիրը արդեն ուժի մեջ մտած լինի: Սակայն դա ամենևին չխանգարեց Մենեմենչիօղլուն հայտարարելու, որ «սանջաքի նոր կարգավիճակը և հիմնական օրենքը ինքնաբերաբար ուժի մեջ կմտնեն նույն ամսի 29-ին», - գրում է Վեոն<sup>2</sup>: 1937թ. ֆրանսիական մանդատը դեռ շարունակվում էր Սիրիայում և ֆրանս-սիրիական պայմանագիրը ուժի մեջ չէր մտել, այսուհանդերձ, Ֆրանսիայի մանդատային իշխանությունները, տուրք տալով ներքին և արտաքին մի շարք գործոնների, տեղի տվեցին թուրքերի պահանջներին և 1937թ. նոյեմբերի 29-ին պաշտոնապես հայտարարեցին՝ սանջաքի նոր կարգավիճակն ու հիմնական օրենքը ուժի մեջ են մտնելու:

«Մենք հակաիրավական քայլ կատարեցինք՝ հայտարարելով, որ նոր կարգավիճակը և հիմնական Օրենքը ուժի մեջ են մտնում»,<sup>3</sup> գրում է Պ. Վեոն: Քաղաքական այս նոր սխալը էլ ավելի խորացրեց հակաֆրանսիական ատելությունն ու թշնամանքը Սիրիայում և հատկապես Ալեքսանդրետի սանջաքում, որն արտացոլվեց 1938թ. իրադարձությունների ժամանակ:

<sup>1</sup> *Բայրամյան Ա.*, նշվ. աշխ., էջ 87:

<sup>2</sup> Veou P. du. Le Desastre, p. 79-80.

<sup>3</sup> Veou P. du. Les chetiens en Peril au Moussa-Dagh. Paris, 1939, p. 28-29.

Համաձայն նոր կարգավիճակի և հիմնական Օրենքի դրույթների անցկացվելու էին սանջաքի ասամբլեայի ընտրություններ: Դրանք տեղի են ունենալու համամասնական ներկայացուցչական սկզբունքի հիման վրա՝ երկաստիճան համակարգով<sup>1</sup>: Հետևաբար, հիմնական իրադարձությունները ծավալվելու էին ոչ թե քվեարկության, այլ ըստ համայնքային ցուցակների, ընտրողների ցուցակագրման ժամանակ: Սանջաքում հանրաքվե-ընտրությունները միաժամանակ մարդահամար-ժողովրդական հարցում էին այն մասին, թե սանջակի ազգաբնակչությունը իր մեծամասնությամբ ցանկանում է պահպանել միասնությունը Սիրիայի հետ, թե՞ ընդունելով նոր կարգավիճակը՝ կհակվի դեպի Թուրքիան: Ալեքսանդրետի սանջաքում ընտրությունները կազմակերպելու համար, Ազգերի լիգայի որոշմամբ 1937թ. հոկտեմբերի 4-ին ստեղծվում է հատուկ հանձնաժողով, որը մշակելու էր ընտրությունների կանոնադրությունը: 1937թ. դեկտեմբերի 10-ին հանձնաժողովը կիզայի խորհրդի նախագահին ներկայացրեց այդ կանոնադրությունը, որն էլ ընդունեց այն: Դրա համաձայն ընտրությունները անցկացվելու էին 1938թ. մարտի 28-ին և ապրիլի 12-ին: Ընտրական այս կանոնադրությունը, սակայն չգոհացրեց թուրքերին: Ռ.Արասը բողոքի հեռագրեց կիզայի խորհրդի գլխավոր քարտուղարին, որում մասնավորապես ասվում էր, որ թուրքական կառավարությունը դժգոհ է փորձագետների կոմիտեի կողմից մշակված ընտրական կանոնադրությունից, հատկապես ընտրողների գրանցման գործընթացից և պահանջում ընտրական կանոնադրությունը փոփոխել և ընտրողին իրավունք տալ գրանցվել ցանկացած համայնքի ցուցակում անկախ ազգային-լեզվական ու դավանական պատկանելիու-

<sup>1</sup> Toynbee A. Survey of international Affairs, p. 481.



թյունից<sup>1</sup>: Խնդիրն այն, որ կանոնադրությունը արգելում էր տվյալ համայնքի ընտրողին գրանցվելու ուրիշ համայնքում, այդ պարագայում թուրքերին ոչ մի կերպ չէր հաջողվի պառլամենտում ստանալ տեղերի մեծամասնություն: Այս անգամ ևս Ֆրանսիան նահանջեց և համաձայնեց բավարարել թուրքերի ապօրինի պահանջները:

Ընտրական կանոնադրության նման «վերամշակումը» թուրքիայի ցանկացած ձևով, 1937թ. մայիսի 29-ի ժնկյան կարգավորման տրամաբանական շարունակությունն էր: Սա մեկ անգամ ևս հաստատեց այն համոզմունքը, որ ֆրանսիացիները ի վերջո սանջաքը զիջելու են՝ ելնելով իրենց շահերից: «1940թ-ից առաջ սանջաքը կկցվի թուրքիային, իսկ այդ կցումը անհրաժեշտ է, որպեսզի թուրքիան Գերմանիայի կողմը շանցնի», - հայ համայնքի ներկայացուցիչներից Նդիա Բեդեկյանին գաղտնի ասում է՝ ընտրական հանձնաժողովի բելգիացի անդամ Ժ.Լագրանժը<sup>2</sup>:

Սանջաքի հանրաքվե-ընտրություններին թուրքերի պահանջած գրանցման ձևի ընդունումը բնականորեն հանգեցնում է այն բանին, որ սանջաքի բնակչությունը բաժանվում է երկու հակամարտ խմբավորման՝ թուրք անջատողական և նրանց հակառակորդ: Սանջաքը թուրքիային կցելու քաղաքական հենքով ընտրապայքար իջած թուրք անջատողականները, ղեկավարվելով ու ֆինանսավորվելով անմիջապես Անկարայից, ընտրապայքարում իրենց դրսևորում էին ազդեցիվ քաղաքական խմբավորում: Անկարան հավուր պատշաճի հոգ էր տանում նոր, կարողունակ և վստահելի «քաղաքական» ուժերի մասին: Մայրահեղ անջատողականների շարքերը մշտապես համալրվում էին թուրքիայից ուղարկված «ընտրողներ-

րով»: «Ժողովրդի ձայն» թերթը հայտնում է, որ 1938թ. փետրվարին քեմալական կառավարությունը սանջաք է ուղարկել 4000 թուրք<sup>1</sup>: «Թուրքիայից ուղարկված «ընտրողների» թիվը 1938թ. մայիսին արդեն հասնում էր 25000-ի, որոնք անպատիժ մնալով դիմում էին բաղմաթիվ օրինազանցությունների», - վկայում է Վեուն<sup>2</sup>:

Թուրք անջատողականների պարբերաբար կազմակերպած խառնակչությունները, ստեղծված վախի ու ահաբեկման մթնոլորտն ավելի ամրապնդեցին սանջաքի պաշտպանների համերաշխությունը և համագործակցությունը: Նրանք քաջ գիտակցում էին, որ եթե թուրք անջատողականներին հաջողվի սանջաքի պառլամենտում ստանան մեծամասնություն, ապա դա կնշանակի սանջաքի կցումը թուրքիային: Արվում էր ամեն ինչ, որպեսզի հնարավորություն տրվեր հազարավոր սանջաքցիների վերադառնալ հայրենիք և մասնակցել ընտրություններին: Սանջաքում հանրաքվեի աշխատանքները սկսվեցին 1938թ. մայիսի 3-ին: Սակայն գրանցումների հենց առաջին օրվանից արդյունքները խիստ բացասական էին թուրքերի համար: Նրանց դեմ քվեարկեցին ոչ միայն քրդերն ու թուրքմենները, այլև մեծ թվով թուրքեր: Մայիսի 22-ին ավարտվում էին ցուցակագրման հիմնական աշխատանքները և հայտնի է դառնում, որ թուրքական կողմը ջախջախիչ պարտություն է կրել: Ընտրողների 60 տոկոսից ավելին դեմ էր արտահայտվել նրանց: «Թուրքիայի և Ֆրանսիայի միացյալ ջանքերը ձախողվեցին, - գրում է Դյու Վեուն, - սանջաքի բնակչության 65 տոկոսը դեմ արտահայտվեց թուրքիային միանալու որոշմանը<sup>3</sup>: Թուրքերի կողմից օրինականության կոպիտ խախտումները, բռնաճնշումների քաղաքականությունը և նույնիսկ իրենց

<sup>1</sup> «Ժողովրդի ձայն», Պէյրուս, 1938 փետրվարի 13:

<sup>2</sup> Veou P. du. Le Desastre, p. 93.

<sup>3</sup> Veou P. du. Le Desastre, p. 88.

<sup>1</sup> Hourani A. Syria and Lebanon, p. 210.

<sup>2</sup> Բայրամյան Ա., նշվ. աշխ., էջ 94:



պարտադրած կանոնադրության կիրառումը, փաստորեն չտվեց սպասված արդյունք, վերստին հարկ էր դիմել դիվանագիտական կտրուկ գործողությունների: Մայիսի 21-ին Անկարան Փարիզ հղեց վերջնագրի բնույթ ունեցող հուշագիր:

«Ֆրանսիան հասկանում է միայն Հիտլերի լեզուն, այսպես շարունակելով Ֆրանսիացիները Թուրքիային պարտադրում են խոսել այնպես, ինչպես կխոսեր Գերմանիան», - գրում է «Ջումհուրիեթը»<sup>1</sup>: 1938թ. մայիսի 31-ին մեջլիսում Ռ. Արասը ամբողջ մեղքը բարդեց մանդատային իշխանությունների վրա՝ հայտարարելով, որ նրանք կոպտորեն միջամտում են ընտրական գործընթացներին՝ բնակչության ոչ թուրք հատվածին զրկում ընտրության անկախությունից: Ֆրանսիական կառավարությունը հայտնվեց երկընտրանքի առջև՝ շարունակել ընտրական գործընթացը, հասցնել ավարտի և օրինական կերպով հրապարակել արդյունքները, որ նշանակում էր հրաժարվել ժնկյան փոխհամաձայնությունից, թե աչքաթող անել թուրքերի բացահայտ անօրինական գործողությունները և բավարարել նրանց անհիմն պահանջները: Սակայն միջազգային նման լարված իրավիճակում, երբ առկա էր վերահաս պատերազմի իրական վտանգ, Ֆրանսիան գերադասեց վերջնականապես չընդհարվել Թուրքիայի հետ:

Այդուհանդերձ, թե միջազգային բարդ իրավիճակը, թե Թուրքիային իր դաշնակիցների շարքում տեսնելու Ֆրանսիայի ցանկությունը, ամենևին չի արդարացնում վերջինիս անօրինական գործելաոճը: Այս գործողություններով ավելի ամրապնդվեց այն համոզմունքը, որ Թուրքիայի կողմից Ալեքսանդրեաթի սանջաքի բռնազավթման ամբողջ պատասխանատվությունը ընկնում է Ֆրանսիայի վրա:

<sup>1</sup> Чжу Кэ-Жоу. цит. соч., с. 17.

Ժ.Բոնեն հրահանգում է բարձր կոմիսարին՝ բոլոր միջոցներով սանջաքի ընտրական գրանցումներում ապահովել թուրքական մեծամասնություն: Հունիսի 3-ին Փարիզում Թուրքիայի դեսպան Ս.Դավազը և Ժ.Բոնեն հանդիպեցին, որտեղ վերջինս պատրաստակամություն հայտնեց քննարկել թուրքերի նոր պահանջները: Նույն օրն սանջաքում մտցվեց արտակարգ ռազմական դրություն, պաշտոնից հեռացվեց Ֆրանսիական պատվիրակ Ռ.Գառոն, ով պաշտոնավարության ընթացքում չենթարկվեց անգլո-ֆրանսիական դիվանագիտության և Անկարայի ապօրինի պահանջներին<sup>1</sup>: Ավելին,- ինչպես հավաստում է Ա. Թոյնբին,- պաշտոններից ազատվեցին նաև այլ պետական պատասխանատու անձինք, և նրանց փոխարեն նշանակվեցին ազգուսթյամբ թուրք պաշտոնյաներ: Թուրք բանտարկյալներն ազատ արձակվեցին՝ փոխարենը ձերբակալվեցին մի շարք համայնքների առաջնորդները<sup>2</sup>:

Ֆրանսիայի և Թուրքիայի միջև, դեռևս 1937թ. դեկտեմբերի 16-ին Անկարայում սկսվել էին ռազմական զաղտնի բանակցություններ, որոնք շարունակվեցին շուրջ 7 ամիս (1938թ. հունիսի 13-ին դրանք տեղափոխվել էին Ալեքսանդրեաթի սանջաք) և ավարտվեցին հուլիսի 3-ին ֆրանս-թուրքական ռազմական համաձայնագրի ստորագրումով: Այն թուրքական զորքին թույլ էր տալիս տալ մտնել սանջաք՝ Ֆրանսիական ուժերի հետ կարգ ու կանոն հաստատելու նպատակով: Հուլիսի 4-ին Անկարայում ստորագրվեց «Ֆրանս-թուրքական բարեկամության դաշինք», որով կողմերը պարտավորվում էին չմտնել որևէ խմբավորման մեջ, որը ուղղված կլինի կողմերից մեկի

<sup>1</sup> Գառոն ջանում էր թուրքերի դեմ հանել ոչ միայն արարներին ու շերքեզներին, այլև քրիստոնյաներին, հիմնվելով «Ջումհուրիեթ» թերթի վրա գրում է «Արազը» 1937թ. դեկտեմբերի 12-ին:

<sup>2</sup> Toynbee A. Survey of international Affairs, p. 485.



դեմ և նախահարձակ լինելու դեպքում օգնություն ցույց չտալ հակառակորդ կողմին»: Թուրքական զորքի մուտքը սանջաք (հուլիսի 5) կանխորոշեց ոչ միայն պառլամենտական ընտրությունների ելքը, այլև արաբական այդ տարածքը Թուրքիային կցելու ողբերգության առաջին փուլն էր: Բարձրագույն կոմիսար Գ. Պյոուն, անդրադառնալով համաձայնագրին, իրավացի նշում է. «Ֆրանսիան այս հարցում մանևրում է միայն նահանջներով»<sup>1</sup>: Ֆրանս-թուրքական գաղտնի գործարքը Սիրիայում և սանջաքում նոր հուզումների ու բողոքի ալիք բարձրացրեց: Ողջ սիրիական ժողովուրդը և սանջաքի բնակչությունը խիստ քննադատության ենթարկեցին Ազգային Բլոկի կառավարությանը՝ սանջաքի պաշտպանության գործում եռանդուն չգործելու համար: Սակայն, սիրիական կառավարության հնարավորությունները խիստ սահմանափակ էին՝ Սիրիան չունեցող ազգային բանակ, իսկ Սիրիայի արտաքին քաղաքականությունը, այդ թվում սանջաքի հարցի կարգավորումը շարունակում էին տնօրինել Ֆրանսիայի ղեկավարները: Նկատի ունենալով այդ հանգամանքը՝ կիսում ենք անգլիացի հեղինակ Ա. Հուրանի այն կարծիքը, որ «սիրիական կառավարությունը ոչինչ չէր կարող անել, բացի բողոքելուց»<sup>2</sup>: Իսկապես այդ պայմաններում, սիրիական ազգային կառավարությունը, հնարավորության սահմաններում, դիմեց հնարավոր բոլոր միջոցների՝ սանջաքը Սիրիայի սահմաններում պահելու համար:

Ֆրանսիական որոշ քաղաքական գործիչներ ևս քննադատեցին Ֆրանսիայի վարած քաղաքականությունը: Այսպես, 1938թ. հունիսի 16-ին ելույթ ունենալով խորհրդարանում Գ. Պերին կոչ արեց վերականգնել այն վստահությունը, որ կար

Ֆրանսիայի և արաբական երկրների միջև: Նա դեմ արտահայտվեց արաբների հաշվին իրականացված Ֆրանսիայի և Թուրքիայի գործարքին: «Եթե Ֆրանսիան չկարողանա արաբների հետ վարել համագործակցության քաղաքականություն, ապա դա միայն կնպաստի Միջերկրածովյան արևելյան ափերը, որպես ֆաշիստական զավթումների՝ ասպարեզ օգտագործմանը»<sup>1</sup>:

Լիզայի ընտրական հանձնաժողովն ուներ սանջաքում ընտրությունների նախապատրաստման և անցկացման առաքելություն, սակայն մի կողմից թուրք անջատողականների գործունեությունը՝ զանգվածային հետապնդումներ և բացահայտ բռնաճնշումներ, մյուս կողմից էլ տեղական իշխանությունների վարած զիջողական քաղաքականությունը, ոչ մի հնարավորություն չէին տալիս ընտրական գործողությունները բնականոն պայմաններում շարունակելու համար: Հետևաբար, Ազգերի լիգայի ընտրական հանձնաժողովը, դրությունը գտնելով անհամատեղելի իր առաքելության կատարման հետ, 1938թ. հունիսի 20-ին հեռագրեց Լիզայի ընդհանուր քարտուղարին, փաստելով. «Տեղական իշխանությունների դիրքը մայիսի 31-ից սկսած, ընտրությունները կեղծելու վտանգ է ստեղծում սպառնալով բնակչության ամենամեծ հատվածի դիրքորոշման ազատությունը»<sup>2</sup>: Հանձնաժողովի այս մտավախությունը անտեսվեց ոչ միայն տեղական իշխանությունների, այլև ֆրանսիական կառավարության կողմից: Արդյունքում, 1938թ. հունիսի 29-ին Լիզայի ընտրական հանձնաժողովն ընդհատեց աշխատանքը և հեռացավ սանջաքից: Ակնհայտ դարձավ, որ Ազգերի լիգան նույնիսկ ի զորու չէ կենսագործել ընդունած հիմնական Օրենքը, ուստի զարմանալի չէ, որ թուրքական

<sup>1</sup> Gabriel P. Deux Annees au Levant. Paris, 1952, p. 51.

<sup>2</sup> Hourani A. Syria and Lebanon, p. 209.

<sup>1</sup> Политика великих держав на Балканах и Ближнем Востоке, с. 68.

<sup>2</sup> Բայրամյան Ա., նշվ. աշխ., էջ 108:



կառավարությունը դիմեց նոր կամայականության. Ջևադ Աչքբալընին նշանակվեց Անկարայի լիազոր ներկայացուցիչ՝ Ֆրանսիացի պատվիրակ Կոլեին համահավասար իրավունքներով<sup>1</sup>: Նման պայմաններում, երբ ընտրողների գրանցման աշխատանքները կատարող խումբը կազմված էր 3 թուրք և 1 Ֆրանսիացի անդամից, իսկ տեղական հաշվառման վարչության տեղերը մեծամասամբ զբաղեցնում էին թուրքերը, լիովին հասկանալի էր, թե հունիսի 22-ին վերաբացված ընտրական տեղամասերի գործունեությունը ի՞նչ ավարտ պետք է ունենար: Տեղի ունեցավ թուրք ընտրողների «տոկոսային աճ»՝ հասնելով 63%,- գրում է Ա. Թոյնբին<sup>2</sup>: Անտեսելով ազգաբնակչության ճնշող մեծամասնության օրինական իրավունքները՝ օգոստոսի 30-ին հրապարակվեցին ընտրական արձանագրությունների նոր ցուցակներ՝ թուրքերը խորհրդարանում կազմեցին մեծամասնություն՝ ստանալով այդքան սպասված 22 աթոռ՝ 40 տեղից: Միանշանակ «թուրքական ներկայությունը» Հաթայում<sup>3</sup> Անկարայի օգտին էր, քանի որ ընտրությունների ելքի վրա մեծապես ազդեց սանջաքում գտնվող թուրքական զինուժի ներկայությունը, որը, ինչպես գիտենք, Ալեքսանդրետի տարածքում, Ֆրանսիական ուժերի հետ համատեղ «կոչված էր պահպանելու» կարգ ու կանոնը սանջաքում<sup>4</sup>: «Հաթայի նախագահ» Թայֆուր Սյոքմենը նույնպես խոստովանում է. «Մեր հաջողության գլխավոր պայմանը հանդիսացավ Հաթայում թուրքական զորքերի ներկայությունը»<sup>5</sup>: Փաստորեն,

<sup>1</sup> Sökmen T. Hatay'ın Kurtuluşu İçin Harcanan Çabalar. Ankara, 1978, s. 63.

<sup>2</sup> Toynbee A. Survey of international Affairs, p. 488.

<sup>3</sup> «Հաթայ» անվան ծագման մասին տե՛ս Baskin O. s. 280.

<sup>4</sup> Թուրքական զորքերը 1938 թ. հուլիսի 5-ին ներխուժեցին Հաթայ: Arcayürek C. op. cit., s. 38.

<sup>5</sup> Sökmen T. op. cit., s. 96. Veou P. du. Les cheretiens, p. 197.

թուրքական և ֆրանսիական սվինների ներքո անցկացված կեղծ ընտրությունների արդյունքում, բնակչության միայն 25-30% կազմող թուրք համայնքը պառլամենտում ձևավորեց մեծամասնություն: Սա, արդեն իսկ խոսում է այն մասին, որ ընտրություններն իսկապես կեղծված էին և բեմականացված: Հետևաբար, պառլամենտում թուրքերի ձևավորած մեծամասնությունը չէր արտացոլում սանջաքի բնակչության իրական պատկերը: Այս երկարատև բեմադրության ավարտից հետո, 1938թ. սեպտեմբերի 2-ին Անտիոքում հրավիրվեց սանջաքի նորընտիր ասամբլեայի առաջին գումարումը, Ալեքսանդրետի սանջաքը վերանվանվեց «Հաթայի պետություն», որի նախագահ «ընտրվեց» Թայֆուր Սյոքմենը:



### 3. «Հաթայի պետության» հռչակումը և Ֆրանսիայի դիրքորոշումը

«Հաթայի պետության» գոյությունն առաջին օրից ինչպես Անկարան, այնպես էլ Հաթայի կառավարությունը սկսեցին ավելի մեծ եռանդով վարել սանջաքի թուրքացման քաղաքականություն, ինչպես Վեոն է գրում. «Սանջաքը հանձնվեց թուրքիայի բացարձակ իշխանությանը»<sup>1</sup>: Ակնհայտ էր, որ թուրքիան ընդունել էր սանջաքի միացման քաղաքական կուրս և Ալեքսանդրետում թուրքական զորքերի ներկայությունն այդ նպատակի փուլերից մեկն էր:

Նախ կազմվեց «Հաթայի կառավարություն», որի ղեկավար նշանակվեց, ինչպես պետք էր սպասել, թուրք Աբդուրրահման Մելեքը, ով մինչ այդ սանջաքի ներքին գործերի նախարարն էր՝ 1938թ. հունիսից: Հաթայի նոր մայրաքաղաք Ալեքսանդրետի փոխարեն հռչակվեց Անտիոքը, որը բնակեցված էր մեծմասամբ թուրքերով: Իսկ 1938թ. սեպտեմբերի 7-ի նիստում «պառլամենտը միաձայն» հաստատեց սանջաքի նոր կարգավիճակը և հիմնական Օրենքը, հետո էլ թուրքական դրոշը շատ քիչ տարբերությամբ (սպիտակ աստղի կենտրոնում ավելացվեց կարմիր շրջանակ) ընդունվեց Հաթայի դրոշ, իսկ թուրքիայի հիմնը դարձավ պետության օրհներգ: Ղեկավարվելով Անկարայի ցուցումներով՝ Հաթայի ղեկավարները արագորեն առաջ էին տանում սանջաքի թուրքացումը բոլոր ուղղություններով: Պատասխանատու ղեկավար պաշտոններից հեռացվեցին ֆրանսիացի աստիճանավորները, նշանակվեցին թուրքերը: «Վերադարձող ֆրանսիացի պաշտոնյաները իրենց բոլոր իրավունքները զիջեցին թուրքերին», - գրում է «Արաբերը»<sup>2</sup>: Վեոն նույնպես շեշտում է. «Մենք կորցրինք մի նահանգ, որի

ուզմագիտական, բարոյական կարևորությունը այնպիսին է, որ իշխում է Արևելյան Միջերկրականի, Սուեզի և Հյուսիսային Աֆրիկայի վրա՝ որոշելով խաղաղությունը կամ պատերազմը: Խաղաղով այս խաղը՝ մենք վտանգում ենք խաղաղությունը»<sup>1</sup>: Միրիայում և Լիբանանում Ֆրանսիայի բարձրագույն կոմիսար Գ.Պյոուն ևս խոստովանում է. «Հաթայի պետության զիջումը թուրքիային գործնականում արդեն կատարված է»<sup>2</sup>:

Ըստ 1938թ. ֆրանս-թուրքական պայմանագրի՝ թուրքերը սանջաքում պետք է ունենային 2500 զինվոր, որքան որ ֆրանսիացիները, սակայն, ինչպես փաստում է Վեոն. «Սանջաքում թուրքական կառավարությունը կենտրոնացրել էր մեծ քանակությամբ զորքեր՝ շուրջ 8000 զինծառայող»<sup>3</sup>:

Այսինքն, թուրքական կառավարությունը և Հաթայի ղեկավարները սանջաքի «թուրքացման» գործում հասել էին այնպիսի նվաճումների, որ ոչ սանջաքի նոր կարգավիճակը, ոչ 1938թ. ֆրանս-թուրքական համաձայնագրերն այլևս հնարավոր չէր կիրառել, մնում էր միայն փաստական այդ իրավիճակին երկկողմանի պաշտոնական ճանաչում տալ, որի համար էլ շուտով սկսվեցին նոր բանակցություններ:

Սակայն մինչ այդ բանակցություններին և թուրքիային՝ Ալեքսանդրետի վերջնական կցումը հաստատող պայմանագրին անդրադառնալը, համառոտակի նշենք, թե «Հաթայի պետությունը» միջազգային իրավունքի տեսանկյունից ինչպիսի՞ իրավական հիմքեր ուներ և ինչքանով էր համապատասխանում մանդատային տերություն Ֆրանսիայի ստանձնած միջազգային պարտավորություններին և վերջապես սանջաքի նոր կանոնադրությունը և հիմնական Օրենքին:

<sup>1</sup> Veou P. du. Cheritien, p. 162.

<sup>2</sup> «Արաբեր», Նիւ Եորք, 1939 հունվարի 10:

<sup>1</sup> «Արաբեր», Նիւ Եորք, 1939 հունվարի 14:

<sup>2</sup> Gabriel P. op. cit., p. 75.

<sup>3</sup> Veou P. du. Cheritien, p. 146.



«Հաթայի պետության» հռչակումը միջազգային իրավունքի սկզբունքների կոպիտ խախտում էր, քանի որ նախ այն կատարվեց Սիրիայի ժողովրդի ու պետության կամքին հակառակ և սիրիական պետության իրավական ու փաստական գերիշխանությանը ենթակա տարածքում: «Հաթայի» պետությունը հռչակվեց առանց Ազգերի լիգայի համաձայնության, անտեսվեցին սանջաքի վերաբերյալ նրա ընդունած մի շարք իրավական ակտեր: <sup>1</sup> «Հաթայի պետության» հռչակումը հակաիրավական քայլ էր նաև այն պատճառով, որ Ֆրանսիան իրավասու չէր խախտել մանդատային երկրի տարածքային ամբողջականությունը և Սիրիային զրկել այդ շրջանի վրա նրա ունեցած օրինական իրավունքներից: Այս առթիվ Զ.Սպերդուիտին նշում է. «Հաթայի պետության ստեղծումը միջազգային իրավական որևէ հիմքից զուրկ է. առաջին հերթին հենց այն պատճառով, որ սանջաքի վերացումը անկախ պետության մանդատային պետության իրավասություններից զուրկ է, և բացահայտորեն խախտում է «Ա» տիպի մանդատների հիմնական սկզբունքները ու մանդատի խարտիայի 4-րդ հոդվածի դրույթները» <sup>2</sup>:

«Հաթայի պետության» հռչակումը նաև հակասահմանադրական քայլ էր, քանի որ այդ պետությունը հռչակող պառլամենտը, ինչպես տեսանք, չէր ընտրվել սանջաքի բնակչության կողմից ժողովրդավարական ազատ ընտրությունների միջոցով: Այն փաստը, որ պառլամենտում բնակչության միայն 25-30% կազմող թուրք համայնքը կազմում էր մեծամասնությունը, խոսում էր այն մասին, որ Հաթայի պառլամենտը չուներ

<sup>1</sup> Ֆրանսիայի ԱԳՆ սկզբում կտրուկ դեմ էր, նշելով որ «Ֆրանսիան չի կարող միակողմանի խախտել Ազգերի լիգայի կանոնադրությունը»: Տե՛ս **Фомин А. М.** Франко-турецкие отношения и сирийский вопрос после Мюнхена, с. 59.

<sup>2</sup> **Բայրամյան Ա.**, նշվ. աշխ., էջ 120:

ներկայացուցչական բնույթ, չէր արտահայտում սանջաքի բնակչության իրական պատկերը: Դրանք հակասում էին նախ ժողովրդավարության մի շարք դրույթներին, սիրիական սահմանադրությանը, և Ազգերի լիգայի կողմից ընդունած սանջաքի հիմնական օրենքին և ընտրական կանոնադրությանը: «Հաթայի պետության» հռչակման ակտը մերժվեց և դատապարտվեց Սիրիայի ազգային կառավարության, ժողովրդի բոլոր խավերի ու քաղաքական խմբավորումների կողմից:

Հասկանալու համար, թե դիվանագիտական և քաղաքական ի՞նչ գործոններ հարկադրեցին Ֆրանսիային հերթական անգամ նահանջել իրավական ամուր դիրքերից, ուսումնասիրենք Ալեքսանդրետի հակամարտության շրջանում միջազգային հարաբերությունները, դրանք որքանով էին նպաստավոր Ֆրանսիայի համար և վերջապես Ալեքսանդրետի սանջաքի հարցի «կարգավորման» գործում ի՞նչ ազդեցություն ունեցան եվրոպական տերությունների վարած քաղաքականությունը:

Անգլիան և Ֆրանսիան Գերմանիային սիրաշահելու համար շարունակեցին վարել թողտվության և «չմիջամտելու» քաղաքականություն <sup>1</sup>: Նրանք հերթական անգամ պատրաստակամություն հայտնեցին բավարարել Հիտլերի պահանջները Սուդեթի մարզի վերաբերյալ: 1938թ. սեպտեմբերի 30-ին Մյունխենում Ն.Չեմբեռլենը, է.Դալադիեն, Ա.Հիտլերը և Բ.Մուսոլինին ստորագրեցին Մյունխենյան համաձայնագիր՝ գնալով Չեխոսլովակիայի տարածքի մասնատմանը, և Սուդեթի մարզը հանձնեցին Գերմանիային <sup>2</sup>:

<sup>1</sup> **Магадеев И. Э.** Проблема стабильности Версальского порядка в Европе в оценках российской историографии. с. 47-76.

<sup>2</sup> Новейшая история стран Европы и Америки XX век, Часть 1, с. 94. **Паркер Р.** Заговор против мира. М., 1949, с. 15. «Մյունխենյան» համաձայնագրի մասին մանրամասն տես՝ Օվսյանի Ի., նշվ. աշխ.:



Այսպես անգլո-ֆրանսիական դիվանագիտությունը հույս ուներ խուսափել Գերմանիայի հետ հարաբերությունները սրելուց և առիթ չտալ Հիտլերին ընդարձակելու ռազմական գործողությունները Եվրոպայի արևմուտքում<sup>1</sup>:

Սանջաքի հարցի արծարծման առաջին օրից Գերմանիան և Իտալիան Անկարային շարունակ մղում էին հարձակողական գործողությունների: «Գաղտնիք չէ, որ Գերմանիան և Իտալիան «բարեկամաբար» դրդում են Թուրքիային զինված ճանապարհով գրավել սանջաքը, որպեսզի ողջ աշխարհին և առաջին հերթին Ֆրանսիային կանգնեցնի կատարված փաստի առջև: Դրան հատկապես ձգտում էին Թուրքիայի գերմանացի խորհրդատուները՝ հորդորելով հաշվի չառնել Ազգերի լիգան և հետևել «կատարված փաստի» իրենց օրինակին»<sup>2</sup>:

Գերմանիան տիրապետող էր Թուրքիայի արտաքին առևտրի և տնտեսական ոլորտում: 1936թ. նրա բաժինը Թուրքիայի արտահանման և ներմուծման ծավալներում կազմում էր համապատասխանաբար 51 և 45,9%, իսկ արտաքին առևտրի ոլորտում Թուրքիան ուներ շուրջ 43 մլն լիր պարտք Գերմանիային և ֆինանսական կախվածության մեջ էր գտնվում նրանից<sup>3</sup>: Ավելին, 1936թ. հոկտեմբերին Անկարայում Յ. Շախտը բանակցում էր ռազմական պատվերների ծավալների մեծացման շուրջ: Իսկապես, Թուրքիայի արտաքին քաղաքականությունում մեջ նկատելի էր որոշակի ուղղվածություն առանցքի երկրների հետ հարաբերությունների զարգացման ուղղությամբ<sup>4</sup>: Ավելին, Թուրքիան, օգտվելով Գերմանայի ագրեսիվ

գործողությունների հետևանքով լարված հարաբերություններից, որոշեց իրեն ենթարկել Ալեքսանդրեոսի սանջաքը»<sup>1</sup>:

«Գերմանական և Իտալական գործակալները լրտեսական մեծ ցանց էին ստեղծել Սիրիայում և սանջաքում նրանք ուսումնասիրում էին ֆրանս-բրիտանական քաղաքական գործունեությունը խանգարելու միջոցները, դրանով իսկ ցանկանում էին Թուրքիային գրավել իրենց կողմը»<sup>2</sup>, գրում է Վեոն: Մյունխենյան գործարքը ընդհանուր առմամբ փոխեց միջազգային իրադրությունը՝ հակամարտ խմբավորումների հարաբերություններին հաղորդելով ավելի մեծ լարվածություն: Պատահական չէր Մյունխենից անմիջապես հետո Գերմանիայի տնտեսության նախարար Ֆունկի այցը Բալկանյան երկրներ և Թուրքիա: Նա Անկարայում, ինչպես վկայում է Թուրքիայում Գերմանիայի դեսպան Ֆոն Կելլերը, արժանանում է բարեկամական ջերմ ընդունելության և խոստանում Թուրքական կառավարությանը տրամադրել 150 մլն մարկ փոխառություն<sup>3</sup>: Անկասկած, այս քայլն առաջին հերթին կատարվում էր Թուրքիային իրենց կողմը գրավելու համար: Հիտլերին խիստ անհանգստացնում է Թուրքիայի հնարավոր շրջադարձը դեպի անգլո-ֆրանսիական խմբավորում, ուստի Գերմանիան ամեն կերպ ջանում էր օգտագործել Թուրքերի տրամադրությունը և Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ արտահայտվող տատանումները՝ համոզելու նրանց զերծ մնալ անգլո-ֆրանսիական խմբավորմանը մերձենալու մտքից: Այդ նպատակով Անկարա գործուղվեց փորձառու դիվանագետ Ֆրանց Պապե-

<sup>1</sup> Магадеев И. Э. Проблема стабильности Версальского порядка. с. 64.

<sup>2</sup> «Известия», 26.01.1937.

<sup>3</sup> Чжу Кэ-Жоу, цит. соч., с. 12.

<sup>4</sup> 1939թ. Գերմանիան վերահսկում էր Թուրքիայի արտաքին առևտրի կեսից ավելին, գերմանական փոխառությունները կազմում էին 87 մլն լիր կամ Թուրքիայի ողջ արտաքին պարտքի 48 տոկոսը: Թուրքիայի պատմության ուրվագծեր, Ե., 1986, էջ 286:

<sup>1</sup> Алексеев В., Керимов М. Внешняя политика Турции, с. 37.

<sup>2</sup> Veou P. du. Le Desastre, p. 64.

<sup>3</sup> Աթաթուրքի մահից մեկ շաբաթ առաջ 1938թ նոյեմբերի 3-ին, Թուրքիայի և Գերմանիայի միջև կնքվել էր առևտրային պայմանագիր: St'eu Arcayürek C. op. cit., s. 43.



նը: «Գլխավոր նպատակը, որ Հիտլերի և Ռիբենտրոպի կողմից դրվել էր նոր դեսպանի առջև, այն էր, որ վերջինս չպետք է թույլ տար Թուրքիայի մասնակցությունը անգլո-ֆրանսիական խմբավորմանը»,- ընդգծում է Լ. Ժիվկովան<sup>1</sup>:

Այս ամենին զուգահեռ գերմանական քարոզչամեքենան ակտիվորեն խորացնում էր նաև Թուրքիայի աճող անվստահությունը ԽՍՀՄ հանդեպ:

Գերմանական դիվանագիտության այսպիսի հարձակողական վարքագիծը ունեցավ իր ազդեցությունը սանջաքի հարցի կարգավորման գործում: Պոլ Տալլեն դեպուտատների պալատում հայտարարում էր. «Անհրաժեշտ է փոփոխել Ֆրանսիայի արտաքին քաղաքականության ուղղությունները, որպեսզի չենթարկվի Ֆաշիստական երկրների սպառնալիքներին: Մյունխենից հետո Գերմանիայի սպառնալիքները Ֆրանսիայի հանդեպ ավելի մեծացան: Անհնար կլինի փրկել ֆրանսիական կայսրությունը, եթե Գերմանիային և Իտալիային թույլ տրվի գերիշխել Եվրոպայում և Միջերկրականի ավազանում: Ֆրանսիան կարիք ունի Թուրքիայի հետ բարեկամությունն ամրապնդելու և պետք է հրաժարվենք այնպիսի քաղաքականությունից, որը նրան կտանի մեկուսացման»<sup>2</sup>:

Հիտլերյան Գերմանիայից ոչ պակաս նվաճողական նպատակներ ուներ նաև Ֆաշիստական Իտալիան, որը Ալեքսանդրետի սանջաքի հակամարտության նկատմամբ դիվանագիտական չափազանց մեծ ակտիվություն ցուցաբերեց: Իտալական դիվանագիտությունը, որը ուշադրությամբ հետևում էր սանջաքի հարցի ընթացքին, սկզբում նույնիսկ հորդորում էր Ֆրանսիային՝ «առաջնորդվել» մանդատային սկզբունքներով:

«Թեև իտալական կառավարությունը հանդես էր գալիս որպես «ժողովուրդների ազատ ինքնորոշման» իրավունքի կողմնակիցի և արաբական աշխարհի պաշտպանի դերում, սակայն կասկածից վեր էր, որ Իտալիան ուներ զավթողական հավակնություններ: Իտալական գործակալները Սիրիայում և սանջաքում շարունակ վարում էին հակասիրիական և հակաֆրանսիական քաղաքականություն, դիմում հնարավոր բոլոր միջոցների՝ սանջաքում իտալամետ մթնոլորտ ստեղծելու համար: Միևնույն ժամանակ, այս տեսանկյունից չի կարող ուշադրություն չգրավել այն հանգամանքը, որ տենդորեն զինվելով իտալական ֆաշիստները ռազմածովային և ռազմաօդային հանգրվաններ էին կառուցում Թուրքական սահմանի անմիջական հարևանությամբ՝ Լեբու և Հոդոս կղզիներում՝ անմիջական Թուրքիայի մերձակայքում: Դոգեկանեզներում Իտալիայի ձեռնարկած այս միջոցառումները լրջորեն անհանգստացնում էին Թուրքերին, որոնք դա համարում էին «ինչպես ատրճանակ ուղղված իրենց սրտին»<sup>1</sup>: Այսուհանդերձ, 1939թ. մայիսի 3-ին Իտալիայի արտգործնախարար Զիանոն վստահեցնում է Հոտմում Թուրքիայի դեսպանին, որ «Իտալիան չունի ոչ քաղաքական, ոչ էլ տարածքային պահանջներ Թուրքիայից»<sup>2</sup>: Չնայած իտալական սպառնալիքներին՝ Թուրքիան միացավ Իտալիայի դեմ տնտեսական պատժամիջոցներ կիրառելու միջերկրածովյան համաձայնագրին, սակայն Թուրքական կառավարող շրջանները շտապեցին հայտարարել որ «տնտեսական պատժամիջոցները ոչ մի դեպքում չպետք է դիտել Իտալիայի դեմ ուղղված թշնամական գործողություններ»<sup>3</sup>:

<sup>1</sup> Поцхверия Б., цит. соч., с. 1.

<sup>2</sup> Живкова Л., цит. соч., с. 127.

<sup>3</sup> Чжу Кэ-Жоу, цит. соч., с. 13.

<sup>1</sup> Живкова Л., цит. соч., с. 126.

<sup>2</sup> «Правда», 20.01.1939.



Գերմանիան և Իտալիան իրենց ակտիվ մասնակցությունն ունեցան սանջաքի հարցի «կարգավորման» գործընթացում: Սակայն, հարցը հետազոտողների գերակշիռ մասը ընդգծում են, որ Ալեքսանդրետի սանջաքի խնդրի հայտնի կարգավորման գործում ամենավճռական դերը խաղացել է Անգլիան:

Անգլիական կառավարությունը, որն ուշի ուշով հետևում էր Ալեքսանդրետի սանջաքի շուրջ ֆրանս-թուրքական հակամարտությանը, սկզբնական շրջանում հայտարարում է, որ Անգլիան պատրաստ է աջակցել Ֆրանսիային: «Եթե Թուրքիան փորձի բռնի գործողությունների դիմել Ալեքսանդրետի սանջաքում, թեպետ Լոնդոնում չափազանց տարակուսում են այդ առթիվ, ապա Անգլիայի և Ֆրանսիայի միջև գոյություն ունեցող ներկայիս համաձայնագիրը կպահպանվի: Լոնդոնում ողջունում են այդ հարցի կարգավորումը Ազգերի լիգայի շրջանակներում, սակայն ոչ անկախ Ալեքսանդրետ ստեղծելու հիման վրա: Չափազանց կասկածելի է, որ Թուրքիան որևէ իրավական հիմք ունենա պահանջելու Ալեքսանդրետն անջատել Սիրիայից»<sup>1</sup>: Սակայն, փաստերը վկայում են, որ բրիտանական դիվանագիտությունը սանջաքի հարցի կարգավորման հաջորդ փուլերում մշտապես գործել է ի նպաստ Թուրքիայի: «Անգլիական կառավարությունը վախենում էր, որ շնորհիվ մանդատի շարունակման, Ալեքսանդրետը կվերածվի ֆրանսիական ռազմածովային խարսխի՝ սպառնալով Եգիպտոսում բրիտանական ազդեցության թուլացմանը: Նա նախընտրում էր այնտեղ անկասկած տեսնել թուրքերին, քանի որ արդեն վճռել էր Թուրքիային իր դաշնակիցը դարձնել: Այս ամենը չափազանց ձեռնտու էր. Անգլիայի կողմից չէր պահանջվում ոչ մի զոհաբերություն՝ փոխարենը վճարում էր Սիրիան»,

գրում է Ալեքսանդրետի հակամարտության կարգավորման գլխավոր դերակատարներից Պյոուն<sup>1</sup>: Լ.Բլյումը խոստովանում է. «Ֆրանսիան մեկուսացված է Եվրոպայում և չի կարող ձեռնարկել որևէ միջոցառում, առանց Անգլիայի դիտության»<sup>2</sup>:

Իսկապես, աշխարհաքաղաքական իրադրությունն Եվրոպայում այնպիսին էր, որ և Ֆրանսիան և հատկապես Անգլիան մեծ կաևորություն էին տալիս Թուրքիային, անում ամեն ինչ որպեսզի ապահովեն նրա դրական կողմնորոշումը իրենց օգտին: Բրիտանական դիվանագիտության հաշվարկներում Ֆրանսիան ևս կարևոր դերակատարություն ուներ, քանզի անգլիական շահերի անվտանգության համակարգում Միջերկրածովյան ավազանում առանց Ֆրանսիայի մասնակցության թուրք-անգլիական դաշիքը չի կարող արդյունավետ լինել: Հետևաբար, Անգլիան ամեն ինչ անում էր ֆրանս-թուրքական հարաբերությունների կարգավորման ճանապարհին և պատահական չէ, որ «Բրիտանական դիվանագիտությունը քաջալերում էր իր դաշնակից Ֆրանսիային Հաթայում բարեկամական կարգավորման հասնելու գործում», - գրում է Ա.Թոյնբին<sup>3</sup>:

Խորհրդային հեղինակները նշում են սանջաքի հարցում Անգլիայի դիրքորոշման վճռորոշ դերը, նրա ճնշման և «բարեկամական» միջնորդության պայմաններում Ֆրանսիայի կողմից սանջաքի հանձնումը<sup>4</sup>: «Անգլիայի ղեկավար շրջանները Թուրքիային դաշնության դիմաց հատուցեցին արաբական տարածքներով, որտեղ ի տարբերություն ֆրանսիացիների՝ նրանք ոչ մի կապ չունեին», - գրում է Բ.Տարասովը<sup>5</sup>: Լ.Ժիվկովան անդրադարձալով ֆրանս-թուրքական հակամարտության

<sup>1</sup> Gabriel P. op. cit., p. 49-50.

<sup>2</sup> Женева Т. Двадцать лет дипломатической борьбы. М., 1960, с. 37.

<sup>3</sup> Тоунбее А. op. cit., p. 489.

<sup>4</sup> Данцинг Б., цит. соч., с. 130.

<sup>5</sup> Тарасов Б., цит. соч., с. 23.

<sup>1</sup> «Խորհրդային Հայաստան», 1937 հունվարի 11:



վրա Անգլիայի ունեցած ազդեցությանը, մեկ անգամ ևս պնդում է, որ բրիտանական դիրքորոշումը լրջորեն ազդել է հակամարտության լուծման արդյունքի վրա. «Միայն Անգլիայի ակտիվ միջամտությունը, որն իր վրա էր վերցրել ֆրանս-թուրքական հակամարտության միջնորդ դատավորի դերը, փրկեց բանակցությունները ձախողումից»<sup>1</sup>:

Թուրքիան նույնպես կարևորում էր Անգլիայի դերն այս հարցում: Վարչապետ Ի.Ինյունյուն մեջլիսում 1937թ. հունվարի 24-ին շեշտում էր. «Թուրքիայի հանրային կարծիքը մեծապես կարևորում է Անգլիայի հետ հարաբերությունները. Ավելի ուժեղացրեց նրա քաղաքականության հանդեպ վստահությունը»<sup>2</sup>: Ի տարբերություն Քեմալի՝ Ինյունյուն գտնվում էր անգլիական ազդեցության տակ, և ձգտում էր վիճելի հարցը լուծել բանակցությամբ՝ Անգլիայի միջնորդությամբ:

Այս համատեքստում դաշնակիցների և առանցքի երկրների տարբեր մակարդակների և ձևաչափերով հանդիպումները վկայում են Թուրքիայի տարածաշրջանային դերի կարևորման մասին: Նման պայմաններում ինքնին հասկանալի է, որ խնդրի քաղաքական կարգավորման հասնելու Ֆրանսիայի անհաջող փորձերը, ինչպես նաև սանջաքում բախումների շարունակման ու Անկարայի կողմից ղեկավարվող ծայրահեղական ուժերի հաջող գործողությունները ինչոր տեղ համոզեցին ընդունել Անգլիայի կայունացնող դերը տարածաշրջանում: Այսպիսին էր Մերձավոր Արևելքում անգլիական «խաղաղարար» քաղաքականության էությունը:

Ի տարբերություն առանցքի երկրների՝ ԽՍՀՄ, որ սանջաքի շուրջ ծավալված դիվանագիտական ու քաղաքական պայքարի ողջ ընթացքում հանդես էր գալիս հարցի խաղաղ կարգավորման դիրքերից, ողջունեց Ազգերի լիգայի ձեռնարկած մի-

ջոցառումները և օգտագործեց հնարավոր միջոցները, որպեսզի այն չվերածվի նոր բռնազավթման: Այդ շրջանում Թուրքիան փորձում էր սերտ համագործակցել ԱՄՆ-ի հետ<sup>1</sup>:

Անկարայի կառավարությունը ուշադիր հետևելով տերություններին՝ Թուրքիային դաշնակիցը դարձնելու մրցավազքին, կարողացավ դիվանագիտական ու քաղաքական մանևրների շնորհիվ, շահավետ ծախել «բարեկամությունը» անգլո-ֆրանսիական ռազմական խմբավորմանը և ստիպել Ֆրանսիային սանջաքի հարցում կատարել զիջում զիջման հետևից: «Հաթայի պետությունը» վերածվել էր Սիրիայից անկախ և Թուրքիային ենթակա պետական միավորի. «Հաթայում ամեն ինչ թուրքական է,- գրում է Ա.Բայրամյանը,- սկսած պետության ղեկավարից, գերագույն դատարանից, պաշտոնական լեզվից՝ մինչև դրոշը, օրենսդրությունը, դրամական համակարգը, դրոշմանիշները»<sup>2</sup>: «Հաթայը փաստորեն կորած է, հարկ է անհապաղ վճարել Թուրքիայի համաձայնության գինը», - խոստովանում է բարձրագույն կոմիսար Գ.Պյոուն<sup>3</sup>: Մնում էր միայն փաստական վիճակին իրավական ճանաչում տալ: Քանի որ գնալով աճում էր երկրորդ աշխարհամարտի վտանգը, ֆրանսիական կառավարությունն ավելի քան երբեք զգում էր Թուրքիայի աջակցության կարիքը: Հետևաբար, ավելի նախընտրելի ու կարևոր էր Թուրքիայի հետ դաշինքը, քան սիրիական ժողովրդի ազգային շահերը: «Զենք գնալու հերոսության հանուն Սիրիայի, ավելի լավ է ամրացնենք Մաժիհոյի մեր գիծը»<sup>4</sup>, - հայտարարում էր Պ.Ֆլանդենը ֆրանսիական պառլամենտում:

<sup>1</sup> ԱՄՆ-ը 135 մլն դոլլար հատկացրեց Թուրքիայի զինուժին: Özakıncı G. Türkiye'nin siyasi intihari yeni-osmanlı tuzağı. İstanbul, 2008, s. 300.

<sup>2</sup> Բայրամյան Ա., նշվ. աշխ., էջ 126:

<sup>3</sup> Gabriel P. op. cit., p. 51.

<sup>4</sup> Женева Т. цит. соч., с. 381.

<sup>1</sup> Живкова Л., цит. соч., с. 128.

<sup>2</sup> Поцхвериа Б., цит. соч., с. 167.



«Թուրքիայի հետ բարեկամությունը այժմ մեզ համար շատ մեծ արժեք ունի, դրա համար անհապաղ համաձայնեք նրանց հետ»<sup>1</sup>, - գրում է Ֆրանսիական «Լիբերտե» թերթ: Սիրիայում և Լիբանանում ֆրանսական զորքերի հրամանատար գեներալ Հյուլցենգերը ևս խորհուրդ տվեց կառավարությունը սանջաքը զիջել Թուրքիային, որպեսզի Արևելյան Միջերկրածովում ապահովեն երկու երկրների ռազմա-քաղաքական պայմանագրի կնքումը: Իսկ, երբ թուրքերն ակնարկեցին, թե միայն Ալեքսանդրիտի խնդիրն է, որ խանգարում է պայմանագրի արագ կնքմանը, Փարիզում շտապեցին լուծել այն<sup>2</sup>:

Այդ ընթացքում Անկարայում Ռ.Մասիգլին ոչ պաշտոնական խորհրդակցություններ էր ունենում Թուրքիայի արտգործնախարար Շ.Սարաջօղլուի հետ սանջաքի հարցով<sup>3</sup>: Ուշագրավ է, որ թուրք նախարարը բացահայտ հայտարարում է, որ վաղ թե ուշ այդ շրջանը անխուսափելի պետք է միանա Թուրքիային և որ «անկախ» կարգավիճակի վերաբերյալ Թուրքիայի համաձայնությունը միայն ժամանակավոր զիջում էր Ֆրանսիային: 1939թ. հունիսի 23-ին Թուրքիայի արտգործնախարար Շ.Սարաջօղլուն և Ֆրանսիայի դեսպան Ռ.Մասիգլին Անկարայում ստորագրեցին «Թուրքիայի և Սիրիայի միջև տարածքային հարցերի շուրջ վերջնական կարգավորման մասին համաձայնագիր», որով սանջաքը հանձնվեց Թուրքիային<sup>4</sup>:

«Արևելյամիջերկրածովյան հավասարակշռության անկյունաքար»<sup>5</sup> համարվող այդ պայմանագրով Ֆրանսիան փորձում էր հանգստացնել ֆրանս-թուրքական պայմանագրի կնքման շուրջ ծագած աղմուկը՝ ձգտելով այն ներկայացնել կարևոր

շրջադարձ իրենց միջև և Թուրքիայի լիովին կողմնորոշում դեպի անգլո-ֆրանսիական խմբավորում: Միաժամանակ, սիրիական հասարակական կարծիքը հանդարտեցնելու համար 1939թ. հունիսի 24-ին Քե դ'Օրսեն հայտարարությամբ փորձեց այն ներկայացնել սիրիական ժողովրդի և Սիրիայի անկախության համար կարևորագույն ձեռքբերում. շեշտելով, որ Թուրքիան նոր սահմանը ընդունում է որպես վերջնական և պարտավորվում է հարգել Սիրիայի անկախությունը: «Այդ պարտավորությունները իրենց նշանակությամբ Սիրիային ազատում են բարոյական և նյութական մի սպառնալիքից, որը ծանրացել էր նրա քաղաքական կյանքի վրա: Բարձր գնով վճարված քաղաքական մթնոլորտի այս առողջացումը Սիրիային ձերբազատում է ծանր մտահոգությունից»<sup>1</sup>:

Նույն օրն էլ Փարիզում ստորագրվեց ֆրանս-թուրքական փոխադարձ օգնության հռչակագիր, որի բովանդակությունը լիովին համընկնում էր 1939թ. մայիսի 12-ին ստորագրված անգլո-թուրքական հռչակագրի հետ<sup>2</sup>: Ըստ այս հռչակագրի՝ Ֆրանսիան և Թուրքիան պարտավորվում էին չմտնել որևէ քաղաքական կամ տնտեսական դաշինքի մեջ, որն ուղղված կլինի նրանցից մեկի դեմ, օգնություն ցույց չտալ երրորդ պետության, եթե վերջինս հարձակվի պայմանավորվող կողմերից մեկի վրա, խորհրդակցել միմյանց հետ, եթե Արևելյան Միջերկրականում խախտվի խաղաղությունը<sup>3</sup>:

Ընդգծենք, որ ֆրանսիական պառլամենտը 1939թ. հունվարին չվավերացրեց 1936թ. ֆրանս-սիրիական պայմանագիրը: Դա նշանակում էր, որ ուժի մեջ էր մնում մանդատային վարչակարգը, և Ֆրանսիան պահպանում էր դրանից բխող իր իրավունքները: Գլխավոր կոմիսարի հրամանով արձակվեց պառ-

<sup>1</sup> Алексеев В., Керимов М. цит. соч., с. 39.

<sup>2</sup> Hourani A. Syria and Lebanon, p. 213.

<sup>3</sup> Մանրամասն տե՛ս Фомин А. М. Франко-турецкие отнаш, с. 45-60.

<sup>4</sup> Müzehher Yamaç, op. cit., s. 220.

<sup>5</sup> Вопросы новой и новейшей истории Франции, ч. 2, с. 102.

<sup>1</sup> Բայրամյան Ա., նշվ. աշխ., էջ 147:

<sup>2</sup> Müzehher Yamaç, op. cit., s. 228-231.

<sup>3</sup> Миллер А., цит. соч., с. 190.



լամենտը, և վերացվեց սահմանադրությունը: Ամբողջ իշխանությունը կենտրոնացվեց ֆրանսիական գլխավոր կոմիսարի ձեռքին: Կառավարության փոխարեն Սիրիայում ստեղծվեց այսպես կոչված «Դիրեկտորների խորհուրդ» Բահիջ ալ-Նատիբի գլխավորությամբ, որն աշխատում էր գլխավոր կոմիսարի անմիջական հսկողությամբ<sup>1</sup>: Հունիսի 29-ին «Հաթայի պառլամենտը» վերջին նիստը գումարեց և հռչակեց Հաթայի միացումը Թուրքիային՝ դառնալով Թուրքիայի 63-րդ վիլայեթը:

Սանջաքի հարցն ուսումնասիրողների գերակշիռ մասը (բացառությամբ թուրք հեղինակների, որոնք գտնում էին, թե «այդպիսով վերականգնվեց արդարությունը և Հաթայի թուրքական տարածքները վերդարձվեցին իրենց տերերին»<sup>2</sup>) իրավացի փաստում է, որ Ֆրանսիան, անտեսելով սիրիական ժողովրդի շահերը, սիրիական Ալեքսանդրետի վճարումով ապահովեց Թուրքիայի ժամանակավոր մերձեցումը անգլո-ֆրանսիական ռազմական խմբավորմանը:

«Այս գործարքն ըստ էության նախօրոք վարձատրություն էր Թուրքիայի համար՝ անգլո-ֆրանսիական խմբավորմանը միանալու համար, որ անգլիացիները վճարեցին Թուրքիային Ֆրանսիայի և առաջին հերթին սիրիացի ժողովրդի հաշվին»<sup>3</sup>: Տեղին է մեջբերել Ա.Բայրամյանի տեսակետը. «Սանջաքի զիջումը առաջին զոհաբերությունը չէ, որ Ֆրանսիան կատարում է բրիտանական զոհասեղանի վրա»<sup>4</sup>: Թուրքիայի՝ գերմանական դաշինքին միանալու հնարավորությունը չեզոքացնելու համար Ֆրանսիան և Անգլիան գնացին Սիրիայի տարածքի մասնատմանը և սանջաքը «զոհաբերեցին» Թուրքիայի բարեկամությունն ու զինակցությունը ապահովելու համար: Սակ-

<sup>1</sup> Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, էջ 460-61:

<sup>2</sup> Büyükoğlu T. Atatürk Anadolu'da 1919-1921. Ankara, 1959, s. 76.

<sup>3</sup> Данцинг Б., цит. соч., с. 275. Тарасов Б., цит. соч., с. 21.

<sup>4</sup> Բայրամյան Ա., նշվ. աշխ., էջ 140:

այն, Թուրքիայի «բարեկամության գինը» վճարվեց ոչ թե Ֆրանսիայի, այլ անկախության շեմին դտնվող Սիրիայի հաշվին:

